Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ա. Ահարոնյան

Արակն՞

1904

891, 99
14 JUN 2005
19 NOV 2010

Ս. ԱՀԱՐՈՆԵԱՆ

800
ՂԶ-ԱՀ

ԱՐԱԶԸ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
212

ԹԻՖԼԻՍ 1904 Թ.
Տպարան „ՀԵՐՄԷՍ" Միխ. փող. № 81.
(18)

18379

.02. 2013

Доз. ценз. Тифлисъ 3-го Мая 1904 г.

107 բ

ԱՐԱԶԸ

Նուէր տիկին Մար. Ցով. — Խանդ...խանին)

I

Գարնան վերջն էր, արիւն-քրտինք թափելու օրեր։ Գիւղը տքնում էր. փոքրիկ մանուկներն էլ չէին խնայւում գործի մէջ։ Այդպէս է գիւղը, ով կրծելու ատամներ և շարժելու ձեռք ու ոտք ունի, ստիպուած է աշխատել առաւօտից երեկոյ, որովհետև հարիւր կաթիլ քրտինքից կէսի արդիւնքն էլ տուն չի գալիս։ Գիւղն աշխատում է միշտ իրանից շատ հեռու, շատ անծանօթ մարդկանց համար, շատ անգամ նոյն իսկ իր միսն ուտող, արիւնը խմող աւազակների համար։

Դաշտերում, այգիներում, բօստաններում կեանքը եռում էր. ամեն կողմ գալարուած, ծռուած մէջքեր, յոգնած, քրտնաթոր ճակատներ, արեւի առաջ ապխտուած, տանջ-

ուած դէմքեր և մեղմ ու իրանց մռայլ ճակատագրին հնազանդ աչքեր, ուր տառապանքի քօղի տակից, որպէս պէծին տուող կայծը ծածկող մոխիրների տակից, հազիւ հազ փայլում էր հեռաւոր յոյսը, մի կտոր հաց ունենալու ներելի հաւատը։

Գալօն էլ դադար չունէր։ Ընտանիքը մեծ չէր՝ ինքը, կինը և փոքրիկ աղջիկը—ինն տարեկան Շողիկը։ Էլի երեք բերան էր, պէտք էր կերակրել, ձմեռը գիւղում հանաք չի անում, մէկ էլ, էհ... քանի՜ դրսի ցաւեր կան, որ գիւղը պէտք է հոգայ, որովհետև գիւղ է, անտէր, խաւար գիւղ։

Այն երեկոյ Գալօն ուրիշների նման վերադառնում էր դաշտից, ողջ օրը քաղհան էր արել կնոջ և Շողիկի հետ. բամբակ էին քաղհանում։ Մեծ չէ, փոքր է բամբակի արտը, բայց որ ժամանակին քաղհանուի, մանաւանդ ջրից չը զրկուի, երկինքն էլ հաշտ նայի, կարկուտ ու հիւանդութիւն չտայ, Գալօն էլի մի տարի գլուխ կհանի ամօթն երեսին, առանց ուրիշի ձեռքին նայելու։ Եւ Գալօն յոյս ունի, այդ յուսով է, որ այս առաւօտ վաղ իր փոքրիկ ընտանիքով գնաց քաղհանի։

Նա լաւ գիտէ, որ քաղհանը կնոջ գործ է և ոչ տղամարդի. նա լաւ գիտէ, որ տղա-

մարդի մէջքը չը պէտք է ծռուի մինչև գետին, որ նրա ճակատը չը պէտք է ծածկուի ուրագի հարուածներից բարձրացող փոշիով, որ նա կնոջ պէս չը պէտք է գունդ դառնայ, խոտերի մէջ պշպշայ այս ու այն վնասակար բոյսը քաշելու համար. այդ բոլորը լաւ գիտէ Գալօն, բայց դէ ինչ արած; կարիքը մէջք էլ է ծռում, վիզ էլ, գլուխ էլ։ Թէ ինքը՝ Գալօն չը գնայ քաղհանի, պէտք է իր փոխարէն մի վարձկան կին ուղարկի, խօմ իր խեղճ կինն ու Շողիկը չեն կարող ամբողջ արտը մենակ քաղհանել. գործը յետ կը մնայ, բամբակը կը փչանայ, յետոյ... այդ յետոն այնքան ծանր է և այնքան դառըն, որ Գալօն տաս տապակ էլ կը ծախուի, միայն թէ իր բամբակը տուն գայ, իր ցաւերը հոգայ իր ձեռքով։

Քաղհանը տղամարդի գործ չէ, բայց հեշտ էլ գործ չէ. Գալօն ամբողջ օրը ցաւով էր տեսնում իր Շողիկին, որ կռացած փոքրիկ ուրագի վրայ, գլուխը թաղուած խոտերի մէջ զարկում էր մանր հարուածներ և դժուարութեամբ էր առաջանում։ Քրտինքը ծորան ծորան հոսում էր փոքրիկի սիրուն այտերի վրայից, փոշին բարձրանում ու ծածկում էր նրա մազերն ու երկայն արտևա-

նունքները, բայց աղջիկը շարունակում էր քաղհանել, որովհետև հայրն ասել էր, թէ Վարդավառին նրա համար նոր, վարդագոյն մինթանայ պիտի գնի, խշխշան ու սիրուն։ Առաւօտը վաղ՝ երբ դեռ զով էր, երբ նոր գործի կեցան, Շողիկը այծեամի պէս ցատկոտում էր խոտերի մէջ և ուրախ զարկերի հետ սիրունիկ մանկական ձայնով «լէլէ» էր ասում. բայց քանի արևը բարձրացաւ, քանի նրա շողերն աւելի կիզիչ դարձան, Շողիկի ձայնը կամաց-կամաց նուաղեց և ի վերջոյ ճաշին մօտ նա իսպառ լռեց, ինչպէս տօթից խեղդուած մի փոքրիկ թռչուն, որ ուժ անգամ չունի իր բաց մնացած կտուցը փակել։ Խեղճ Շողիկ, նա հեւում էր շոգից, տանջւում էր և մի փոքր հանգիստ տալու համար իր թուլացած թևերին երբեմն-երբեմն գլուխը բարձրացնում էր, յետ յետ տանում թաց ճակատի վրայ թափուած սիրունիկ խոպոպները, հրեշտակային աչքերով նայում էր հօրը.

—Հա՛յրիկ, տես, մազերս էլի թափուեցին ճակատիս, մինթանայից բացի, իմ մազերին կանաչ-կարմիր լենտ էլ կ՚առնես։

—Հա՛, լենտ էլ կ՚առնեմ, Շո՛ղիկ ջան, ասում էր հայրը շոյելով նրա քրտնաթոր

ճակատը, թող բամբակը հանի։

Եւ երեխան հանգստացած վերստին զարկում էր իր ուրագը, փոքրիկ գլխում նոր դիմումներ անելու ծրագրներ կազմելով։ Միևնոյն ժամանակ նա աշխատում էր յետ չը մնալ ծնողներից, որոնք նրա մանկական փոքրիկ եռասիրութիւնը խնայելու համար երկու կողմից օգնում էին, աննկատելի կերպով առաջի խոտերը քաղհանելով։ Քանի՜ քանի անգամ երեխան տնքաց ու ոտքը բռնեց.

—Տե՛ս, հա՛յրիկ, ոտքս էլի փուշ մտաւ։

Նրա ոտքի փոքրիկ, խղճուկ թաթի վրայ մի կաթիլ արիւն և արտասունքից մի կաթիլ արցունք կախուեց։ Ծնողները երկու կողմից նրան դարձան, ոտքից փուշը հանեցին.

—Հայրի՛կ, դու ինձ կօշիկ էլ կ՚առնես, փշերը ոտքերս ծակում են ախր։

—Կ՚առնեմ, Շողիկ ջան, կօշիկ էլ կ՚առնեմ. և հայրը վերստին գրկեց նրա գլուխը, սղմեց կրծքին խանդաղատանքով ու համբուրեց։

—Ա՜խ, քոռանամ ես, ասաց մայրը։ Եւ նորէն շարունակեցին ընդհատուած գործը, նորէն երեք գլուխները կռացան խոտերի

մէջ, իսկ արևը վերից անխնայ թափում էր իր կիզիչ ճառագայթները և օդը գնալով աւելի խեղդող էր դառնում։

Այս բոլորը մէկիկ-մէկիկ անցնում էր Գալօի գլխով երեկոյեան տուն վերադառնալիս։ Կինը լուռ քայլում էր նրա մի կողմից, իսկ Շողիկը միւս կողմից՝ բռնած հօր ձեռքը։ Փոքրիկը յոգնած էր. ճանապարհի թանձր փոշու մէջ ծակոտուած ոտները խառնելով՝ հազիվ-հազ հետևում էր հօրը, բայց էլի անդադար խօսում էր իր վարդագոյն մինթանայի, կանաչ-կարմիր լենտի և կօշիկների մասին։

Գիւղը հեռու չէր. այնտեղից լսւում էր գժիր Վարթօի կանչը. Գալօն կանգ առաւ մի րոպէ և ուշադրութեամբ, բերանաբաց ականջ դրեց, ապա ինչպէս մի ծանր գործի առաջին տպաւորութեան տակ, մի վայրկեան սառած մնաց, յետոյ ձեռքի և գլխի մի անհանգիստ շարժումով բացականչեց.

— Արա՜գ, Արա՜գ, տունդ քանդուի Արագ, էլի՞...

— Հա՛յրիկ, Արագն ինչ է արել.

Հայրն էլ պատասխան չը տուեց. երեխան մնաց բերանը բաց, աչքերը հօր դէմքին յառած հետաքրքիր ու զարմացած հա-

յեացքով։ Գալօն մտախոհ դարձաւ, գժիրը կանչում էր թէ վաղը պէտքէ գնալ Արագ ջուր «կապելու», թմբերը քանդուել են։ Եւ այդ ձայնը մի տեսակ մռայլ ելևէջներով տարածւում էր գիւղի շրջակայքի վրայ ու գնում էր մեռնելու դաշտերի հեռաւորութեան մէջ, ինչպէս վտանգ գուժող մի ազդարար. լաւ չէր։

— Էլի՛ թումբերը քանդել է, մրմռում էր Գալօն, ա՜հ Արագ։

«Ա՛հ Արագ», դա մի ամբողջ ժողովրդի զայրոյթի և ցաւի աղաղակն էր այն զարմանալի գետի դէմ, որ երբ պէտք է աւերել, թշուառութիւն ու սուգ տարածել, մենմենակ է անում, իսկ երբ պէտք է բարիք բաշխել, կատաղի պայքարից յետոյ է միայն զիջանում։ Գալօի յուսահատ բացականչութեան մէջ հնչւում էր այն հին ճիչը, որ նախնական մարդն արձակեց դարեր, շատ դարեր առաջ, երբ իր թուլութիւնը տեսաւ խելագար գետի հսկայ յորձանքների առաջ և նրա ափին նստած՝ ալիքների հեգնող մանչիւնների ներդաշնակութեան տակ երեխայի պէս լաց եղաւ։ Այն օրուանից շարունակւում է դարերի կռիւը, մարդը յամառ է ու տոկուն, իսկ Արագը ըմբոստ ու ան-

յաղթելի իր անհասկանալի գժութիւններով։

Գալօն մտածում էր այժմ Արագի մասին նրա և գիւղի պայքարի մասին։ Այս տարի քանի՜ անգամ սև օրով, դառն աշխատանքով թումբեր քաշեցին նրա ալիքների դէմ և քանի՜ անգամ աւերեց տարաւ մրռմռալով։ Իր ափերին ծուարած գիւղերի բացարձակ տէրն է Արագը։ Հին աշխարհի բռնակալների պատկերն ունի, երբ ժպտայ, իր երկիրը բարիքով ու ցնծութեամբ կը լեցուի, երբ խոժոռուի ու կատաղի, արցունք ու ցաւ, մահ ու սարսափ կը սփռի իր շուրջը. և այն ժամանակ մնաս բարի կեանք ու երջանկութիւն, պէտք է ամեն բան նորից սկսել։

«Ա՜հ, Արագ», մռմռում էր Գալօն, գլուխը քաշ ձգած, կամաց-կամաց քայլելով։ Նրա համար Արագը գետ չէ, ջուր չէ, որ թաւալւում է երկու բարձր ափերի մէջ մերթ վայրագ ու հպարտ, մերթ դանդաղ ու խաղաղ։ Արագը մի ուրիշ բան է, մի ինչ որ անօրինակ, հսկայական կենդանի, որ միաժամանակ կատաղի է և քաղցր, անսիրտ է և գթոտ, գեղեցիկ է և սարսափելի, կամակոր է և հնազանդ, բայց միշտ հզօր, միշտ մի անգուսպ, խօլական ոյժ թագցրած

իր ծփծփած կրծքի տակ, իր ոլորուն յորձանքների թափի մէջ։

—Հա՛յրիկ, ախր ի՞նչ է արել Արագը։

Հայրը դարձեալ անպատասխան թողեց փոքրիկ աղջկան։ Նա այժմ յիշեց մի տարօրինակ բան, աշուղ Ադամի նկարագրած հէքիաթի վիշապը։ Արագն էլ վիշապ է, օղակ օղակ գալարուել է ցաւերի տակ ճըմլուած գիւղերի շուրջը, ուզի՝ կը խեղդի, ուզի՝ կեանք կը տայ. սա էլ է զոհեր պահանջում, ինչպէս հէքիաթների վիշապը, որ տարին մի կոյս էր ուզում իր հովանու տակ ապրող և իր համբերութիւնը վայելող ժողովրդից։ Արագն էլ վիշապ է, միայն նա աղջիկ չէր պահանջում. Գալօն Տողիկին դարձաւ.

—Տո՛ղիկ, Արագը վիշապ է.

Երեխան վախեցած՝ նայեց հօրը.

—Հա՛յրիկ, վիշապը մարդ կը տանի։

—Հա՛, մարդ կը տանի։ Երեխան կծկըուեց, հօր ձեռքը թողեց և անցաւ մօր փէշերին կպաւ։

—Ի՞նչ ես խօսում քեզանից դուրս, ա՛յ մարդ, բարկացաւ կինը, վիշապս ո՞րն է, երեխային վախեցրիր, դէ Արագն՝ Արագ է էլի, ջո՛ւր է, գե՛տ է։

—Է՞հ կնիկ, Արագը նաման բան է։

Գայօն դարձեալ մտքերի մէջ ընկաւ, նա յանկարծ յիշեց, որ ինքը Արագից վախենում էր երեխայի պէս, յիշեց, որ նրա ափին հասնելիս միշտ առաջին անգամ մի տեսակ սարսուռ է գալիս վրան և աշխատում է շատ չը նայել ալիքներին. յիշեց, որ «Արմա՜գ» կանչող գզրի ձայնը իրան միշտ անախորժ է եղել։ Մինչև այժմ նա երբէք այդ երկիւղի մասին այսպէս որոշ կերպով չէր մտածել, այս երեկոյ, գզրի կանչը լսելուց յետոյ, նա մի վայրկեան չի մոռանում Արագը, կարծես տեսնում է, խօսում է նրա հետ։ Արագը աղջիկ չի պահանջում, մտածում էր նա, բայց ինչո՞վ է աւելի ողորմած, քան հին վիշապները. տարին տասներկու ամիս գիւղերը կոտորվում են՝ նրա անկուշտ փորը ամբողջ ծառեր, դէզերով խոտ, ժայռեր կոխելով, որ մի կուց ջուր փախցնեն, ցանքերը ջրեն, ու սովից չը կոտորուեն, բայց էլի՜...

Գիւղին այժմ մօտ էր, գզրի ձայնն աւելի պարզ և աւելի սպառնալի էր լսւում.

«Էգուց տունը մի մարդ Արագը գնայ, թումբերը քանդուել են համ։»

—Կնիկ, Շողիկի հետ էգուց մենակ

կ'երթաք քաղհանի, ճար չըկայ. ինչ ժամանակ է քանդել թումբերը։

Գայօն մոռացել էր, որ ժամանակն Արագի համար չէ, նա իր առանձին ժամանակը, կամքը ու ցանկութիւններն ունի. ամենևին նրա փոյթը չէ, թէ Գայօի բամբակը և հարևանների ցանքերը կը չորանան։ Նա դարերից հետէ սովորութիւն դարձած իր հարկն ու պաշտամունքն է ուզում և վաղը նրա ափին պիտի գնայ մի ամբողջ ժողովուրդ ուէններով, տանուտէրներով, ջրպետներով ու զոհերով։

Արագն աստուած է։

II

«Արմա՜գ, Արմա՜գ»։

Գիւղն աղմկուած էր. մեծ հրապարակում կանչ, հայհոյանք, անէծք, սպառնալիք իրար էին խառնուել. մարդիկ յուզուած էին և էլ իրար չէին հասկանում, նրանց բոլորի ձայները միասին կազմում էին մի անհասկանալի, կոկորդային մռմռոց։ Գիւղն ասես, պատրաստւում էր դիմադրել մի անակնկալ

յարձակման, մօտալուտ, վերահաս վտանգն էր յայտարարում գզրի անախորժ կոչը։ Կռիւ էր, անողորմ կռիւ Արագի դէմ. Թշնամին շատ էր հզօր և մարդիկ շատ էին խեղճ իրանց դիմադրութեան նախնական միջոցներով։ Ահա թէ ինչու գիւղը տակն ու վրայ էր լինում ամէն անգամ, երբ Արագը քանդում էր ամբարտակները և երբ գզիրը ոռնում էր փողոցներում։

Կէս գիշերին պէտք էր ճանապարհ ընկնել վաղ առաւօտից կռուի դաշտը՝ Արագի ափին գտնուելու համար. իսկ մինչև այդ՝ անհրաժեշտ էին բազմաթիւ պատրաստութիւններ, բահեր, կացիններ, քլունգներ, ուրագներ, հաստ պարաններ և ամենից աւելի ծառերի մեծամեծ ճիւղեր, որոնք պիտի կապուէին և Արագի առաջը ձգուէին ջրի ընթացքը փոխելու համար։

«Արմա՜գ, Արմա՜գ», շարունակում էր կանչել գզիրը վազվզելով գիւղի նեղ, ոլորուն փողոցներով և նրա ձայնը որպէս մարտահրաւէր, շարժում էր ամենքին և գործի հանում։ Գալօն պարտաճանաչ ու շիտակ մարդ էր. դեռ երբէք սուտ, անպատիւ արարքի համար նրա պապերի, հօր յիշատակը չէր անարգուել գիւղամիջում. դեռ երբէք իր հա-

րևաններին դժգոհելու, գանգատուելու առիթ չէր տուել իր ընթացքով։ Նրա համար գիւղում ասում էին թէ իր թշնամու հալին անգամ «քը՜ շշ» չի անի։ Ասենք նա չէր էլ անի, որ անարդար տեղը իր հալին էլ «քը՜ շշ» անեն, մանաւանդ նա զգայուն էր իր մեռելների, իր հօր ու մօր յիշատակի համար, իր ընտանեկան պատուի համար։ Գիւղում ամենքը գիտէին, որ եթէ Գալօի պապենական շիրիմներն անարգուէին, կամ նրա կնոջ պատուին մի անտեղի խօսք ասէն, բանն առանց արիւնի չի վերջանայ։ Սակաւախօս, համարեա մռայլ, բայց վերին աստիճանի արդարասէր մարդ էր, և իր խաղաղ արտաքինի տակ թաքցնում էր մի նուիրական զայրոյթ ամէն մի անիրաւ գործողութեան, անտեղի արարքի համար։ Այդ արդար բարկութեան ժամերին նա սարսափելի էր. թաւ յօնքերը բարձրանում էին մինչև ճակատի կէսը և նրանց տակից, ինչպէս արեն սքօղող ամպի տակից, փայլատակում էին նրա խորունկ ու խելացի աչքերը, որպէս երկու բոց կտրած ածուխ։ Գիտէր, որ «աշխարհը չար է». և ինքը զայրացկոտ, ուստի «իր անցաւ գլուխն Աւետարանի տակ չը դնելու համար», ինչպէս ինքն էր ասում, աշ-

խատում էր որքան կարելի է հեռու մնալ ընկերութիւնից, մանաւանդ հասարակական գործերից, ուր, գիտէր, հեշտութեամբ առիթ պիտի ունենայ անուղղելի, անդառնալի բան անել շնորհիւ իր անզուսպ զայրոյթի։ Մի անգամ երբ նոր էր նշանուած, մի քէֆի մէջ, ընկերներից մէկը կիսահարբած վիճակում նրան ասաց՝ «Նշանածդ սիրուն է, մեր աղայ»։ Գալօն կատաղութիւնից գլուխը կորցրած՝ գինով լի ահագին կուլը խլեց և ընկերոջ գլխին շպրտեց. մահն անխուսափելի էր, եթէ կոխքի միւս ընկերը թեւին չը խփէր և հարուածը չը վրիպէր։ Այս դէպքին ծանօթ էր ամբողջ գիւղը, Գալօն ինքն էլ երբէք չէր մոռանում և աշխատում էր նման պայմանների մէջ չ՚ գտնուել երբէք։

—Ա՛յ մարդ, մի օր դու քո զայրոյթով մեր գլուխը մի բան կբերես, տեսնենք էրբ, ասում էր յաճախ կինը, երբ չնչին առիթից իր ամուսինը տաքանում էր։ Գալօն այդպիսի դէպքերում, ի պատասխան իր կնոջ, թաւ յօնքերը մի փոքր աւելի էր կախում ու լռում։ Իր հասարակական պարտքերը կատարելու համար նա առաջնորդւում էր միշտ իր հօր տուած մի հատիկ խրատով՝

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922

«Ամենքը մէկի, մէկը՝ ամենքի համար»։

—Արդա՛ր մարդ, հազար ողորմի քեզ, կրկնում էր նա ամեն անգամ այդ խրատը յիշելիս։ Այսօր այս իմաստուն խրատը Գալօն վերստին մտաբերեց, երբ գիւղի իրարանցումը տեսաւ։ Գիւղում էլի ջուր չկայ, ամենքը պիտի չարչարուեն, քրտինք թափեն, որովհետև մի մարդ Արագի հետ գլուխ թափել չի կարող. յետոյ երբ ջուրը գայ, ամեն մէկը կ՚օգտուի ընդհանուրի աշխատանքի պտուղից։ Սրանից էլ սիրուն, հասկանալի բա՞ն, մտածում էր Գալօն։ Արագը զուլում է արել, զուլումին ճար է պէտք, իսկ այդ ճարը միասին, միաբան պիտի արուի, հէնց երևի դրա համար են մարդիկ իրար մօտ ապրում, ինչի՞ են պէտք ձեռները, թէ տասն մատ չունենային. մի ձեռքը ծա՞փ կը տայ։ Գիւղի բանն էլ այսպէս է. որ ամեն մէկը չանի, ամենքը կը տուժեն. երբ ամենքը անհոգ, անպարտաճանաչ լինեն, ամեն մէկը կը քանդուի. «մէկն ամենքի, ամենքը մէկի համար, ողորմի քեզ, հա՛յր»։

Այսպէս մտածեց Գալօն և իր աղքատիկ ընթրիքը կնոջ և Շողիկի հետ վերջացնելուց յետոյ, թէև յոգնած, ուժասպառ,

բայց վերկացաւ, պատից վերցրեց կացինը, գօտին խրեց և վերստին դէպի այգիները գնաց՝ իր բաժին ճիւղերը բերելու համար։ Ճանապարհին էլի յիշեց օրուայ անցքերը, յիշեց մանաւանդ իր Տողիկին, որին սիրում էր աչքի լոյսի պէս։ Նրան վարդագոյն մինթանայ, կանաչ-կարմիր լենտ ու ճռճռան կօշիկներ է խոստացել։ Գալօն ժպտաց իր աղջկան երևակայելով զարդարուած ու սիրուն։ Բայց այդ ժպիտը վայրկենապէս փախաւ նրա դէմքից, երբ յիշեց, որ այդ բոլորը Արազի ձեռքին է, նրա ալիքների տակին է թաղուած․ թէ ջուր չը տայ, թէ բամբակը չորանայ, ինչո՞վ գնի․ պէտք է գնալ, զօրով խլել այդ բոլորը։ Խե՜ղճ Տողիկ, իսկ նա այնպէս հաւատացած է, գիշեր ցերեկ երազում է։

Այգում մի նոր մտահոգութիւն տիրեց Գալօին. Նա չը գիտէր որտեղից ձեռք բերել ծառի ճիւղեր։ Պտղատու ծառերից կտրել չէր կարելի, իսկ բոլոր անպտուղ ծառերից մնում էր միայն մի հատիկ ուռենի, Տողիկի ուռենին։ Միւսների ոստերն այս տարի իսպառ զոհ գնացին Արազին, մնում էր այս մէկը, որ իր փոքրիկ պատմութիւնն ունէր։ Վեց տարի առաջ էր։

Գալօն լաւ յիշում է, մի օր ինքը այգում առուակի ափին ուռենիներ էր տնկում, փոքրիկ աղջիկը վազէվազ մօտեցաւ.

—Հայրիկ, այդ ինչ ես անում.

—Ծառ եմ տնկում, մա՛տաղ.

—Ինչո՞ւ ես տնկում.

—Տնկում եմ, որ մեծանան.

—Յետոյ խնձոր ու տանձ կը լինի՞.

—Հա՛, յետոյ խնձոր ու տանձ կը լինի.

—Մէկն էլ ես տնկեմ, հայրիկ, որ ինձ էլ խնձոր ու տանձ լինի, հա՞։

Եւ նա փոքրիկ թաթիկներով վերցրեց մի բարակ ոստ ու բոլոր ուժով տնկեց առուակի եզրի խոնաւ հողի մէջ։

—Գիտե՞ս կնիկ, ասաց Գալօն ժպտալով իր կնոջը, Տողիկը ուռենի տնկեց, թող մնայ, տեսնենք ինչ կը լինի։ Մայրը գրկեց փոքրիկին, որ քրքջալով ծիծաղում էր, հպարտ էր։

Եղաւ այն, ինչ որ լինելու էր. ուռենին հեշտ և արագ աճող բոյս է, միքանի ժամանակից յետոյ նա արմատներ, ոստեր ձգեց և միւսների պէս դարձաւ փոքրիկ ծառ, «Տողիկի ծառ», ամենից սիրուն, ամենից սիրելի։ Նրա երկար, դալար ոստերը կախկխուեցին առուակի վրայ, ինչպէս արտասուող

կոյսի արձակ մազերը, և ամրան շոգերին մշտազով մթնոլորտ էին պահում իրանց տխուր հովանու տակ։ Շողիկն այնքա՜ն ուրախ, այնքան երջանիկ էր միշտ իր ծառի տակ։ Այնտեղ էր շարում նա իր տիկնիկները, անտեղ էր շինում իր փոքրիկ տնակը, և թիթեռներ ու բզէզներ փակում ներսը, այնտեղ էր երգում իր սիրուն մանկական «լէլէները» և ուռենին սօսափում էր մեղմով այդ սիրուն «թռչնակի» վրայ։

Այսօր էլ շքեղ, սաղարդաշատ ուռենին փռել էր իր դալար ոստերը հարուստ փնջերով, երեկոյեան հովից օրօրում էր իր սգւոր գլուխը և կարծես վտանգ զգալո՜վ փափսում էր մեղմիկ, տերևները դողդողում, փարում էին իրար, և ամբողջ ծառը սարսռում էր խորհրդաւոր շշուկով։ Գալօն կանգնել էր նրա առաջ, նայում էր մտախոհ և չգիտէր ինչ անել. Արագն էր ուզում այդ սիրուն ծառը, բայց Շողիկը լաց կը լինի, ճ, ի՜նչպէս կը հեկեկայ։ Գալօն երկար կանգնած մնաց, ժամանակն անցնում էր, նա մի քանի քայլ հեռացաւ, ապա յետ եկաւ, կրկին գնաց, էլի եկաւ.

—Արա՜գ, զուլում Արա՜գ, բացականչեց

նա և արագ-արագ բարձրացաւ ծառը։ Առաջին ճիւղին հարուածելուց առաջ, բարձրացրած կացինը մնաց առ ժամանակ օդի մէջ, զարկե՞լ, թէ չէ, դեռ մտածում էր նա։

—Ուո՜ւհ, հնչուեց ոստերի մէջ մի ցաւոտ մռնչոց և առաջին ճիւղը ճռնչալով գետին ընկաւ. միւսների համար Գալօն էլ չը տատանուեց, հարուածները թափւում էին արագ-արագ, նոյն իսկ զայրոյթով, կատաղութեամբ, կարծես նա ոխ ունէր հէնց այս ծառի դէմ և ճիւղերը ճռնչում էին գետին տապալուելով իրար յետևից։ Քրտինքի մէջ կորած, հևալով նա միայն այն ժամանակ կանգ առաւ, երբ իր վերջին հարուածը կորաւ օդի մէջ և երբ ճղակոտոր ուռենին մնաց մերկ, ինչպէս մի հաստ ցից։ Գալօն շտապով ցած թռաւ, շուտ-շուտ հաւաքեց ճիւղերը, շալակ կապեց, թիկունքն առաւ և հեռացաւ, աշխատելով յետ չը նայել։ Նա վերստին յիշեց Շողիկին. վաղը աղջիկը կը տեսնի իր ծառի այս զարհուրելի մերկութիւնը, այս անսիրտ աւերածը։ Գալօն երևակայում է այդ տեսարանը, երեխան ուրախաձայն աղաղակներով վազէվազ գնում է դէպի իր ծառը և քարացած ու բերանաբաց կանգ է առնում, ապա աչքերը

արցունքով լեցուն և յուզմունքից ու վշտից կերկերուող ձայնով գանգատւում է մօրը…

Գալօի աչքերը թացացան, բեռն աւելի ծանրացաւ:

Նա երեսը դարձրեց և տնքալով իր բեռի տակ՝ առաջ շարժուեց.

—Բա՛րև, սանահէր Գալօ.

—Բա՛րև, ախպէ՛ր: Եղօն էր, Գալօի հարևանն ու քաւորը, որը նոյնպէս մի մեծ կոյտ ճիւղեր շալակած՝ գիւղ էր գնում:

—Սանահէ՛ր Եղօ, ի՞նչ կ'ասես, անիծած Արագը այս տարի քանդեց մեզ, էլ ճիւղ ճարել չենք կարողանում, վերջին ծառըն եմ ճղակոտոր արել այսօր, գլխիս կրակ մաղուեց, լացս եկաւ. Շողիկի ծառն էր:

—Դէ սանահէր, Արագն Արագ է, այդ գիտենք, Բին-Գեօլում որ երկինքը փուշտայ, մեր աչքերից արցունք կը գայ: Արագի ցաւը մեր հայրերն էլ են տեսել, մեր պապերն էլ, Ադամից սկսած մեր օրն այս է: Բայց ցաւը որ մէկ լինի, տանելը հեշտ է, արի տես, որ այժմ հոգի, հաւատ չի մնացել, անաստուած մարդիկ շատացել են. Արագը որ մենակ զուլում անէր, դարդերս խօմ մէկ կը լինէր:

—Է՛, կայ չը կայ մեր տուն քանդողը Արագը չէ՞:

—Է՜հ, ո՞վ գիտէ ախպէր, այնպիսի բաներ են ասում, այնպիսի բանե՜ր: Մեր արտերն են չորանում, գիւղում մի կում ջուր չը կայ, ձմեռը մեր երեխաներին թոնիր զցես մշահոտ չի գայ, բայց էլի այնպիսի բաներ են ասում, որ մարդի մազերն են գիզանում, ես ի՞նչ գիտեմ:

—Ի՞նչ, սանահէր, ի՞նչ են ասում:

—Այն՝ որ մենք այսպէս սև օրով, արիւն-քրտինք թափելով շաբաթը մի անգամ թումբեր ենք քաշում Արագի առաջին, թըշնամի, անհոգի մարդիկ գիշերանց գնում են մի երկու բահ զարկում, քանդում են ջրի բերանը տալիս մեր այնքան աշխատանքը, մեր երեխաների ապրուստը:

Բեռի տակ կռացած Գալօն կանգ առաւ:

—Եղօ, դու ցնդուել ես.

—Երանի թէ ցնդուած լինէի, սանահէր.

—Եղօ, դու գիւահար ես.

—Երանի թէ գիւահար լինէի, սանահէր, ասում են…

—«Ասում են, ասում են», ա՛յ մարդ, դու խօմ փափախիդ տակ գլուխ ունես, ո՞ւմ դարդն է կտրուել այդքան ծով մեղքի

տակ մտնել և ինչու համար։

—«Ծով մեղքը» քեզ պահի, միամիտ սանահէր, «ինչու համարին» խօսք չունեմ։ Նրա համար, որ այդպէս են կամենում ռէսը, տանուտէրը, ջրպետը և ով գիտէ էլ ով... Գզիրը ասում է փողոցներում, թէ տունը մի մարդ Արազ գնայ, վաղը երկու տնից մի մարդ էլ հագիւ գնայ. ուր են մընացածները, ինչու չեն գալիս գիւղի ցաւը հոգանք. նրանք ինձ ու քեզ նման անճարակ խեղճեր չեն, սանահէր Գալօ, նրանք առաջուց տեսնում են ռէսին, տանուտէրին, ջրպետին, բերանները քաղցրացնում են մի բանով, ու էլ Արազ չեն գնում, մնում են իրանց գործով զբաղւում։ Ես ու դու կ՚երթանք, ջուր կը կապենք նրանց համար, թէ կարողանանք։ Այսպիսով այդ երեք աւազակները իրանց ընկեր այլ աւազակների հետ մի կլորիկ գումար են դնում գրպանները, ահա թէ ինչու նրանց հարկաւոր է, որ Արազը շուտ-շուտ քանդի թումբերը. թէ չը քանդի, ինչու իրանք քանդել չը տան. այդ խօմ դժուար չէ, երկու բահ միայն։

Գալօն շալակը ցած դցեց հէնց ճանապարհի մէջ տեղում և վրան նստեց, էլ տանել չէր լինում. այն՝ ինչ որ ինքը լսեց, կոկորդը

խեղդում էր, օդը պակասում էր նրան։ Մի փոքր մնաց գլուխը քաշ գցած կրծքին, ապա յանկարծ վեր թռաւ, մարմնի առաջին մասն ու պարանոցը մեկնեց առաջ դէպի հարևանը, աչքերը վառուեցին խաւարում. նա նայում էր և աշխատում էր Եղօի դէմքը տեսնել.

—Եղօ՛, ճշմարի՞տ է այդ, ինչ որ դու ասում ես։

—Խեղճ Գալօ, դու ես միայն աշխարհի չար ու բարուն անծանօթ. ձկան ականջի մէջ ես քնել, այն էլ շատ է, որ վաղը մեր աչքի առաջ խուրձերի պարանը գողտուկ կտրել չը տան մեր ողջ օրուայ աշխատանքը ջրին յանձնեն։

—Ո՞վ, ում ձեռքով, ախր ով կ՚անի այդ չարագործութիւնը. նա բռնել էր Եղօի ձեռքը և բոլոր ուժով թօթւում էր կարծես մարմնից պոկելու համար։

—Ո՛վ կ՚անի. ում որ մի քանի կոպէկ կը տան. ապա նա ձայնը ցածրացրեց, շըրթունքները բոլորովին իր հարևանի դէմքին մօտեցրեց. նրանք այժմ դէմ առ դէմ կանգնած՝ հևում էին իրար երեսի և փոխադարձաբար զգում էին իրար տաք շունչը։

—Ո՞վ։

—Վարթօ՛ն, հէնց գզիր Վարթօն։

—Եղօ՛, սուտ է, սուտ է այդ բոլորը. մռնչաց Գալօն վիրաւորուած գազանի պէս, սուտ է, դու անխրատ մարդ ես, փո՛ւհ, ինչ վատն ես։ Ապա նա խլեց իր բեռը, թափով դցեց մէջքին և առանց հարևանին մի բառ ասելու, առաջ անցաւ ու կորաւ խաւարի մէջ։

—Ողորմելի՛ միամիտ, լսուեց նրա յետևից։

III

Գալօն տուն եկաւ սիրտը ցաւած ու մռայլ, որ «աշխարհն այդքան չար է»։ Եթէ Եղօն ուղիղ է ասում, մտածում էր նա, աշխարհը չար է, թէ սուտ է ասում, էլի չար է, չէ՞ որ Եղօն էլ աշխարհից է և հոգի է այրում։ Ապա նա շուտ պառկեց քնելու, որ հանգստանայ, առաւօտը վաղ Արագ գնալու համար։ Քունը չը տարաւ։ Երեք պատկերներ նրան մի վայրկեան հանգիստ չէին տալիս, նրա միտքը կրծոտում ինչպէս ճիւաղներ, նրա ուղեղը ճմռում իրանց գաղտնիքի ծանրութեամբ և նրանցից իւրաքանչիւրը կարծես յղի էր մի զարմանալի խորհրդով, որ խուսափում էր Գալօի խելքից և որ այ-

նուամենայնիւ սարսափելի էր։ Այդ սարսափելին էր փնտրում Գալօն առանց ինքն իրան հաշիւ տալու և այդ է պատճառը, որ հակառակ իր կամքի, այդ երեք պատկերները գալիս, ցցւում էին նրա տանջուած երևակայութեան առաջ միշտ. մի և նոյն կարգով, իրարից մի և նոյն տարածութեամբ որոշ ծրագրով և կարծես որոշ խորհրդով։ Գալօն նախ ասում էր «աշխարհը չար է», անմիջապէս յետոյ նրա շրթունքները կրկնում էին՝ «Տղիկը լաց կը լինի» և սրան հետևում էր երրորդը՝ «Արագը վիշապ է»։ Նա չը գիտէր թէ ինչո՞ւ է այսպէս լինում, ուզում էլ էր, որ այդպէս չը լինի. որ այս երեք «բանը» իրար յետևից չը գան, կամ գոնէ կարգը փոխեն, ի զո՛ւր, հէնց որ նա փախչում էր առաջինը, միւս երկուսը մի և նոյն կարգով արտասանւում էին և Գալօն վախենում էր իր ձայնից, վախենում էր այդ բառերից։ Նա տասն անգամ աչքերը զօրով փակեց պի՜նդ, պի՜նդ, հաստատ վճռեց այդ երեք խօսքերից և ոչ մէկը չարտասանել և քնել, բայց պատկերները եկան և նա աչքերը բացեց ու կըրկնեց.

«Աշխարհը չարէ».

«Տղիկը լաց կը լինի».

«Արագը վիշապ է».

Գալօն շուռ եկաւ մի կողքից միւս կողքի վրա, յետոյ դարձեալ առաջինի վրայ, տնքաց, ճֆ արեց, նստեց, էլի պառկեց, աչքերը պինդ փակեց, ի զո՜ւր... Յետոյ նա սկսեց մտածել թէ նա ինչո՞ւ է կրկնում այս խօսքերը։ Լաւ, «աշխարհը չար է», իրան ի՞նչ, կամ մի՞թէ նա նոր է իմանում այդ, մի՞թէ հազար ու հազար անգամ սրանից առաջ ինքը չի կրկնել զանազան առիթով մի և նոյն խօսքը. էլ այսօր ի՞նչ մի առանձին բան կայ դրանով զբաղուելու։ Այո՛ աշխարհը միշտ չար է, այդ հին բան է, բայց ասում են, որ նա բօրենի է, գիշերները շիրիմներն է քանդում և դիակները լափում, այս է նորը։ Հապա վերևից, կապոյտ երկնքից նայող աչքն ի՞նչ է ասում, չէ՞ ասում են, թէ Նա ամեն ինչ տեսնում է և գրում, խաւարի մէջ էլ է տեսնում, չը լինի՞ թէ խաբում են... խաբում ե՞ն... յետո՞յ... ուրեմն բօրենիներին է իրաւունքը, հո՜ւ...

Հապա Տղիկի ծառը կոտրեմ, յետոյ քանդեմ... Տղիկը լա՜ց կլինի։ Նա նայեց աղջկայ փոքրիկ անկողնին, երեխան մուշ մուշ քնել էր։ «Քնիր, քնիր, քաղցրիկ զաւակ,

քնիր անմեղ հրեշտակս, աշխարհը չար է, բօրենիներով լիքը, քնիր, քնի՛ր, քանի կարող ես. ինչքան բան կայ, որ դու չը գիտես, և ինչքան լաւ կը լինի, որ երբէք, երբէք չիմանաս. ինչքան սիրուն բան կայ կեանքում, ձեռքիցդ կխլեն, թէ շող ես բռնել՝ խաւարը կտան, թէ ծաղիկ է՝ թերթերը կը փետեն, թէ քաղցր է, թոյնը կտան. Թո՜յն, Թո՜յն, իմ սրտում որքան կայ զաւակս, մի կաթիլն անգամ կ'ուզէի քեզ չը հասնի, բայց դու վաղը լաց կլինես իմ խեղճ զաւակ, որովհետև աշխարհը չար է, որովհետև Արագը վիշապ է»։

Էլի՛ Արագը. Գալօն կ'ուզէր գոնէ Արագի մասին չը մտածել, բայց ամենից շատ այդ վիշապն էր զբաղեցնում նրան, ամենից շատ այդ էր վախեցնում նրան։ Ինչո՞ւ. Գալօն երկար մտածեց և յանկարծ յիշեց «Արագի ձուկ աղջիկը» և նրա հետ, ինչպէս մանկութեան մի մոռացուած երազ, իր քրոջ՝ սիրունիկ Մարանի պատկերը կանգնեց առաջը։ Մարա՜ն... Գալօի ամբողջ մանկութիւնն է դա, այն երջանիկ օրերը, երբ արցունքի տակ անգամ ծիծաղ է թագնուած, երբ աշխարհը վարդ և կեանքը երազ է։ Գալօն սակայն շատ բան չի յիշում իր կեանքի

այդ վառ արշալոյսից. նա յիշում է միայն որ մի քոյր ունէր, որին սաստիկ սիրում էր և որն իր համար «Արագի Ձուկ աղջիկն» էր պատմում։ Գալօն յիշում է նաև թէ ինչպէս ինքը ճնճղուկների ձագեր էր բռնում բերում քրոջը, ապա յոգնած ու քրթնաթոր գլուխը դնում էր նրա ծնկանը, աչքերը յառում էր երկնքում սահող ամպերին, իսկ քոյրը պատմում էր նրան «Ձուկ աղջկայ հէքիաթը», որի վիշապից երկսով էլ վախենում էին, իրար մօտ կծկւում, բայց և այնպէս, ոչ քոյրն էր հրաժարւում պատմելուց, ոչ եղբայրը լսելուց։ Եւ նրանք վախվխելով, բայց սիրով էին երևակայում Արագ, վիշապ, «Ձուկ աղջիկ», և լա՜ւ էր, լա՜ւ էր այդ բոլորը։

Գալօն որպիսի՜ քնքշութեամբ էր սիրում Մարանին, նրա խոր ու միշտ թախծապատ աչքերը, որոնք ոգևորութեան և թեթև բարկութեան րոպէներում, կլոր ձև էին ստանում ինչպէս երկու վառ աստղեր, նրա թուխ, երկայն մազերը, նրա գունատ դէմքի անփայլ ժպիտը. քանի՜ քանի անգամ եղբայրը լաց է եղել միայն նրա համար, որ քրոջ աչքերում արցունք է տեսել։ Գալօն այն ժամանակ հաւատացած էր, թէ

ամենամեծ երջանկութիւն է մի բարի, սիրուն քոյր ունենալ, որի անունն անպատճառ Մարան լինի, և որն անպատճառ «Ձուկ աղջկայ» հէքիաթը իմանայ, Գալօի գլուխն իր ծնկանը դնի և պատմի, պատմի... Եւ այդ քոյրը տաս տարեկան չը հասած խեղդուեց իրանց դաշտերի մեծ առուի մէջ, Գալօն այդ տեսաւ և իր մանկութեան բոլոր երազները սև դարձան։

Երկար ժամանակ Գալօն հաւատացած էր, թէ Արագը տարաւ նրան Ձուկ աղջկայ մօտ։ և այդ ժամանակից Գալօն և՛ վախենում էր Արագից և՛ ատում էր։ Ա՜խ ինչպէս կ'ուզէր Գալօն այժմ էլ գլուխը դնել քրոջ ծնկանը՝ ինչպէս մանկութեան օրերում, մոռանալ ամեն բան և լսել նրա շրթունքներից «Ձուկ աղջկայ հէքիաթը»։ Բայց Մարանն էլ չկար և Գալօն էլ երեխայ չէր, մեծ մարդ էր. տանջուած, մռայլ, հաւատը կորցրած դէպի աշխարհ, դէպի մարդիկ, դէպի ամեն ինչ։ Ասում են, թէ Շողիկը նման է Մարանին, Գալօն նորից նայեց աղջկան, երեխան շարունակում են քնել անուշ անուշ. նրա կողքին կծկուած՝ մռմռում էր փոքրիկ կատուն, դունչը դրած երեխայի խոպոպների մէջ։ Գալօն ձեռքով հեռացրեց կատուին, նա այդ

վայրկեանին չէր ուզում, որ Տողիկին ոչ ոք դիպչի, Տողիկը և՛ իր աղջիկն է և՛ իր Մարանն է։ Կատուն յետ եկաւ և կրկին իր տեղը բռնեց, Գալօն նորէն հեռացրեց նրան. կենդանին էլի յետ եկաւ. զայրացած Գալօն այս անգամ ուժով բռնեց նրա մէջքից և բոլոր թափով շպրտեց դէպի պատը։ Կատուն ջախջախուած ու արիւնլուայ գետին ընկաւ ողորմելի մլաւիւններ արձակելով։ Աղմուկի վրայ կինը զարթնեց.

—Գալօ՛։

—Օ՛ֆ օ՛ֆ։

—Կատուին դո՞ւ զարկիր…

—Ի՞նչ գործ ունի Տողիկի մօտ։

—Տնաշէն, նա խօմ միշտ այնտեղ է, խեղճ կենդանի, ի՜նչ անսիրտն ես ա՛յ մարդ։

Կատուն շարունակում էր ցաւոտ մլաւիւններ արձակել։

—Ինչ է պատահել քեզ, ինչո՞ւ չես քնում… Գա՛լօ ջան։

Պատասխանի փոխարէն խաւարի մէջ հնչուեց Գալօի հեկեկանքը.

Շփոթուած կինը նստեց, փաթաթուեց ամուսնու պարանոցին, քնքշութեամբ համբուրեց ճակատը։

—Ի՞նչ է պատահել քեզ Գա՛լօ ջան, մա-

տաղ. մեղք չե՞ս ինձ չարչարում ես։

—Ոչինչ, ա՛յ կնիկ, Մարանը միտս ընկաւ, մեր պստիկ Մարանը, երազումս տեսայ, էլի ինձ համար Ջուկ աղջկայ հէքիաթն էր պատմում, ինչպէս երեխայ ժամանակս։ Մարանը շատ լաւն էր, ինչպէս էի սիրում։ Եւ լացս եկաւ…

Գալօն թագցնում էր ճշմարտութիւնը, նա լաց էր լինում կատուի համար, որին չը գիտէր ինչո՞ւ սպանեց. լաց էր լինում՝ որովհետև աշխարհը չար է, Տողիկը լաց կը լինի, Արագը վիշապ է։

—Կնի՛կ, դու «Ջուկ աղջկայ» հէքիաթը չը գիտե՞ս։

—Ախր դրա ի՞նչ ժամանակն է, Գալօ ջան, քնիր, հանգստացիր։

—Դէ որ քունըս չի տանում. կնիկ, դաս, դու ինձ «Ջուկ աղջկայ» հէքիաթը պատմես, ես էլ կամաց կամաց կը քնեմ։

—Երեխայ ես դարձել։

—Ա՛խ, կնիկ, ո՞ւր է թէ երեխայ դառնայի, Մարանն էլ կենդանի լինէր։

—Լաւ, դէ լսիր «Ջուկ աղջկայ» հէքիաթը.

«Կը լինի չի լինի, մի շատ սիրուն աղջիկ կը լինի։
Այդ աղջկան մի քաջ և սիրուն նշանած կը լինի։

Մի օր աղջիկը դաշտ կ՚երթայ բանջարի,
Վիշապը նրան կը խլի ու կը փախցնի»։
—Ջատու պառաւից ասա, կնիկ, ա՞յն է լաւ:
«Պառաւ ջատուն եկաւ, հասաւ հեծած կաւէ խնոցին,
Զար վիշապի այրից փախցրեց նազելի կոյս աղջկան.
—Պ՛առաւ, պ՛առաւ, աղջիկն ասաց, տար ինձ հասցրու իմ եարին,
Եօթը սարից, եօթը ձորից այն կողմն է իմ սիրելին:
—Չէ, խօրօտիկ, դու ինձ պէտք ես, ջատու պառաւըն անխելք չէ,
Սար ու ձոր եմ չափել, անցել, դու ինձ պէտք ես, կոյս աղջիկ:
—Պ՛առաւ, այն կողմ մի տար ինձի, Արագն է մեր առաջին,
Դու խոմ գիտե՞ս ծուռ Արագին, ճամպայ չի տայ գիշերով,
Ծուռ Արագը ճամպայ չի տայ և վիշապը կը հասնի:
Պառաւն անտես արաւ աղերս կոյս գեղանի աղջկան,
Շարժեց թափով իր խնոցին և Արագի ափն իջաւ:
—Արա՛գ, նայիր բեռս է սիրուն, չար վիշապն է քամակիս,
Թէ ճար չտաս, կոյս գեղանին բաժին կ՚ըլնի վիշապին,
Արագ, խղճա՛, բեռս է սիրուն, չար վիշապն է քամակիս:

—Բեռդ ինձ տուր, անցիր գնա՛, մինչաց գիժ Արագը,
Սէր էլ ունեմ, տեղ էլ ունեմ, անդունդներս են հազարով.
Սիրուն բեռդ գիրկս գցիր, պ՛առաւ, անցիր դու գնա՛:
—Արագ, մէջքս տաքանում է չար վիշապի բոց շնչից,
Եկաւ, եկաւ, վրայ հասաւ, մի ճար տուր ինձ, ջա՛ն Արագ:
Արա՛գ նայիր՝ բեռս է սիրուն, չար վիշապն է յետևիս:
—Կոյս գեղանին ծո՛ցս գցիր, պ՛առաւ, անցիր դու, գնա,
Հազար վիշապ, հազար գլխով էլ չեն խլի իմ ձեռքից,
Տո՛ւր ինձ կոյսը, ճամպայ կը տամ, թէ չէ ջուր ես աղերսում:
Վիշապն հասաւ, աղջիկը թռաւ, գիժ Արագի ծոցն ընկաւ,
Վիշապն հասաւ ու պառաւին խնոցիով կուլ տուաւ:
Եւ աղջիկը գետի ծոցում մէկէն սիրուն ձուկ դարձաւ,
Ձուկ աղջիկը հարսը դարձաւ, սիրուն հարսը Արագին:
Բայց նը մոռցաւ իր սիրածին եօթը սարից այն կողմը,
Ալիքների մրմունջներից նա սիրոյ երգ ոլորեց,
Հին օրերի երազներից սուգ ու ողբեր յօրինեց,
Ջրի տակ էլ անդունդներում նա աշխարհը անիծեց:
Կէս գիշերին լուռ լուսինը շողեր թափեց արծաթի,
Աստղերն եկան շարան-շարան Արագի մէջ նայեցին,

Եւ նայեցին ու ժպտացին ալեակների երեսին,
Աչքով արին ալեակներին, դողդողացին նրանց հետ,
Եւ ձկների արծաթ մէջքին շող հիւսերը փռեցին,
Եւ ձկների խմբերի հետ խաղ ու պարեր սարքեցին։
Կէս գիշերին Ջուկ աղջիկը մոլար, տխուր ու մենակ,
Գիժ Արագի փայփայանքից փախաւ դէպի ափերը։
Լուռ ափերին, խուլ ափերին երազ օրերը սգաց,
Լուռ ափերին, խուլ ափերին ցաւի երգը մրմնջաց,
Անուշ ձայնով Նարին կանչեց, Նարը չեկաւ ու չեկաւ,
Այրուած սրտով խորասուզուեց, ալիքների տակ մտաւ։
Գետի ափին յանկարծ հասաւ մի սիրունիկ տղամարդ,
Նժոյգ հեծած, լախտը ձեռքին ու մազերը փողփողուն,
Կանգնեց ափին,—Արագ, սաստ, մի ճանապարհ տուր ինձի,
Ջար վիշապը Նարս տարաւ եօթը սարից էն կողմը,
Մի ճամպայ տուր, Նարիս գտնեմ, տանեմ հասնեմ մուրազիս։
Գիժ Արագը գոռաց, թնդաց, բաշը ցցեց կատաղած,
Սարեր կաղմեց ալիքներից, բարդ-բարդ փրփուր դուրս հանեց,
Եւ փրփուրի վրայ յանկարծ Ջուկ աղջիկը յայտնուեց,
Նայեց ափին տեսաւ Նարին սիրոյ երգը գեղգեղեց,

Դիւթիչ ձայնով, ցաւոտ ձայնով սիրոյ երգը նա երգեց։
—«Ջար վիշապի խաւար այրից ջատու պառաւն ինձ խլեց,
Ջար պառաւի ձեռքից փախայ, գիժ Արագի գիրկն ընկայ.
Լուսինն եկաւ, ժպտաց ինձի պաղ շիթերով արծաթի։
Աստղերն եկան շող հիւսերը դալար մէջքիս փռեցին.
Արծաթ միջքիս շողն ինչ անեմ, սէրն եմ ուզում իմ Նարին,
Դալար մէջքիս ջուրն ինչ անեմ, սէրն եմ ուզում իմ Նարին»։
Ջուկ աղջկայ ձայնը թռվեց Նժոյգ հեծած կորճին,
Սիրոյ երգով կոյսը վառեց սէրը փնտռող իր Նարին.
Շարժեց իր ձին, ալիքների գիրկը նետուեց կտրիճը,
Ջուկ աղջիկը գրկեց նրան, անդունդների խորն իջան,
Գիժ Արագի սառը ծոցում նրանք մուրազին հասան»։

—Ախր կը խեղդուէին։ Տողիկն էր... զարթնել էր և ականջ էր դնում։

—Չեն խեղդուի, Տօղիկ ջան, ձուկ դարձան։

—Հա, չեն խեղդուի, ձիաւորը կը խեղդուի, Արագը կը խեղդի, Արագը վիշապ է,

հա՛յրիկ, դու էլ մի՛ գնար, չը խեղդուե՛ս, Զուկ աղջիկը կը բռնի հա՛մ.

—Չեմ խեղդուի մատաղ, քնի՛ր, քնի՛ր…

IV

Արևելքը դեռ չէր շառագունել. գիւղը՝ վախեցած քարաթոթոշի պէս կծկուած, մրափում էր անշշուկ. խաւար ու գալարուն փողոցները ինչպէս սև օձեր ձգւում էին գանազան ուղղութեամբ, իրար էին փաթաթւում, կծիկ դառնում, յետոյ կրկին բաժանւում և կամ կորչում էին տների մութ զանգուածի մէջ, կամ մի անվերջ յօրանջումով երախները բացած այլանդակօրէն նայում էին դէպի ամայի դաշտերը։ Աքաղաղները բոլոր տներից կանչել սկսեցին, բայց նրանց միահամուռ ձայնը չը կարողացաւ խլացնել գըզիր Վարթօի առաւօտեան կանչը. «Արա՛գ, Արա՛գ»։ Մարդիկ քնաթաթախ ու յօրանջելով դուրս էին սողում այս ու այն պատի կողմից, այս ու այն անկիւնից և մոլար ստուերների պէս դիմում էին վերստին դէպի հրապարակը, գիւղի ընդհանուր բանակատեղին։ Լսւում էին եզների բառաչ, գոմէշների փնչոց, սայլերի ճռինչ, բահերի զրնգոց, հատուկտոր խօ-

սակցութիւններ, դժգոհ ձայներ, կիսաքուն մարդկանց կցկտուր պատասխաններ։ Գալօն էլ փողոցումն էր։

«Տէր Աստուած, մտածում էր նա, և այս բոլորը նրա համար, որ մեր մարդակեր իշխանները մի ժամուայ մէջ ջրի՜ն տան… Չէ՛, չէ, Վարթօն չի անի այդ, ռէսն ու տանուտէրն էլ չեն անի, ջրպետն էլ չի անի։ Ամենքն էլ վատ մարդ են, անկուշտ գազաններ, ուրիշի քրտինքին աչք դրած չարագործներ, բայց էլի մեռել ուտող բորենիներ չեն։ Արագի թմբերը քանդել, թէ մեր տները, գիւղի ջուրը կտրել, թէ մեր երեխաների վիզը—այդ մէկ է. ո՞վ կ՚անի, ո՞վ այդքան մեղք իր հոգու վրայ կ՚առնի։ Ախր իրանց մեռելները գերեզմանների մէջ կը դողան, զայրացած հողն էլ նրանց ոսկորները կը ճմռի։ Մա՛րդ են, կրծքերի տակ սիրտ ունեն, որ քար չէ, այլ թրթռուն միս։ Դարչելի Եղօ, փո՛ւհ, ի՞նչ վատ է աշխարհը։»

Եւ գիւղը շարժւում, գնում էր դէպի Արագը։ Ճիւղերով բեռնաւորուած սայլերը ճռնչում էին բեռների ծանրութիւնից կարծես տնքալով ցաւից, իսկ գիւղացիները մեծ ու փոքր խմբեր կազմած հետևում էին նրանց դանդաղ ընթացքով։ Մի ամբողջ կարաւան

էր կամ, աւելի ճիշտ, մի խստասիրտ աս-
տուածութեան դուռը դիմող ուխտագնացնե-
րի երկիւղած բազմութիւն։

— Բարի լոյս սմնահէր։ Գալօն յետ նայեց, դարձեալ Եղօն էր։

— Աստծու բարին։

— Էլի՞ նեղացած ես։

— Չէ, դէ ի՞նչ նեղանամ, գիւղի բան է, այսպէս էլ կ՚ասեն, այնպէս էլ։

— Հա, լաւ է, որ չես նեղացած, դէ մի աչք ածիր չորս կողմդ, տես քանի հոգի ենք Արագ գնում։

— Քանի հոգի ե՞նք, չէ տունը մի մարդ է էլի, ի՞նչպէս համարեմ։

— Մի՛ համարի, այնպէս մի աչք ման ածիր, գիւղը՝ խօմ գիտես, հարիւր տուն է, այստեղ վաթսուն մարդ էլ չը կայ։ Լուսաբաց էր արդէն, Գալօն յետ նայեց, առաջ նայեց, Եղօն կարծես թէ ճշմարիտ էր ասում, հէնց իր մօտի հարևաններից շատերը չը կային, նա գլուխը քաշ ձգեց ու լռեց, չը բարկացաւ, բայց աւելի մտածկոտ դարձաւ։

— Բարին քեզ հետ սմնահէր, ասաց Եղօն ու առաջ անցաւ։

Գալօն նրան անպատասխան թողեց։ Ախր ի՞նչ է ուզում այս մարդն իրանից. բանուոր-

ները քիչ են, ռէսն էլ, տանուտէրն էլ, ջրպետն էլ գողեր են, ողջ աշխարհը դժոխք է, մարդիկ գազաններ, յետոյ... գիւղի ցաւը միայն Գալօ՞ն են տուել, ի՞նչ է գնում գալիս իր սիրտը ցաւեցնում։ Քաղհանն այսօր կինն ու Շողիկն են անում,— խեղճ Շողիկ, տուին էլի քանի՜ փուշ կը մանի և ինքը Գալօն այնուամենայնիւ եկել է իր պարտքը կատարելու, անպատուած հարևանները չեն եկել, Գալօն ի՞նչ անի, ո՞ր հողը տայ գլխին, ո՞ր ջուրն ընկնի, մո՜ւհ աշխարհ, հազար երեսանի աշխարհ։

Եղօն Գալօից ոչինչ չէր պահանջում և եթէ գիտենար իր հարևանի ներքին ցաւերը, իսպառ հանգիստ կը թողնէր նրան, նա չար մարդ չէր։ Միայն նա միշտ զայրանում էր, որ իր համար այնքան պարզ, այնքան աշկարայ ճշմարտութիւնը ամենքը չը գիտեն, չեն խոստովանում։ Խոստովանե՜ն... թո՛ղ ամենքն ասեն, թէ մեզ կողոպտում են, խաբում են, զրկում են, որ մենք խեղճ ենք, տանջուած, անճար, անտէր, յետոյ... յետոյ ոչինչ։ Եղօն աւելի հեռու երբէք չէր գնում, նրա խիղճը բողոքող, ըմբոստ չէր, նա խաւարի մէջ, մի կորած անկիւնում իր ցաւերի վրայ գանգատուող, մրմնջացող լացող ձայնն էր և կ՚ու-

գէր, որ ամենքն էլ լաց լինեն ու հառաչեն։ Թո՛ղ Գալօն էլ լաց լինի իր սրտի խորքում, նա էլ զգայ, խորապէս զգայ, որ իրանք լողում են ցաւի ծովի մէջ և թող մղկտայ, մխայ ու լռի ինչպէս ամենքը։ Եղօն գիւղի արթուն խիղճն էր, սև ճակատագրի գիտակցական հնազանդութիւնն էր. ո՛չ ոք նրա պէս չէր ճանաչում իրերի ցաւալի վիճակը, ոչ ոք նրա չափ չէր տրտնջում, և ո՛չ ոք էլ նրա պէս հլու հպատակ չէր չարիքի ամենատեսակ պահանջներին. Եղօն մարմնացած գիւղն էր, այն սև ու լացող ամբոխն էր, միա՛յն լացող։

Արևը ծագել էր արդէն, երբ կարաւանը գետի ափին հասաւ։ Արագը ծոյլ ծոյլ արևկող արած, քնից նոր արթնացածի պէս ձըգձգւում ու գալարւում էր և մեղմով յետ էր ձգում իր վրայից գոլորշիների կաթնագոյն շամանդաղը։ Գալօն կանգնած նայում էր մտածմունքի մէջ ընկղմած։

—Տե՛ս սանահէր, ջուրն այսքան քիչ է. ի՞նչպէս կարող էր Թումբը քանդել։

Դարձեա՛լ Եղօն էր։

—Ջուրը քիչ է, պատասխանեց Գալօն դժկամութեամբ, առանց աչքերը գետից հեռացնելու։ Ալիքները կարծես գերել

էին նրա հայեացքը և Գալօն էլ ոչինչ չէր տեսնում իր շուրջը, չէր լսում։ Մի ձկնկուլ ալիքների վրայ զարկուեց հէնց Գալօի աչքի առաջ և մի ձուկ բռնեց ու բարձրացաւ, Գալօն այդ էլ չը տեսաւ։

—Զարմանք բան է, թէ Թումբերն ինչպէս են քանդուել, անձրև չի եկել, գետը չի վարարել ինչպէս անցեալ անգամները, խօսում էր Եղօն ըստ երևոյթին ինքն իրան, բայց իրօք Գալօին լսել տալու համար։ Վերջինս այդ հասկացաւ։

—Չը գիտեմ, Եղօ, ես եմ քանդել, ես, կոչեց Գալօն համբերութիւնից դուրս եկած, թո՛ղ ինձ հանգիստ, խեղդեցի՛ր. ձայնը խըռուեց և նա ճակատը յենեց բահի կոթին ու լռեց։

«Ի՞նչ է ուզում ինձանից այս մարդը, սատանայի պէս մի քայլ չի հեռանում, մտածում էր Գալօն, քանդել են, քանդել են, յետո՞յ... թող չը քանդէին. երեխայիս արցունքն եմ շալակել բերել նոր Թումբ շինելու, ուրիշ ի՞նչ անեմ. հո՛ւ աշխարհ, բարձրացիր էէ, նզոված ջուր, փրփրա՛, դուրս թափուի ափերից, վրաներս արի, սրբի՛ միանգամից, թո՛ղ հոգիներս ազատուի, չէ՞ բորենիներն էլ մեզ հետ կ'երթան»։

Եղօն նպատակին հասաւ. Գալօն լուռ մնում էր. կասկածը, սև հոգեմաշ կասկածը մի կաթիլ թոյնի պէս ընկաւ նրա շիտակ սրտի մի խոր անկիւնում և այժմ կամաց փորում կրծում էր՝ անասելի ցաւեր պատճառելով։ Բահի վրայ յենուած՝ նա ջղաձգաբար սղմում էր ոսկրոտ մատների մէջ բահի կոթը և չը ճչալու համար քիչ էր մնում ատամներով ձեռները կրծոտի. նա տանջւում էր, նա զգում էր, թէ ինչպէս իր կրծքի խորքից գունդի պէս մի բան ուռչում, մեծանում, լայնանում է և դանդաղ կերպով բարձրանում է դէպի վեր, դէպի կոկորդը։ Գալօն այժմ անկարող էր բարձրացնել իր գլուխը բահի վրայից, չէր էլ ուզում շուրջը նայել, շարժուել, կարծես թէ ամենափոքր շարժումից ուռած կուրծքը կարող էր պատռուել։ Դարձեալ յիշեց իր բամբակը, կնոջն ու Տողիկին, որոնք արևի տակ քաղհանում են, ապա աղջիկը ներկայացաւ նրա աչքին վարդագոյն մինթանայով, կանաչ-կարմիր լենտը սիրուն մազերի մէջ, փոքրիկ կօշիկները ոտներին. յիշեց ծառը, ճղակոտոր ու սգաւոր ծառը և Տողիկին նրա տակ արտասուելիս։

—Վիշա՛պ, վիշապնե՛ր, մռմռաց նա բռունցքները սղմած.

—Գա՛լօ, Գալօ, գործի կաց։

Վարթօ՛ն էր, գժիր Վարթօ՛ն. սա՞ է քանդել , սա՞ պիտի քանդի թումբերը։

Նա նայեց Վարթօին ոտքից գլուխ փորձող, շեշտակի հայեացքով, վերջինս յետ-յետ քաշուեց այդ ծակող հայեացքի առաջ. բայց էլի Վարթօն էր, ողորմելի Վարթօն. նա իր շաշ աչքերը առաջուայ պէս թարթեց բարութեամբ, քիթը, իր մեծ, կարմրած քիթը, խեղճ-խեղճ վեր քաշեց մի քանի անգամ ինչպէս միշտ, վար քաշ ընկած և միշտ լորձնոտ երկար շրթունքը դողդողացրեց ինչպէս միշտ, երբ վախենում էր մէկից և մնաց լուռ։

Սա՞ է քանդել, սա՞ պիտի քանդի, կրկին մռմռաց Գալօն. խեղճ ողորմելի Վարթօ, քանդել են, թող այդպէս լինի, չարն աշխարհից պակաս չէ, բայց Վարթօն, խեղճ ու կրակ Վարթօն, ո՛ւհ, Եղօ, դու գարշելի ես։

--Հա՛, գործի կենամ Վարթօ, գործի կենամ, լաւ ես ասում, մեր ցաւն է, հոգանք։

—Հապա, մեր ցաւն է, Գա՛լօ ախպէր, վրա բերեց Վարթօն՝ սիրտ առած. Արտը որ կայ մեր տէրն է, մեր էլ գուլումն է. ինչ անենք, ախպէր։ Վարթօն դարձեալ մի քանի անգամ շատ քաղցրութեամբ թարթեց

շաղ աչքերը, վեր քաշեց վարի ջրոտ շրթունքն ու կարմիր քիթը և գնաց կորաւ ամբոխի մէջ: Գալօն նայում էր նրա յետևից, ապա մի բան մռմռաց ատամների տակ Եղօի հասցէին ու գնաց գործի կեցաւ:

Եւ գործը եռում էր: Ռէսը, տանուտէրն ու ջրպետը որոտում, անիծում, հայհոյում էին. երբեմն-երբեմն լսւում էր մտրակի շրըխկոցը, մի ուրիշ կողմ հաստ ճիպոտն էր գործ ածւում, իսկ Վարթօն ինչ որ շարունակ ճվճվում էր, քիթն ու շրթունքը վեր քաշելով: Մարդիկ աշխատում էին մրջիւնների պէս: Սայլերը դատարկուեցին և ոստերից հաստ պարաններով մեծամեծ կապոցներ շինեցին ուրաքանչիւրի ծայրերում տապակ տապակ քար ու հող ածելով, որ ծանր լինի, ջրին դիմանայ: Քար ու հողի և ճիւղերի այս ահագին զանգուածը պէտք էր գետը գցել. մի քանի տասնեակ ձեռքեր կպան միանգամից, նախ՝ առաջին կոյտին և բոլոր ուժով, հարայ-հրոցով նրան դէպի ջուրը գլորել ըսկսեցին. իսկ Արազը հանդարտ ու վեհ քշում էր իր ալիքները, նայում էր խեղճ մարդկանց այս ջանքերին, թէև ճղփիւն էր հանում և կամ փսփսում ափերի հետ մի գաղտնի ծրագիր:

Բլրաձև կոյտը ահագին շառաչով ջուրն ընկաւ. ալիքները լայն յորձանք տուին և փախան այս ու այն կողմ, փրփրալով, ապա բոլոր ուժով զարկուեցին իրանց առաջ ցըցուած այս նոր արգելքին: Թումբը դողաց, բայց նոյն վայրկենին նրա վրայ թռան մի խումբ մարդիկ, ոմանք պարաններից կախուեցին, ուրիշները՝ ճիւղերից, մինչ դեռ ափի բազմութիւնն շտապ շտապ քարեր ու ցեխ էր շպրտում վրան, որ ծանրանայ, ալիքների թափին դիմանայ: Տանուտէրն ու ջրպետը ափից էին հրամաններ արձակում, ռէսն ու գզիրը թումբի վրայ էին, այստեղ էր և Գալօն:

—Քա՛ր, հարևաններ, քար ածեցէք, ճչում էր Գալօն քրտինքի մէջ կորած, նա կարծես իրօք վիշապի դէմ պայքար էր մտել և իր ոգևորութեան մէջ ամեն ինչ մոռացած, յափշտակուած գործի գեղեցկութեամբ, նա գեղեցիկ էր և խրոխտ: Մի վայրկեան, միայն մի հատիկ վայրկեան նրա աչքը Եղօի աչքին հանդիպեց, երկու տարօրինակ հայեացքների միջոցով մտքերի փոխանակութիւն եղաւ. Գալօն ասում էր.

—Ասում էիր թէ պարանը կը կտրեն, տես:

—Կը տեսնենք, պատասխանեց Եղօի հայեացքը։

Եւ կրկին լսուեց Գալօի կանչը՝ «Բար, ցեխ». և բահերով ու ձեռներով ամբոխը գործում էր անընդհատ։ Լա՛ւ էր. Գալօն հրճւում էր՝ «Բար ու ցեխ»։ Ուռած ալիքները սպառնալի էին և հզօր, բայց թումբը հաստատուն էր և ծանր, կարծես էլ վտանգ չը կար, նոյն իսկ ջուրը բարձրացաւ և շարժուեց դէպի առուները, էլի մի փոքր աշխատանք և ամեն ինչ վերջացած է։ Բայց յանկարծ թումբը երերալ սկսեց, դողաց ինչպէս երկրաշարժի ցնցումից, ապա ալիքների միահամուռ թափի առաջ հազիւ հաստատուած ամբարտակը տեղահան եղաւ և սկսեց ցրիւ գալ։

—Պարանը կտրուեց, ափը թռէք, ճչացին մի քանի ձայներ։ Թումբի վրայի բազմութիւնն շտապով յետ փախաւ ջուրը չը թափուելու համար, մինչդեռ Գալօն մեն մենակ դեռ կանգնած էր օրօրուելով, կարծես աչքերին չէր հաւատում, քարացած նայում էր իր ոտների տակ մռնչացող ալիքներին, նայում էր լայն գետի անհոգ յորձանքներին և էլ չը գիտէր թէ ի՞նչ է անում, մինչդեռ ամբարտակը քար ու քանդ էր լինում և մօտ էր իսպառ գլորուելու։

—Թռի՛ր, Գալօ, թռիր անաքանդ, ճչաց բազմութիւնը։ Գալօն քնից արթնացածի պէս նայեց իր ոտների տակ խուսափող թումբին և վերջին վայրկեանին ափը նստեց։ Ծառերի ահագին կոյտը բաժան բաժան եղաւ. իւրաքանչիւր ալիք իր մասն առաւ և, հրճուելով ու մռմռալով, ամբողջ օրերի աշխատանքն ու այնքան յոյսեր խառնեցին իրանց փրփուրների հետ և քշեցին դէպի անծանօթ հեռուն։

—Վիշա՛պ, մռնչաց Գալօն ատամների արանքից։ Նոյն վայրկեանին հէնց իր ականջի տակ մէկն ասաց՝

—Տեսա՞ր, ասացի կը կորէն։

Դարձեա՛լ Եղօն էր։

Գալօն լսեց շրթունքները կրծոտելով և նրա կրծքի տակի գունդը, որ աշխատանքի ժամին մոռացուել էր, վերստին լայնացաւ, ամբողջ կուրծքը բռնեց և հասաւ կոկորդը սեղմեց։ Գալօն այժմ անյաղթելի ցանկութիւն ունէր մի բան ասել, ճչալ, մի բան ջարդել, մէկին խեղդել և կամ բարձր, շատ բարձր տեղ կանգնել, թքել աշխարհի վրայ ու մռնչալ ահագին ձայնով մի այնպիսի բան, որ այս ամբոխը դողայ ցաւից ու զայրոյթից։

—Օձե՛ր, իժե՛ր և... էշե՛ր մռմռաց նա

տատամների արանքից և կրկին գործի կպաւ, կրկին ցատկեց երկրորդ կոյտի վրայ, որ նոյն վայրկեանին ջուրը ձգեցին։

—Քար ու ցեխ, գոռում էր ռէսը թըմբի վրայից։

—Քար ու ցեխ, ճչում էր Վարթօն պարանին կպած բոլոր ուժով և տեղից էլ չէր շարժւում։

Գալօն էլ չէր գոռում, չէր էլ շարժւում. փոթորկով բռնուած նաւի նաւապետի պէս մեխուել էր մի և նոյն տեղում, նայում էր իր թաւ յօնքերի տակից վառւող աչքերով, նայում էր շնչարգել, հեւալով. նա մի վայրկեան անգամ աչք չէր հեռացնում Վարթօից։ Ընդհանուր աղմուկի, իրարանցման մէջ Գալօն որսը նկատած բազէի պէս յանկարծ առաջ նետուեց ու ծունկ չոքեց Վարթօի մօտ և նրա ձեռքը բռնեց։ Վարթօն փորձեց պըսպղան բանը թաղել ոտերի մէջ, բայց արդէն ուշ էր, Գալօն տեսաւ դանակը... Վարթօն կտրում էր պարանը,

—Չարագո՛րծ, մռնչաց նա, դո՛ւ... Եղօն... օճհ մարդասպան, բորենի, ես քեզ... Մա՛յր, մա՛յր, դու մայր ես Արազ, վիշապները ու բորենիները սրանք են։

Վարթօն դարձեալ փորձեց շաշ աչքերը

դարութեամբ թարթել, փալնքաքիթն ու շըրթունքը խեղճ խեղճ վեր քաշել, նա նոյն իսկ ուզեց ժպտալ, բայց այդ բոլորից նրա դէմքը մի գարշելի արտայայտութիւն ստացաւ ու սարսափով խեղաթիւրուեց։ Գալօն կատաղաբար կանգնեց և ոտքի մի ուժեղ հարուածով չարագործին դէպի ալիքները շպրտեց։ Վարթօն գլորուեց, բայց պինդ կախուեց Գալօի ոտքից... Նոյն վայրկեանին ռէսը յետ թռաւ ափը սարսափած, իսկ երկու հակառակորդներ շրնփոցով ջուրն ընկան իրար փաթաթուած։ Այս բոլորը կատարուեց համարեա մի վայրկեանում։ Բազմութիւնը զարմանքից քար կտրեց, իսկ ռէսը գունատուած ու դողալով ընկաւ ափի աւազի վրայ։

—Պարա՛ն, պարա՛ն ձգեցէք, խեղդուեցին, շ՛ուտ կոչում էին, բայց խեղդուողները կարծես անուշադիր էին, օձերի պէս իրար փաթաթուած՝ ձեռքերն ու ոտքերը իրար խառնուած նրանք խորասուզւում էին ալիքների տակ, կրկին դուրս գալիս, դարձեալ յայտնւում, միշտ միասին, միշտ գալարուած, կարծես իրար ծեփուած։ Մի անգամ միայն Գալօն աջ բռունցքը սպառնալից կերպով բարձրացրեց ջրից վե՛ր վեր և որոտաց՝ «բորենինե՛ր». Վարթօն էլ նրա բազուկների

մէջ թրպրտալով, դէմքը սարսափից այլանդակուած, փորձեց մի բան ճչալ, բայց սղմուած կոկորդից ձայն չը դուրս եկաւ, իսկ ռունգներից արիւնը ժայթքեց և ջուրը ներկեց, սարսափելի էր։ Ափի բազմութիւնը գլուխը կորցրած՝ դժուարանում էր նայել գետի մէջ կատարուող տեսարանին, սովորական դժբաղդութիւն չէր, երկու կեանքեր չէին, որոնք մաքառում են ալիքների կատաղութեան դէմ, այլ մի ուրիշ անհասկանալի բան կար, որ ահաւոր էր դարձնում ալիքների մէջ կատարուածը։ Յանկարծ ճիւղերի երկրորդ կոյտը գլորուեց, թաւալ թաւալ առաջ խաղաց հասաւ խեղդուողներին և երկսին էլ մի անգամից իր տակ թաղեց․ իրար գալարուած մարմիններն այլ ևս չը երեւացին․ վերջացաւ։

Այնուհետև թումբը շինուեց․ Արագը դարձեալ գթառատ մայր էր, նա առատ ջուր տուեց և գիւղը մի անգամ էլ փրկուած էր։ Գալօն ու Վարթօն գիւղի համար զոհ գնացին, մտածում էին ամենքը և տխուր էին։ Մէկ Եղօն գիտէր, թէ ով զոհուեց գիւղին և ով իր պատիժն ստացաւ։ Անցան օրեր, գիւղը վերստին խաղաղուեց, մոռացաւ դժբախտ

անցքը, մոռացաւ իր ցաւը։ Եղօն էր միայն, որ մնաց սգաւոր, ճակատը միշտ մռայլ, կարծես մի ծանր յանցանք էր ծանրանում նրա խղճի վրայ․ նա դադարեց գիւղի ցաւերի մասին խօսելուց, յետ քաշուեց հրապարակից և մոռացուեց ինչպէս իր վատաբախտ սանահէրը։ Նոյն տարին աշնանը գիւղացիք զարմանքով տեսան, որ Գալօի բամբակը Եղօն հաւաքեց և աշնանացանը իր արօրով կատարեց։ Հազար ու մի ենթադրութիւններ արին, պատմութիւններ յօրինեցին, իսկ Եղօն անտարբեր դէպի ամենքը և ամեն ինչ ամբողջապէս իր վզին առաւ Գալօի տան ցաւն ու հոգսը։

Էլի գարուններ և ամառներ եկան․ Տողիկի ուռենին վերստին ճիւղեր արձակեց դալար ու երկար ու կախուեց առուակի վրայ, էլի նրա տակ ստուերն անուշ էր ու զով և հաճելի էր այնտեղ նստել․ բայց Տողիկն էլ չէր երգում իր «լէլէն», էլ տնակ չէր շինում, էլ տիկնիկ չէր խաղում։ Սգատերև ուռենին սօսափիւնով օրօրում էր իր լալկան ոստերը, տերևները տխրութեամբ փսփսում էին վերից և մայր ու աղջիկ նրա պէս սգաւոր, նրա պէս լալկան նստում էին ժամերով և հազար ու մի սև բաներ մտա-

ծում։ Շողիկն էլ չէր խօսում իր վարդագոյն մինթանայի, իր կանաչ-կարմիր լենտի, իր ճռճռան կօշիկների մասին, փշերով ծակոտուած իր ոտները նա էլ չէր ցոյց տալիս մօրը, միայն երբեմն երբեմն յետ յետ էր տանում իր խոպոպները, նայում էր մօր արցունքոտ աչքերին, ինքն էլ էր արտասւում մեղմիւ և հարցնում.

— Մայրիկ, ի՞նչ եղաւ իմ հայրիկը.

—Արազը տարաւ, Շողիկ ջան, Արազը տարաւ։

— Ախր ինչո՞ւ տարաւ։

—Գիւղի համար մատաղ, գիւղի համար տարաւ։

—Մա՛յրիկ, էլ չի՞ գայ.

—Չէ, էլ չի գայ։

—«Ջուկ աղջիկը» բռնե՞լ է հայրիկին, հա՞ մայրիկ։

Մայրը էլ չէր պատասխանում, գրկում, սղմում էր կրծքին աղջկայ գլուխը, արցունքը մեղմիւ թափւում էր աչքերից, երեխան նայում էր մօրը և մտածում հօր մասին, Ջուկ աղջկայ մասին, Արազի մասին և չէր կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ Արազը տարաւ իր հօրը գիւղի համար և ո՞ւր տարաւ։ Եւ ուռենին օրօրւում էր վերից տխուր սօսափիւնով և թափում էր իր տերևները աղաւոր մօր և աղջկայ գլխին։

1902 թ.

ԱՆՀԱՒԱՏԸ

I

Օրս շատ աջող էր։

Ես չը նկատեցի, թէ ինչպէս անցաւ օրը, ինչպէս անցայ Մեծ-Առուն, որ մեր գիւղի դաշտերի հեռաւոր սահմանն էր և որից այն կողմն առհասարակ վտանգաւոր էր շրջել ուշ երեկոյեան և մանաւանդ գիշերը։ Մասխը հեռու չէր. նրա փէշերը կազմող բազմաթիւ ամայի բլրակները տարուայ այս ժամանակ աւազակների բոյն են դառնում —քիւրդ ու թուրք վխտում են այնտեղ։ Բայց ես այդ մասին չէի մտածում, որսով յափշտակուած էի և ուրախ։ Ես հրճուանքով էի նայում, թէ ինչպէս լորերը փռռալով բարձրանում են շանս առաջից և հրացանի պայթիւնից յետոյ՝ թրպրտալով վայր ընկնում։ Ով որսորդ է, նա միայն կը հասկանայ, թէ

ինչքան մեծ է այդ րոպէի հաճոյքը, երբ վիրաւոր թռչունը մի յուսահատ թափով վերջին անգամ շեշտակի դէպի վեր է ձգւում, կարծես անհունութեան մէջ փրկութիւնը փնտրելով և անիծելով երկիրը, ապա հաւասարակշռութիւնը կորցրած՝ անկանոն պտոյտներ է գործում, թևերն իրար են խառնւում և ընկնում է խոտերի մէջ կամ ուժասպառ ու արիւնաքամ կամ մեռած։ Շունն ուրախ ոստիւններով վրայ է վազում, բերնով վերցնում և բերում, և ինչ որ տարօրինակ է և տխուր, որն այնուհետև իր հետաքրքրութիւնն ու արժէքը կորցնում է, կարծես գերագոյն վայելքի րոպէն միմիայն զօրեղ ցնցման, մահու պայքարի, այն օրհասական րոպէն է, երբ տաք արիւն է հոսում. ինչու... Է՛հ, գազանային մի բան կայ մարդու մէջ, որ գլուխ է բարձրացնում ամեն անգամ, երբ առիթը ներկայանում է։ Այդ իսկ զգացմունքի հաճոյքը չէ՞ր, որ ինձ գրաւել էր։ Քանի՛ն սպանեցի. խեղճ թռչունններն իրար վրայ թափռտուած, գլխիկները՝ թոյլ, կտուցն արիւնոտ ընկած էին որսորդական պայուսակիս մէջ և այդ բոլորի վրայ մի կենդանի լոր դեռ թրպրտում էր թափ ի թափ տալով իր ողջ մնացած մի հատիկ թևը։

Մութն ընկաւ. իսկ ես շատ հեռու էի գիւղից, պէտք էր շտապել վերադառնալ։ Շունս էլ երևի այդ էր մտածում. նա յոգնած էր, լեզուն կախ ձգած՝ հեւում էր, նա յում էր ինձ խելացի աչքերով և կարծե հարցնում էր թէ՝ ժամանակ չէ՞ տուն վերադառնալու։ Քայլում էի հանդարտ. այժմ միայն զգացի, թէ որքան յոգնած եմ։ Օգոստոսի վերջն էր. երկինքը պարզ էր, աստղափայլ, օդը մեղմ էր, համարեա զով. շուրջըս միապաղաղ լռութիւն էր տիրում. միայն երբեմն-երբեմն մի չղջիկ արագ պտոյտ էր գործում գլխիս շուրջը, մի վայրկեան պղտորում լռութիւնը և անցնում։ Մի փոքր հեռու մացառների տակից մէկ-մէկ լսւում էր մի ցաւոտ և երկար ճռռոց և ապա լռում. մանկութիւնից ինձ հաւատացրել էին, թէ դա օձի ճռռոց է և նա այդ անախորժ ձայնը հանում է ատամի ցաւից։ Այդ էր պատճառը, երևի, որ այդ ձայնը աշխատում էի չը լսել։ Խոտերն ու չորացած տերևները այստեղ այնտեղ մեղմիկ խշշոց էին հանում, այնքան մեղմ, որքան դաւադիր երեխաների փսփսոցն է. ով գիտէ, ինչ սողուն, ինչ ողորմելի միջատ փորձում էր իր տեղը փոխել, թաթերով երերում էր խոտը, կամ

իրանից հզօրի ճանկն ընկած՝ կամացուկ տընքում էր։ Խաւարի քօղով ծածկուած և խուլ լռութեան մէջ կեանքը գործում է հզօր թափով, բնութիւնը երբէք քուն չունի։

Շունս վազում էր առաջիցս. որ և է շշուկ լսելիս՝ նա կանգ էր առնում մի վայրկեան, ականջ էր դնում ուշադրութեամբ, ապա դառնում էր ինձ, նայում հարցական եղանակով. տեսնելով՝ որ տէրը ոչ մի շարժում չէ անում, ձայն չէ հանում, կրկին շարունակում էր ճանապարհը։ Բաւական գիշեր էր անցել արդէն, երբ ես մօտեցայ գիւղի բօստաններին. կենդանութիւն կար, երգ, ծիծաղ, խօսք, զրոյց. պահապանները շատ էին։ Այսպէս էր մեր կողմերում. ամեն ինչ պահպանել է հարկաւոր, արդար վաստակի թշնամին շատ է, որովհետև անարդար վաստակով ապրողները բազմաթիւ են. երբ դաշտերում բարիք կայ, քիւրդը լեռներից է ցած գալիս, աւազակ թուրքն իր բնից է դուրս սողում, պէտք է պահել արտը, այգին, բօստանը, բամբակը... ամեն ինչ։

Հեռու կրակ էր երևում. բոցը մերթ մեծանում, մերթ փոքրանում էր, հազիւ լուսաւորելով մի քանի մարդկային ուրուագծեր. երևի բօստանչիներ էին իրար մօտ հաւաքուած և ինչ որ եփում էին։ Սիրուն բան է կրակը գիշեր ժամանակ, խուլ դաշտում, մանաւանդ երբ մարդ յոգնած է և մօտալուտ վտանգի գիտակցութիւնից կենդանի արարածի կարօտ է զգում։ Ես ճանապարհս շեղեցի և ուղիղ այդ կրակը դիմեցի։

—Բարի երեկոյ։

—Օ՛, Աստուծու բարին, ասացին նստողները. արի, արի, զոքանչի սիրած ես, հագիւ եփեցինք՝ վրայ հասար. նստի՛ր, բախտի բան է։

Երեք հոգի էին, մեր գիւղացի երիտասարդներ. երեքին էլ ճանաչում էի, մանկութեան խաղընկերներ էինք, ինչե՜ր էինք արել միասին հէնց այս դաշտերում։ Կեանքը մեր ճանապարհները զատեց—նրանք մնացին գիւղում, շարունակեցին իրանց հայրերի պարապմունքները, խաղաղ, աշխատաւոր հողագործներ դարձան։ Նրանք ամբողջ օրը այրող արևի տակ, դաշտերում, կալերում աշխատելուց յետոյ, այժմ էլ ստիպուած էին անքուն մնալ՝ իրանց արդար վաստակի պըտուղները պահպանելու համար։ Գիշերային միայնութեան ձանձրոյթն ու քունը փախցնելու համար՝ մօտիկ բօստաններից նրանք իրար մօտ էին հաւաքուել, կրակ արել և

փեղամներ էին խորովում. գրաւիչ աշխատանք էր, իւրաքանչիւրը փայտեայ ձողի ծայրին մի հատ փեղամ ցցած՝ մեկնել էր կրակի վրայ, դարձնում էր այս ու այն կողմը՝ սպասելով որ եփուի. սրախօսութիւնները, գիւղացիներին յատուկ կոշտ, մերկ, բայց պատկերաւոր սրախօսութիւնները պակաս չէին։ Այն ի՜նչ հրաշալի մեղմութիւն է, որ մայր երկրի կրծքից դուրս գալով՝ բռնում է երկրագործի ամբողջ էութիւնը և անյոյս հնազանդութեան, անդարձ հպատակութեան կնիքն է դնում այդ կոշտ դէմքերին։ Երկրագործը՝ ի՜նքը մայր երկիրն է, համբերող և արտադրող, գիշեր ու ցերեկ աշխատող բնութիւնն է նա, մտածում էի ես նայելով իմ վաղեմի ընկերներին։

—Շատ ուշ ես վերադառնում, ասաց նրանցից մէկը, երբ ես արդէն տեղ էի բռնել կրակի առաջ, երևի բանդ լաւ էր։

— Հա՛, պատասխանեցի, որսս աջող էր, լորերը շատ շատ են։

—Օգոստոսին նրանք միշտ շատ են, բամբակներն էլ այժմ բարձր են, կորեկները հասել են, լորերի լաւ ժամանակն է, վրայ բերեց խօսակից, որ Սարգիս էր կոչւում։

Յանկարծ մի հրացանի ձայն լսուեց

մեզանից խիստ մօտիկ. ես խլեցի կողքիս դրած հրացանը և վեր ցատկեցի. ընկերներս ծիծաղեցին։

— Նստի՛ր, նստի՛ր, տնաշէն, բան չը կայ, այդ «Անհաւատն է», ամէն գիշեր մի երկու անգամ որ հրացանը չը պարպի, չի հանգստանայ, այստեղ մօտիկ բօստան է պահում, ասաց Սարգիսը փէշս քաշելով, որ նստեմ։

Ես հնազանդուեցի մի փոքր կոտրուած, մի փոքր ամաչած և այժմ դժուարութեամբ էի կրծում ինձ յանձնուած փեղամը։ «Անհաւատ»—այսպէս էին անուանում մեր գիւղում Թուխիկենց Աթօին. այդ ես գիտէի դեռ իմ մանկութիւնից, իսկ թէ ի՞նչու էին այդ տարօրինակ մականունը տուել նրան, ես մինչև այժմ էլ չը գիտէի։

—Լսի՛ր, Սարգիս, ասացի, ի՞նչու են Աթօին անհաւատ ասում։

—Ի՞նչու են ասում, ո՞վ գիտէ գիւղի բանը, ասում են էլի՛, մէկը ասել է, մէկէլներն էլ կրկնում են։ Ի՞նչ անհաւատ, կարգին հայ-քրիստոնեայ է, ինձանից էլ, քեզանից էլ հաւատով է. հէնց մի անգամ բերաններս է ընկել, ասում ենք, ինքն էլ սովորել է, չէ նեղանում։ Բարի մարդ է, միշտ իր ցաւին, իր աշխատանքին, միայն տէր-

տէրին վաղուց է՝ ինչ «օրհնեա՛, տէր» չէ ասում, ո՞վ գիտէ, ի՞նչու համար մի անգամ վզովն է ընկել, էլ ժամ չէ գնում. մի խօսքով կրօնի հետ շատ էլ սէր չունի, կարծեմ պաս էլ է ուտում, վերջացրեց նա փսփըսուկով։

—Դէ էլ նրա հաւատը ո՞րն է, անաշէն, անհաւատ էլաւ գնաց էլի՛, բացականչեց կողքի ընկերը ծիծաղելով. դեռ այն էլ չես ասում, որ արիւն թափելուց չէ վախենում։

—Քաջ է, անվախ է, դրանում ինչ անհաւատութիւն կայ, ա՛յ խելօք. մեն-մենակ քանի թուրքի, քրդի դէմ դուրս կը գայ, հրացան ունի, գնդակը գետին չէ ընկնում. նրա բօստանին մօտենալ չէ լինում, մեզ նման՝ դագանակներով չէ դուրս գալիս դաշտ։ Մինչև հիմա ո՞ւմ հաւին է անմեղ տեղը «քը՛շշ» արել, ո՞ւմն է վնաս հասցրել։

—Որ չը գիտես, մի՛ խօսի, վրայ բերեց խօսակիցը, հարցրո՛ւ իր հասակակիցներին և նրանք քեզ կ՚ասեն, թէ Թուխիկենց Աթօն ջահել ժամանակ ինչե՞ր է արել։

—Թշնամու խօսքեր են։

—Կանչենք, թո՛ղ գայ այստեղ մի քիչ խօսենք, մէջ ընկաւ երրորդը։

Ես էլ ձայնակցեցի այս առաջարկութեանը։

—Չի գայ, ասացին միւս երկուսը. բօստանն անտէր չի թողնի։

—Փորձեցէք, խնդրեցի ես։

—Աթօ՛ ապեր, հէյ Աթօ ապե՛ր։

—Հէյ, հէյ, ձայն տուեց նա հեռուից։

—Արի՛, արի՛ այստեղ փեղամ կեր, փեղա՛մ։

Մի փոքր լռութիւն տիրեց։

—Ծա՞տ էք, հարցրեց Աթօն։

—Չորս հոգի ենք, չո՛րս։

—Գալիս եմ, գալիս։

Ամենքս էլ ուրախացանք։ Քիչ յետոյ նա մէկ էլ պարպեց հրացանը, կարծես կամենալով իր բացակայութեան ժամանակ այդ մի հատիկ պայթիւնին յանձնել իր բօստանի պահպանութիւնը և ապա հանդարտ սուլելով՝ յայտնուեց կրակի մօտ։

—Բարի երեկոյ. վա՛հ, էս ո՞վ է, ասաց նա կռանալով դէպի ինձ, որ լաւ տեսնի դէմքս. տօ՛, էդ դո՞ւ ես, Նարմընազուք (քընքոյշ); բացականչեց նա ճանաչելով ինձ. վերջին բառով նա ակնարկում էր իմ գիւղական կեանքից խորթանալը։

—Տօ, դու էստե՞ղ, էդ ո՞ր խաչիցն է, շարունակեց նա։

—Որսից է գալիս, պատասխանեցին ըն-

կերներս, տեղ բանալով Աթօին կրակի առաջ:

—Որսի՞ց է, ի՞նչ ես բերել, տեսնենք:

—Լոր, լոր, Աթօ՛ ապեր, ո՛րքան ուզես. ա՛ռ ահա քեզ մի կենդանի լոր տամ, դիր վանդակի մէջ, թո՛ղ առաւօտները երգ ասէ:

Այս ասելով՝ ես պայուսակիցս հանեցի կենդանի լորը և մեկնեցի նրան: Սիրուն թռչուն էր, կոկորդի տակը՝ սև, մնացած փետուրները մոխրագոյն, նա թրպրտում էր ձեռքումս և աչքերը բաց ու խուփ անում կրակի լոյսից: Աթօն բռնեց հանդարտութեամբ, մի քիչ նայեց, շօշափեց կենդանու մարմինը:

—Լաւն է, չաղն է, տղաս, ապա երկու ոտներից ու ընից բռնելով ամենայն սառնասրտութեամբ թռչնի գլուխը թափով զարկեց իր հրացանի փողին. կենդանին վայրկենապէս շունչը փչեց, երկու կաթիլ արիւն որձկալով. Աթօն առանց փետրելու մաշկեհան արեց և ձգեց կրակի վրայ: Այս բոլորը կատարուեց մի քանի րոպէում:

Ես նկատեցի՝ թէ ինչպէս ամենքն էլ զարմացած մնացին նրա անգութ վարմունքի վրայ, մի թեթև դժկամակութիւն նկարուեց բոլորի դէմքին. նոյն իսկ ես, որ ամբողջ օրը լորեր էի կոտորել, վրդովուած էի Աթօի

արածից. «ճիշտ որ անհաւատ», մտածում էի ես:

—Հ՛ը, ինչ ես նայում պէլ կտրած, դարձաւ նա դէպի ինձ նկատելով վրդովմունքս, հիմա կ՛ասես անխիղճ է. դու խոմ մի և նոյն բանն ես արել ամբողջ օրը: Այսպէս է աշխարհի բանը, մարդ իր գործած մեծ չարութիւնը կը մոռանայ, ուրիշի թեթև յանցանքը կը տեսնի: Եփուէ՜ր, լորիկ, եփուէ՜ր, քեզ մատաղ, աշխարհում չարն ու բարին իրար են խառնուել, խելք կ՛ուզեմ, որ կարողանայ ջոկել: Սուտ չեն ասել մեր պապերը՝ «Հաստ ու բարակ մէկ գին է, վայ գայ բարակ մանողին». թէ քեզ պահէի, խընամէի, էլի ես անհաւատ էի. սպանեցի, էլի ես եմ անհաւատ. լաւն էն է ուտեմ: Նարմնագուքը խղճով է, նա հրացանով է սպանուած, իսկ Ես... դէ մենք էլ գիւղացի, կոշտ ու կոպիտ մարդ ենք, մերն էլ այսպէս է. ի՞նչ կ՛ասէք տղերք, դարձաւ նա դէպի միւսները: Սրանք լուռ էին:

—Ինչ ասենք, Աթօ ապէր, վերջապէս ձայն տուեց Սարգիսը, դու մեր հօր տեղն ես, մէկ էլ ամեն մարդ իր վարձքի տէրն է:

—Հա՛, ինչու չէ, ամեն մարդ իր վարձքի տէրն է. թո՛ղ այդպէս լինի, ես այս մի

լորի վարձքը չուզեցի, թէ սրա համար միւս կեանքում մէջքս շամփուրով դաղեն, Նարճնազուքին ողջ-ողջ կպրի կարասը պիտի գըցեն. Թամաշայի բան կը լինի հա՜,- վերջացրեց նա ծիծաղելով։

Լորը եփուեց. նա վերցրեց կրակի վըրայից և սկսեց ախորժակով կրծոտել. Ես նայում էի նրան այդ րոպէին և զարմացած էի տեսնելով՝ որ այդ դէմքն ամենևին չար չէ և ոչնչով չի համապատասխանում նրա խստասիրտ վարմունքին ու խօսքերին։ Վաթսունն անցած մի ծեր, գեղջուկ դէմք էր չարչարուած ու բրտացած չարքաշ աշխատանքի մէջ, որ մի և նոյն ժամանակ զուրկ չէր խելացի արտայայտութիւնից։ Կարճ և խպառ ճերմակած միրուքը ու թաւ բեխերը ծածկում էին նրա դէմքի մեծ մասը, շատ քիչ բաց տեղ թողնելով այտերի վրայ. աչքերը մանր էին, յօնքերի հովանու տակ կորած, բայց ո՛չ խորամանկ և ոչ չար, այլ մեղմ, բարի և խելացի։ Համարեա ոչինչ չկար այդ դէմքի վրայ, որ անախորժ լինէր։

Մեր ետևում, խոտերի մէջ մի բան կամացուկ քսաց. Աթօն ճչաց, վեր թռաւ սարսափած ու փախաւ հեռու, ինչպէս օձից կըծած։ Մենք մնացինք ապշած։

—Ի՞նչ պատահեց, ձայն տուինք չորս միաբերան։

—Այստեղ օձ կայ, խշխշաց, պատասխանեց նա շնչակտուր։

—Տօ, ի՞նչ օձ, ի՞նչ բան, Աթօ ապեր, շունն էր, շարժուեց, քսաց հանեց։

—Ի՞նչ շուն, ո՞ւմ շունը։

—Իմ շունը, վրայ բերի ես, ա՛յ այնտեղ է, անաշէն, խոտերի մէջ պառկած է։

Աթօն նայեց այն կողմը, տեսաւ շանը, հասկացաւ իր սխալը և անտեղի երկիւղը, բայց կարծես ամաչելով իր վախկոտութիւնից, էլ չէր մօտենում կրակին, որ չը տեսնենք իր դէմքի գունատութիւնը։ Համոզեցինք, կանչեցինք, մօտեցաւ, բայց էլ չը նըստեց, մնաց կանգնած աչքերը խոտերին յառած։

--Նստի՛ր, նստի՛ր, ուտենք։

—Չէ, էլ չեմ կարող, վերջացաւ. էստեղ օձ կը լինի, օձի տէրը մեռնի, վախեցէք օձից։

—Տօ Աթօ ապեր, ասաց Սարգիսը, դու, մեղայ Աստուծոյ, ժամ-պատարագից չես դըղում, տէրտէրի անէծքից չես վախենում, քան թուրք-քիւրդ աւազակին մարդ չես ասի, հիմա օձի՞ց ես վախենում։

— Հա, պատասխանեց նա յուզուած ձայնով, ես ոչնչից չեմ վախենում. Թրի ու կրակի միջով կ'անցնեմ, գայլ, արջ և ուրիշ տասն անգամ սարսափելի գազաններ ինձ համար նապաստակներ են, բայց ես վախենում եմ օձից, նոյն իսկ դողում եմ նրա անունը լսելիս, տեսնէք, դողում եմ, նա իմ չար հրեշտակն է։ Եթէ ուզում էք ձեզ մօտ էլի մի փոքր մնամ, բարձրանանք քօլիկի կտուրը, թէ չէ կ'երթամ, այստեղ օձ կայ, սիրտս է ասում։

Մեր զարմանքը կրկնապատկուեց. այդ քաջ, անվեհեր ծերունին, որի մազերը, ով գիտէ, ինչ վտանգների մէջ էին ճերմակել, այդ «անհաւատը», ինչպէս ասում էին գիւղացիք, դողում էր օձի նոյն իսկ անունից։

Ճար չը կար, բարձրացանք կտուրը. մի առ ժամանակ ամենքս էլ լուռ էինք, ամենքս էլ քիչ առաջ պատահածի ծանր ազդեցութեան տակ էինք։ Աթօն շարունակում էր յուզուած մնալ և ոչ ոք սիրտ չէր անում խզել անախորժ լռութիւնը։ Ներքևում մենակ մնացած շունն սկսեց կաղկանձել և աշխատում էր բարձրանալ մեզ մօտ։

—Արի՛, արի՛, լաւ վախեցրիր ինձ, ասաց Աթօն, օգնելով շանը, որ բարձրանայ. մենք

ծիծաղեցինք և ճնշող լռութիւնից ազատուեցինք։

—Աթօ ապեր, ասացի ես, չի՞ լինի որ մեզ պատմես թէ, ինչու ես վախենում օձից։ Նա մի առժամանակ ոչինչ չը պատասխանեց, գլուխը քաշ գցած՝ խաղում էր հըրացանի բլթակի հետ և միևնոյն ժամանակ ասես փորփրում էր հին յիշողութիւններ։

—Լա՛ւ, պատասխանեց վերջապէս, պատմեմ, ծերացել եմ, ո՛վ գիտէ կամ շուտով կը մեռնեմ, կամ անիծած թուրքերը, քրդերը կը տան շանսատակ կ'անեն և կամ օձը կը կծի։ Պատմեմ, քանի շունչս բերնումս է. թո՛ղ գոնէ մի երկու մարդ իմանայ, թէ ինչո՛ւ եմ մնացել առանց ժամ-պատարագի, և երբ մեռնեմ, ո՛վ գիտէ, գուցէ խղճան, մի փոսի մէջ էլ ինձ գցեն։

Նա չիբուխը պատրաստեց, վառեց, մի քանի կում քաշեց և այսպէս սկսեց.

II

Շատ ժամանակ է է, քառասուն տարուց աւելի, որ ես ու խեղճ Գասպարը մըտանք ձեր գիւղը։ Քառասուն տարի, մի ամբողջ կեանք է, դուք չը կայիք դեռ այն

ժամանակ։ Հեռու տեղից էինք գալիս. քայլել էինք ամբողջ օրեր ու շաբաթներ, սեր ոտների կաշին քերթուել էր, մէջքներիս պարկերը պատառոտուել, ձեռներիս գաւազանը մաշուել։ Մենք եկել էինք մեր գլուխը դնելու մի անկիւն ճարելու այս կողմերում, ինչպէս չուող թռչուններ, որոնք փախչում են տաք կողմեր՝ ձմեռը մօտենալիս։ Աշխարհը լայն է, ասում են. ի հարկէ, լայն է, մենք էլ գիտէինք, բայց արի տես, որ այդ լայնարձակ աշխարհում մենք մի անկիւն չունէինք ծուարելու համար։ Ասենք ուրիշ կերպ չի էլ կարող լինել. ով վաթան չունի, նա աշխարհում տեղ չ'ունի, միայն չը գիտեմ երկնքում էլ նրան տեղ կը տա՞ն, թէ ոչ։ Ծնած տեղները՝ մեր վաթանը փուշ ու տատասկ էր դարձել մեզ խոցոտում, օձ ու կարիճ էր դարձել մեզ կծում, և մենք գլուխ առած՝ փախչում էինք առանց ետ նայելու. տեղն է, որ ասեմ՝ սև լինէր մեր փախած օրը, մեր ոտները երկու տակ լինէր՝ չը հեռանայինք. վաթանը եթէ գեհէն դառնայ, էլի ղարիբութիւնից լաւ է. հիմա կ'ասեմ, այն ժամանակ չէի հասկանում։ Երկու ընկեր էինք, երկսիս ցաւն էլ մէկ էր, փլած պատի տակ ծնուած խեղճ ու կրակգլուխներ, անվերջ սևի, դառն քրտին-

քի, մեր միսն ուտելու դատապարտուած։ Կան էլ, այդպիսի մարդիկ շատ կան, որոնց ճակատին դեռ չը ծնուած կ'ասես գրել են՝ «ցաւ, տանջանք»։ Աշխարհում ունեցած-չունեցածս մի քոյր էր. հայ-հո՜ւ, քանի տարի է անցել, դեռ քրոջս դարդի ծուխը քթիցս չի դուրս եկել, հոգիս դեռ մխում է. մի թառլան աղջիկ, որ ինձ համար ամեն ինչ էր՝ և՛ հայր, և՛ մայր, և՛ եղբայր և՛ հարստութիւն։ Բացի նրանից Գասպարը կար, իմ միակ ընկերը. ցաւի, խեղճութեան մէջ իրար սէր էինք երդուել, միասին էինք չարչարւում, միասին աշխատում, միասին ուրախանում, միասին վայելում, թէ մի բան կար վայելելու։

Ապրում էինք։

Բախտը մեր խեղճութիւնը, մեր սև օրը մեզ քիչ համարեց. մի բանջարաքաղի օր անօրէնները քրոջս փախցրին։ Յիշում եմ, երբ այդ սև լուրը մեզ հասաւ, ինչպէս երկնքից մի-մի ժայռ ընկնէր իմ ու Գասպարի գլխին և մեզ աղցան դարձնէր. հազար կտոր անէին մեզ, սրանից լաւ էր։ Երկսով էլ ընկանք սար ու ձոր, հարց ու փորձ արինք, գլուխներս սար ու քարի տուինք, գիշերները ցերեկ շինեցինք, բոլորն ի զուր, չը գտանք

ու չը գտանք։ Վերջն իմացանք, որ փախցնողները հետքը կորցնելու համար շտապել են Արաքսից անցկացնել, Պարսկաստան տանել. գարնան յորդացած գետը խեղդել է թէ զոհին և թէ դահիճներին։ Հարուածը սարսափելի էր, խեղճ ու կրակ, ձեռներս ծոցերումս, տուն դարձանք, մնացինք կծկուած, ինչպէս մայրը կորցրած որբեր, սգացինք ու լռեցինք։

Ուշ իմացայ, որ խեղճ Գասպարը սիրում էր քրոջս, որ նրանք իրար խօսք էին տուել վաղուց. սրա համար էր, որ խեղճ ընկերս այդ ծանր կորստից յետոյ այրւում, փոթոթւում էր ինչպէս բոցերի մէջ։ Այն օրից, երբ յայտնի եղաւ քրոջս անյայտանալը և վերջում՝ մահը, Գասպարն էլ ո՛չ գիշերը քուն ունէր, ո՛չ ցերեկը հանգիստ։ Ե՛ս էի զրկուել իմ միակ քրոջից, էլի ես էի ստիպուած նրան հանգստացնել. արտասւում էր երեխայի պէս և անդադար թափառում էր սար ու ձոր։ Վերջ ի վերջոյ, երբ մի փոքըր հանգստացաւ, լռեց ինչպէս համր, օրերով մի հատ բառ չէր արտասանի, միայն թափառում էր այն տեղերը, որտեղից քոյրս երբ և իցէ անցել էր, և ժամերով մնում էր քարացած մի և նոյն տեղում։ Ուշ աշուն էր, երբ նա մի օր ինձ ասաց.

—Ես գնում եմ, Աթօ։

—Ո՞ւր, Գասպար, հարցրի ես զարմացած։

—Ո՛ւր, նա մնաց մի փոքր լուռ։

—Գնում եմ գրողի ծոցը, փախչում եմ մեր վէրանից, հոգիս փոթոթւում է, էլ չեմ կարող մնալ, որ էլի մի քանի օր մնամ, ցաւից կը պատռուեմ. կ՚երթամ քանի առջևս ճանապարհ կայ։

—Ղարիբութի՞ւն։

—Հա՛, ղարիբութիւն։

—Ես էլ քեզ հետ, եղաւ իմ պատասխանը։

Եւ մենք ճանապարհ ընկանք։ Եկանք, հասանք ձեր գիւղին։ Մեզ ի՞նչ, թէ ի՞նչպիսի գիւղ էր, բաւական էր, որ հայ-քրիստոնեայ լինէին, բաւական էր, որ մեր աւեր դարձած երկրից հեռու էր։ Մի դուան առաջ կանգ առանք. փոյթներս չէր, թէ ո՛ւմ տունն էր, մի տաք անկիւն, մի սաքու լինէր, այդ էր խնդրածներս։ Ցուրտ էր, իսկ մեր շորերը պատառ-պատառ երկար ճանապարհից. սարեր, ձորեր էինք անցել է՜...։ Մտանք մի սաքու, կծկուեցինք, տաքացանք, ողորմի տուինք տիրոջ մեռելներին և սկսեցինք մեր սև օրի վրայ մտածել, մեր անելիքը որոշել։

Ձմեռը մի կերպ դոնէ դուռ դուրս պահեցինք, գարնանը Գասպարը նախրապան եղաւ, իսկ ես դաշտերի պահապան։

Ամիսներ ու տարիներ անցան, և մենք սև օրով աշխատում էինք ամբողջ ցերեկը, իսկ գիշերները մի տեղ, մի սաքւում, մի տան բակում, մի կտրան մեր ցնցոտիների մէջ կծկւում էինք, քնում միասին։ Գասպարը մնաց միշտ լուռ, միշտ տխուր, սիրտը կոտրուած. երբեմն-երբեմն մի երկար «ա՜խ» կամ «օճֆ» կ'անէր և յետոյ կը լռէր անվերջ։ Ես էլ կոպէկ-կոպէկ հաւաքում էի, միտքըս էր տան-տեղի, թոնիր-օջախի տէր լինել։ Ա՜խ, այնպէս էի ձանձրացել ուրիշի դռներից, ուրիշի սաքուից, ուրիշի թոնրան շըրթից, փշրանքից. շատ կեանք էր, շա՜տ կեանք։ Այնպէս ուզում էի ունենալ իմ սեփական տունը, իմ սեփական բունը, ուզում էի ես էլ աշխարհի պէս կնոջ, երեխայի տէր լինել, «տուն սևացնել»։ Այն ժամանակ խոմ կարող եմ խեղճ Գասպարին էլ մի անկիւն տալ, մտածում էի ես, մի գլուխ դնելու տեղ պատրաստել, որ ներս մանի տանից կարմրելու, յետոյ միասին կապրենք, բայց մեր յարկի տակ կը լինենք, միասին կաշխատենք, միասին կուտենք։ Նա ինձանից

էլ չի բաժանուի. ո՞ւր գնար, իր նշանածի կորստից յետոյ, ով գիտէ, մէկ էլ նրա մըտքումն անցնի՞ պսակուել, թէ ոչ. այն մարդկանցից չէր, որոնց սրտում ցաւը մեռնում է ժամանակի հետ, նրա սիրտը դեռ մխում էր, ինչպէս չըմարած հրդեհ, որի բարակ ծուխը բարձրանում է հա՛ բարձրանում աւերակների միջից։

Ես խեղճ էի, աղքատ, անտուն, բայց սիրտն ինչ կը հարցնի աղքատութիւն. մի օր դաշտում մի աղջիկ տեսայ, սիրուն էր, սիրտս կպաւ, չէ՞ որ ես էլ ջահել էի, ես էլ սիրոյ կարօտ։ Միտք արեցի, որոշեցի գըլուխս սարով-քարով տամ, նրան առնեմ։ Սրա համար էի չարչարւում, սրա համար էի արիւն քրտինք թափում և հաւաքում էի աշխատանքս։ Տուն ու օջախը բոլորը միացան այն աղջկայ մէջ։

Անունը չեմ ասի, նա դեռ կենդանի է. մի ընտանիքի մայր, համարեցէք Ռեհան։ Մի օր էլ պատահեցի Ռեհանին դաշտում, աչքով արեցի՝ ծիծաղեց, մի ուրիշ անգամ էլ ճար գտայ, սիրտ արեցի, մօտեցայ, խօսեցինք, քաղցր բաներ ասացինք իրար, յետոյ մի օր էլ մի ընծայ տուի՝ առաւ, խօսք տուինք իրար, մենք նշանուած էինք։ Աղ-

քատ աղջիկ էր, ունէր-չունէր մի պառաւ մայր, նրա համաձայնութիւնն էլ առանք, ուրախութիւնս անչափ էր, իսկ Գասպարը՝ լաւ յիշում եմ, այդ առթիւ ժպտաց։

Երկար նշանուած մնացի. երկու տարի հաւաքում էի, հաւաքում, բան չէր դուրս գալիս. քանի՜ տարի պիտի աշխատէի, որ գոնէ մի հարիւր ռուբլի հաւաքէի հարսանիքի ծախսի՝ նշանածիս իմ դրամով գոնէ սև շոր առնելու համար. խօմ չէի կարող հէնց այնպէս գնալ ձեռքից բռնել տանել. Երանի չէ՞ր, որ այդպէս հեշտ լինէր, հարսանիքը աղքատին պատիժ է դրուած։ Երբեմն այնպէս էի յուսահատուում, որ լացս էր գալիս, բայց երբ գնում էի նշանածիս տեսնում, երբ նա մի երկու քաջալերող խօսք էր ասում. ամեն բան մոռանում էի, կրկին սիրտ առնում և կրկին վերսկսում աշխատանքս նոր եռանդով. դուք չը գիտէք, թէ մի սիրած աղջիկ մարդու ինչե՜ր անել կը տայ։ Եւ Ռեհանը սպասում էր։

Քանի՜ տեղ փոխեցի, քանի՜ տուն մտայ այնուհետև, քանի՜ տեսակ պարապմունք գտայ։ Երբեմն տների մշակ էի, մէջքիս այծի մորթի կապած, առաւօտից երեկոյ գոմում անասունների աղբի մէջ չարչարւում

էի և ամբողջ ձմեռուան վարձս էր հինգ տասն ռուբլի. երբեմն բանուոր էի, օրավարձով աշխատում էի սրա նրա այգում, արտում, շինութեան վրայ, երբեմն էլ պարապ էի մնում և աշխատածս ծախսում, էլի մնում ձեռքերս դատարկ։ Վերջի վերջոյ մի տարով վարձուեցի հօտաղ՝ Զուլհակենց Սէփօի տանը։ Ողորմի իրան, վաղուց է մեռել. կինն էլ մարդու գնաց, տունը «բրիշակ» եղաւ պրծաւ։

Սէփօն մենակ մարդ էր, մի լուծ եզն ունէր և մի արօր, որ ինձ յանձնեց։ Աշխատում էի և մտածում, թէ ինչպէս անեմ, որ հարսանիքիս ծախսը լրացնեմ. երեք տարին շուտով կը բոլորէր և խեղճ Ռեհանն սպասում էր։ Ամառ էր. ցերեկն անասունների հետ էի, իսկ գիշերները գնում էի Սէփօի բօստանը պահպանելու, ինչպէս այժմ. Գասպարն էլ Նախիրը դաշտից տուն էր բերում և գալիս ինձ հետ միասին գիշերում բօստանում. երկու անբաժան որբերի պէս էինք։ Գիշերները ես պատմում էի նրան իմ սէրն ու վիշտը, գանգատուում էի, որ չեմ կարողանում ծայրը ծայրին հասցնել, պէտք եղած դրամը պատրաստել, նա, ըստ իր սովորականին, լուռ էր, սև երկար «օճֆ»

էր անում և վերջում կամացուկ ուելացնում.

—Աստուած ողորմած է, ա՛խպէր:

Ի՞նչ էր մտքը, ի՞նչ ծրագիր ունէր, իր վաստակած դրամն ի՞նչ էր անում, ո՞ւմն էր պահ տալիս, կամ ունէ՞ր դրամ արդեօք, թէ՞ թողնում էր սրա նրա մօտ առանց երբէք յետ տանելու: Ես չը գիտէի, երբ ակնարկում էի, նա հանդարտութեամբ խօսքը փոխում էր և այնուհետև անվերջ լռում: Ես ցաւում էի ո՛չ միայն ինձ համար, ո՛չ միայն Ռեհանի սիրուն, այլ և այս խեղճ ու կրակ Գասպարի համար, որին կ՚ուզէի դժնե-րից ազատել, մի փոքր խնամել: Ես գիտէի, թէ որքան անճար ու բարի է նա, ես գիտէի որ շատերը ծածուկ նրա բարութիւնից օգտւում են, և նա ինձ չի յայտնում, ես համոզուած էի, որ նրա վաստակը կորչում է այս ու այն կողմ, բայց ի՞նչ կարող էի անել, երբ նա լռում էր, կամ միայն «ա՛խ, օճփ» անում: Իսկ երբ դիպուածով իմանում էի, որ այս կամ այն անձը նրա պահ տուած դրամ կերել է, վրդովւում, բարկանում էի իր թուլութեան վրայ, նա նայում էր ինձ իր հեզ աչքերի տխուր հայեացքով, ու՛ր այնքան սէր ու գութ կար, ապա տանում էր մեղմութեամբ.

—Ի՞նչ ես նեղանում, ախպէր, երևի չունեն, որ չեն տալիս, չկալութեան երեար սև, ես ու դու խոմ լաւ գիտենք, թէ ինչ է չկալութիւնը, ի՞նչ անենք թէ չեն տայ, Աստուած իրենց հետ, օճփ:

Կերակրւում էր ցամաք հացով, որ ամէն առաւօտ մէջքին կապած դաշտ էր տանում, քայլելիս մրջիւն կոխ չէր տայ, անասուններին չէր ծեծի, բերած հացը այս ու այն քաղցած հօտաղի կամ անցորդի հետ կը կիսէր: Նրա միակ մխիթարութիւնը իր չիբուխն էր, որ կաւից էր շինում, արևի տակ չորացնում և անվերջ ծխում: Երեկոյեան «ա՛խ» ու «օճփ» անելով անասունները հաւաքում էր, գիւղ բերում և յետոյ գալիս էր բոստան ինձ հետ միասին գիշերելու: Ես, ըստ իմ սովորութեան, գարձեալ սկսում էի արտնջալ մեր կեանքից, մեր բախտից, մեր սև ղարիբութիւնից, իսկ նա էլ, ըստ իր սովորութեան, լուռ լսում էր, մի «ա՛խ» անում և լռում: Այսպէս անցան տարիներ. վերջին երեք տարիներին ես նշանուած էի և հազիւ հաւաքել էի յիսուն ռուբլի:

Մի անգամ Ռեհանին տեսնելու գնացի. մօր քիթը կախ էր, նա ինձ ընդունեց

պաղ երեսով, խօսքերը ծամծմում էր, վերջ ի վերջոյ ասաց՝ որ ինքն այդքան երկար չի կարող սպասել, որ անխիղճ բան է իմ կողմից ջահէլի ոտքը կապած պահել երեք տարի, որ ինքն ամաչում է գլուխ դուրս հանել հարևանների մէջ, վատ են խօսում, և այստեղ նա ձայնն աւելի ցածրացրեց ու յայտնեց, որ Ռեհանին ուզող կայ։

Ինչպէս սիրտս դանակ խրէին, վերջին խօսքերը կայծակի պէս ճայթեցին գլխիս. «Ռեհանին ուզող կա՜յ...» ես այդ ամենևին չէի մտածել, վաղուց էի սովորել նրան միանգամայն իմը համարել և մտքովս անգամ չէր անցնում, թէ մի օր մի մարդ կը յայտնուի և՛ իմ երեք տարուայ նշանածի ձեռքը կը խնդրի։ Սուտ էր ասում պառաւը, թէ ճշմարիտ, այդ ես չը գիտեմ, բայց բոլորովին հաւատացի, զայրացած նրան նայեցի ակամայ բռունցքներս սղմած, վեր կացայ և առանց մի բառ արտասանելու դուրս գնացի։

Ճանապարհին մենակ մտածելով՝ համոզուեցի, որ պառաւն իրաւունք ունէր, որ յանցաւոր եմ, և յատկապէս այն պատճառով՝ որ ես թշուառ եմ ու աղքատ։ Մտածում էի մտածում և խելքս բանի չէր հասնում, պակասում էր յիսուն ռուբլի, քիչ

փող չէր, յիսուն ռուբլի... որտեղից ճարել, ումի՞ց խնդրել, ումի՞ց պարտք վերցնել։ Գասպարը չունէր, ես այդ լաւ գիտէի, նրա վաստակածը սրան նրան էր բաժին ընկել. կամուսնենար էլ, ես ինչպէս նրա դառն քրտինքի փողով իմ հարսանիքն անէի։ Ի՞նչ պէտք էր անել. գժոխային գիշեր անց կացրի։ Գասպարին ոչինչ չասացի. մտածում էի, թէ մենակ ինքս պէտք է ճար գտնել։

Յաջորդ օրը արօրով դաշտ գնացի ըստ սովորականին և երեկոյեան տուն դարձայ միայն մի եզով. միւսը հէնց լծան տակ յանկարծամահ եղաւ. Սէփօն ու իր կինը ծնկներին, գլխին տուին, բայց արդէն ուշ էր։ Աշնան սկիզբն էր, վար ու ցանքի ժամանակ, լուծը գետին մնալը տնաքանդութիւն էր։ Սրանց ցաւն իմից մեծ եղաւ։ Մարդ ու կին նստեցին, մի փոքր ախ ու վախ արին, մի փոքր վշվշացին, յետոյ ճարները կտրած հանգստացան ու սկսեցին խորհուրդ անել։

—Վաղն երթամ պարտք անեմ, ասաց Սէփօն։

Պարտքի անունից կինը կարծես դողն ընկաւ։

—Ամա՜ն չէ, էլ չենք ազատուի, մարդ,

ասաց նա. երեխաներս ծախենք, չենք ազատուի. պարտքի տէրը մեռնի, հազար գըլխանի վիշապ է. չէ, պարտքը թող, ու գլխիս ոսկիները, տար ծախիր. թող մեր ամօթը մեր երեսը մնայ, թող մեր դռնից կանչող չը լինի։

Երկու օրից յետոյ ոսկիներ ծախուած էին, և Սէփօն տուն բերեց յիսուն ռուբլին։

Մի առաւօտ էր, լաւ յիշում եմ, ինչպէս այսօր Սէփօն բակը մտաւ, ինձ տեսաւ։

-- Տես, Աթօ, ասաց, փողը բերի. նա ցոյց տուեց թղթի մէջ երկու-քսանըհինգ ռուբլանոց. դէ, որդի, գնա Ն... գիւղը. ասում են Նաւօն եզ ունի, դու լաւ եզ ճանաչում ես. տես, արի լո՛ւր բեր, գնանք առնենք։

Ասաց, առաջ անցաւ դէպի տան դուռը. նոյն վայրկենին ես տեսայ՝ թէ ինչպէս նրա ձեռքի փողը թղթի միջից սողաց ընկաւ գետին, մինչդեռ ինքն առանց այդ նըկատելու ներս մտաւ։ Ես շտապով վեր թռցրի. հէնց ուզում էի ձայն տալ, իրան յանձնել, երբ յանկարծ կարծես մէկը կոկորդըս սղմեց. ձայնս դուրս չեկաւ, լեզուս պապանձուեց, և ականջումս պարզ ու որոշ հնչուեց զոքանչիս ձայնը—«Ռեհանին ուզող կայ»։ Ես նշանուած եմ, մտածեցի, դրամը

գրպանս դրի, շտապով դուրս եկայ և դէպի Ն... գիւղը դիմեցի։

Առաջին անգամ իմ կեանքում ես գողացայ. ես այժմ գող էի։ Ոտներս դողում էին, շնչառութիւնս կտրւում էր նեղ փողոցներում, ուստի շտապ-շտապ գիւղից դուրս եկայ լայնարձակ դաշտ. այստեղ կանգ առայ և մի քանի անգամ լիքը կրծքով շունչ առայ։ Յետևից մէկը վազէվազ գալիս էր, երևի Սէփօն է, մտածեցի և երկիւղով յետ նայեցի... ոչ ոք չկար. ինձ թուացել էր միայն։ Կամացուկ հանեցի գրպանիցս թղթադրամները, նայեցի վրան սիրով.—դա իմ նշանածն էր, իմ տունն էր, իմ օջաղն էր. յիշում եմ, ժպտացի էլ, ապա խնամքով ծալեցի և գրպանս դրի։ Բայց ոտներս դողում էին դեռ, սիրտս թրթռում էր, և այդ բանն ինձ զայրացնում էր, պէտք էր խլացնել նրա ձայնը։ Սկսեցի մռմռալ մի երգ։ Ձեզ չի՞ պատահել ձեր երեխայ ժամանակ միայնութեան ու խաւարի մէջ երգել, որ չը լսէք անակնկալ և երկիւղալի ձայներ. ճիշտ այդպէս, ես երգում էի սրտիս ձայնը խեղդելու համար, երգում էի և քայլում։ Թրթռոցը սակայն չէր կտրւում. այն միտքը թէ ես երգում եմ, որ չը լսեմ սրտիս ձայնը՝ ինձա-

նից չէր հեռանում և ես աւելի վատ էի ըզգում ինձ, ուստի որոշեցի լռել. բայց սաստիկ բարկացած էի, ում դէմ, չը գիտեմ, կարծեմ իմ ձայնի դէմ, իմ երգի դէմ, իմ սրտի դէմ, ամեն բանի դէմ, ինչ որ պատահում էր, ինչ տեսնում էի։

Ամենից աւելի ինձ զայրացնում էր մի կաչաղակ. նա նստել էր մի այգու ցանկապատի վրայ, իր անախորժ ձայնով անդադար կչկչում էր և ցատկոտում դէս ու դէն։ Ինձ թուաց, թէ նա ճիշտ իմ ձայնի պէս ձայն էր հանում ինձ ծաղրելու համար. իսկ պոչը խոմ անտանելի էր. ես երբէք չէի տեսել, որ կաչաղակները այնպէս անպիտան ձեւով պոչները շարժեն. կարծես այդ կաչաղակն իմ ջիգրու էր այդպէս խաղացնում իր պոչը։ Ես էլ մի քար վերցրի, կատաղաբար նետեցի դէպի նրան. նա մի սուր ճիչ հանեց և անյայտացաւ. ես հայհոյեցի և շարունակեցի ճանապարհս։ Մի փոքր այն կողմը՝ ճանապարհի վրայ մրջիւնի բոյն կար, շուրջը վխտում էին մրջիւնները, աշխատում էին. ես կանգ առայ, նայում էի, ըստ երեւոյթին խաղաղ։ Մի խումբ մրջիւններ միաբանուած քաշ էին տալիս մի ահագին բզէզ, երևի վիրաւոր, որովհետև թրպրտում էր և

ազատուել չէր կարողանում։ Այս տեսարանն էլ ինձ բարկացրեց. բզէզի վրա՞յ բարկացայ արդեօք, որ անզօր էր փրկուելու, թէ՞ մըրջիւնների, չեմ յիշում. միայն ոտքով տրորեցի և՛ բզէզին, և՛ մրջիւններին. դրանով էլ չկշտացած՝ կարծես չարիք գործելու ծարաւս մեծացաւ. ես սկսեցի անգթօրէն տրորել բոլոր մրջիւններին, ապա փայտի ծայրով քանդեցի նրանց բոյնը արագ-արագ, դուրս թափեցի նրանց ձուաները և նոյնպէս տրորեցի անխնայ. մի կատարեալ աւեր ու կոտորած։ Մի րոպէ ես այնպէս էի տարուել իմ այս անգութ աշխատանքով, որ մոռացայ նոյն իսկ, թէ Ս... գիւղը պիտի գնամ. լաւ որ դիպուածով ձեռքս գրպանս տարայ, դրամը շօշափեցի, յետ քաշեցի թափով, հեռու փախայ մրջիւնների աւերակ բնից, գլուխըս բռնեցի և մի փոքր միտք արի. ես գազան էի դարձել։ Նորէն առաջուայ դողը վերսկսուեց, որ քիչ առաջ կորուել էր, երբ ինքս ինձ մոռացած՝ աւերում էի մրջիւնների բոյնը։ Ճանապարհս շարունակեցի։

Մի մարդ էր անցնում ճանապարհով, մի ողորմելի, գզգզուած մուրացկան։ Նա կամ սաստիկ յոգնած էր, կամ հիւանդ, որովհետև հազիւ քայլում էր, յենուելով երկու

դաւազանի վրայ։ Ունեցած չունեցածը մի մաշուած պարկ էր, որի մէջ մի քիչ բան կար և որ նա կրում էր ուսին։ Ո՞րտեղից էր գալիս և ո՞ւր էր գնում, ո՞վ գիտէ. այդպիսիները որոշ տեղ չունեն, նրանք անտուն-թափառականներ են։ Զարմանալի չէ՞, այս խղճալի մուրացկանն ինձ ամենից շատ զայրացրեց. դա իմ խեղճութիւնն էր, որ ցցւում էր առաջիս. ինձ թւում էր, թէ նա դիտմամբ յայտնուեց իմ առաջ, և ես առանց ճանաչելու դեռ հեռուից նրան ատում էի։ Վերջապէս մենք հասանք իրար։

—Բարև, ախպէր, ասաց. Շ... գիւղի ճանապարհն ա՞յս է։

Ես կանգ առայ, ոտքից գլուխ նայեցի մարդուն և թողեցի անպատասխան։ Երևի տեսքս լաւ չէր, որովհետև նա շտապեց հեռանալ, ոտներին ույժ տուեց և մի քանի անգամ երկիւղով յետ-յետ նայեց դէպի ինձ։ Իրաւունք ունէր վախենալու. յիրաւի, երբ նա առաջս էր, ես առանձին չար ցանկութիւն էի զգում խլել նրա պարկը, ուր երևի մի քանի կտոր հաց կար դռներից հաւաքած, ցրիւ տալ դաշտում, իրան էլ մի պինդ քացի տալ. լաւ որ շուտ հեռացաւ, ես էլ զսպեցի ինձ ու անցայ։

Ճանապարհս անցնում էր հենց այն արտի մօտով, ուր ընկած էր մեռած եզը։ Հեռուից երևում էր դիակը. ուռած, ահագին, ոտներն օդի մէջ ցցուած զզուելի ձևով. մի խումբ ցիներ և մի շուն քաշքշում էին նրա մսի կտորները։ Ես մի տարօրինակ ցանկութիւն զգացի գնալ մէկ էլ տեսնել խեղճ կենդանուն։ Քանի մեռած չէր, ես դէպի նրան ոչինչ էի զգացել իսկ այժմ... այդ ուրիշ բան էր. այդ հոտած, այլանդակուած դիակի և իմ մէջ մեծ կապ կար. ախր նա որ չը մեռնէր, ես յիսուն ռուբլին ո՞րտեղից կը ճարէի։ Յետոյ ես շատ մտածեցի և չը կարողացայ հասկանալ, թէ այդ եզը ինձ համար մեռաւ, թէ հէնց այնպէս, քէֆն ուզեց՝ մեռաւ։ Մի րոպէ գլխովս անցաւ, թէ ո՞վ գիտէ, Աստուած ինձ խղճաց, դրա համար եզը յանկարծամահ եղաւ, ապա մարդու բախտը ի՞նչպէս է կտրում. յետոյ մըտածեցի.—ինձ համար լաւ եղաւ, իսկ Սէփօ՞ն... դէ նրան էլի Աստուած կը հասցնի մի ուրիշ տեղից։ Լաւ միտք էր, ինքս ինձ մխիթարեցի, սիրտ տուի, մի քիչ հանգստացայ։ Մօտեցայ դիակին, ցիները փախան. իսկ շունը ատամները ցոյց տուեց, թշնամաբար մռռաց։ Վատ, քոսոտ շուն էր, անշուշտ

անտէր ու թափառական. երևի խեղճը վա-
ղուց միս չէր տեսել և կարծում էր, թէ ես
խլելու եմ եկել։

Վերջապէս Ս... գիւղը հասայ, պէտք
եղած եզը տեսայ։ Վերադարձիս նախ տա-
րայ գողացածս դրամը թաղցրի մեր մարա-
գում և ապա գնացի տուն յայտնեցի ճա-
նապարհորդութեանս յաջող արդիւնքը։ Սէ-
փոն ուրախացաւ, ներս գնաց դրամը վեր-
ցնի, որ գնանք եզը գնենք, և յանկարծ
ծնկներին խփելով՝ գժի պէս դուրս թռաւ,
սկսեց բակում պտոյտներ գործել, այս
ու այն առարկան բռնել, շարժել, թափ
տալ, առանց հասկանալու՝ թէ ինչ է անում,
միայն շարունակ ճչում էր.

—Եզը տարա՜ն, եզը տարա՜ն...

—Ի՞նչ եզ, ա՜յ մարդ, ով տարաւ, ճչաց
սարսափած կինը, բռնելով նրա ձեռքը։

—Եզն էլ՜, եզան փողը, փողը, փողը
տարա՜ն, տունս քանդեցին, փողը չը կայ։
Յիշում եմ, ես ուզում էի մէջ խառնուել,
մի բան ասել, բայց բերանս փակուեց, ա-
տամներս իրար վրայ սղմուեցին, ոտներիս
դողը սաստկացաւ և հազիւ յենուեցի սրահի
սեանը, մինչդեռ մարդ ու կին իրար ձեռքից
բռնած, իրար քաշքշելով՝ վազվզում էին

պատի այս ու այն կողմը, յետոյ հարբածի
պէս կրկին ներս մտան տուն, ես էլ հետե-
ւեցի նրանց։ Իրար միջոց չը տալով՝ նրանք
խառնեցին սնդուկը դուրս թափեցին ինչ որ
կար.—փողը չը կար ու չը կար. Թուղթն
այնտեղ էր, որի մէջ փողը փաթաթուած
էր, իսկ յիսուն ռուբլին չը կար։ Տասն ան-
գամ մի և նոյն թղթի կտորը մարդ ու կին
փոխ առ փոխ վերցրին, ծալքերը բացին
նայեցին, գետին ձգեցին, տասն անգամ
խառնեցին իրանց գրպանները, իրանք էլ չի-
մանալով թէ ինչու, ապա վեր թռան միասին
և սկսեցին անկողինների ծալքը քանդել,
տունը տակն ու վրայ արին, մինչդեռ Սէփոն
լաւ յիշում էր, որ դրել էր սնդուկում։
Դրամը չը կար։ Տունը դարձաւ իսկակ մե-
ռելատուն. կինը արտասւում էր, գովք էր
ասում՝ ինչպէս երեխաները կորցրած մայր.
իսկ Սէփոն կրկին դուս թռաւ բակը և վըշ-
վշալով ման էր գալիս, ձեռները տորորում,
վերջը կծկուեց մի պատի տակ։

Երեք անգամ պատրաստուեցի ոտներն
ընկնել, խոստովանել գործածս յանցանքը,
թողութիւն խնդրել արտասուելով, յետ տալ
փողը, և երեք անգամ էլ պարզ, որոշ լսեցի
ականջումս միևնոյն ձայնը.—«գիտե՞ս, Աթօ,

Ռեհանին ուզող կայ»։ Երկի՜նք. այդ անիծուած ձայնը ես լսեցի՝ ինչպէս այժմ խօսում եմ. լսեցի՝ և բերանս փակուեց, լռեցի խեղդուած։ Ռեհանին ուզող կար, փողը տալ կը լինէ՞ր... գողումէի, սարսափում էի արածիցս, բայց էլ աւելի սարսափում էի յայտնելուց։ Ի՜նչ օր քաշեցի. քիչ էր մնում խելքս կորցնէի և սկսէի բակում վազվզել գոռալով, «գողը ես եմ, գողը ես եմ»։ Սիրտ չէի անում ասել, բայց կ'ուզէի, որ մի կերպով բռնուեմ, որ մի մարդ տեսած լինի արածս, գայ, հաստատի. կ'ուզէի, որ ինձ բռնեն, խեղդեն, կտոր-կտոր անեն, տանջեն, լացացնեն, մանաւանդ լացացնեն. արցունքով գուցէ սիրտս թեթևանար, թէ չէ մեռնում էի, քիչ էր մնում տրաքուեմ։

—Աթó, քո տունն աւերուի, Աթó փողը տարան. ախր խեղճ կնկաս «երեսի ջուրըն էր», այն էլ տարան, Աթօօ՜, ճար, հնար, ասաց Սէփօն տխուր ձայնով, որ մինչև սիրտս թափանցեց, ապա գլուխն առաւ երկու ձեռների մէջ և սկսեց հեկեկալ։

—Հա՜, տարա՜ն, Սէփօ ապէր, կրկնեցի ես դողդոջուն ձայնով. և ի՜նչ, ես՝ գողս, աւազակս, ոճրագործս լաց եղայ խեղճ Սէփօի հետ, լաց եղայ բարձրաձայն, գժի պէս,

լաց եղայ ոչ Սէփօի, այլ ինձ համար, լաց եղայ իմ խեղճութեան համար, իմ թշուառութեան համար, լաց եղայ հոգուս տանջանքը թեթևացնելու համար, ներսս այրող կրակի վրայ մի քիչ արցունք ցանելու համար. լաց եղայ իմ կորցրած խիղճը, որ այդ օրն առաջին անգամ գողութիւնով սևացրի։ Եւ էլի սիրտ չարեցի ասելու, թէ ես եմ գողը։ Տեսե՞լ էք ձմեռ ժամանակ, թէ ինչպէս փոքրիկ երեխան ձնագունդը ձեռքին բռնած, ցրտից կապտում է, դողում, լաց է լինում, թէ ձեռը սառում է, օգնութիւն է խնդրում, գանգատւում է թէ կապտեց, մեռաւ ցրտից, բայց ոչ մի կերպով յանձն չի առնում դէն գցել ձնագունդը, որ իր ցաւի աղբիւրն է, ճիշտ այդպէս էի և ես, ճիշտ այդպէս էի արտասւում ես. տարբերութիւնն այն է միայն, որ խեղճ երեխան չի ուզում հաւատալ, թէ ձիւնն է իրան մրսացնողը, իսկ ես շատ լաւ գիտէի, և շարունակում էի արտասուել ու դողալ։

Օ՜, դա մի զարմանալի բան էր։ Թըշնամուս չեմ ուզի այդ օրը տեսնի։

Մարդու հոգին շատ խորն է, շա՜տ խորը, ծո՜վ...

III

Ուրախացայ, երբ տնից կամացուկ դուրս գնացի. էլ չէի դողում այնպէս. արցունքն ինձ փրկեց։ Գիւղից դուրս եկայ, երկար քայլեցի միայնակ, մտածեցի հազար ու մի բաներ և մի ժամանակ համարեա առանց իմանալու ինձ գտայ Ռեհանենց տան առաջ։ Մի րոպէ մնացի լուռ, շուարուած. մտածում էի՝ մտնե՞լ թէ ոչ։ Սաստիկ կ'ուզէի մտնել, տեսնել, ասել նրան, որ դու իմն ես, որ ոչ ոք չի կարող քեզ խլել ինձանից, բայց վախենում էի մատնել ինձ։ Լաւ համարեցի յետ դառնալ և սպասել, մինչև փոթորիկն անցնի, մինչև Սէփօի փողի ձէն ու ձունը կտրուի գիւղից։ Հէնց այդ րոպէին բակի դուռը բացուեց, Ռէհանը դուրս եկաւ, գընում էր ջրի. մայրը տանը չէր, եկեղեցի էր գնացել, երեկոյ էր. այլ ևս հեռանալն անկարելի էր, ներս մտանք։

Երբ մնացինք սենակ՝ ես միառժամանակ նայեցի նրան. դեռ երբէք նա այնպէս սիրուն չէր երևացել ինձ, ես նայում էի այնպէս, որ կարծես աչքերով ուզում էի ուտել նրան. ապա յանկարծ մօտեցայ, գրկեցի նրան առաջին անգամ երեք տարուայ սիրոյ

ընթացքում. աղջիկը չէր սպասում, այդ նըրան զարմացրեց։ Այդ դեռ քիչ էր. ես նըրան այնպէս սղմեցի գրկիս մէջ, որ նա քիչ մնաց նուաղէր, և երկիւղով ու ցաւով էր նայում երեսիս, կարծես ուզում էր իմանալ, չե՞մ խելագարուել արդեօք, կամ որ և է չար միտք չունե՞մ։ Դէմքս երևի սարսափելի լինելու չափ տարօրինակ էր. նա ճիգ գործ դրեց դուրս պրծնել ու փախչել. ի զուր, իմ երկաթէ բազուկների մէջ նա թրթռում էր ինչպէս ճնճղուկը բազէի ճիրանների մէջ, և ես սեղմում էի. սեղմում բոլոր ուժով, խեղդելու չափ։ Երեք տարի կուտակուած սէրս, զգացմունքս, կարօտս յանկարծ մէկէն դուրս թռաւ, իմ համբոյրները սարսափելի էին, ես ագահութեամբ ծծում էի նրա միսը արիւն հանելու չափ և չէի կշտանում. ես կատաղել էի, ինքս ինձ մոռացել էի, միայն գիտէի, որ մի բան կայ գրկիս մէջ, որ պէտք է սղմել, սղմել նրան, մինչև որ իսպառ հալուի, լուծուի ինձ հետ, իմ մարմնի հետ, որ էլ ոչ ոք չը կարողանայ բաժանել ինձանից։ Ապա ինձ թուաց, որ ես երազի մէջ եմ։ Որքան ժամանակ տևեց այդ երազը, ես չը գիտեմ, միայն ուշքի եկայ այն ժամանակ, երբ յանկարծ նրա հեկեկոցնա-

կանչիս հասաւ, ինչպէս հեռու տեղից քամու բերած մի ողբի ձայն. իր անզօրութեան մէջ աղջիկն արտասւում էր երեխայի պէս իմ գրկի մէջ. ես ցնցուեցի և յետ փախայ սարսափած, շնչակտուր, հևալով։

— Ինչո՞ւ ես սպանում ինձ, անաստուած, ես խօմ նրան չեմ առնում, հազիւ կարողացաւ ասել Ռեհանը արտասուքի միջից։

Խեղճ, նա կարծում էր, թէ ես եկել եմ նրան խեղդեմ, որ իմ հակառակորդին բաժին չը լինի. իսկ երևի ես խեղդում էի նըրան, որովհետև սիրում էի, որովհետև երեք տարի շարունակ այդ համբոյրի համար տանջուել, չարչարուել էի ուրիշի դռներում, որովհետև նրա համար ոճիր էի գործել։ Բոլոր կրածս զոհերի հաշւին էի պահանջում. ես մի գազանի պէս ախորժակով պատառոտում էի իմ որսը, որ բռնել էի մեծ դըժուարութեամբ. կարծես վրէժխնդիր էի լինում այդ աղջկանից, որ իմ թշուառութեան և իմ երջանկութեան աղբիւրն էր միաժամանակ. նա մի բաժակ էր ինձ համար՝ մեղրով և թոյնով լցուած. ես խմում էի մեղրը, ծծում էի քաղցրութիւնը մինչև յատակի թոյնին հասնելը։ Յետոյ զգացի, որ ես կարող էի նրան խեղդել գրկիս մէջ, պա-

տառոտել միս ատամներովս, սարսափելի համբոյրովս. եթէ չարտասուէր, չը ճչար՝ ես կը խեղդէի նրան և կը մեռնէի ցաւից նրա սիրոյ համար. նա իմ զոհն էր և իմ դահիճը միաժամանակ, ես զոհում էի և զոհւում միաժամանակ. չը գիտեմ թէ ես ինչ էի, սարսափելի բան էր։

—Դու միշտ իմն ես, Ռեհան ջան, այսուհետև ոչ ոք չէ կարող քեզ խլել ինձանից, ասացի ես հևալով, և փորձեցի մօտենալ գունատ ու դողդողացող աղջկան. նա փախաւ հեռու։

—Հա՛, քոնն եմ, որ խեղդես, անխիղճ, ասաց նա հեռուից։

--Ռեհան, ներիր ինձ, ես այսօր գժուել եմ, չը գիտես, բան կայ... էլ այսպէս չեմ լինի, Ռեհա՛ն... ձայնս խզուեց և ես հեկեկացի երեխայի պէս. նա էլ կրկին արտասուեց, մենք իրար փաթաթուեցինք։ Այս անգամ ես մեղմով համբուրեցի նրա գունատ այտերը, և կամացուկ փսփսացի ականջում, կարծես վախենալով որ պատերը կը լսեն։

—Մեր հարսանիքը շուտով կը լինի, այս ձմեռ. փողը պատրաստ է։

—Ո՞րտեղից։

Լռա՛, մի՛ հարցրու. ես ձեռքով փակե-

ցի բերանը. կրկին առաջուայ կատաղութիւնը վրաս եկաւ, կրկին համբոյրներս կատաղի դարձան, բայց հէնց այդ րոպէին դրսից ոտնաձայն լսուեց. ես թողի աղջկան և դուրս փախայ: Մայրն էր վերադառնում եկեղեցուց:

Տուն եկայ. հաւաքուել էին բազմաթիւ հարևաններ. խօսքը գողութեան մասին էր: Ի՞նչ ասել կ'ուզէ, որ ոչ ոք իմ վրայ մազի չափ անգամ կասկած չէր տանում. նախ՝ որ իմ կեանքը եղել էր միշտ օրինակելի, անբիծ. երկրորդ՝ եթէ անցեալում կասկածելի բարք էլ ունեցած լինէի՝ գոնէ այս անգամ ես պիտի ազատ լինէի որ և է մեղադրանքից, որովհետև գողութիւնը կատարուած րոպէին՝ Սէփօի իսկ վկայութեամբ, ես տանից և գիւղից բացակայ էի, գնացած լինելով Խ... գիւղը. և յիրաւի գնացել էի:

—Երկինք, գետինք, ասում էր Սէփօն. այնպէս եմ յիշում, ինչպէս իմ այս չորս մատը, այս կտրած ձեռքովս տարայ մեր անտէր սնդուկի մէջ դրի. երկու քըսանըհինգանոց, թղթի մէջ փաթաթած:

—Սէփօ, ասաց ռէսը, գուցէ ճանանապարհին թղթի միջից ձգել ես և թուղթը միայն տարել, դրել սնդուկը:

Այս հարցը վտանգաւոր էր. իմ ոտները

նորէն դողացին, սիրտս կրկին թրպրտալ սկսեց և ձեռքովս սղմեցի կուրծքս. ինձ թւում էր, որ բոլորն էլ լսում են այդ թըրթռացի ձայնը: Լաւ որ մութ էր, թէ չէ կը տեսնէին, թէ ինչպէս գունատուեցի:

—Չէ, տանուտէր, քո ոտին մեռնեմ, չէ. տուն բերի. Աթօն տանն էր, բա՛ց արի, ցոյց տուի, այնպէս չէ՞, Աթօ, դարձաւ նա դէպի ինձ:

Նրա հետ միասին ամենքն ինձ նայեցին. դողս կրկնապատկուեց, ատամներս կրկին փակուեցին և կարծեմ պէտք եղածից մի փոքր ուշ հազիւ կարողացայ երկու բառ թոթովել.

—Աչքովս տեսայ... Դարձեալ խաւարն օգնեց, յուզմունքս չը նկատեցին:

—Ցոյց տուեցի Աթօին, շարունակեց Սէփօն, յետոյ նրան ուղարկեցի՝ որ գնայ Խ... եղը տեսնի, ես էլ փողը կրկին փաթաթեցի թղթի մէջ և տարայ իմ ձեռքով դրեցի սնդուկը: Աթօն դարձաւ լուր բերեց. գնացի որ փողերը վերցնեմ, գնանք եղն առնենք—փողը չը կայ ու՛ չը կայ: Թուղթը թողել են և փողը տարել. հա՛յ դէս, հա՛յ դէն, սնդուկն ու տունը տակն ու վրայ արինք, էլ անկիւն չը թողինք՝ իրար տուինք.

—չը կայ ու չը կայ․ փող դրել ես, արի տար։ Տարան, ինձ թողին վիզս ծուռ, ձեռս ծոցս։

—Տանու մարդ է, ախպէր, տանու մարդ, վճռեցին հարևաններն այս ու այն կողմից․ իսկական գողը գիշերը կը գար, պատը կը ծակէր, դուռը կը կոտրէր, կողպէքը կը բանար, թալան կանէր, և ոչ թէ օրը ցերեկով կ'երթար սնդուկից միմիայն փողը կը հանէր։

—Մեզնից մէկն է, հարևաններից մէկն է, ասացին ուրիշները․ ո՞վ գիտէ, գուցէ հէնց այս րոպէիս մեր մէջ նստած է, մեզ հետ խօսում է։ Ով և լինի՝ թո՛ղ գո՛նէ իր Աստուծուց վախենայ, թէ խղճից չէ վախենում, թո՛ղ բերի յետ տայ․ թո՛ղ էն խեղճ կնկայ արցունքին խնայի, թո՛ղ էս մարդու երեխաների հացը չը կտրի․ աշունք է, վար ու ցանքի ժամանակ է, լուծը գետինն է մնացել, արտն՝ անվարել, սերմն՝ անցանել․ թո՛ղ հէնց վարձք համարի բերի տայ։

Այսպէս էին խօսում երկար, որ գողի սիրտը փափկացնեն, նրան համոզեն։ Շատ բաներ ասացին, վերջ ի վերջոյ սկսեցին իրար հաւատացնել, թէ գողը տանու մարդ է, այսինքն մօտիկ հարևաններից մէկն է,

որ ճանաչում է Սէփօի տան ել ու մուտքը, որ գողը շատ էլ անխիղճ, քարասիրտ մարդ չէ․ մի բան է՝ արել է, մի վատ գործ ձեռքից պրծել է, սատանային ականջ է դրել․ իսկ այժմ արդէն փոշմանել է, Սէփօին ու կնկան խղճում է, որ ուզում է փողը վերադարձնել, բայց ամաչում է, չը գիտէ, ինչ հնարով բերի յետ տայ, որ իր ով լինելը չիմացուի՝ թէ իր խիղճը փրկի, թէ իր անունն անարատ մնայ։

—Հեշտ բան չէ գող անունը, հանաք մի կարծէք, ասում էր ռէսը, ասենք թէ ես եմ գողացել․ շատ էլ փոշմանել եմ, ուզում եմ յետ տալ, ինչպէս վեր կենամ ասեմ, թէ ես եմ գողացել, ես գող եմ, փողը բերել եմ․ դէ ասա՛՝ մարդ առաջուց գերեզմանը փորի․ էլ ապրել կը լինի՞։

—Իրաւ, իրաւ դժուար բան է, ասացին այս ու այն կողմից։

Սկսեցին մտածել, թէ ինչ հնար գտնեն, որ գողը բերի յետ տայ փողը առանց յայտնուելու, առանց ամաչելո՛ւ։ Երկար մտածեցին և հնարը գտան, մի զարմանալի խելացի հնար։ Որոշեցին որ իւրաքանչիւր հարևան, մեծ թէ փոքր, մարդ թէ կին, մի քիչ հող ածի փէշը, բարձրանայ Սէփօենց

կտուրը և նրանց երդիկից ներս թափէ տունը: Ներսում մարդ չի լինի, դուռը կը փակեն և բանալին կը յանձնեն տէրտէրին. գողացողն այսպիսով համարձակ կարող է հողի հետ ներս ձգել փողը, և ոչ ոք չի իմանայ, թէ ով ձգեց: Երբ ամենքն էլ իրանց հողն ածեն վերջացնեն՝ տանտէրը, տէրտէրն ու ռէսը ներս կ'երթան և հողը կը քանդեն, կը նայեն, փող գտնելը դժուար չի լինի: Բայց որպէս զի գողին միջոց տան մի փոքր իր խղճի հետ հաշիւ տեսնելու, որպէս զի նա հնար ունենայ փողը թագցրած տեղից հանել բերել՝ ամենքն էլ քաշուեցին իրանց տներն այդ երեկոյ, որ յաջորդ երեկոյ մըթնով հաւաքուեն և փորձն անեն: Ես մինչև այժմ էլ չեմ հասկացել, թէ ինչո՞ւ էին կարծում, թէ գողը կը բերի փողը յետ կը դնի. խորհուրդ տուողը երևի ինքը ցաւում էր Սէփօի վրայ, նրան թւում էր, թէ ինքը եթէ գողանար, կը բերէր յետ կը տար, ուստի հաւատում էր, թէ գողն էլ նոյնը կ'անէ:

Այդ գիշեր ես Գասպարին գանգատ չարի իմ բախտից, չը խօսեցի Ռեհանից և փորձեցի շուտ քնել. բայց անհանգիստ էի և երևի տարօրինակ, որովհետև Գասպարը մի երկու անգամ լուռ երեսիս նայեց կասկածով, և երբ

ես նրա հայեացքը բռնեցի՝ նա շտապով երեսը դարձրեց, որ չիմանամ, թէ ինձ է նայում. գոնէ ինձ այդպէս թւաց: Վերջապէս քնեցի. նա երբ քնեց՝ չը գիտեմ: Լաւ չէր քունս. ամբողջ գիշեր երազների մէջ էի—կռիւ, կոտորած, դիակ, արիւն, լաց, իրար խառնուած՝ աչքիս առաջն էին: Առաւօտեան Գասպարը դարձեալ մի քանի անգամ վրաս նայեց, այս անգամ աւելի կասկածով. ինձ թւաց նոյն իսկ, որ նա ուզեց մի բան ասել, բայց յետոյ զսպեց իրան, պատի մօտից փայտը վերցրեց և դուրս գնաց: Ի՞նչ էր ուզում ասել արդեօք, չը լինի՞ թէ ես քնիս մէջ խօսել եմ և ինձ մատնել, մտածեցի ես և սաստիկ վախեցայ. սա շատ հաւանական էր, երազներս սարսափելի էին: Ամբողջ օրն այդ միտքն ինձ չը թողեց.— ինչ եմ խօսել արդեօք քնիս մէջ, Գասպարն ինչո՞ւ էր այնպէս նայում ինձ. յետոյ որոշեցի, որ եթէ իմանար՝ կ'ասէր, երևի ոչինչ չէ լսել:

Արդէն մութ էր, երբ հարևանները կըրկին հաւաքուեցին. Սէփօի տան դուռը փակեցին և բազմութիւնը մէկիկ-մէկիկ բարձրացաւ կտուրը, իւրաքանչիւրը մի փոքր հող փէշն ածած:

—Մի՛ ամաչէք, որդիք, ասաց տէրտէրը. մեղքից ազատուելը յանցանք չէ, մեղքի մէջ մնալն է յանցանք. այ՛, ես էլ հող կ՚ածեմ։ Եւ իր երկար վերարկուի փէշի մէջ մի փոքր հող ածած, նա մօտեցաւ երդկին, ընդհանուր ծիծաղի և շշնջոցի մէջ առաջինը թափեց հողը. Նրան հետևեց ռէսը, ապա անմիջապէս մօտեցայ ես և թափեցի մի կոյտ հող։ Ի՞նչ ասել կ՚ուզէ, որ դրամը չը գցեցի։ Բազմութիւնը շարունակում էր բարձրանալ և իջնել. ես մտքիս մէջ և՛ տանջւում էի իմ արածի համար, և ծիծաղում էի ուրիշների արածի վրայ։ Ճիշտ որ ծիծաղելի էր. խեղճ Սէփօի տունը հողով լցուեց, բայց դեռ քանի մարդ կար։ Կէս գիշեր էր. ճարները կտրած, որոշեցին, որ բազմութեան մնացած մասը յաջորդ երեկոյ ածէ, իսկ այժմ ներս մտնեն, հողը նայեն։ Այդպէս էլ արին։ Փողը չը կար, մնաց մի չնչին յոյս վաղուայ համար. հարևանները ցրուեցին։ Յաջորդ երեկոյ առաջինը Գասպարը մօտեցաւ, իր հողն ածեց, նրան հետևեցին միւսները. էլի տևեց մինչև ուշ գիշեր։ Վերջապէս բոլորն էլ իրանց պարտքը կատարեցին։ Տէրտէրը, տանուտէրը և Սէփօն ճրագ վառեցին, ներս գնացին։ Նրանք խնամքով դուռը փակեցին, և

սկսեցին իրանց աշխատանքը։ Քիչ էր մնում ճչայի, թէ զուր էք այդքան խառնում, փող չը կայ այնտեղ, ես եմ պահել. և ճշմարիտ, երբեմն ինձ տարօրինակ էր թւում, որ ես այդ չեմ ասում, որ թողնում եմ այդքան իրար անցնեն իզուր տեղը։ Էլի լռեցի. չէր ասւում։

Երկար տևեց այդ աշխատանքը։ Բազմութիւնը դրսում սպասում էր անհամբեր, անհանգիստ ու հետաքրքիր. սա վերջին փորձն էր։ Ոմանք մօտենում էին. ականջները դնում դռան փակին և շունչները բռնած՝ աշխատում էին մի շշուկ, մի յուսատու խօսք լսել ներսից։

—Գտնուե՜ց, գտնուե՜ց, աչքերդ լո՛յս, յանկարծ լսուեց տան ներսից. խօսողը, աչքալոյս տուողը ռէսն էր։

Ես համոզուած էի, որ հանաք է անում, ծաղրում է։ Շատերի հետ ինքս էլ ժպտացի։ Դուրս եկան, երեքով էլ ժպտադէմ, ուրախ, դարձեալ աչքալոյս տուին բազմութեանը, իսկ տէրտէրը ամենայն լրջութեամբ օրհնում էր գողի բարի սիրտն ու ձեռքը։ Ես դարձեալ չը հաւատացի։ Սէփօն առաջացաւ, ուղիղ յիսուն ռուբլի նրա ձեռքումն էր. աչքովս տեսայ։

—Իսկ և իսկ այն փողերն են․ այն քսանըհինգ ռուբլիանոցները, ասաց նա, ահա՛, և նա ցոյց տուեց բազմութեանը․ ով որ էր՝ շարունակեց նա․ էլի ողորմի իր հօրը, թո՛ղ Աստուած նրան ամենևին չար չը տայ․ ինչ որ մեր գլուխը բերեց՝ թո՛ղ նրան ամենևին չը պատահի։ Լացացրեց, լաւ լացացրեց մեզ, բայց լաւ էլ ուրախացրեց․ ինձ այնպէս է թւում այժմ, թէ այն սատկած եզն էլ կենդանացաւ։

Բազմութիւնն ուրախ-ուրախ ցրիւ եկաւ։ Ամենքն այդ րոպէին մի և նոյն բանն էին մտածում, մի և նոյն բանն զգում․ միայն ես էի անմասն ընդհանուրի ուրախութեանը, միայն ես դժգոհ մնացի կատարուածից, միայն ես էի տանջւում ի նորքուստ, և չը գիտեմ ինչ էի մտածում, միայն գիտեմ որ մտքերս լաւ չէին։

Ես գող էի։

IV

Ո՞վ գցեց դրամը․ ո՞վ իր սեփական գըրպանից այդպիսի գումար զոհեց․ ո՞վ է այդ գթոտ, աստուածավախ մարդը, մտածում էի ես իմ տեղում քարացած կանգնած՝ երբ բազմութիւնը կամաց-կամաց քաշւում էր։

Ասես մի հեռացող իր ուրախութեամբ, իր ծիծաղով, իր խաղաղութեամբ տանում էր իր հետ իմ երջանկութեան, իմ հանգստութեան վերջին մնացորդը, ինչպէս և իմ ատելութիւնը․ ես ատում էի ամենքին։ Ես ամեն բան սպասում էի գողութիւնից յետոյ․ սպասում էի, որ ո՛վ գիտէ ինչպէս՝ կարող են իմ յանցանքը բռնել․ որ գուցէ ես չեմ դիմանայ, կը յայտնեմ․ որ մէկը տեսած կը լինի ինձ մարագում փողը թագցնելիս․ բայց որ մէկ ուրիշ մարդ բերէր փողը տար խըղճալով՝ այդ իմ մտքովն անգամ չէր անցնում, և հէնց այդ անսպասելին էր, որ ինձ սպանում էր։ Յանկարծ մտքովս անցաւ, թէ մի՞ գուցէ ինձանից մի աւելի ճարպիկը, ո՛վ գիտէ ինչպէս, իմացել է դրամի թագստի տեղը և բերել է տիրոջը յանձնել․ շտապով գնացի մարագ․—դրամն իր տեղումն էր։

Ո՞վ էր ուրեմն այդ տարօրինակ, այդ ողորմած մարդը․ Գասպարը․․․ բայց նա փող չունի, այդ ես շատ լաւ գիտեմ։ Սակայն ով և լինէր՝ ես ատում էի նրան, այդքան արդարութիւնը, այդքան առաքինութիւնն ինձ զայրացնում էր, ի՞նչ ասեմ, իմ սիրտն էր ծակում․ ես գող էի, և կ՚ուզէի որ մէկն ու մէկն այդ բազմութիւնից գիշերով գար

Սէփօի մնացած մի հատ եզն էլ տանէր. կ'ուզէի, որ բոլորն էլ դառնային աւազակներ, մարդասպաններ։ Իսկ դրա փոխարէն՝ մէկը սուրբի բան արեց, իսկ և իսկ սուրբի գործ։ Պարապ, թափառաշրջիկ մարդն ինչպէս է բարկանում, երբ տեսնում է մէկին արիւն քրտինք թափելիս, կամ հիւանդն ինչպէս դժուարանում է տեսնել մի առողջակազմ մարդ. ճիշտ այդպէս էլ ես զայրանում էի այդ բարի գործի վրայ։

Ուշ տուն գնացի. ամաչում էի, չէի համարձակւում Գասպարի առաջ դուրս գալ. կ'ուզէի, որ նա երբեք չը տեսնի։ Երբ ներս մտայ՝ նա արդէն պառկած էր, բայց քնած չէր, և ոչինչ չասաց։ Ես էլ չը գանգատուեցի մեր բախտից, չը խօսեցի իմ նշանածից, լուռ էի, ջարդուած ու տխուր. նա խօմ լուռ էր ու լուռ։ Երկար մնացինք այսպէս. խեղդւում էի, ինձ մի ճար էր հարկաւոր. ես վառւում էի բոցերի մէջ, ես գալարւում էի իմ պառկած տեղում։ Ա՜խ, այնպէս կ'ուզէի, որ Գասպարը իմացած լինէր իմ ոճիրը, ինձ դառն, կծու խօսքեր ասէր, ինձ անարգէր լացացնելու չափ։ Բայց նա լուռ էր։ Ծարս կտրուեց, էլի ես խօսք

բաց արեցի. ուզում էի իմանալ, թէ նա ինչ է մտածում։

—Տեսնես ով էր տարել այդ փողը։

—Ով և տարել էր, ինչների՞ս է պէտք, բաւական է, որ էլի խղճով մարդ էր, բերեց յետ տուեց, Աստուած իր բանն աջողի։

Քիչ մնաց, նրա խօսքի վրայ ճչամ ասեմ, թէ ախր գողը չէ բերել, գողը ես եմ, փողն ուրիշ մարդ է գցել, ուրիշի փող է. էլի լեզուս փակուեց. Գասպարից էլ էի վախենում, թէև ուզում էի որ նա իմացած լինի, բայց չէի համարձակւում ինքս ասել։ Վիճակս անտանելի էր։ Ես մոռացայ և՛ նշանածս, և՛ իմ հարսանիքը, և՛ իմ օջաղը. միայն այդ դրամը, այդ անիծուած յիսուն ռուբլին մնաց աչքիս առաջ և ինձ քրքրում, տանջում էր. իսկ Գասպարը հանդարտ պառկել էր, իր բարի աչքերը բաց ու խուփ էր անում, նայում դէպի վեր, ապա մի քանի անգամ յօրանջեց և խաղաղ քնեց խորը քնով։ Ես նայում էի նրան և առաջին անգամ իմ կեանքում նախանձում էի իմ սիրելի ընկերոջը։

Ես մնացի անքուն։ Բոլոր ուշք ու միտքս այժմ դարձել էր մի բանի վրայ, թէ ինչպէս գտնեմ այն սուրբ մարդուն, որ բերեց

իր փողը գցեց երդկից. մտածում էի տանել յիսուն ռուբլին դնել առաջը, պատմել իմ գլխի անցքը. խոստովանել բոլորը, աղաչել, որ լուռ կենայ, և այսպիսով գոնէ իմ խղճի հանգիստը գտնել, թէ չէ այսպէս ապրել չէր լինում։ Բայց ինչպէս գտնել այդ մարդուն, որ անշուշտ մի արդար էր։ Ես գիւղում մի այդպիսի մարդ չէի ճանաչում. երևի կար մէկը թագնուած, որին ոչ ոք չէր ճանաչում. իսկական արդարները չեն յայտնւում շատ անգամ։ Ուզեցի Գասպարին զարթեցնել, պատմել և խորհուրդ հարցնել. Թափով ձեռքս սեղմեցի և ուսը ցնցեցի. նա զարթեց։

—Հ՛ը, ի՞նչ կայ, ասաց նա՝ աչքերը բաց ու խուփ անելով կէս քուն կէս արթուն։ Հէնց երեսին նայեցի, հէնց ձայնը լսեցի՝ քաջութիւնս փախաւ, դարձեալ շրթունքներս դողդողացին. ո՛չ, ես ամբողջ աշխարհին կարող էի ասել, բայց ոչ Գասպարին, այդ անհնար էր, ուժիցս վեր։— «Ոչինչ, քունս չէր տանում, ասացի զարթեցնեմ մի քիչ խօսենք»։

Նա ժպտաց իր մեղմ, բարի ժպիտով։

—Ռեհանն է քունդ կորել, գիտեմ. քնի՛ր, քնի՛ր, Աստուած ողորմած է։ Ասաց և կրկին հանդարտ քնեց. «Անխի՛ղճ», մրմռացի ես կա-

մացուկ. արցունքը կոկորդս սեղմեց և առաջին անգամ ընկերոջս կողքին ես ինձ զգացի մենակ, անօգնական, անընկեր, աւելի թշուառ՝ քան երբ և իցէ։

Այսպէս անցան օրեր ու շաբաթներ, փողը մնաց մարագում, Ռեհանը մնաց իրանց տանն սպասելով, իսկ ես թափառական, անգործ, անհանգիստ։

Մի գիշեր,—ճիշտ մի այսպիսի գիշեր էր, զով ու սիրուն,—ես ու Գասպարը այնտեղ էինք, այ այնտեղ, առուի այն կողմը. այն ժամանակ Սէփօէինն էր այն արտը և նա բօստան էր ցանել, մենք երկուսով պահում էինք։ Ճիշտ այսպէս, ինչպէս այս գիշեր, նստած էինք քօլիկի մօտ, ճիշտ այսպէս կրակ արած փեղամներ էինք եփում ուտում։ Յանկարծ Գասպարն այնպէս ճչաց, այնպիսի ձայն հանեց, որ մազերս դիզացան գլխիս. մէկ էլ տեղից վեր թռաւ, փախաւ հեռու-հեռու, կանգնած տեղը մի քանի պտոյտ արեց և ընկաւ խոտերի մէջ՝ ինչպէս սղոցած բարտի ծառ։ Վազէվազ հասայ. մինչև կը հարցնէի ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց՝ նա սարսափած ձայնով ասաց.

—Օձը կծեց, օձը՛...

Էլ ոչինչ չասաց, միայն թաւալւում էր

խոտերի մէջ, կուրծքը տրորում էր գետնին, ատամներով կրծոտում էր խոտը, չանկռում էր հողը, ոռնում էր անտանելի ցաւից, ձայնը երկինք էր հասնում։ Դաշտում էլ մարդ չմնաց, բոլորն էլ նրա ձայնից հաւաքուեցին։

—Աթօ, ախպէր, ընկեր, աչքիս լոյս, ազատի՛ր ինձ, աղաչում էր նա. սպանի՛ր ինձ քո ձեռքով, սպանի՛ր։

Հոգիս կտոր-կտոր էր լինում. վազվզում էի այս ու այն կողմը խելագարի նման. մերթ մօտենում էի, բռնում ձեռքից, պըտտւում էի հետը, կամ թաւալւում գետին, գրկում էի, համբուրում, ապա լալով փախչում էի հեռու։ Ձեռքն էր կծել, թոյնը գործում էր սարսափելի կերպով. օգոստոսի օձից Աստուած ազատի. ուռոյցքը վայրկենապէս հասաւ մինչև ուսը։ Մի քանի տեղով պինդ կապեցինք—իզուր. շուտով երեսն ու կուրծքն էլ ուռաւ, իսկ ինքը շարունակում էր աղիողորմ վայել, վայել, հառաչել, այնպէս էր տնքում, քարից, սարից արցունք էր քամում։ Շալակեցինք, գիւղ տարանք. մինչև լուսաբաց նոյն ձևով տրորուեց գետնին, ինքն իր միսը չանգռեց, գալարուեց, ճչաց՝ մինչև բոլորովին թուլա-

ցաւ։ Հոգեվարքին մօտ, կապտած ու այլանդակուած, նա բարձրացաւ վերջին անգամ, ուռած ձեռները մեկնեց վեր-վեր, դէպի երկինք, և հազիւ ասաց նուաղած ձայնով.

—Անգութ Աստուած, քեզ ինչ էի արել։ Ապա վայր ընկաւ և իմ գրկի մէջ շունչը փչեց։

Մենակ էի յուղարկաւոր, երբ տէրտէրի ու ժամհարի հետ նրան տարանք գերեզմանատուն. իմ ձեռքով փորեցի գերեզմանը խոր-խոր, ապա իմ ձեռքով ցած իջեցրի այդ տանջուած մարմինը և հողը վրան ածեցի, մինչդեռ տէրտէրը քաղում էր աղօթքներ։ Թումբը բարձրացաւ, բարձրացաւ և ընդ միշտ ծածկեց իր տակ նրան, որ այնքան բարի էր, գթոտ և որ այնքան տանջուեց առանց վայելելու այս փուչ, անիրաւ աշխարհում, այնքան «ախ» ու «օճփ» արեց առանց երբէք հասկանալու, թէ ինչո՞ւ իր ցաւի բաժին այնքա՜ն շատ էր։ Ես էլ մինչև այժմ դեռ չեմ հասկացել, թէ Գասպարն ինչո՞ւ էր աշխարհ եկել, ինչո՞ւ այնքան սև օր քաշեց և ինչո՞ւ այնպէս տանջանքներով մեռաւ։

Թաղումից տուն վերադարձայ ջարդուած, կիսամեռ, կիսախելագար։ Հարուածը սարսափելի էր. աշխատել չէի կարողանում

այլ ևս. ցաւիս մէկը հազար դարձաւ և կըրկին թափառական ընկայ սար ու ձոր։ Շըրջում էի յատկապէս այն տեղերը, ուր նա եղել էր, պառկել, այնտեղ՝ ուր նա գալարւում էր ցաւից և անիծում իր օրն ու կեանքը։ Այժմ ես արդէն իսպառ մենակ էի աշխարհում, օտար, անտուն, անտէր, թափառական։ Շատ անգամ գիշերով թէ ցերեկով գնում էի նրա գերեզմանը գտնում, նստում էի կողքին, արտասւում, հառաչում, երբեմն էլ թմրում և քնում հողաթմբի վրայ մինչև լուսաբաց։

—Տէր Աստուած, մտածում էի ես. փողը ես գողանամ, օձը Գասպարին կծի, իմ խեղճ, իմ բարի Գասպարին. ո՞ւր է արդարութիւնը, ո՞ւր է հատուցումը։

Ընկերոջս մահը սակայն մի հարցը լուծեց ինձ համար. ես այժմս այլ ևս չէի փնտրում փող տուողին. պէտքս չէր իմանալ, թէ ով է այդ մարդը, որովհետև փողը յետ տալու մտադրութիւն չունէի այլ ևս։ Եւ ինչո՞ւ յետ տամ, մտածում էի, ինչո՞ւ համար բարութիւն անեմ. մի՞թէ կարող եմ այնքան բարի լինել, այնքան ճշմարիտ, որքան Գասպարը։ Վե՞րջը... ի՞նչ օգուտ դրանից, ի՞նչպիսի մահով մեռաւ նա, ի՞նչ տան-

ջանքների մէջ. ոչ, ոչ, ես փողը ոչ միայն յետ չեմ տայ, այլ թէ կարողանամ՝ էլի կը գողանամ, աւազակ կը դառնամ, սար ու ձոր կ՚ընկնեմ, կը խլեմ, կը թալանեմ. մէկ չէ՞, երկնքի առաջ բարի լինեմ թէ չար, արդար թէ անարդար. գողի և առաքինի մարդու մէջ երկինքը խտրութիւն չէ դնում, էլ ինչո՞ւ գթոտ, ողորմած, սիրող լինեմ, ո՞ւմ համար և ինչո՞ւ համար. ո՞ւր է հատուցումը, ո՞ւր է արդարութիւնը։ Այսպէս էի մտածում ամբողջ օրեր ու շաբաթներ։ Գասպարի այլանդակուած պատկերն աչքիցս չէր հեռանում. ես տեսնում էի նրա կապտած ուռած ձեռները դէպի երկինք բարձրացրած, ես լսում էի նրա նուաղած ձայնը, նրա վերջին ճիչը, վերջին բողոքն Աստուծոյ դէմ իր սոսկալի մահուան համար։

Գասպարի մահից մի քանի շաբաթ յետոյ մի երեկոյ նրա գերեզմանի վրայ տեսայ խունկ կար ծխած։ Թարմ խունկ էր, դեռ կրակը չէր մարել. դեռ մի բարակ, անուշահոտ ծուխ բարձրանում էր դէպի վեր և բուրմունքով լցնում չորս կողմը։ Մնացի զարմացած ինքս ինձ հարցնելով, թէ ո՞վ կարող էր լինել այս անյայտ անձը, որ կապուած էր այս անտէր գերեզմանի հետ. ո՞վ

ունէր Գասպարն աշխարհում բացի ինձանից։ Երևի մի գժասիրտ կին է. մտածեցի ես, որ իր մեռելի վրայ խունկ ծխելուց յետոյ այս անտէր գերեզմանի վրայ էլ մի փոքր ծխել է, ուրիշ կերպ լինել չէր կարող, թէ չէ ո՞ւմ հոգն էր կտրուել յատկապէս գալ նախրչուն խունկ ծխել։ Գիւղերում նախրչուն ճանաչում են ամենքը, բայց նրան հոգացող, նրա վրայ ցաւող մի հոգի չի լինի․ ինչ ասել է մի նախրչի, նա իր պահած մի հատ կովից աւելի քիչ արժէք ունի։

Անցան դարձեալ օրեր․ մի գիշեր էլ շատ այս ու այն կողմ թափառելուց յետոյ, քայլերս ուղղեցի դէպի գերեզմանատուն։ Դեռ չէի հասել, երբ հեռուից ականջիս մի կանացի լացի ձայն հասաւ, որ գալիս էր գերեզմաններից։ Աշնանային խաւար գիշեր էր, երկինքը մառախլապատ, օդը ցուրտ։ Քիչ հեռու հազիւ տեսնում էի գերեզմանաքարերը մեծ ու փոքր, զանազան ձևերով, կարծես մեռելներ. պառկած լինէին։ Այնպէս չէ՞, գիշեր ժամանակ գերեզմանները իսկ և իսկ մեռելների պէս են, զարզանդ ունեն․ բայց ես չէի վախենում, ես մեռելից երբէք չեմ վախենում։ Բայց ո՞վ էր այդ սգաւոր կինը, որ սիրտ էր արել մէն-մենակ

գերեզմանները գալ այսպիսի մթով ինչո՞ւ, էր գիշերով եկել իր մեռելը սգալու, մտածում էի ես՝ կամաց-կամաց առաջանալով։ Յետոյ քայլերս իսպառ ծանրացրի։ Կինը շարունակում էր իր սուգը․ նա այնպէս էր հեծկլտում, այնպէս էր հառաչում, որ կարծես բոլոր մեռելները դուրս էին թափուել գերեզմաններից և ականջ էին դնում այդ ողբին և նրան ձայնակցում, լալիս։ Զարմանքը բռնեց ինձ, երբ մի փոքր էլ մօտենալով՝ նկատեցի, որ այդ խորհրդաւոր կինը արտասւում է հէնց Գասպարի գերեզմանի վրայ։ Քարացած մնացի․ հրեշտա՞կ էր իջել երկնքից և լալիս այդ անտէր գերեզմանի վրայ, թէ՞ մի ծածուկ բարեկամ, որի մասին ես ոչինչ չը գիտէի։ Սգացողը արտասանում էր նաև բառեր, բայց այնպէս մեղմ, այնպէս տխուր, որ կարծես մեռելների ականջին էր փսփսում, նրանց էր գանգատւում, նրանց էր աղաչում. ձայնն էլ այնպէս ցաւոտ էր, որ կարծես հոգին կտոր-կտոր դուրս էր քաշւում նրա մրմնջոցի հետ և բարձրանում վեր, խաւարի մէջ։ Նրա ախ ու վախից երակներիս մէջ դող էր անցնում․ ես կծկուեցի մի քարի կողքի, որ չը խանգա-

րեմ նրան, և ինքս էլ արտասուեցի, դառն, դառն արցունքով։

Կինը երկար արտասուեց, ապա վերջին անգամ կռացաւ հողաթմբի վրայ, մի փոքր մնաց այդպէս անձայն, յետոյ վեր կացաւ, շարժուեց դէպի գիւղ։ Նա առաջովս անցաւ, բայց ինձ չը տեսաւ. իր շուրջը չէր նայում, շտապում էր, երևի վախենում էր խաւարից, գերեզմաններից. հեշտ բան չէ, մենակ մի կին գիշեր ժամանակ մեռելների մէջ։ Երբ նա մի փոքր հեռացաւ՝ ես վեր կացայ և զգուշութեամբ հետևեցի նրան. պէտք էր իմանալ, թէ ով է նա և ուր է գնում։ Նա գողունի քայլերով գիւղ հասաւ և մտաւ մի տուն։ Այդ տունը ես ճանաչում էի, Սօնայի տունն էր. բայց ինքը Սօնան էր արտասուող կինը, թէ մի ուրիշը, որ այնտեղ մտաւ։ Այդ պէտք էր ճշտել։ Յաջորդ շաբաթ երեկոյ խունկը դարձեալ ծխուած էր գերեզմանի վրայ. կինը դարձեալ սգում էր նոյն ժամին. ես նորէն հետևեցի. նա մի և նոյն ճանապարհով գնաց, անցաւ եկեղեցու առաջից, անցաւ գիւղի առուի կամուրջը և ներս մտաւ նոյն տունը։ Այլ ևս ոչ մի կասկած չը կար, որ Սօնան էր։

Ի՞նչ կապ կար արդեօք Սօնայի և Գասպարի մէջ։ Այժմ այս խնդիրն ինձ զբաղեցրեց։

V.

Սօնան մի այրի կին էր, աղքատ ու խեղճ, որ ապրում էր մի փոքրիկ տան մէջ իր երկու որբերով։ Հէնց այդ տան դուռն էր հաւաքում Գասպարը գիւղի նախիրը ամեն առաւօտ դաշտ քշելուց առաջ։ Սօնան գիւղում ամենքին էլ յայտնի էր իր զարմանալի դժբախտութեամբ։ Տներ կան, ուր երբ սուգը մտնում է՝ էլ չէ դուրս գալիս, մինչև վերջին դիակը գերեզման տարուի։ Այսպիսի մի տուն էր այդ խեղճ Սօնայի հէրանց տունը, որի աստղը թեքուել էր. իջաւ իջաւ, ու մարեց իսպառ։ Մի քանի տարի շարունակ Սօնան սևի ու սգի մէջ կորած էր. մէկ մէկի յետևից կորցրել էր հայր, մայր, եղբայրներ և վերջը հօր օջաղի բանալին կտուրը գցած էր հեռացել։ Գիւղերում շատ օջաղ է այսպէս մարում։ Ինչու այդպէս, ես հասկանալ չեմ կարողացել դեռ։ Քիչ յետոյ Սօնան կորցրել էր ամուսնուն, այրիացել. այդ այն ժամանակն էր,

որ ես ու Գասպարը ձեր գիւղը հասանք: Գիւղացիք այնքան անգամ տեսան նրան եկեղեցում գագաղի վրայ սգալիս, որ ի վերջոյ անունը դրին Լալկան-Սօնա: Եւ ճշմարիտ, լացը նրա համար դարձել էր այնպէս սովորական, որ շատ անգամ նա եկեղեցի էր գալիս հարևանի ազիզ մեռելը ողբալու. իսկ երբ Սօնան այնտեղ էր՝ ամենքը լռում էին, միայն նրա բարակ ու տխուր ձայնն էր լսւում. նա երգում էր ամենքի ցաւը «դարդոտ բայեաթիներով», իսկ միւսները հեկեկում էին: Նա ամբողջ գիւղի լալկանն էր: Ջահել կին էր, բայց նստել էր իր թոնրան շրթին իր երկու որբերի համար. ասենք մարդու մտքով էլ չէր անցնում, թէ Սօնան նորէն կ'ամուսնանայ. նա լացից, սգից աչք չէր բաց անում: Այրի կնկայ բանը դժուար է, երբ այլ ևս թև ու թիկունք չունի. Սօնան էլ ապրում էր սև օրով, գիւղի մեռելների շորերը շատ անգամ նրան էին ուղարկում, ժամից հացի էլ բաժին էր հանում:

Մի առաւօտ ես կամացուկ նրա դուռը բաց արի և ներս մտայ:

—Բարի լոյս, Սօնա քուրիկ:

—Աստուծու բարին, ախպէր պատասխանեց նա զարմացած:

—Առ այս շորերը, քուրիկ, ողորմի տուր տիրոջը. ախպէրս մեռաւ, նրա հագուստն է, երեխաներիդ հարկաւոր կը գայ, և մի կապոց դրեցի նրա առաջ:

Նա մի քանի քայլ առաջ եկաւ, զարմացած նայեց կապոցին, նայեց ինձ, յետոյ յանկարծ մօտեցաւ, արագ-արագ արձակեց կապոցը, դուրս քաշեց մի արխալուղ, նայեց, կռացաւ վրան և սկսեց դառն, դառն հեկեկալ:

—Իմ խեղճ, իմ սևուո՛ր Գասպար, ճըչաց նա:

Ես ինձ զսպել չը կարողացայ. մենք մեզ մոռացած՝ մի ժամանակ երկսով էլ կռացել էինք կապոցի վրայ և արտասւում էինք: Մենք քոյր եղբայր դարձանք կարծես մեր ընդհանուր ցաւով:

—Քոյրիկ, թէ ծածկես էլ, իզուր է, դո՞ւ ես խունկ ծխում նրա գերեզմանի վրայ շաբաթ երեկոները, դո՞ւ ես սուգ ասում գիշերները:

—Աշխարհից ծածկեմ՝ քեզանից ի՞նչ ծածկեմ. ես գիտեմ, որ երկսով էլ ղարիբ էիք, երկու ախպէր: Հա՛, ես եմ. կտրած

ձեռքովս եմ խունկ ծխում, կուրացած աչքերովս եմ արտասուում նրա գերեզմանի վրայ։ Խե՜ղճ, անտէր մեռել։ Հօրս տունը հեղեղն եկաւ տարաւ. «փալազը քիւլը» քամուն տուեց. քանի՜ դագաղ գովեցի, քանի՜ «բոյով-բուսաթով» տղամարդ հողը դրեցի. իմ տանն էլ սև հագայ, գլխաւորս գլխիցս թռաւ, «շիւան», «տուման» բռնեց վրաս։ Ես մնացի խեղճ ու կրակ ու դարձայ լալկան Սօնա, աղքատ, այրի Սօնա. սև հագայ, սևով ապրեցի, արցունքով դռների հաց կերայ, մինչև որ Գասպարին ճանաչեցի։ Ա՜խ, ախպէր, թո՛ղ սև դառնար այն օրը, նրան էլ չը տեսնէի՝ քանի որ ջիւան-ջիւան հողը պիտի դնէի։ Դէ ես բէխէր «բայղուշ» եմ, ինձ մօտեցողը խէր չի հանի. Գասպարն էլ իմ սևով գնաց, բա ես ինչո՞ւ չեմ մեռնում, Աստուած։ Երեք տարի է, որ ես ու որբերս միայն Գասպարի աշխատանքովն ենք ապրում, նա իմ նշանածն էր։

Ես ականջներիս չէի հաւատում, քարացած մնացի։

—Զարմանում ես, չէ՞. իրաւունք ունիս։ Մէկ մենք երկսով գիտէինք, մէկ Աստուած. մի օր այս երեխան ընկել էր դռան առաջի առուն. Գասպարը մտել էր ջուրը,

հանել. բերեց տուն, ինձ նայեց, մնաց սառած. ոչինչ չասաց ու թողեց և գնաց։ Այնուհետև էլի մի անգամ եկաւ ինձ խնդրեց, որ շորերը կարկատեմ, լուանամ, երեխաների համար էլ բան էր գնել։ Էլի նայեց ինձ ուզեց մի բան ասել, ու գնաց լուռ։ Ես տեսնում էի, որ ուզում էր շուտ-շուտ գալ, բայց որպէս զի գիւղում չը խօսեն, դադարեց. երեխային ուղարկում էի, շորերը բերում էր, լուանում էի ու կարկատում, նրա փոխարէն մեզ հոգում էր։ Թէ ինքն էլ գալիս էր՝ միշտ զգուշութեամբ, որ մարդ չը տեսնի, նստում էր թոնրան շրթին, մնում էր լուռ, մի խօսք չէր ասում, միայն «ախ» ու «ծօֆ» էր անում, նայում էր ինձ, նայում էր, աչքերը լցւում էին, ու թողնում գնում։ Ես երկար ժամանակ չը գիտէի, թէ նա ինչո՞ւ էր այդպէս նայում, ինչո՞ւ էր տխուր, ինչո՞ւ էր սիրտը լցւում, երբ ինձ տեսնում էր։ Մի օր ինքն ասաց. «Գիտե՞ս, Սօնա, դու այնպէս նման ես մէկին, որին կորցրի մեր վէրան երկրում, և նրա դարդից «աւարական» ջրերը խմեցի, ընկայ ղարիբութիւն»։

—Քոյրս, իմ հարազատ քոյրը, Գասպարի նշանածն էր, ասացի ես. անօրէնները

փախցրին, Սօնա քոյրիկ: Դու ինչքան նման ես նրան, երևի ախպօրս մահով աչքերիս լոյսն է խաւարել, որ ես իսկոյն չը տեսայ այդ:

Եւ ճիշտ որ նմանութիւնը զարմանալի էր:

—Յետոյ, շարունակեց Սօնան մի փոքր կարմրելով, էլի մի քանի անգամ գնաց եկաւ, խօսք տուինք իրար, ասաց՝ քո երեխաների հայրը կը լինեմ: Զգոյշ էր ու լուռ. մինչև, ասում էր, Աթօին պսակենք, յետոյ մեր մասին կը մտածենք: Աշխատած փողի մի մասը, ինչ որ կարողանում էր սրանից նրանից առնել՝ բերում էր ինձ պահ տալիս քո հարսանիքի համար. մահից մի քանի շաբաթ առաջ արդէն յիսուն ռուբլի կար: Երբ Սէփօի փողը գողացան՝ նրա կնկայ լացն ու շիւանը տեսել էր. տխուր-տրտում տուն եկաւ, յիսուն ռուբլին առաւ գնաց, էլ յետ չը բերեց: Օրեր յետոյ, երբ շատ նեղեցի, ասաց, որ տարել է Սէփօի երդկից ցած է ձգել, որովհետև, ասում էր, գողացողը…

—Կա՛ց, կա՛ց, էլ մի՛ պատմի, Սօնա, ճչացի ես սիրտս բռնած: Էլ չէի կարող լսել. դուրս թռայ տնից և ուղիղ գնացի եկեղեցու բակը: Նստեցի այնտեղ, երկար,

երկար մտածում էի: Գասպարն է ձգել փողը. նա իմացել է, որ ես եմ գողացել. նա հասկացել է իմ տանջանքը, երևի քնիս մէջ խօսել եմ և մատնել ինձ այն գիշերը, երբ քունս չէր տանում, երբ նա ինձ նայեց և ծանր ախ քաշեց: Եւ նա մեռաւ վշտացած, որ իր ընկերը գող է, աւազակ. օձից առաջ ես եմ խոցել նրա սիրտը: Եւ այդ փողը նա ինձ համար է հաւաքած եղել, սրա համար էր կրկնում՝ «Աստուած ողորմած է»: Սօնայի հետ կապուել է և լուռ է կացել. սպասել է իմ սիրուն, չարչարուել է իմ սիրուն. իսկ ե՛ս… ինչ արեցի նրա համար, ինչ տուի նրան,—միայն մի նոր վիշտ իմ գողութեամբ: Տէ՛ր Աստուած, այսքան արդարութիւն, այսքան գութ, սէր, զոհ. հապա ինչո՞ւ, օձը նրան կծեց, մրմնջում էի ես, եկեղեցուն նայելով, ծունկ չոքած քարերի վրայ. ինչո՞ւ ինձ չը կծեց. չէ՞ որ ես էի արժանի այդ պատժին և ո՛չ թէ նա:

Ցաւիս մէկը հազար դարձաւ և մնացի մտքերի ծովի մէջ: Երեկոյեան ժամերգութեան եկեղեցի մտայ, ծնկներիս վրայ ընկայ, գլուխս ձեռներիս մէջ առայ և անդադար կրկնում էի.

—Աստուած, ինչո՞ւ օձը Գասպարին

կծեց, ինչո՞ւ ինձ չը կծեց. չէ՞ ես էի գողը,
նա արդար էր։

Ժամաւորները դուրս գնացին. մնացի
մենակ տէրտէրի հետ։ Մօտեցայ.

—Տէրտէր, խոստովանութիւն ունեմ։

—Չոքի՛ր, որդի։

—Տէրտէր, Գասպարին յիշո՞ւմ ես։

—Օրհնած, երէկ օձը կծեց խեղճ ան-
ճարին, ապա մոռանալ կը լինի՞։

—Ի՞նչպիսի մարդ էր։

—Բարի, քրիստոնեայ մարդ էր, իր
ցաւին, իր աշխատանքին։

—Միայն այդքա՞ն, տէրտէր. սուրբ մարդ
էր, սուրբ մարդ։

—Թո՛ղ սուրբ լինի, որդի, ես չե՛մ
ուզի։

—Ապա որ սուրբ էր, ինչո՞ւ օձը կծեց։

Տէրտէրը մի փոքր լուռ մնաց, զարմա-
ցած նայեց երեխա։ Այսպիսի հարց երևի
չէր սպասում։

—Որդի, դու ասացիր, որ խոստովա-
նութիւն ունես. այսպիսի խոստովանութիւն
չի լինի։

—Կը լինի, տէրտէր. Գասպարը ճշմա-
րիտ, արդար մարդ էր, ինչո՞ւ օձը կծեց։

—Է՛հ, որդի, Աստուծու բանն է. մենք

մեղաւորներս ի՞նչպէս իմանանք։ Մենք ի՞նչ
կարող ենք ասել, թէ նա արդար էր. ո՞վ
գիտէ, մարդս այնքան ծածուկ մեղքեր ունի,
այնքան ծածուկ յանցանքներ է գործում։

—Տէրտէր, ես նրա ծածուկ յանցանք-
ներն էլ գիտեմ, այն էլ ասեմ։ Սէփօի յի-
սուն ռուբլին ես էի գողացել, այս ձեռքով
էի գողացել. իսկ երդկից փողը Գասպարն է
գցել, այսօր իմացայ. իր դառն քրտինքի ար-
դիւնքն է բերել տուել Սէփօին, որ նրա
լուծը գետինը չը մնայ, որ նրա կինը չար-
տասուի. նա այդ արել է առանց ոչ ոքի
ասելու։ Այս է Գասպարի ծածուկ մեղքը։
Դէ, ասա, այդ ի՞նչպէս եղաւ, որ փողը ես
գողացայ, մեղքը ես գործեցի, իսկ այն ար-
դարին օձը կծեց, ինչո՞ւ. ո՞ւր է արդարու-
թիւնը, ո՞ւր է հատուցումը, բարի գործին
հատուցում չը կա՞յ...

Տէրտէրը էլի մի քիչ լուռ մնաց։ Նա
շուարել էր, չը գիտէր ինչ պատասխանել.
մի քիչ հազաց, մօրուքը շոյեց, վերջապէս
ասաց.

—Է՛հ, որդի, էլի Աստուծու կամքն է,
Նրա ողորմութիւնը մեծ է, հատուցման ճա-
նապարհները անչափ. թէ որ արդար էր

Գասպարը՝ իր վարձքը կը ստանայ երկնքում։

—Երկնքո՞ւմ։

—Հա՛, ի հարկէ երկնքում. աշխարհն ի՞նչ է որ. աշխարհը որ կայ՝ փուչ, ժամանակաւոր բնակարան է, անցաւոր է։

—Հիմա ի՞նչպէս իմանանք, որ նա գոնէ երկնքում չէ տանջւում, որ նա վարձատրուած է, որ նա բախտաւոր է։

—Պէտք է հաւատալ, որ նա բախտաւոր է։

«Պէտք է հաւատալ, որ նա բախտաւոր է», կրկնեցի ես և դուրս գնացի. այնուհետև էլ ժամ չը գնացի։ Ինձ ասացին՝ «անհաւատ է»։

Անցնում են տարիներ. ես ամեն շաբաթ կէս գիշերին գնում եմ չոքում Գասպարի գերեզմանի վրայ, լալիս եմ, հառաչում, երկինք եմ աղաղակում, աղաչում եմ Գասպարին, որ նա ինձ ասի, թէ ինքն ինչպէս է երկնքում, աշխարհում կրած տանջանքներից յետոյ։ Նա դեռ ինձ ոչինչ չէ ասել, ես դեռ սպասում եմ, ինձ դեռ ասում են «անհաւատ»։ Իրօք ինձ պիտի գող անուանեն. քանի տարի գողութիւն արի այնուհետև, աւազակներին ընկեր դարձայ։ Հարևաններից

ում հաւը կորչէր՝ ես էի գողացել. բօստանները ես էի ոտի տակ տալիս, այգիները ես էի կողոպտում, մոլորուած անասունները ես էի տանում ծախում քրդերին։ Եւ ես չէի ընկնում, չէի պատժւում, միայն օձից էի վախենում, ուրիշ ոչնչից։ «Երևի ունեորի մալը չունեորին հալալ է», մտածում էի. ես, այլապէս ինչո՞ւ երկինքը չէ պատժում ինձ, նոյն իսկ դաշտերի պահապան էի։

Մի օր հեռու, գիւղի դաշտերի ծայրում պատահեցի նոյն մուրացկանին, որին տեսել էի մի անգամ տարիներ առաջ, յիսուն ռուբլին գողացած օրս։ Նա այժմ աւելի խղճալի էր, աւելի ծեր ու մաշուած. տարիների տանջանքը, սև օրերի շարքը աւերակ էին դարձրել նրա մարմինը. Նա հազիւ էր քաշ տալիս ինքն իրան ոսկորները կարծես ծանր էին գալիս նրան։ Էլի երկու փայտ ունէր թևերի տակ, էլի մի պարկ ուսին, միայն այժմ փայտերն աւելի կոկուել էին անվերջ գործածութիւնից, իսկ պարկն էլ աւելի մաշուած, պատառուած էր. մէջն էլի հաց կար։

Նա՛ էր, նոյն ողորմելի մուրացկանն էր, քանի տարի էր թափառում։ Այս անգամ չը բարկացայ վրան. ես ուրախացայ նոյն իսկ, որ պատահեցի, և գիտէ՞ք ինչու. կը գար-

մանաք, որ ասեմ. ես որոշեցի այդ թշուառին կողոպտել. ես վաղուց էի ուզում մի այնպիսի բան անել, որ երկինքը գլխիս ճայթի, կամ երկիրը պատառուի, ինձ ներս առնի, թէ աշխարհում չարութեանը պատիժ կայ։ Ունեւորին կողոպտելն ինչ մեղք, մտածում էի ես. պէտք է այս թշուառին կողոպտել, որ երկնքից քար ընկնի գլխիս։ Ես պատիժ էի ուզում, պատիժ խնդրում երկնքից։

Մօտեցայ. նա ճանաչեց ինձ, բայց էլ չը վախեցաւ. նրա կարծես փոյթը չէր, թէ ինչ կ'անեն իրան. կեանքից յոգնած էր, երևի. դա մի բեռ էր, որ քաշ էր տալիս ակամայ, իսկ ե՛ս... ես գող էի, ես պատիժ էի փնտրում։

—Հէ՛, բարեկամ, ասացի, էլի պատահեցինք։

—Հա՛, պատահեցինք, պատասխանեց նա անտարբեր։

—Դու էլի՞ այնպէս ես։

—Չէ՛, ասաց, ես էլ այնպէս չեմ, ես այժմ լաւ եմ. դու ես էլի այնպէս։

Ակնարկը հասկացայ. աւելի լաւ, որ ինձ բարկացնում էր.

—Հա, ես էլի այնպէս եմ, պարկումդ ինչ կայ։

—Պարկո՞ւմս... պարկումս ոսկի կայ, լիքն է, գողացել եմ. չե՞ս լսում զնգզնգոցը։ Նա թափ տուեց. պատառուածքներից հացի փշրանքներ ընկան։

—Գիտե՞ս, դու մի անգամ իմ ձեռքից պրծար, բայց էլ չես պրծնի, ասացի։ Պատասխանի փոխարէն նա միայն տարօրինակ կերպով ժպտաց։

Ես խլեցի նրա պարկը կոպտութեամբ, յետոյ մի ձեռնափայտը դուրս քաշեցի թևի տակից, ապա միւսը։ Նա մնաց երերալով կանգնած։ Նայում էի։

— Ես հիմա ինչպէս գնամ, մութն ընկաւ, գիւղը հեռու է, ասաց նա հանդարտ։

—Ինչպէս ուզում ես՝ գնա, դէհ, սողա՛ օձի պէս, ասացի և թափով հրեցի. ընկաւ երեսի վրայ։

—Օ՜, հա՛նգիստ կաց, ես չեմ սողայ. շատ սողացի արդէն, կը մնամ այսպէս, թո՛ղ գազանները գան պատառոտեն։ Իսկ դու, Աստուծուց չես վախենում, գիտեմ, թո՛ղ գոնէ խիղճդ գազան դառնայ, քեզ պատառոտի. խիղճ է՞լ չունիս...

Նա սկսեց հեկեկալ։ Ես նայում էի, ես

լսում էի. ես քար դարձայ իմ տեղում: Երկար տարիներից յետոյ առաջին անգամ զգացի, որ իսկապէս ոճրագործ եմ. Նրա հեծկլտոցի ձայնը թափանցում էր մինչև հոգուս խորքը: Ծեր մօրուքի վրայից թափւող արցունքները կաթիլ-կաթիլ ընկնում էին իմ կոշտացած սրտի վրայ և քանդում էին նրան: Հին օրերի լացս եկաւ, աչքերս լցուեցին, շտապով պարկը և փայտերը տարայ կողքին դրեցի ու փախայ առանց յետ նայելու: Փախչում էի, բայց ականջներումս դեռ լսում էր նրա հեծկլտոցը. Նրա լացի ձայնն ինձ հալածում էր: Փնտրածս պատիժը գտայ: Ես էլ գող չէի»:

Վերջացրեց Աթօն, վեր կացաւ, հրացանն առաւ ու գնաց: Լուսաստղը բարձրացաւ արևելքում:

Արշալոյսը հեռու չէր:

1901.

ԿՈՅՐԵՐԸ

I

Գիւղի եզրին՝ մշտահոս ու կարկաչիւն առուակի ափին շատ վաղուց բուսել էին երեք հաստաբուն ուռիներ, սգաւորև ու լալկան: Ուռիները միշտ և ամեն տեղ վշտատեսիլ են ու գլխիկոր, բայց այս երեքն առանձին պատճառներ ունէին այդպէս լինելու: Առուակի ամբողջ երկարութեամբ էլ ուրիշ ծառ չը կար և երեք մենաւոր ուռիները անկուել էին այնտեղ երեք որբերի պէս, նայում էին ջրի մէջ, դիտում այնտեղ իրանց տխուր պատկերն և ալեակներին պատմում հին օրերի խոհեր: Կայծակն էր ճայթել նրանց գլխին, որդերը ներսից կրծել էին նրանց սրտերն. տարիներից ի վեր իրանց խոշտանգուած վիրաւոր բներով այս մենաւոր ծառերը նմանում էին այն ծեր զինուորներին, որոնք բազմաթիւ պատե-

ռազմներից յետոյ վերադառնում են կտրուած ոտքով կամ ձեռքով և կռացած տարիների ծանրութեան տակ էլի ապրում են երկա՜ր, երկա՜ր։ Երբեքն էլ հաւասար հաստատութիւն ու բարձրութիւն ունէին, միայն առաջինի բունը ներքևից փթած, բաց էր արել մի լայն փչակ, որտեղից սպիտակ թեփը թափւում էր անընդհատ իր փշրանքների հետ դանդաղութեամբ տանելով և ծառի կեանքը. երկրորդի կատարը ճեղքուած էր կայծակից և մի մեծ վէրք ունէր, որ չէր ծածկւում երբէք, ինչպէս ցաւոտ սրտի պատառուածք, իսկ երրորդի բնի մի մասի կեղևը պոկուած էր վերից վար բաց թողնելով նրա չորացած, արևից այրուած խղճուկ փայտը, որ այնպէս յիշեցնում էր ցնցոտիների պատառուածքների տակից երևացող մի տանջուած, սևացած մարմին։

Այսպէս ծեր էին մենաւոր ուռիները՝ ծեր և խարխլած։ Բայց էլի այնքան ոստեր ունէին, որ կարողանային անձրևից և արևի կիզիչ շողերից ծածկել իրանց քայքայուած մարմնի վէրքերն ու խոցերը, իրանց ծեծուած, վիրաւոր գլուխները։ Եւ կախուած էին այդ ոստերը երկայն ու ոլորուն, հասնում էին մինչև բունը, մինչև գետին։ Իրանց մերկու-

թիւնն ու այլանդակութիւնը ծածկել ջանացող խեղճ մուրացիկների պէս, ծառերը թաղնւում, պատսպարւում էին տերևների հովանու տակ և կարծես իրանց վիճակից գոհ էին։ Արմատները շարունակ ջրի մէջ, անընդհատ ծծում էին սառն, պարարիչ հեղուկը, բայց երևի այդքանը բաւական չէր նրանց գզգուած, վատոյժ մարմինների կենսական զօրութիւնը պահպանելու, ուստի մի քանի երկար ոստեր նրանց օգնութեան էին հասել։ Նրանք երկար, ոլորուն վարսերի պէս կատարից իջել էին մինչև ջուրը, թաղել էին իրանց գլխիկներն ալիքների մէջ, զով համբոյրներ էին քաղում նրանցից, փափսում էին հետները, այնտեղ էին լալիս իրանց ցաւը փոթորկի ժամին, նրանց էին պատմում իրանց սարսափը կայծակի ու շանթի ճայթոցի առաջ և նրանց էին ժպտում գարնան պայծառ, անուշ օրերին, երբ իրանց մայրերը՝ հինաւուրց ուռիներն էլ կեանքի մնացորդի մի վերջին թափով էլի մի անգամ ծածկւում էին գրաւիչ կանաչով, էլի մի անգամ անցած լաւ օրերի փայլն ու կեանքը յիշում։ Այդ ժամանակ թռչուններն էլ էին յայտնւում նրանց սաղարթի մէջ, չարաճճի, կայտառ ճնճղուկների մի ամբողջ

երամ և կեանքի ու կենդանութեան մի պարարիչ շունչ էր անցնում նրանց տխուր հովանու տակ։ Եւ այսպէս ծառերը ոչ միայն ապրում էին, այլ և կարողանում էին իրանց աղքատիկ սաղարթում ապաստանած այդ փոքրիկ, սիրուն արարածներին ի հարկին պաշտպանել բազէի և այլ գիշատիչների ճանկերից։ Մի յուզիչ բան կար այդ ծեր, մեռնող կեանքերի մէջ, որոնք դեռ կարողանում էին հին կորովի մի մնացորդով իրանց խեղճ հովանու տակ պահպանել այնքան փոքրիկ գոյութիւններ։ Ապրում էին, երկնքի տակ դեռ եւս տեղ ունէին, արևից շողեր և ջերմութիւն էին առնում և բոլորովին անպէտք աւելորդ էլ չէին։

Վատ եղանակներին՝ երբ երկինքը մռայլւում էր վերևից, երբ շրջակայքում ամեն ինչ սաստ սև էր հագնում, ուռիների մելամաղձոտ միայնութիւնն էլ աւելի վհատեցուցիչ էր դառնում. Նրանց պատկերն այդ ժամանակ խօսում էր մի մեղմ, դանդաղ մահից, իսկական մահից, որ թէև չէր երևում, բայց մօտենում էր կամաց կամաց։ Իսկ երբ փչում էր փոթորիկը նրանց վրայ, երբ ոռնում էր քամին, այն ժամանակ հանում էր շատ տարիներ առաջ սկսուած ի-

կական հոգեվարքը. փթած բները ցաւով ճռնչում էին, ոստերը վերսկսում էին իրանց հին լացն ալիքների ծոցում և ամբողջ ծառերը տնքում էին կարծես կեանքից յաւիտեան բաժանուելու խոր վշտով բռնուած։ Ծեր էին, բայց էլի ապրել էին ուզում և լալիս էին, աղերսում, սգում։ Փոթորիկն անցնում էր և ծառերն էլի այնտեղ էին իրանց խոռոչներով, վէրքերով, խոցերով ու լալկան ճիւղերով։ Եւ այսպէս տարիներ…

Ծառերի տակ՝ հէնց առուակի ափին կոպիտ քարերից և ցեխից շինուած մի փոքրիկ թումբ կար, մի նստարան։ Անձրևը մաշել էր այդ թումբը, չորս կողմից բուսել էին գալարուն պատատուկներ, գունատ, խղճուկ խոտեր. վերից թափւում էին նրա վրայ ծեր ուռիների դեղնած, լեզուաձև տերևները, մողէսները սողում էին, ներս ու դուրս անում նրա ճեղքերից, երբեմն մի օձ էր յայտնւում, որ ամառային տօթից խոյս տալով, գալիս էր այնտեղ զով ստուերում հեւալու. կամ մի վայրենացած կատու զգուշ քայլուածքով կծկւում էր այնտեղ և մարադ մտնում ծառերի վրայ ճռուողող ճնճղուկներին։ Եւ միայն այսքան։ Տարիներից ի վեր այնտեղ մարդ չէր յայտնւում,

գիւղից ոչ ոք չէր գնում իր յոգնած գլուխը այդ թմբի վրայ մի փոքր հանգիստ առնելու համար։ Ծառերի պէս՝ այդ թումբն էլ մոռացուած էր, նա էլ մահից ու ամայութիւնից էր խօսում։

Մի փոքր հեռու ծառերից, սաուակից զառիվայր իջնող մի խորութեան մէջ կանգնած էր մի տնակ, որի դուռը սակայն միշտ փակ էր, փոքրիկ լուսամուտը միշտ մի խուրձ դեղնած խոտով խնամքով գոցուած. մի համր ու մռայլ տուն, ուր նոյնպէս ոչ ոք չէր ապրում, որի հերդիկից վաղուց էր ինչ ծխի քուլայ չէր բարձրացել։ Իսկ բակը շատ վաղուց ծածկուած էր բարձր խոտերով, որոնք ամեն աշնան, դեղնում, չորանում էին և ամեն գարնան բուսնում առաջուայ պէս և պատում տան չորս կողմը բոլորովին ամայի, բոլորովին վայրենի տեսք տալով ամբողջին։ Հեռուից ամեն ինչ թւում էր շէն ու բնակելի, բայց այնտեղ ոչ մի կենդանի չէր երևում, աքաղաղ չէր խօսում, հորթեր չէին բառաչում, շուն չէր հաջում։ Լուռ էր։

Գիւղում այդ տնակը համարւում էր «բ է խ է ր» և դատապարտուած էր ամայութեան, որպէս անիծուած վայր. ամենքը

փախչում էին այդ տեղերից, ամենքը խոյս էին տալիս մօտովը անցնել, որովհետև նրա հետ կապուած էր մի արիւնի պատմութիւն, մի հին ոճիր։ Այդ տեղ, այդ մենաւոր տան մէջ մի չար գիշեր խեղդամահ էր արուած մի կին, մի անմեղ, խեղճ արարած։ Գիւղն այն առաւօտ զարթնեց սարսափելի դէպքից ըմբոստ, ինչպէս գիշերն այլանդակ ստուերի առաջ խրտնած մի ձի, որ ծառանում է յետին ոտքերի վրայ կատաղաբար փնչացնելով։ Ասում էին, որ տարաբաղդ կինը զոհ է գնացել ամուսնու դաւաճանութեան, իր հարազատ ամուսնու, որ ատում էր նրան. միջոց, հնար էր փնտռում ազատուել նրանից իր մի ուրիշ սիրային կապի համար։ Գիւղը մռմռում էր, բայց յանցաւոր համարուողը կապուած էր տան սեանը. նա հաւատացնում էր, որ անյայտ չարագործներ գիշերը ներս մտան, իրան կապեցին սեանը և կնոջը խեղդամահ արին հէնց իր աչքերի առաջ։ Գիւղը չէր հաւատում. բայց շուարել էր, մտածում էր. ամեն ինչ ասում էր, որ բանն այսպէս պէտք է եղած չը լինի։

—Ո՞րտեղից մտան չարագործները, հարցրեց մի ծերունի։

—Հերդիկից։

Ծերունին առանց ձայն հանելու մի քանի հարևան առաւ, կտուրը բարձրացան, ուշադրութեամբ նայեցին հերդիկին և ի՜նչ… Նեղ հերդիկը, որից մի մարդ սողալով հազիւ ներս կախուէր, դեռ ծածկուած էր հին սև մուրի հաստ շերտով, այնտեղից ոչ ոք ցած չէր իջել։ Յանցաւորը գտնուեց, ապացոյցն անհերքելի էր։ Եւ ոճրագործ ամուսինն արդարադատութեան ձեռքով գնաց անյայտացաւ կրելու արժանի պատիժը. տունը փակուեց, բանալին կտուրը ձգուեց և յայտարարուեց «բէխէր»։ Այնուհետև այդ արիւնոտ գործի մասին գիւղը դադարեց խօսելուց, և եթէ դառն անհրաժեշտութիւն էր լինում, մի քանի խօսք էին ասում փսփսուկով, ասես վախենում էին իրանց ձայնից։ Ի՞նչպէս չը վախենային, քանի քանի հոգի տեսել էին ուշ գիշերին՝ թէ ինչպէս այդ փակ դուռը յանկարծ բացւում է ահագին շրխկոցով, այնտեղից դուրս է գալիս սպիտակ, երկար պատանով փաթաթուած մի ստուեր, տարաբաղդ կնոջ ստուերը՝ դուրս էր գալիս յամրաքայլ, ցցւում է բակում, կանգնում է թմբի վրայ և նայում աստղերին, փսփսում ուրուների հետ։ Մազեր էին դիզանում այդ պատմութիւններից։ Եւ տունը

շարունակում էր մնալ փակ դռնով և լուսամուտը խոտով խցած։ Միայն մենաւոր ուրուներն էին անտարբեր դէպի իրանց շուրջը կատարուածը, նրանք ասեն գարնան վերստին կանաչում և կախւում էին ջրերի մէջ, տխրութեամբ օրօրում էին իրանց գլուխները քամիների առաջ, թումբը նորից ծածկւում էր բաղեղներով, պատատուկներով և այլ խոտերով։

Գիւղացիք թէև խոյս էին տալիս այդ տնից, բայց ամէնքն էլ սրտանց կ'ուզէին, որ մի մարդ, մի կորած, մոլորած օտարական գայ բուն դնի այնտեղ, որ չարը հալածուի, վհատեցուցիչ դատարկութիւնը լցուի, երեխաներն էլ չը սարսափեն այնտեղից անցնելիս, կանայք արիւնի հոտ չը զգան, չը փախչեն, ուշացած անցւորները կէս գիշերին պատանով ստուերներ չը տեսնեն։ Մի՞թէ չը կար աշխարհում մի անապաստան մուրացիկ, մի անճար թափառական, որ յանձն առնէր բնակուել արիւնոտ բնում, որ գար կեանք տալու այդ մեռելութեանը, հալածելու այնտեղ թագաւորող սարսափը։ Երկար սպասեցին և վերջապէս մի օր ցանկալի բնակիչները յայտնուեցին, երկու կոյր

երգիչներ, երկու թափառական աշուղներ եկան և «բէխէր» տնակում բուն դրին։

II

Ո՞վքեր էին նրանք, ինչպէս յայտնուեցին, գիւղում ոչ ոք չը գիտէր և ոչ ոք էլ չէր հարցնում։ Այդ դժուար էլ էր իմանալ, մուրացիկներն ու աշուղները «Աստուծու մարդիկ են», աշխարհի բնակիչներ, նրանք քաշ են տալիս իրանց հայրենիքը իրանց ոտների հետ և ամեն տեղ մտն են ածում մի անյայտ պատմութիւն, մի մութ կեանք, որի արկածները թէև անփայլ ու անծանօթ, բայց միշտ յուզիչ են ու ցնցող։ Այդ կեանքերը նման են հարթավայրի մէջ գալարուող գետի ալիքներին, որոնք իրանց արտաքին խաղաղութեան տակ թագցնում են այնքան խութ ու խոռոչներ, այնքան գալարներ, սև մութ գաղտնիքներ, թէև երբէք չեն աղմըկւում, չեն ճչում, չեն ոռնում։

Գիւղը գիտէր միայն, որ նրանցից մէկը կոչւում է Մուրօ և միւսը Մարգար. երկուսն էլ կոյր, թէև նրանցից մէկն իր թաւ յօնքերից մէկի տակ աչքի պէս մի բան ունէր, իսկ միւսը՝ միայն երկու խոռոչ, երկու

սև բացուածք, դատարկ ու այլանդակ, որոնք այնպէս յիշեցնում էին մութ ու խորհրդաւոր ձորակի երկու վիհեր, ուր երբէք արևի շող չի կաթում, ուր գիշերն իր սարսափն ունի, և ցերեկն՝ անլոյս ու տխուր, իր յարատև մռայլն ունի։ Երկու հոգի էին, բայց մի աչք ունէին, մի հատիկ ողորմելի աչք, որ վաղուց, շատ վաղուց ծեփուել էր, կոպերն իրար հետ միացել էին բիբի վրայ, միայն նրանց արանքից, ինչպէս մի մութ այրի բարակ ճեղքուածքից, լոյսի պէս մի բան էր թափանցում, մի խղճուկ դեղին փայլ, ճիշտ այնքան, որքան հարկաւոր էր ջոկելու գիշերը ցերեկից, խաւարը՝ լոյսից, առանց կարողանալու ճշտիւ որոշել առարկաները, որոնք երևում էին աչքի տրոջը իբրև նուրբ, շարժուն անորոշ գծեր, անձև ու վայր ի վերոյ, խառն ու այլանդակ։ Այդ աչքի ճեղքից ներս նայողը սովորական աշխարհը չէր, այլ խօլական երևոյթների մի ծով, միշտ ալեկոծ ու փոփոխական, իրար վրայ թափուած պատկերների մի ժխոր, խորհրդաւոր ու վսեմ, որի օրէնքներն ու կարգերն այնպէս անսիրտ կերպով խոյս էին տալիս, փախչում անընդհատ։ Այդ մի հատիկ աչքը Մուրօի դէմքի վրայ էր, բայց նա

նոյնքան պատկանում էր Մարգարին, որքան իր իսկական տէրոջը. թէ երկսին արցունք էր պէտք, այդ մի հատիկ աչքից էր ծորում ինչպէս փխրուն քարի ծակոտիներից, թէ ժպիտ էր պէտք, էլի նոյն աչքն էր գործում, թէ լոյս էր հարկաւոր նա պիտի արևի շող գողանար երկսի համար էլ, թէ ճանապարհ էր պէտք, նա պիտի ցոյց տար, առաջնորդէր։

Երկու հոգի էին, մի աչք ունէին, ողորմելի անզօր աչք, այնքան անզօր, որ նրանք համարեա կոյրեր էին։

Մարգարն ու Մուրօն երկու աշուղներ էին և մի սազ ունէին, նոյնպէս խղճալի, նոյնպէս անփայլ, որպէս իրանց միակ աչքը։ Եւ այդ սազը միայն երեք լար ունէր, սգաւոր ու լալկան, որոնց թրթիռները հնչւում էին միշտ, ինչպէս հեռու տեղերից քամու բերած բարակ, ընդհատւող հեծկլտանքներ։ Այդ լարերն էլ այնպէս էին յարմարեցրած, որ սազը պէտք էր ածել գլխիվայր, բարակ ծայրը կրծքին յենած, իսկ հաստ գունդը վեր ցցուած դէպի երկինք։ Այդ ձևով ասես նա մի բողոքող, մի ըմբոստ սազ էր, ինչպէս մի բռունցք, մի խօսող, հառաչող, անիծող բռունցք, սպառնալի կերպով տնկուած կոյր,

անողորմ ոյժերի դէմ, որ իր ամեն մի հնչիւնի հետ ցնցւում, դողում էր կարծես զայրոյթից, որ լալիս էր, հեծկլտում, բողոքում, ոռնում։

Եթէ մի հատիկ աչքը միշտ Մուրօի դէմքի վրայ էր, նա էր ման ածում այդ անփայլ, գունատ լապտերը, լուսաւորում կոյրերի միշտ խաւար ուղին, «տեսնում» երկսի համար էլ միշտ անծանօթ և անըմբռնելի աշխարհն իր մութ, գալարուող սուսերներով. սազն էլ միշտ Մարգարի ուսին էր կախած, կամ ձեռքին էր, նա էր թրթռացնում երեք լարերը, նա գիտէր հնչիւնների քաղցր լեզուն, երգի գաղտնիքը, հազար ու մի ձայների խորհրդաւոր մրմունջները։ Եղբօր պէս բաժանել էին իրանց ամենաթանկ, ամենանուիրական հարստութիւնը, աչքը՝ մէկին, սազը մէկին, և երկուսն էլ՝ երկսին։

Մաշուած, փոքրիկ դէմքեր էին, վաղուց հետէ անմշակ ու երկայն միրուք, թաւ յօնքեր, որոնք հովանի էին անում կոյր աչքերի խոռոչների վրայ, ինչպէս անդունդի վրայ բուսած խիտ մացառներ։ Սուր, ձգուած, իրար նման դէմքեր էին, ուր յոյզերը, մարդկային սովորական կրքերը չէին զարկւում իրար յախուռն այլանդակ թափով. լեռների

մէջ պարփակուած լճակներ լինէին ասես, ո-րոնք տակն ու վրայ չէին լինում քամիների շնչով և միայն մեղմ յեղյեղւում էին իրանց տակ թագնուած խորհրդաւոր աշխարհի վրայ։ Փոքրիկ մարմիններ ունէին, նոյնպէս փոքր, նոյնպէս խղճուկ, որպէս իրանց ամբողջ պատկերը. կեանքի բիրտ բաւականութիւն-ները կարծես չէին ճանաչել և սնուել էին եթերից խլած ինչ որ աննիւթ սնունդով։ Նման զգեստներ չունէին, հագել էին, ինչոր կարողացել էին ճարել դռներից, ինչ որ բա-րի մարդիկ տուել էին և յաճախ անխտիր կերպով մէկի հագածը՝ միւսն էր հագնում, և ընդհակառակը։ Առաւօտներն արթնանալիս, ամեն մէկի ձեռքի տակ, ինչ որ ընկնում էր, նա այն էր հագնում, մնացածը թողնե-լով իր ընկերոջը։ Այսպիսով նրանց արտա-քինը յաճախ էր փոփոխւում և հեռուից դժուար էր նրանց որոշել իրարից։

Երբ նրանք դուրս էին, փողոցներում, կամ մեծ ճանապարհի վրայ, Մուրօն երկար փայտը ձեռքին, միշտ առաջ էր ընկնում տանելով իրանց խղճուկ լապտերը՝ ողորմելի աչքը և նրան հետևում էր Մարգարը սազը թիկունքին և աջ ձեռքը ընկերոջ ուսին։

Ամեն առաւօտ հեռու տեղ ճանապարհ

ընկնելուց առաջ Մարգարը միշտ առաջինն էր զարթնում, ձեռքի տակ ընկած շորերը հագնում, սազը վերցնում և դառնում ըն-կերոջը.

—Մ՛ուրօ։

—Մ՛արգար։

—Մուրօ, ես ցերեկուայ լոյսի հոտ եմ առնում, ինչ կ՚ասես։

—Ցերեկուայ հոտ ես առնում, հա՛, ախ-պէր, լոյսը հեռու չէ, հաւը վաղուց է խօ-սել։

—Ճանապարհ կը տեսնե՞ս։

—Ճանապարհը դեռ չեմ տեսնի։

Եւ Մարգարը լռում էր, սազը ծնկների վրայ թողնում, գլուխը քաշ ձգում, մտա-ծելով այն ճանապարհի մասին, որ Մուրօն դեռ չէր տեսնում, այն աշխարհի մասին, որ ինքը երբէք չի տեսել և երբէք էլ տես-նելու չի։ Մուրօն փորձում էր թարթել մի հատիկ աչքը լոյս, շող ջոկելու համար, բայց կոպերն իրարից չէին հեռանում, դէմքի ջղ-ները ձգձգւում էին, ապա յուսահատ պառ-կում էր իր անկողնում։ Լռութիւն էր տի-րում մի առժամանակ։

—Ես շողերը ջոկում եմ, լսում էր քիչ յետոյ Մուրօի ձայնը։

— Դու շողերը ջոկում ես, ախպէր, այդ լաւ է, դէ վերկաց։

Եւ դուրս էին ընկնում կոյրերն իրանց գիշերային ապաստարանից, քայլում էին դէպի անծանօթ հորիզոններ, ման էին ածում իրանց հետ երկու մութ կեանքեր և այնքան երգեր։ Մուրօն սովորաբար նայում էր ուղիղ, միշտ հեռուն, առանց գլուխն այս ու այն կողմը դարձնելու, փայտով անընդհատ շօշափելով փոշոտ, ցեխոտ ճանապարհները. Մարգարը քայլում էր նրա յետևից աչքերի մութ խոռոչները ուղղած դէպի վեր, դէպի երկինքն ու արևը, որի ոչ մի շողը չէր կարողանում լուսաւորել նրանց սև յատակը։ Արտաքին աշխարհի և ոչ մի պատկեր չէր գալիս յուզելու Մարգարի բանտարկուած երևակայութիւնը, ուր իշխում էր յաւիտենական խաւարը, և ուր ապրում էին միայն ձայներ, իրանց հազար ու մի ելևէջներով, կենդանի, խօսուն մի ամբողջ աշխարհ, լցուած միմիայն հնչիւններով, սիրտ պատառող յուզիչ հնչիւններով, որոնց մի մասը, շատ չնչին մասը միայն հասկանալի էր իր ունկնդիրներին։

Այսպէս էին նրանք և մի օր յայտնուեցին Բ... գիւղում։ Գալիս էին շատ հեռու

տեղերից, ուր, ասում էին, էլ քար քարի վրայ չը մնաց, ուր էլ երգ ու սազ հարկաւոր չէր սրտեր յուզելու, արցունք քամելու համար, որովհետև ողջ երկիրն արիւն ու արցունք էր։ Նրանց պատմութիւնները զարմանալի էին. գիւղացիք շրջապատած լսում և նայում էին այս անօրինակ զուժկաններին, որոնք ասես հանդերձեալ աշխարհից էին լոյս ընկել և խօսում էին ինչոր ահաւոր բաներ, սրտաճմլիկ ու խեղդող։

— Մենք արիւն չը տեսանք, ի՜նչպէս տեսնենք, Աստուած չի կամեցել, բայց հոտն առանք, հո՜ւ, ի՜նչ հոտ էր, ասում էր Մարգարը։

— Ես տեսայ, շտապում էր ուղղել Մուրօն, մի՛ս ես տեսայ այս կոյր աչքովս, կուփ-կարմիր էին սար ու ձորեր, կուփ-կարմիր, ճփ ճփ.

— Հա՛, տեսանք, մենք արիւնը տեսանք, իսկոյն միանում էր նրան Մարգարը. դէ աչքն ընդհանուր էր, երբ ընկերը տեսել էր, ուրեմն նա էլ էր տեսել։

— Փախի ձայն կար այնտեղ և գայլ-գազան սարերից իջած պատառոտում էին անմեղ գառներին, արիւն աշխարհ էր բռնել.

—Հապա, փախի ձայն կար, արինն աշխարհ էր բռնել։

—Եւ լացեցինք, աւելացրեց Մուրօն.

—Օ՜, շատ լացեցինք, միացաւ նրան ընկերը, և կամացուկ ցած բերեց ուսից սազը, բութ ծայրը դէպի երկինք ցցեց իր աչքերի երկու խոռոչների հետ, ասես վերից ինչոր բան սպասելով. լարերը ձրգձրգեց և հակառակ կողմից ածել սկսեց սրտապատառ, լալկան նուագներ։ Մուրօն երգում էր.

«Զարկենք սազին, մոմուռ քամենք սարի, քարի, ձորի հետ, հաւար կանչենք, վախ գոռում է, գոռում բոցին ջուր է պէտք. վառուան գըմմէն, շատ լացեցինք սարի, ձորի, քարի հետ»։

«Ա՜խ, լացեցինք ծով արցունքով սարի, ձորի, քարի հետ, կուց-կուց արցունք, մըռմուռ քամենք դաշտի, չօլի, գետի հետ»։

Զարմանալի՜ աշուղներ… գիւղացիք այսպիսի երգիչներ չէին տեսել, այսպիսի երգ չէին լսել, այսպիսի սազ՝ որ հակառակ կողմից ածէին, որի գունդը դէպի երկինք ցցուած լինէր, դեռ երբէք, երբէք որ և է աշուղ այդ կողմերը չէր բերել։ Լսեցին լռութեամբ, մտածկոտ դարձան, փափացին

և որոշեցին, որ աշուղներն իրանց գիւղում մնան, թող թափառեն, ուր ուզում են, նրանք մի տեղ նստել չեն կարող, բայց գիւղում բնակուեն, տուն խօմ կար, գիւղի եզրի անբնակ, «բէխէր» տունը սրանցից յարմար բնակիչներ չէր կարող ունենալ։ Սրանց երգերի ձայնից չարքերը կը հեռանան, ստուերը կը հանդստանայ, սարսափը խոյս կը տայ։ Եւ աշուղները մնացին. որքան էին թափառել անտուն, անապաստան։ Մի մարդ գտնուեց գիւղում, որ կամացուկ ասաց, թէ «բէխէր» տան մէջ այս խեղճերին մի չար բան կը պատահի, ո՞վ գիտէ, լաւ չի, որ այնտեղ մարդ ապրի։ Բայց անհրաժեշտ էր, որ ամայի տունը բնակիչ ունենայ և գիւղը լռեց։

III

Այն ամառ մենաւոր տան առաջ, երեք ուռիների տակ կեանքի նման մի բան շշնջաց. կոյրերն էլ գիտեն ապրել։ Ամեն օր ճաշից յետոյ՝ երբ շրջակայքում այնպէս տօթ էր, երկու աշուղները՝ երկու խղճուկ, օտար թռչունների պէս թառում էին թմբի վրայ, խօսում էին հեռաւոր ու դժբաղդ վաթա-

նից, խօսում էին կարմիր գուլումից, յետոյ Մուրօն կամացուկ սկսում էր մռմռալ իր յօրինած ցաւի երգը՝ «Զարկենք սազըն մռմռու քամենք»…

Նոյն վայրկեանին Մարգարը բարձրացնում էր իր սազի բութ ծայրը դէպի երկինք բռունցքի պէս և ծառերի տակ հնչւում էին նուագներ, որոնք երբէք դեռ այնտեղ լսուած չէին։ Սազը լաց էր լինում մրմունջներով, իսկ տերևները մէկիկ մէկիկ վերից թափւում էին աշուղների գլխին։ Գիւղի մանուկները, որոնք այդ ժամերին սովորաբար լողանում էին առուի մէջ՝ խըմբերով դուրս էին թափւում ջրից, բարձրանում թմբի վրայ և մերկ շարքերով պար կազմած, նայում էին կոյրերին, լսում նուագները, մոռանալով՝ որ արևը կիզիչ է, որ շողերը այրում են նրանց մերկ մարմինները։ Այդ պառաւ ծառերը, և երկու կոյրերը նրանց տակ իրանց անօրինակ սազով, և թմբի վրայ շարուած, մերկ մանուկների հետ կազմում էին մի անօրինակ ամբողջութիւն, մի պատկեր, որ չը գիտես ինչ մի խորհրդաւոր բան ունէր իր մէջ։ Աշուղները երգում էին ընդմիջումներով և ամեն անգամ երբ երգն ու երաժշտութիւնը

լում էր, մանուկներն իրար հրհրելով ջուրն էին թափւում աղմուկով՝ քիչ յետոյ նորից դուրս գալու և թմբի վրայ շարուելու համար։

Եթէ գիւղում կնունք, հարսանիք կամ թաղում կար, կոյրերն այդ ամբողջ օրն անյայտանում էին և վերադառնում միայն գիշերները. այդպիսի դէպքերում նրանց լաւ էին կերակրում. մնացած ժամանակ օրուայ մեծ մասը մերթ կուշտ, մերթ քաղցած՝ անց էին կացնում ծառերի տակ և երգում ու ածում թմբերի վրայ շարուած մերկ մանուկների բազմութեան համար։

Երեկոյեան՝ երբ արևը կախւում էր դէպի հորիզոնը և զովն ընկնում էր, երբ ճանապարհների թանձր փոշին էլ այնպէս չէր այրում մերկ ոտքերի թաթերը, երբ մարդիկ իրանց ապաստանած տեղերից դուրս էին սողում, կալերն ու դաշտերը կենդանանում էին, երկու աշուղները թողնում էին իրանց բնակարանը և դուրս ընկնում իրանց ապրուստը հայթհայթելու համար։ Նրանք երգում էին կալերում, դաշտերում, փողոցներում և դռների առաջ. երգում էին մանաւանդ՝ լուսնկայ գիշերներին, երբ ցորենի դէզերի առաջ ճէշանների վրայ պառ-

կոտած գիւղացիք տրամադիր էին լինում լսել հեռու երկրի հէքիաթներ, հեռու երկրի երգեր և չը լսուած, սրտաճմլիկ պատմութիւններ։

Խեղճերն այդ օրերում շատ անգամ վերադառնում էին ոչ բոլորովին գոհ իրանց վարձատրութիւնից և սովորաբար տուն հասնելուց յետոյ, նրանց մէջ սկսւում էր մի վէճ, մի հին վէճ աշխարհի և մարդկանց մասին։

—Աշխարհը կռապաշտ է դարձել, ասում էր Մուրօն.

—Հա՛ կռապաշտ է Մուրօ, համաձայնում էր Մարգարը, որ կռապաշտ չը լինէր, այսպիսի բաներ չէին կատարուի. ինչե՜ր տեսանք, սար ու քար մարդու ձեռից տընքացին։ Այսքանում, երկսով էլ համաձայն էին, բայց Մուրօն իսկոյն աւելացնում էր։

—Էլի հարսանիքը լաւ է, մարդկանց սրտերը լայնանում են, ձեռքերն առատանում։

—Ո՛չ, ամենևին չեն առատանում, մարդիկ այդ ժամանակ ուրախ երգ են ուզում, իսկ մենք միայն լաց գիտենք, յիշո՞ւմ ես խոմ այն հարբածին, որ մի հարսանիքում քիչ մնաց սազը ձեռքիցս առնէր, գլխիս

տար, «ուրախ բան ածի» ասում էր. այսպէս է ախպէր, աշխարհը կռապաշտ է, սրտերը քար՝ երբ ամենքն ուրախ են ու երջանիկ. բայց երբ ցաւը վրայ է հասնում, երբ բաղդը երես է շուռ տալիս, քար սիրտն էլ է փափկանում, և լացողի հետ լացող է ճարւում։ Չէ, չէ Մուրօ, ես թաղումն եմ ուզում, այն ժամանակ երգ էլ հարկաւոր չի, մարդիկ լալիս են իրանք իրանց։

—Թաղո՞ւմ, լաւ չես խօսում, Աստուծուն դուր չի գայ։

—Աստուծուն դուր չի գա՞յ... Մուրօ, հապա այնքան թաղումներն Աստուծուն դո՞ւր եկան, երկինքը չը պատռուեց ցաւից, աշխարհը չը ճչաց, ժաժք չեղաւ, սարերը փուլ չեկան, գետերն իրանց ընթացքը չը փոխեցին։ Չէ, չէ Մուրօ, թաղումը լաւ է, շա՜տ թաղում, շարան-շարան դագաղներ, որ փոս փորողները չը հասնեն, որ լացողների արցունքը պակասի, որ գերեզմանների հողաթմբերն իրար խառնուեն և գետնի տակ ոսկորներն իրար քսուին։

—Այդ բոլորից ի՞նչ օգուտ Մարգար։

—Ի՞նչ օգո՞ւտ, որ մարդիկ սովորեն արցունք թափել, և ուրիշի արցունքի գինը հասկանալ, որ էլ ուրիշի դիակները չը կըր-

ծոտեն, էլ հարսանիք չանեն այն պատի յետևում, որից այս կողմը իրանց նմանները ժամուռ են քամում պլրուած կրծքի տակ պատառ պատառ եղած սրտերից։ Օճֆ Մուրօ. աշխարհ իրար տուինք, ցաւ ու կսկիծից մեր ճիչն ու ոռնոցն երկնքին հասաւ, աշխարհը խուլ մնաց, աշխարհը կռապաշտ է. դագաղներ, շատ դագաղներ, շարան շարան...

—Մեղք ես անում Աստուծու առաջ։

-- Էլ մեղք չը կայ։

—Մեղայ քեզ Աստուած, մրմնջում էր Մուրօն և լռում. վէճը վերջանում էր։ Բանի տարի այդպէս վիճում էին նրանք և դեռ չէին հասել համաձայնութեան, իսկ աշխարհը շարունակում էր լինել այնպէս ինչպէս կայ, մի տեղ հարսանիք, մի տեղ դագաղներ, մի տեղ խնդութիւն, սիւս տեղ արցունք, միայն կոյրերի վաթանումն էր, ուր իշխում էր միահեծան տէր արիւնն ու արցունքը, այնտեղ հարսանիք չը կար, խնդութիւն չը կար, երգը՝ լաց էր, մահը՝ երջանկութիւն։

IV.

Փախ էր։ Գիւղը լի էր զինուորներով։

Աշուղներն այլ ևս փողոցներում չէին երևում, նրանց սազը շատ էր ծիծաղելի. հարբած զինուորները սիրում էին քաշքշել այդ ողորմելի գործիքը, ճնկճնկացնել, լարերը կտրատել, կամ հրհրել կոյրերին. խեղճերն իրանց Թմբի վրայ էլ ապահով չէին, ուստի ներս քաշուեցին, դուռը փակեցին և կծկուեցին մենաւոր տան մէջ։ Այնտեղ էին երգում, այնտեղ էին ածում, մրմնջում, լալիս։ Գիւղում մի պառաւ կար Մահտեսի Խումարը, անզաւակ ու չորգլուխ մի կին, որ իր ունեցած չունեցածը հաւաքել՝ Երուսաղէմ էր գնացել, սուրբ գերեզմանը համբուրել, անցել էր ծովեր, աշխարհներ, ճանապարհորդել էր օրեր, շաբաթներ և այդ բոլորից միայն մի բան էր յիշում, որ նաւը փուրգօնի պէս է ջրերի վրայ, որ ինքը մի անգամ շատ աղաչեց, որ այդ անիծած փուրգօնը կանգնեցնեն, սիրտը խառնում էր, բայց անողորմ փուրգօնչին չը լսեց, և որ Քրիստոսի գերեզմանի վրայ լոյս է ընկնում վերևից։ Կիսապառաւ, միասիտ ու բարի պա-

ռաւ, որ իր վարձքի համար նրանց չը մոռացաւ և օրը մի անգամ մի քանի պատառ հաց էր հասցնում բանտարկուած կոյրերին։ Այսպէս էլ լաւ էր, ապրում էին։

Աշուն էր. դուրսը քամիները ոռնում էին, ուռիները տերևաթափ օրօրում էին իրանց ճիւղերը և լալիս էին իրանց ծերութիւնն ու մերկութիւնը։ Գիւղը դեռ չէր փախել, բայց ամէնքը փշի վրայ նստածի պէս էին. լեռների կատարները ձիւնով էին ծածկուել և նրանց յետևում՝ ասում էին, քիւրդերն ու չէլօնները վխտում են։

Մահտեսի Խումարը գալիս էր միշտ առաւօտները, փէշի մէջ խնամքով բռնած մի քանի կտոր հաց, որ նա հաւաքում էր դէսից դէնից, բաց էր անում դուռն զգուշութեամբ, բարի լոյս ասում, հացը վար դնում, նստում էր նրանց կողքին և մինչ կոյրերը ուտում էին նրա բերած պաշարը, ինքը պատմում էր գիւղում անցած դարձը, մանաւանդ մանրամասն հաղորդում էր «Փախի» մասին շրջող լուրերը։ Նրա պատմութիւններն օր աւուր դառնում էին աւելի մռայլ, աւելի սարսափելի։ Նա խօսում էր զօրքից, ասում էր, որ էլի նոր գնդեր պիտի գան, որ թշնամին շատ զօրեղ

է, կռիւը սարսափելի է լինելու, ասում էր, որ գիւղերում էլ պաշար չի մնացել, այնպիսի թանկութիւն է լինելու, որի նմանը եղած չէ։

Մի երեկոյ կոյրերը նստած իրանց բընում, մտմտում էին պառաւի պատմածների մասին, ծրագիրներ էին կազմում ժամ առաջ խոյս տալ փախի երկրից, երբ դուռը ճռռաց և ներս մտաւ պառաւ Խումարը։ Նա յուզուած էր ու գունատ։

—Զօրք շատ եկաւ, ասաց նա կերկերուող ձայնով. գլուխներիդ ճարը տեսէք։

—Ի՞նչ անենք, միաբերան ձայն տուին կոյրերը։

—Փախէք տնաշէններ, փախէք, դուք խօմ կոյր մարդիկ էք, շուտով գիւղը կը փախչի և դուք ոտքի տակ կ'երթաք, օր առաջ փախէք։

—Օրը ցերեկով ինչպէս փախչենք.

—Գիշերով փախէք, թէ ցերեկը բռնեն, վայն եկաւ ձեզ տարաւ. պաշարը չի բաւականանում, շներին կտորում են, թէ ինչ է աւելորդ բերան չը լինի, մուրացկաններին էլ դէ, նրանք էլ չեն աշխատում, ասում են, կը սպանեն, եթէ դռներում շրջելիս տեսնեն.

—Կը սպանե՞ն։

—Հա՛, անպատճառ կը սպանեն, ասում են, ես խօմ մենակ չեմ, ամենքն են ասում սարսափելի բաներ. ասում են, որ կապ կը դնեն անճարների վզերին, քաշ կը տան սարերը շների հետ և այնտեղ կը սպանեն գնդակով։ Փախէք, այս գիշեր փախէք, ես էլ բան չեմ կարող անել, հաց ճարել չեմ կարող։ Պառաւն իր սարսափելի գոյժը հաղորդեց ու գնաց։

Խրճիթում մի առժամանակ լռութիւն տիրեց, երկու կոյրերը խաւարի մէջ կարծես չէին էլ շնչում։

—Մարգա՛ր.

—Մո՛ւրօ։

—Մինչև լոյս Արագ կը հասնե՞նք։

—Հա՛ Մուրօ, կը հասնենք։

—Ճանապարհը չե՞նք կորցնի։

—Աստուած ողորմած է։

—Դէ վեր կաց, էլ մի սպասիր. սազը չը մոռանաս, մէջքիդ ձգիր. գիւղում քնած են, ոչ ոք չի տեսնի։

Եւ դուրս եկան նրանք. մութ, մռայլ աշնանային գիշեր. Թխպոտ երկնքի վրայ մի հատ աստղ չէր պլպլում. Մուրօն իր ողորմելի աչքը այս ու այն կողմը դարձրեց,

չռեց, տրորեց մի բան որոշելու համար, իզո՜ւր, ոչինչ չէր երևում. միապաղաղ մութ գանգուածը նրանց շրջապատել էր. պէտք էր քայլել, շարունակ մի գծով, մի ուղղութեամբ դէպի հիւսիս, նրանք գիտէին, որ Արագն այն կողմն է, բաւական է հասնէին ափին, մնացածը հեշտ էր։

Գիւղը քնած էր, նրանք զգուշութեամբ դուրս եկան, քայլում էին, որտեղից կարող էին, պէտք էր մեծ ճանապարհը գտնել. իսկ մինչև այդ՝ անցնում էին խուլ դաշտերով։

—Մուրօ, լուսին կա՞յ։

—Չէ, Մարգար, լուսին չը կայ։

—Մէկ լաւ նայիր։

—Լաւ եմ նայել, ախպէր, չը կայ, չը կայ, ուսս պինդ բռնի. փայտս խոր գնաց, առաջներս առու է, լայն չէ, թռչենք։

—Մո՛ւրօ։

—Մա՛րգար։

—Դու թռա՞ր։

—Հա՛, դու ո՞րտեղ ես։

—Ջրի մէջ, ընկա՛յ ջրի մէջ. ցուրտ է, սառն է։

Ջրի մէ՞ջն ես,

—Հա՛ ասացի, ջրի մէջն եմ. այ նստած եմ, ոտներս թրջուած են, գորտեր էլ եմ

զգում, նրանք էլ սառն են, դու գործ չես զգում. նրանք ինձ մոտ են, ինչ են գտել այդ ողորմելիներն այս սառը ջրում։ Է՜հ, էլի երանի նրանց, տեղ ունին, մեզ պես անտէր ու հալածական չեն։

– Տօ, թող գորտերը, փայտս բռնիր դուրս արի։

—Փայտդ բռնե՞մ, ես փայտ չեմ գտնում, բայց գորտերը շատ են. ո՞րտեղ ես, ձայն տուր, որ փայտդ գտնեմ, շարունակ խօսիր, բաներ ասա։

—Դէ, բռնիր, այստեղ, դէպի աջ, հը, հը, չը կա՞յ, չը կա՞յ, ինչ չար գիշեր է. ոտնաձայն լսում ես. ո՞վքեր կարող են լինել։

—Սո՛ւս, սուս, թող անցնեն։

—Մրսում եմ ջրի մէջ։

—Սուս, սուս, մրսիր, բայց սուս, մեր յետևից են ընկել։

—Ի՞նչ գիտես։

– Լսիր, ականջ դիր և սո՛ւս։

Ձիաւորները էին, խօսում էին իրար հետ.

—Այստեղով փախան, ասում էր առաջին ձայնը։

—Հա՛ այստեղից, պատասխանեց երկրորդը։

—Դու հաստատ գիտես, որ մեր փընտռածներն են։

—Անպատճառ նրանք են, ուրիշ ո՞վ կարող է լինել, նրանց ձայները լսել են, լուսնի մասին են խօսել. հրամայուած է խփել, այ թէ կը պատահենք հա՛մ. բայց այստեղ չեն, առաջ անցնենք։

Ձայները կամաց կամաց հեռացան։ Շըրջող պահակներ էին, որոնք կարծում էին, թէ գիշերային լրտեսների հետքեր են գտել։ Բայց կոյրերն իրանց մասին կարծեցին նրանց խօսակցութիւնը և քարացան իրանց տեղերում.

—Լսեցի՞ր Մարգար. պառաւ Խումարը ճիշտ է ասել։

—Հա լսեցի, ինչ անեմ, ես խոմ քեզ ասել եմ, որ աշխարհը կռապաշտ է, որ թաղում շատ է հարկաւոր սրտերը փափկացնելու համար, փախչում ենք, էլի չենք պըրծնում. փայտդ տուր, ինչ ցուրտ է այստեղ։

—Ահա փայտը, գտա՞ր, բռնեցի՞ր։

—Հա, բռնեցի, քաշի, քաշի պինդ. լաւ է, դուրս եկայ, թրջուած եմ, բայց գնանք, աշխահը լայն է, բայց մենք գլուխ դնելու տեղ էլ չունենք։

Եւ նրանք քայլում են անընդհատ. երբ Մուրօի ոտքը դիպչում է քարի, թմբի, նա գլորւում է երեսի վրայ. յետևից Մարգարը նոյն ձևով ընկնում է ընկերոջ մէջքին, վեր են կենում, իրար գտնում, իրար մխիթարում և առաջ անցնում: Ուշ գիշեր էր արդէն, երբ հազիւ մեծ ճանապարհը գտան հևալով, տնքալով, քրտինքի մէջ կորած: Այժմ հեշտ էր, հարթ հաւասար տարածութիւն է և նրանք քայլում են անընդհատ:

—Մուրօ:

—Մարգար:

—Լսում ես ձայնը:

—Արագի ձայնն է, աշուն է, ջուրը վարար, հոսանքը զօրեղ, ալիքներն այդպէս աղմկում են:

—Մօտ ենք:

—Շատ մօտ:

—Երբ հասնենք ի՞նչ անենք:

Նստենք, սպասենք լուսաբացին, որ նաւակները գործել, երթևեկել սկսեն:

—Այդ ձայնից ես վախենում եմ և սիրում միաժամանակ:

—Արագի ձայնից, ի՞նչ վախենալու բան կայ:

—Քանի մօտենում ենք, գոռոցն այն-

քան ուժգին է դառնում, լսո՞ւմ ես, այնպէս կ'ուզէի մօտիկ լինել, շատ մօտիկ, համարեա ջրերի մէջ, որ այդ ալիքները ականջներիս մէջ գոռան. գիտե՞ս, ես միշտ կարծել եմ, թէ նրանք խօսում են, թէ նրանք էլ մեզ պէս ցաւեր ունեն, թափառական ու անտէր, անցնում են երկրէ երկիր, լաց են լինում, բողոքում, ճչում, փախում, լալիս և նրանց ոչ ոք չի լսում: Խեղճե՜ր. մեր եղբայրներն են այդ ալիքները:

—Ահա հասանք, այ, նստիր այստեղ, Մարգար, և լսիր, որքան կամենում ես, պէտք սպասենք, մինչև լուսաբաց:

—Ես քայլում եմ դէպի ափը, մօտ ջրերին, թող նրանք ինձ փախսան, ականջիս մէջ լինեն, դու ցերեկով տեսե՞լ ես, ալիքներն ինչի՞ են նման, ինձ թւում է՝ թէ նրանք աչքեր, բերան, մի խօսքով դէմք ունեն, որ գիտեն ծամածռել, հազար ու մի ձևեր տալ, որ նրանք կարող են ճչալ ու ծիծաղել, արտասուել ու ցնծալ: Այդպէ՞ս է Մուրօ:

—Հա՛ Մարգար, ալիքները ծիծաղել, քրքջալ ու արտասուել գիտեն. բայց մօտ մի գնա, այդ լաւ չէ, ես քեզ չեմ տեսնում. ո՞ւր ես Մարգար, զգո՛յշ:

—Դու ինձ չե՞ս տեսնում, փայտը ձեռ-

քիս, առաջս շօշափում եմ. ահա, ես այժմ ափին եմ, բոլորովին ափին, ես լսում եմ... քանի՜ ձայներ, ի՞նչեր են ասում. սրանք միայն գիշե՞րն են այսպես, թէ՞ ցերեկն էլ խօսել գիտեն։ Ուո՜ւհ, մէկ իմանայի ո՞րտեղից են գալիս, ի՞նչ են այսպէս փսփսում։

—Բինգեօլից, տնաշէն, Բինգեօլից են գալիս։

—Մե՞ր Բինգեօլից։

—Աշխարհում մի Բինգեօլ կայ. չե՞ս լսել երգը՝ «Արագ, Արագ խան Արագ, Բինգեօլից բղխող Արագ»։

—Օ՜ֆ Բինգեօլ, հազար աղբիւր, հազա՜ր լիճ, ասա Մուրօ, ցերեկն այս ջրերն ի՞նչ գոյն ունեն, սե՞ւ, թէ՞ կարմիր։

—Ես սև ու կարմիր եմ տեսնում Մարգար։

—Տես, Մուրօ, նրանք գալիս են, զարկւում են ոտներիս տակ, շըրըփ, շըրը՜փ, յետ ու յետ գնում մռմռալով, ի՞նչ են ուզում, Բինգեօլից են գալիս խեղճերը. ինչե՞ր են տեսել, «Արագ, Արագ խան Արագ, հազար լճից, բղխող Արագ»։ Հազա՜ր լճից, ի՞նչքան բան կարող են ասել այնքան լճերը՝ պատմեցէք, է՜, ի՞նչ էք մռմռում ծեծուած գազանների պէս։

Ալիքները մռմռում են, ու թումբը որի վրայ կանգնած է Մարգարը, կրծում, քերում են տակից, նա մօտ է թափուելու։

—Մուրօ, սիրտս էլի լցուեց, ասա, մատաղ, ասա՛ մեր երգը՝ «Զարկենք սազին, մռմուռ քամ»...

Երգը կիսատ մնաց ու լռուեց. ահագին չըրփոց բարձրացաւ, գետափին էր, որ փուլ գալով՝ գնաց կատաղի ալիքների հետ, և Մարգարի ձայնը մէկէն ընդհատուեց։ Մուրօն յանկարծ ճչաց.

—Մարգա՜ր։

Ալիքները մռմռացին, ճղփոց հանեցին ափերի վրայ։

—Մարգա՜ր

Ալիքները, խշխշացին, պտոյտներ գործեցին, իրար հրեցին, հրհրեցին առաջ անցան։

—Մարգա՜ր։

Ընկերոջ ճիչը մնաց անպատասխան, և խեղդուեց աղմկուած գետի մէջ, ուր Մարգարի դիակը լողում էր թաւալ թաւալ, սազը պինդ բռնած ձեռքում, դարձեալ բութ ծայրը դէպի երկինք ցցած, դարձեալ աչքերի խոռոչները դէպի վեր, դէպի անհունը ուղղած։

—Գե՛տ, գե՛տ, հազար լճից, հազար աղբրից բղխող գետ. սարերով, ձորերով սև օրով եկանք, սրտերս մռմուռ, աչքերս կոյր՝ արեան ծովեր ենք կտրել և անցել. ջուխտ հասանք ափիդ, ես մենակ եմ մնացել, խեղճ ու կրակ, անյոյս, ու անլոյս, գետ, հազար լճից բղխող անգութ, անողորմ գետ, կամ տար ինձ նրա հետ, կամ տուր ինձ նրան. Մարգա՛ր։

Լուռ էր ընկերը. մռնչում էին ալիքները, իսկ Մուրօն՝ գաւակը կորցրած մօր պէս, վազվզում էր ափերում։

Երկար թափառեց նա, ընկերին կանչեց, ճչաց, ոռնաց ալիքներից բարձր, ալիքներից ցաւով. իզո՜ւր, Մարգարը չը կար, իսկ գետը շարունակում էր անհոգ քրքիջով թաւալել իր հարուստ ջրերը և նրանց հետ մի գիակ, մի խեղճ անտէր գիակ։ Էլի մի քանի րոպէներ և ջրերը կրկին ճղփացին, նրանց ծոցը նետուեց յուսահատ Մուրօն, ալիքները բացուեցին մռռալով, ներս առան նրան էլ և ամէն ինչ լռեց։

Բինգեօլից էր գալիս գետը, հազար լճերից, հազար աղբիւրից, շատ բաներ գիտէր, բայց միայն մռմռում էր և փսփսում, կամ կականով զարկւում էր իր ափերին։ Եւ ա-

լիքների տակ թաւալ թաւալ գլորւում էին երկու աշուղ ընկերները, կարծես խօսում, փսփսում էին ալիքների հետ, հայրենիքից լուրեր էին հարցնում և նրա սառը ծոցի մէջ հանգիստ օրօրւում։

1902.

ՎԻՃԱՊԱՁՈՐԸ

(Աւանդութիւն)

—

Մութ գիշեր էր, ճանապարհս խորդ ու բորդ։ Կառապանս, մի բարի դէմքով խելացի ծերուկ՝ ամբողջ ճանապարհին ինձ զուարճացրել էր իր սրամիտ զրոյցով։ Մութն ընկնելուն պէս նա կամաց-կամաց լռեց և այժմ հանգիստ նիրհում էր իր տեղում երասանակները բաց թողած։ Վերջին հանգամանքը խիստ անհանգստացնում էր ինձ, որովհետև ձիերը մի անօրինակ յամառութեամբ անդադար դուրս էին քաշում կառքը ճանապարհի մէջ տեղից մերթ դէպի մէկ՝ մերթ դէպի միւս կողմի խրամատը։

—Ծե՛րուկ, քնեցի՞ր...

—Հ՞ը... չէ՛ պարոն, չեմ քնել, ո՞նց կը քնեմ. էհ՜, ըշ՛շ, հայդա։

Ձիերը կառապանի ձայնից զգաստացած, փնչացնելով փոխում էին վտանգաւոր

ուղին, կառքը մի առ ժամանակ առանց կասկածելի երերումների ընթանում էր ապահով տեղով։ Սակայն այդ երկար չէր տևում, շուտով կառապանի ծեր գլուխը կրկին կախւում էր կրծքին, ձիերը վերստին քաշում էին մեզ ճանապարհից դուրս, կառքը ցատկոտում էր վտանգաւոր դարիվերներով և քիչ էր մնում շուռ գայ, փշուր-փշուր լինի։

—Ծե՛րուկ, դու դարձեալ քնեցիր, նայի՛ր, կառքը շուռ է գալիս։

Պատասխանը նոյնն էր, հետևանքը նոյնը։ Յորդորներս նպատակին չէին հասնում։ Ես լուրջ կերպով մտահոգ էի, ելք էի փնտրում, որ թէ ծերունուն չը վշտացնեմ և թէ վըտանգի առաջն առնեմ։

Ճանապարհն անցնում էր մի մռայլ ու խոր ձորի միջով, որի երկու կողմերում բարձրանում էին քարերի ահագին շեղջակոյտեր, սև ու այլանդակ ձևերով։ Խաւարի մէջ թւում էր, թէ այնտեղ մի բանակ էր ջարդուած և գոռոզ յաղթողը դիակներից արիւնոտ փառքի ամբարդակ է կանգնեցրել։

—Լսի՛ր, ծերո՛ւկ, այս ի՞նչ ձոր է։

—Հ՞ը... չէ՛, չեմ քնել պարոն, էհ՜, ըշ՛շ, հայդա։

—Գիտեմ չես քնել. դրա համար էլ հարցնում եմ, թէ այս ինչ ձոր է ու այս քարերն ինչո՞ւ են այնպէս իրար վրա շարուած։

—Էս ձո՞րը... ծօ, սա ուրիշ ձոր է պարոն, սրան Վիշապաձոր կասեն։

—Վիշապաձո՞ր... ինչո՞ւ վիշապնե՞ր են եղել այստեղ։

—Հալբաթ եղել են, ասաց նա յօրանջելով ու լռեց։ Գլուխը կրկին քաշ ընկաւ կրծքին։ Անիծած ծերուկը կարծես միտքս հասկացաւ, դիտմամբ չէր ուզում խօսել քունը չը խանգարելու համար։ Իսկ ես մտածում էի նրան անդադար խօսեցնել, որ քունը չը տանի։ Ես յամառեցի։

—Այդ քարերը իրանք իրա՞նց են այդպէս կուտակուել, թէ՞ մարդիկ են շարել։

—Ուզում ես խօսեմ հա՞ա... ասաց նա ծիծաղելով։ Չէ, չեմ քնի պարոն, բայց դէ որ ուզում ես, քո խաթրը ո՞նց կոտրեմ, լսի՛ր՝ պատմեմ Վիշապաձորի պատմութիւնը։

Մեզնից շատ, շատ տարի առաջ, ասում են, էս տեղ մի մեծ գիւղ կար։ Աստծու աչքը վրան քաղցր էր, տները հազար բարիքով լի, ամենքը երջանիկ էին։ Միշտ էդ-

պէս է, Աստուած որ տուեց՝ կտայ, որ առաւ՝ միանգամից կառնի.

Գիւղի մօտով անցնում էր մի մեծ ճանապարհ, կարաւաններ էին գնում գալիս դէպի հեռու աշխարհներ, օտարականներ էին անցնում, հազար ու մի ճանապարհորդներ, և ամենքը գիտէին էդ գիւղը, ամենքը էնտեղ հանգստանում, սառը ջուր խմում, ողորմի տալիս ու անցնում էին։

Մի օր էլ հեռու ճանապարհի վրա փոշի բարձրացաւ և ամպերի պէս պատեց երկինքը. մի չը տեսնուած կարաւան էր գալիս։ Գիւղացիք նայում էին զարմացած. կարաւանն եկաւ, եկաւ և ինչ, փոշու մէջ կորած անտէր-անտիրական, խեղճ ու մոլորուած մարդկանց ահագին բազմութիւն, իրար յետևից խումբ-խումբ, շարան շարան։ Գլուխները կախ, ձեռները ծոցը, լուռ իրարից կախկխուած, ուժասպառ, յոգնած գալիս են փոշու միջից։ Հասան, գիւղի առաջ կանգ առան ու ասում են.

«Մենք գալիս ենք հեռո՛ւ, հեռո՛ւ տեղերից, օտար սարից օտար ձորից էն կողմն էր մեր վաթանը, նա էլ չկայ։ Մի չար քամի զարկեց, սրբեց ու տարաւ ամեն ինչ։ Տուն ու տեղ ունէինք՝ հիմա բնաւեր ենք.

արտ ու արօտ ունէինք հիմա քաղցած ենք. շէն դռներս՝ փակ, մենք՝ մուրացիկ, մեր մէջքը՝ կոտրած, մի կտոր հաց, մի անկիւն, էլի Աստծու արարածներ ենք, թող Աստուած ձեզ մէկ սև օր չը տայ»:

Էսպէս խօսեցին խեղճերը ու լուռ սպասում էին: Երջանիկ գիւղացիք էլ լուռ էին: Նրանք մտածում էին, ընդունե՞լ, թէ մերժել այս բազմաթիւ քաղցածներին: Խորհուրդ արին, խօսեցին. վերջի վերջոյ գտան, որ ընդունել չեն կարող: Մեզ ի՞նչ օգուտ, որ էսքան մարդ մեր հացն ուտի: Մտածում էին նրանք, և դեռ ո՞վ գիտէ՝ կը հեռանա՞ն այնուհետև, թէ ոչ:

Խեղճերը գլխակոր ու լուռ սպասում էին: Վերջապէս գիւղացիք առանց գլուխները բարձրացնելու, առանց խեղճերի երեսին նայելու ասացին.

—Աստուած ձեզ հետ, գնացէք, տեղ չունենք, հալբաթ մի մեղք էք գործել, որ էս օրին էք:

Խեղճերը անցան, շարան-շարան: Գիշեր էր և դեռ նրանք գնում էին. գիւղացիք իրենց տներում փակուած՝ լսում էին նրանց ծանր ոտնաձայնը, նրանց տնքոցը, նրանց

ախ ու վախը: Գիւղում այն գիշեր ոչ ոք քնել չը կարողացաւ:

Անցան օրեր, հասան խեղճերի նոր խմբեր. նրանց շարքերն ասես էլ վերջ չունէին, հեռու հեռու տեղերից գուլումը թափառած, սողում, գալիս էր մեծ ճանապարհով, ինչպէս ծփծփան ծովը, որ յանկարծ քամիների ուժով դուրս է ձգւում ափերից ու ծածկում չորս կողմը:

Գիւղը պղնձուած՝ կռապաշտ դարձաւ:

Ասում են, որ շատ թշուառութիւն տեսնելով, մարդու սիրտը կամաց կամաց քարանում է: Դրանք էլ մերժում էին ամենքին, մերժում էին, բայց էլի հանգիստ չէին, գիշերները չէին քնում, իրանց տեղաշորը կրծոտում էր մարմինները: Էսպէս է, պարոն, մարդ շատ անգամ իր տանը նստած ճնւում է երկու կրակի մէջ, որ նրան այրում են ներսից: Ազատ մարդ ես քեզ համար, մի բան չես անում, բայց ներսդ փոթոթւում է:

Գիւղացիք երկար, բարակ մտածեցին, ծանր ու թեթև արին, ճար չը գտան. ուզում էին էնպէս լինի, որ թէ իրանց դռները փակ մնան խեղճերի առաջ, թէ կարողանան հանգիստ քնել գիշերները:

Դէ պարոն, էդպէս ո՞նց կը լինի. հոգի կայ չէ՞... բայց նրանք մտածում էին հոգու ձայնը խլացնել:

—Հա՛յ դէ մէկը գար ու մեզ ազատէր մեր հոգուց, ասում էին նրանք իրար:

—Ե՛ս կ՚ազատեմ.

Նայեցին, սատանան էր նրանց առաջը ցցուած:

—Ի՞նչպէս կ՚ազատես:

—Ծախեցէք ինձ ձեր խիղճը, ձեր կամքը, ձեր ազատութիւնը և դուք հանգիստ կը քնէք:

—Մենք հանգիստ կը քնե՞նք.

—Հա՛, բոլորովին հանգիստ.

—Դիմողներին կը մերժենք ու գիշերները կը քնե՞նք.

—Հա՛, կըմերժէք ու կքնէք հանգիստ:

—Համաձայն ենք:

Եւ ծախեցին սատանային իրենց խիղճը, կամքը, ազատութիւնը: Քահանան էլ ծախեց...

—Քահանա՞ն, բացականչեցի ես.

—Հա՛, ի՞նչ կայ որ, քահանայի խիղճը չի՞ ծախուի, կ՚ուզես էգուց մեր գեղի տէրտէրի խիղճը որսի թուչունի պէս թրպըրտալէն բերեմ, գցեմ առաջդ: Է՛է, էդ թողնենք,

պարոն, որտեղ մնացի՞... հա, ռէսն էլ ծախեց, իշխաններն էլ ծախեցին, բոլոր ժողովուրդը՝ մեծ ու փոքր, մարդ ու կին ծախեցին իրանց խիղճը, կամքը, ազատութիւնը: Գեղը դարձաւ սատանայի փայ ու բաժին:

Հասաւ գիշերը. առաջին անգամ ամիսներից յետոյ գիւղացիք տները մտան հանգիստ և ուզում էին քնել: Բայց հազիւ անկողինները փռեցին, պառկեցին, դրսից, փողոցներից կրկին լսուեցին նոյն ծանր, ցաւոտ ոտնաձայները, նոյն տնքոցը, նոյն հեծեծանքը: Դռներին ձեռք էին տալիս, պատերը չանգռում, ո՞վ... ոչ ոք չգիտէր, ոչ ոք չէր կարող ասել, բայց քնել չէր լինում: Այն գիշերն ամենից սարսափելի, ամենից ծանր եղաւ:

Միւս առաւօտ գիւղացիք հաւաքուեցին ու գնացին սատանայի մօտ.

—Տօ, անիրաւ, ասացին, դու մեզանից առար մեր հոգին, մեր ազատութիւնը, որ մենք գոնէ հանգիստ քնենք և դու մեզ խաբեցիր.

—Ես չեմ խաբել, դուք քնել չէք կարողանում, որովհետև ձեր գիւղից մէկը կայ, որ դեռ ազատ է:

— Ո՞վ է.

—Հովիւը։

Սատանան խրատունք ունէր, գիւղացիք իրանց հովուին բոլորովին մոռացել էին։ Դէ ի՞նչպէս չը մոռանային. հովիւը մի խեղճ ու կրակ հալւոր էր, մօտ հարիւր տարեկան. և իր բոլոր կեանքը անց էր կացրել չօլերում, սարերում—ձորերում, գիւղից, աշխարհի բաներից բոլորովին բէխաբար։ Տարին տասներկու ամիս նա գիւղ չէր մանի. ապրում էր իր անասունների հետ. ունեցած չունեցածը մի հողէ աման էր, որով կաթ էր խմում, մի երկար ու հաստ մահակ, մի մաշուած սրինգ, որ իր մանկութիւնից ածում էր և մէկ էլ թաղիքէ ծածկոցը։

Ազատ, արդար մարդ էր, և ապրում էր իր համար անդարդ ու անցաւ։ Գիւղացիք մարդ ուղարկեցին, հովուին կանչելու։ Դէպքը զարմանալի էր. հալւորը մեծ դժուարութեամբ համաձայնեց սարերից գիւղ իջնել։

Ահագին մահակը ձեռքին, թաղիքէ ծածկոցը թիկունքին, սրինգը գօտին խրած, հովիւը եկաւ ու կանգնեց մէյդան։ Նրա երկար մազերը թափուել էին ուսերին, միրուքը, ձիւնի պէս ճերմակ՝ փռւում էր մինչև գօտին, և դէմքը, բարի ու արդար, երեխայի պէս նայում էր չորս կողմը և բան չէր հասկանում։

—Ի՞նչ էք ուզում ինձանից, ասաց նա։

—Ազատութիւնդ ծախիր սատանային։

—Չեմ ծախի, հոգիս էլ հետն է։

—Մենք բոլորս ծախել ենք, տէրտէրն էլ է ծախել, իշխաններն էլ, ռէյսն էլ, երեցփոխն էլ։

—Դուք ծախել էք, էդ ձեր բանն է. ես էլ չեմ ծախում, իմ բանն է։ Իմ ընկերները բոլորն ազատ են, քամիները տէր չունին, գազանները վազվզում են ուզած տեղերը։ Հարիւր տարի է, ես ազատ եմ, հիմա էս ծեր օրերիս իմ ազատութիւնը, իմ կամքը, իմ խիղճը չեմ ծախի սատանային։ Հոգիս թէ տալու լինիմ, Աստծուն կ՚տամ։ Դուք սատանայի փայ ու բաժին էք, ես ձեզ հետ գործ չ՚ունիմ։

Ասաց, երեսը դարձրեց ու ճանապարհ ընկաւ դէպի սարերը։

—Ի՞նչ անենք, հարցրին սատանային.

— Հալւորին թաղեցէք, ուրիշ ճար չ՚կայ։

—Ողջ ողջ.

—Հա՛, ողջ ողջ թաղեցէք և դուք հանգիստ կ'քնէք։

Սատանայի սուրուկներն էին, ազատութիւնն ու հոգիները ծախած, էլ ի՞նչ կարող էին անել, վազեցին հասան ծեր հովւին, բռնեցին, յետ բերին ու կանգնեցրին մէյ էս ձորում։ Մեծ ու փոքր բահ ու թի առած՝ սկսեցին փորել և պատրաստեցին մի մեծ վիհ, խոր ինչպէս անդունդ։

Ծերունին հանդարտ կանգնած՝ նայում էր փոսին։

—Թաղել է՞ք ուզում ինձ։

—Հա՛, կամ ազատութիւնդ ծախիր, կամ քեզ կը թաղենք։

—Թաղեցէք, բայց թողէք ինձ վերջին անգամ ածեմ սրինգս։

—Մի՛ թողէք, ասաց սատանան։ Չարը մի բան գիտէր։

Եւ վրա պրծան ծերունուն. մէկը ոտներից բռնեց, մէկը ձեռներից, մէկը գլխից, մէկն ուսերից, մէկը մէջքից ու գլորեցին խոր փոսի մէջ, հողը թափեցին վրան, ծածկեցին։

Էս սարսափելի թաղումից յետոյ բազմ-

ութիւնը գոհ սրտով վերադարձաւ գիւղ։ Հասաւ գիշերը. ներս մտան քնելու։

. . . .

Թըը՛խկ, թըը՛խկ.

—Ո՞վ ես.

—Չ'վաճառուածը.

—Ի՞նչ ես ուզում.

—Ոչինչ, ես շրջում եմ, ես ազատ եմ։

—Չենք հասկանում, ազատ բան չկայ էս կողմերում, ազատ մարդ չ'կայ մեր գիւղում։

—Սարերի ծերունին ազատ է։

—Թաղուած է։

—Թաղուած ազատութեան սուգն եմ անում։

Եւ հնչում էր սրինգի ձայնը, տխուր, հոգեհան, ասես սար ու քար լալիս էին, հեծեծում։

Եւ բոլոր դռների առաջ խօսում էր նոյն ձայնը և ամենքը լսում էին սրնգի ողբը, քամիներն էլ լալիս էին նրա հետ։ Մարդկանց վրա կարծես երկնքից կրակ էր մաղւում, նրանց մազերը դիզանում էին, նրանք կծկւում, իրար էին կպչում երկիւղից ու ցաւից և քնել չէր լինում։

Առաւօտը դարձեալ բոլորը հաւաքուեցին գնացին սատանայի մօտ.

—Տօ, չար անիրաւ, ասացին, դու մեզանից առար մեր խիղճը, մեր կամքը, մեր ազատութիւնը, մեր հոգին, որ մեզ գոնէ հանգիստ տաս. բայց մեր դռները գիշերները ծեծում են, մենք տանջւում ենք, քնել չենք կարողանում:

—Նա՛ է.

—Ո՞վ.

—Հովիւը.

—Ախր երէկ թաղեցինք:

—Քարեր դիզեցի՞ք վրան.

—Չէ.

—Քարեր պէտք է շարել վրան, հէնց էս գիշեր:

Յուսահատուած, կատաղած գիւղացիք հէնց որ գիշերը վրա հասաւ, դուրս եկան և բոլորը վազեցին դէպի հովուի գերեզմանը: Յանկարծ ինչ տեսնեն: Գերեզմանի բարձր թմբի վրա, նստել է մի փառայեղ ծերունի, իսկ և իսկ հովուի նման. սրինգն ածում է հա ածում, իսկ նրա չորս կողմը բռնել են անթիւ գազաններ, գայլեր, արջեր, աղուէսներ, առիւծներ, վագրեր. լսում են սրինգի ձայնը և սուգ անում: Ողջ ձորը թնդում է

նրանց ոռնոցից, քարերն էլ նրանց հետ տնքում են: Ծերունին սրինգը ցած առաւ շրթունքներից, ոտքի կանգնեց, ինչ հասակ. մի հսկայ, մի աժդահայ, աչքերից կրակ էր թափւում, գազանները կծկուեցին նրա ոտների տակ:

Սարսափած բազմութիւնը քարացած իր տեղում: Ծերունին իր ահագին բազուկները տարածեց օդի մէջ և ճչաց զարհուրելի ձայնով.

—Գնացէք անիծուածնե՛ր, սատանայի ծնունդներ, ձեր թաղածը՝ գազաններն են սգում, ձեր փոխարէն նրանք են լալիս: Ձեր արցունքը նրանք են թափում: Հեռո՛ւ էս տեղերից, գնացէք կրծոտեցէք ու չանգռեցէք իրար, սատանայի ստրուկներ:

Ասաց ու ծածկուեց գերեզմանում: Գազաններն ոռնացին սարսափելի ձայներով ու յարձակուեցին բազմութեան վրա: Զարզանդը բռնեց ամենքին, նրանք շշկլած սարից քարից գլորուեցին ու իրար վրա թափուեցին՝ շարան-շարան, շերտ-շերտ: Մէկը միւսի կրծքին, մէջքին, ուսերին, թիկունքին: Ամեն մէկը բաց աչքով տեսնում էր, թէ ինչպէս իր վրա ընկածը տրորում, չանգռում, կրծոտում է իր կուրծքը և հասկա-

նալ չէր կարողանում, թէ ինչո՞ւ է էդպէս։

—Ի՞նչու ես կրծոտում, տրորում ինձ, մեռա՜յ.

—Չը գիտե՜մ... չը գիտե՜մ... ես ազատ չե՜մ...

Վերից, վերի՜ց հարցրու...

Եւ բոլոր մարմինները օձերի պէս գալարուած, փաթաթուած իրար, մռմռում, տնքում, հեծեծում, մռնչում էին. և նրանց ոսկորները ճարճատում էին. և նրանց շըրթունքները արիւնէ փրփուրով ծածկւում, աչքերը ընից դուրս գալիս, մէջքերը տաստակ ծալւում և վերից մի գարհուրելի, մի ծանր բան սղմում, սղմում էր անդադար։ Էլ ելք ու փրկութիւն չ'կար. Նրանք գարգանդից քարացան իրանց տեղերում։ Այ էն ձորի քարերն էին, որ մենք տեսանք։ Մի վիշապ էլ եկաւ, մտաւ էդ քարերի մէջ, մինչև հիմա էլ նա այնտեղ է, ինքը չի երևում, բայց պոչը քաշ է ընկած ժայռի ճեղքից, քանի կտրում ես, էլի երկարում է։ Ասում են, որ սատանան է, որ էն ժամանակ վիշապ է դարձել ու իր փայ ու բաժին դարձած հոգիները պահում է էնտեղ։ Վիշապաձորն է այն։

Անիծած ձոր է. չոր ու պղնձուած։ Ոչ

մի ծառ չի բուսնում էնտեղ, ոչ մի ծաղիկ չի ծլում, խոտ չի կանաչում. ոչ մի թռչուն էնտեղ բուն չի դնում, ոչ մի սողուն չի մօտենում էդ քարերին։

Ձորից վաղուց էինք հեռացել, ծերունին վերջացրեց իր պատմութիւնը, ձիերին շարժեց.

—Հէ՜, ըշ՛շ հայդա՜։

Կենդանիները փնչացրին ու առաջ սլացան։ Ես մտախոհ էի, իմ աչքից էլ չէր հեռանում գազանների այդ զարմանալի սուգը այդ անօրինակ գերեզմանի վրա, ես տեսնում էի այն հսկայ ծերունուն. Նրա բոցավառ աչքերը, նրա փառայեղ դէմքը, ես լըսում էի կարծես նրա սպառնալի ձայնը, որով անիծում էր իր ոտների տակ սողացող բազմութիւնը, որ չ'գիտէր, թէ ի՞նչ է ծախել, ի՞նչ է թաղել, ինչի՞ց է զրկուել։

—Պա՛րոն.

. . . . . .

—Պա՛րոն, հիմա էլ դու ես քնում, ասաց ծերունին. Երևի ես նրա առաջին կանչին չէի պատասխանել մտքերիս մէջ խորասուզուած։

—Չէ՜, ծերուկ, չեմ քնել, միտք եմ անում։

—Ես էլ մի բան եմ մտածում։

—Ի՞նչ.

—Ես մտածում եմ, ու ինձ էնպէս է թւում, որ էն ծեր, արդար հովուի անէծքը դեռ աշխարհի վրա է։

—Ի՞նչու ես այդպէս կարծում, ծերուկ։

—Ախր ո՛ր կողմը նայում ես, աշխարհում մարդիկ իրար կրծոտում, արորում, չանգռտում են, ու իրանք էլ չը գիտեն ինչի՞ համար։ Ցաւ ու դարդ է չորս կողմերս։ Գազանները մեզ վրա էլ իրաւունք ունին արցունք թափելու։

Ես լուռ էի... Ծերուկն էլ չէր քնում։

—Է՜հ, էդ բաների մասին չ'մտածելը լաւ է, մռմռաց նա ինքն իրան և երասանակները շարժեց թափով.

—Հէ՜, ըշ՜շ, հայդա՛։

Ձիերը սլանում էին։

Արշալոյսը մօտ էր։

1903.

ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ

«Ես սիրում եմ վեհութիւնը մարդկային տանջանքի».

Ալֆրէդ-դը-Վինի։

I

Մենք նոր աւարտել էինք համալսարանը, ես և ընկերս՝ երկուսով էլ բժիշկ. տարիների յամառ աշխատանքներս վերջապէս պսակուեց յաջողութեամբ, մենք նորաւարտ բժիշկներ էինք։ Այս միտքը մեր սիրտը լցնում էր և՛ հրճուանքով և՛ հպարտութեամբ. կեանքը մեր առաջ բաց էր, ապագան ժպտուն, վայելքների մի շարք։

Մի փոքր հանգստանալու և մեր ապագայ անելիքի մասին մտածելու համար, մենք երկուսով էլ իմ հայրենի քաղաքը եկանք։ Ընկերս տեղաւորուեց մի աժանագին հիւրանոցում, իսկ ես ծնողներիս մօտ։

Յաջորդ օրը, երբ ես ընկերոջս տեսու-

թեան գնացի, առաջին բանը որ աչքովս ընկաւ, դա նրա դրան վրայ կպցրած այցկարտն էր՝ «բժիշկ Արաքսեան»։ Ինձ էլ բան պէտք էր, «բժիշկ Արաքսեան»։ Պտտալով ներս ընկայ սենեակ։ Նա մի փոքր կարմրեց, ժպտաց, ապա ձեռքերը շփեց գոհութեամբ։

—Հը, մեր տղայ, լաւ ես շտապել։

—Շտապե՞լ, ինչո՞ւ, մի՞թէ մենք այժմ բժիշկ չենք, պատասխանեց նա մի առանձին ինքնաբաւականութեամբ։

—Բժիշկներ ենք, միայն իմ դրան վրայ այդպիսի այցկարտ չը կայ, և ես կարողացայ քնել այս գիշեր, իսկ դու, ինչպէս երեւում է, չէիր կարող առանց դրան քնել, պատասխանեցի ես ծիծաղելով։

—Հանաքով ասացիր. բայց հաւատացած եղիր, որ ես վաղուց այնպէս հանգիստ չէի քնել, ինչպէս այս գիշեր քնեցի։

—Եւ երազներ էլ տեսար։

—Եւ երազներ էլ տեսայ։

—Սիրուն, գրաւիչ երազներ։

—Օ՜, չափազանց գրաւիչ։

—Ճիշտ այնպիսի երազներ, որոնց մասին այնքան խօսում էիր ուսանողութեանդ ժամանակ և որոնց հասնելը քո կեանքիդ

նպատակ ես ընտրել, հարուստ աղջիկ, շքեղ տուն, կառք։

—Ճիշտ այդպիսիները՝ հարուստ աղջիկ, շքեղ տուն, կառք։

—Ուրեմն այն քամիները դեռ գլխիցդ չե՞ն դուրս եկել։

—Քամինե՞ր, խե՛ղճ, վրայ բերեց նա այս անգամ կատարեալ լրջութեամբ, քամիները քո գլխումն են, եթէ կամենում ես, իսկ ես տեսնում եմ կեանքը, ինչպէս որ նա կայ, ինչպէս եղել է և պիտի լինի։ Ես ապրել եմ ուզում, դա իմ իրաւունքն է, ինչպէս և ամենի իրաւունքն է։ Երբ ես տարիների ընթացքում շան պէս չարչարւում էի, պանիր ու հացով էի կերակրւում, անքուն գիշերներ անցկացնում հաստ հատորների վրայ, հնացած դիակներ կտրատում և քրքրում, այդ իմ դժոխային կեանքի շրջանում ես ոչ ոքից պահանջ չունեցայ, ոչ ոք ինձանով չը հետաքրքրուեց էլ, իրաւունք ունէին, այժմ էլ հերթն իմն է և ես պիտի ապրեմ, պիտի ապրեմ. դրա համար եմ չարչարուել, դրա համար եմ սովորել։ Զարկ չեմ անի ոչ ոքի, անազնւութիւն չեմ անի երբէք, կը բժշկեմ՝ դա իմ պարտքն է,

վարձ կը վերցնեմ՝ դա էլ իմ իրաւունքն է. ահա իմ բարոյական սկզբունքները։

—Իսկ եթէ մարդը մեռնում է և չի ուզում փող տալ, բժիշկ կանչել, որովհետև տգէտ է, բժշկութեան մասին հասկացողութիւն չունի, կամ եթէ ուզում է բժշկուել, հասկանում է բժշկութեան արժէքը, բայց միջոց չունի՞։

—Փոյթս չէ, թող մեռնի, ուրիշ կերպ չի էլ կարող լինել, կեանքն այդպէս է. կամ ես պէտք է ինձ զոհ բերեմ այդպիսիներին, կեանքս դարձնեմ անվերջ դառնութիւնների, չը գնահատուած զոհերի մի շարք և ոչնչանամ առանց ապրելու, կամ նրանք պիտի ջախջախուեն կեանքի անողոք, անխուսափելի չարիքի առաջ։ Ընտրութիւնը դժուար չէ։ Ես ապրել եմ ուզում, ինչպէս ամեն մի էակ տիեզերքի վրայ ապրել է ուզում։ Հասարակական պիրամիդի շերտերում պայքարը եռում է. անհատներ ու դասակարգեր աշխատում են վեր բարձրանալ, ոմանք մնում են իրանց նոր գրաւած տեղերում, ուրիշները վար են գլորւում, հզօրներն ապրում են, թոյլերը խեղդւում, արդարացնելով «վայ յաղթուածին» ասացուածքը։ Ասա, ինչ ու-

զում ես, բայց կեանքն այսպէս է, կոխ, կոխ....

—Թո՛ղ այդ, ընդհատեցի նրան, դա շատ հին երգ է, և դու հարիւրաւոր անգամ կրկնել ես քո այդ վայրենի թեօրիաները, մոռանալով՝ որ փիլիսոփայութեան վերջին խօսքը քեզ չի պատկանում բարեբաղդաբար։

—Լաւ, կը թողնեմ, բայց այն ժամանակ դու էլ խօսք տուր դադարեցնել այս վէճը, որ սկսում է ձանձրալի դառնալ, որովհետև շատ հին վէճ է և ոչ մի օգուտ չունի, հաւատացնում եմ քեզ, քո փաստերն անզօր են փոխել իմ հայեացքները կեանքի վրայ։ Խօսենք ուրիշ բաների մասին։

—Թող այդպէս լինի, պատասխանեցի ես։

Արդարև, դա մի շատ հին վէճ էր։ Ընկերս մի յամառ նիւթապաշտ էր, և ամենից շատ հետաքրքրւում էր այդ նիւթապաշտական դպրոցի փիլիսոփաներով, այնտեղից էլ քաղել էր իր կեանքի բարոյական սկզբունքները։ Տարիների ընթացքում անթիւ անգամ մենք վիճել էինք, երբեմն նոյն-իսկ խռովել իրարից։ Նա ծաղրել էր իմ ալտրուիստ գաղափարները, ինձ անուանել էր ֆանտազիօր, ես նրան անուանել էի կարիերիստ, աֆե-

րիստ, նիւթապաշտ. խռովել էինք իրարից, բայց կրկին հաշտուել, կրկին մնացել լաւ ընկերներ։ Վէճ յարուցանողը միշտ ես էի լինում, յարձակւում էի առաջինը ես, և դա իր պատճառն ունէր. ինձ միշտ թւում էր, թէ ես պիտի յաջողեցնեմ նրա գլխից հանել այնքան չոր նիւթապաշտական գաղափարները և անվերջ փորձեր էի անում. ընկերական մի անխզելի կապով կապուած էի նրան. սիրում էի, որովհետև ինձ թւում էր, որ նրա սիրտը բարի է, շիտակ, և որ կեանքի դառնութիւններն են նրան այդպէս չարացրել, նրա մէջ թուլացրել, բայց ոչ իսպառ ջնջել, ազնիւ զոհեր բերելու ձգտումները։ Եւ արդարև, նա խիստ շատ էր տանջուել մինչև աւարտելը, իր բոլոր ջանքերը՝ մի որ և է նիւթական նպաստ ստանալ ուսման ընթացքում, ապարդիւն էին անցել և այժմ կ'ասես հաշիւ էր պահանջում կեանքից իր քաշած նեղութեան, իր կրած խեղճութեան համար։

Սակայն իմ ջանքերն ըստ երևոյթին իզուր անցան։ Եւ սա վերջին անգամն էր, որ ես նրա հետ վիճեցի նոյն խնդրի մասին. Թողեցի, որ կեանքը ինքը ասի նրան այն, ինչ ես աշխատում էի հասկացնել։ Այնու-

հետև ամեն անգամ, երբ ես գալիս էի նրան այցելութեան, բարձրաձայն կանչում էի դռնից «բժիշկ Արաքսեան» և ապա մենք սկսում էինք խօսել բոլորովին այլ նիւթերի մասին, ծիծաղում էինք, զուարճանում և բաժանւում։

Մեր կեանքի այն շրջանն էր, երբ մարդ ոչ՝ ուսանող է, ոչ ազատ, հասուն մարդ։ Դեռ սենեակը անկարգ, ծխով լի, դեռ սեղանի վրայ լիմոնի և պապիրոսի կտորներ, դեռ թէյի բաժակները այս ու այն կողմ գրքերին խառն, անկողինը ճմռռուած, շորերը թափթփուած, խօսակցութիւնը զուարճալի, հանաքները՝ անվերջ։ Հին հոգսերից, քննութիւններ անցնելու դժուարութիւններից պրծած, նոր կեանքի հոգսերին, դառնութիւններին անծանօթ, կամ երիտասարդ ույժերի, կարողութեան վրայ վստահ հեգնութեամբ, հպարտութեամբ ապագային նայելով՝ մենք անց էինք կացնում մեր կեանքի այդ անցողական շրջանը։

Լաւ օրեր էին։

Մի անգամ, երբ մենք դարձեալ ուրախ ուրախ խօսում էինք, յանկարծ հարևան սենեակից լսուեց մի մանկական ձայն, որ կարդում էր գիրկապ անելով։

«Բը-ա-դը, բադ. բը-ա-շը, բաշ. բը-ու-ն, բան:

—Ո՛չ, բը-ու-ն, բուն, ուղղեց երեխայի սխալը մի այլ հաստ ձայն, որ ըստ երևոյթին դասատուի ձայնն էր:

—Բը-ու-ն-բուն, շարունակեց երեխան. տը-ու-ն, տուն.—լաւ է, այժմ դու ասա, Շուշիկ:

—Շը-ուն, շուն, սկսեց մի այլ աւելի բարակ մանկական ձայն, նը-ու-շ, նուշ. ու-շ. ուշ. նուշ ու շուն:

—Լաւ է, Շուշիկ, դու էլ ես լաւ սովորել, վրայ բերեց նոյն հաստ ձայնը: Ապա նա սկսեց նոր դաս տալ, թէ մէկին և թէ միւսին, կրկնեց, երեքկնեց դասը, և դուրս ուղարկեց:

Մենք երկուսով էլ, մեզ անհասկանալի մի պատճառով, ամեն բան թողած, ուշի ուշով լսում էինք, ինչ որ կատարւում էր բարակ պատի միւս կողմում:

Քիչ յետոյ, մենք տեսանք, թէ ինչպէս մէկը դուրս եկաւ հարևան սենեակից, անցաւ մեր լուսամուտի առաջից: Դա երևի դասատուն էր. մի երիտասարդ մարդ, խունացած վերարկուով, որ նա խնամքով կոճկել էր վերից վար և կարծես մրսում էր,

թէև աշնանային տաք օրեր էին, գլխարկը խորը քաշած ճակատին՝ դէմքի պրօֆիլը հազիւ տեսանք, դա մի զունատ, նիհար երիտասարդ էր: Նա անցաւ, իսկ հարևան սենեակում ձայները չը դադարեցին. երկու մանուկներն այժմ սովորում էին, իրար օգնում. կը-ա-տը-ու, կատու. կը-աշ-ի, կաշի, ասում էր մէկը. կը-ու-տ, կուտ, ասում էր միւսը. երբեմն էլ երկսի ձայները խառնւում էին իրար, և էլ ոչինչ չէր հասկացւում, բայց մենք շարունակում էինք լսել լուռ, խորասուզուած...

Օրեր անցան, նոյն ձայները, համարեա միևնոյն եղանակով, մօտաւորապէս միևնոյն ժամերին լսւում էին հարևան սենեակից. պարզ էր, որ մէկը կանոնաւորապէս դաս էր տալիս երկու մանուկներին: Միակ փոփոխութիւնը, որ նկատւում էր, այդ այն էր, որ ուսուցիչը օր աւուր աւելի և աւելի էր հազում և շատ անգամ ստիպուած էր ընդհատել իր արտասանած վանկերը իր չոր հազը դադարեցնելու համար, ապա կրկին սկսում իր նոյն համբերութեամբ, կրկնում էր, սովորեցնում էր, յետոյ դուրս գնում, թողնելով՝ որ երեխաները թոթովեն իրանց դասերը:

Կամաց կամաց մենք ընտելացանք այս բոլորին. էլ չէինք ականջ դնում, երբեմն էլ նոյն իսկ սրախօսութիւնների առարկայ էինք դարձնում երեխաների թոթովանքը, նրանց արտասանութիւնները, կամ ուսուցչի այս ու այն խօսքը. օրինակ՝ «Շուշիկ, դու խելօք ես, Գարեգինը այսօր խելօք չի», կամ, «Ձեր երկուսին էլ սիրում եմ, երկուսդ էլ խելօք էք»։ Եւ ուսուցիչն այս խօսքերն արտասանում էր այնպիսի հայրական քնքշութեամբ, որ անհնարին էր ուշք չը դարձնել։ Շուտով այդ էլ մեզ ձանձրացրեց, մենք չը գիտէինք, ով է այդ ուսուցիչը, նոյն-իսկ մոռացութեան տուինք նրան, լուսամուտի առաջից անցնելիս չէինք էլ նայում վրան։

Այսպէս անցան մի քանի օրեր և շաբաթներ։ Բայց վերջին օրերը, երեխաների ձայնն էր լսւում միայն, ուսուցիչն այլ ևս չէր անցնում լուսամուտի առաջից, և նա էլ դաս չէր տալիս, այլ հազում էր...

II

Այն օրուանից, երբ տեղի ունեցան պատմութեանս նիւթը կազմող դէպքերը, տասնեակ տարիներ են անցել. բայց ես դեռ

յիշում եմ բոլորը ամենայն մանրամասնութեամբ. և դա առանց պատճառի չէ։ Մարդիկ չեն մոռանում իրանց մանկութեան յիշողութիւնները, կեանքի արշալոյսին ամեն մի երևոյթ, ամեն մի դէպք ոչ միայն նոր է, հապա և զարմանալի է մանկան համար և խոր կերպով ազդում է նրա կոյս մտքի, երևակայութեան վրայ, յաւիտեան չը ջնջուելու համար։ Իմ կեանքի երկրորդ շրջանի արշալոյսին ես էլ մի մանուկ էի, մի հասակ առած մանուկ, որ զարմանքով էր տեսնում աշխարհը, մարդկանց, կեանքը իր չար ու բարի կողմերով և որքան շատ բան կար անծանօթ, զարմանալի։ Սակայն այդ բոլոր նորութիւններից, բոլոր ուշագրաւ երևոյթներից ոչ մէկն այնպէս չը ցնցեց իմ երևակայութիւնը, ոչ մէկն այնպէս խոր չը տպաւորուեց իմ մտքում, որքան իմ ընկերոջ՝ բժ. Արաքսեանի մէջ տեղի ունեցած զարմանալի հոգեկան փոփոխութիւնը։ Դա մի դէպք չէր, այլ մի ամբողջ աշխարհ, մի ամբողջ կեանք, մի անծանօթ՝ քիչ հասկանալի կեանք, որ յանկարծ բացուեց իմ առաջ։ Ես որ կարծում էի շնորհիւ իմ դէպլոմի ամեն բան իմանալ, ամեն ինչ հասկանալ, բացատրել, լուծել, յանկարծ ինձ զգացի աշակերտի,

ամենատգէտ, թոյլ աշակերտի կացութեան մէջ։

Այն օրը, լաւ յիշում եմ, մռայլ թխպոտ անձրևային օր էր։ Բանաստեղծներն իրանց պատկերաւոր նկարագրութիւնների մէջ սիրում են արտաքին բնութեան և մարդկային հոգու պատկերների մէջ տխուր, կամ ուրախ զուգադիպութիւն գտնել։ Սակայն այդ օրուայ մռայլը բոլորովին համապատասխան չէր իմ սրտին. բնութիւնն ասես սգաւոր էր, արտասւում էր մօտալուտ ձմրան երկիւղից, իսկ ես ուրախ էի և սիրտս լի հրճուանքով։ Տէր Աստուած, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, մի ամիս չը կար աւարտել էի, և արդէն լաւ պաշտօն ունենալու բաւական դրական յոյսեր կային։

Եւ այսպէս ես գնում էի ընկերոջս մօտ մտմտալով իմ ապագայի մասին։ Ես ընկերոջս պէս նիւթապաշտ չէի, իմ բոլոր երջանկութիւնը կայանում էր իմ փառասիրութեան մէջ. ես ուզում էի պաշտուել այն զոհերի գնով, որ ես պատրաստ էի յանձն առնել ժողովրդի համար։ Ես ուզում էի, որ իմ մասին ապագայում գրեն, խօսեն, պատմեն, որ ինձ մատով ցոյց տան, երբ անցնելու լինեմ փողոցներով, իսկ այդքանի համար

ես պատրաստ էի լուսամուտից վայր նետուել, գլուխս փշրել։ Մտածելով այս բոլորի մասին, ես երբեմն ընկնում էի էքստազի մէջ, զգում էի, որ ընդունակ եմ ամենախելագար զոհողութիւններ յանձն առնել, և անկեղծ էի ոգևորութեանս րոպէներում, և վէճերի ժամանակ իմ խօսքերը հնչւում էին ուժով, համոզիչ շեշտով։ Ընկերներս ինձ ալտրուիստ էին համարում. այդ ածականը ես ընդունում էի հպարտութեամբ, և հաստատ որոշել էի, կեանքի մէջ էլ փառքով կրել։

Ես երևակայում էի, թէ ինչպէս կը մտնեմ կորած, մոռացուած խրճիթները, մութ նկուղները, թէ ինչպէս կը սրբեմ այնտեղ ցաւերի մէջ տառապողների արցունքները իմ բժշկական հմտութեամբ և իմ նիւթական զոհերով, և երբ դուրս գնալու լինեմ, ինչպէս կը լսեմ յետևիցս աղօթքի և օրհնութեան մրմունջներ. ó, դա մի ամբողջ երանութիւն էր ինձ համար։

Եւ ուրիշ շատ լաւ բաներ էի մտածում ես, երբ հասայ ընկերոջս բնակարանին։ Արդէն պատրաստւում էի ըստ իմ սովորականին «բժ. Արաքսեան» գոռալով ներս

ընկնել, երբ ականջիս հասած մի ձայն ինձ ստիպեց սառած կանգ առնել։

—«Կը-ու-տ, կուտ. կը-ա-շը-ի, կաշի»․ նոյն մանկական ձայները, որ սովորաբար միշտ լսում էին հարևան սենեակից, բայց ինչ որ ինձ ապշեցրեց այսօր, այդ այն էր, որ այս անգամ ձայները գալիս էին ընկերոջս սենեակից, բժիշկ Արաքսեանի սենեակից։

Երևոյթն այնքան տարօրինակ էր, որ ես մի րոպէ կարծեցի, թէ լսողութիւնս ինձ խաբում է, և թէ գուցէ ես սխալմամբ հարևան սենեակի դրան առաջ եմ դուրս եկել։ Բայց անկարելի էր, դրան վրայ շատ պարզ երևում էր իմ հանաքների և հեգնութեան մշտական առարկան, այցկարտը՝ «բժիշկ Արաքսեան». ես ինքս ինձ համոզելու համար ակամայ նոյն-իսկ կարդացի՝ «բժիշկ Արաքսեան»։ Յետոյ մտածեցի, թէ մի գուցէ երեխան կարդում է հարևան սենեակում և ես այստեղ ձայնն եմ լսում, մօտեցայ կամացուկ, ականջս դրի ընկերոջս դրան կողպէքի վրայ, ոչ մի կասկած չը կար. «Կը-ու-շը-տ, կուշտ. կը-ա-շը-ի, կաշի. պարզ և որոշ լսում էր մանկական ձայնը ընկերոջս սենեակից։ Այնուամենայնիւ ես բոլորովին

չը համոզուեցի և դուռը հրեցի ներս մտայ։ Եթէ այդ վայրկեանին բժիշկ Արաքսեանը յանկարծ մի մահակի հարուած իջեցնէր գըլխիս, գուցէ ես այնքան չը զարմանայի, որքան զարմացրեց ինձ տեսածս, և ես սառած մնացի դրանը կպած, առանց առաջանալու, առանց մի բառ ասելու և նայում էի։ Ընկերս նստել էր սեղանի առաջ, իր երկու կողմում տեղ էին բռնել երկու երեխաներ, մի եօթ տարեկան տղայ և մի ինն տարեկան աղջիկ, գանգրահեր գլուխներով։ Երկու փոքրիկ գեղջուկ դէմքեր էին, վախվըխելով, անվստահ նայեցին ինձ և կրկին գլուխները քաշ ձգեցին իրանց փոքրիկ գըրքերի վրայ՝ կրկնելով իրանց անվերջանալի վանկերը. «կա-տու, կա-շի, շա-մամ»։ Բժիշկը լուրջ, հանդիսաւոր դէմք ունէր, նա վերև նայեց, հազիւ ձեռքով ինձ նշան արաւ, որ նստեմ և շարունակեց։

—Շուշիկ, այժմ դու կարդա։

«Կա-տու, կա-շի, շա-մամ» շարունակեց երեխան։ Զը նայելով նրա հրաւէրին, ես նստել չը կարողացայ. ես ապշած էի, ծիծաղել չէի համարձակւում, պատկերի լըրջութիւնն ինձ կաշկանդել էր, հարց տալ, խօսել նոյնպէս սիրտ չէի անում, վախենում

էի խանգարել, իսկ նստելու մասին չէի էլ մտածում, ես ապշել էի, սառած մնացել իմ տեղում, գլխարկը ձեռքիս, աչքերս չռած նայում էի այս պատկերին, նայում էի և էլ չէի մտածում. երազ էր…

Որչափ մնացի ես այսպէս կանգնած չեմ յիշում, միայն երբ բժիշկը վերջացրեց դասը, երեխաներին դուրս ուղարկեց խաղալու, նրանք մօտեցան դրանը գրքերը ձեռներին, այն ժամանակ միայն ես հեռացայ դռնից։

—Զարմացած ես, այնպէս չէ՞, ասաց բժիշկը երեսիս ժպտալով։

—Զարմացա՞ծ… դու այն ասա, խելքդ տեղն է, նախորդ գիշեր քեզ հետ մի բան չի՞ պատահել։

Պատասխանի փոխարէն նա մի պինդ ծիծաղեց, ապա մի առ ժամանակ երկսով էլ լուռ կացանք։

—Լսիր, դարձաւ նա ինձ, երբ ես տեղ բռնեցի նրա դէմ ու դէմ՝ շարունակ հարցական հայեացքս իր դէմքին ուղղած, լսիր ինձ և մի զարմանար։ Երբ այնտեղ, համալսարանական նստարանի վրայ դու և քո խելքի, քո սկզբունքների մարդիկ խօսում էիք ժողովուրդից, նրա ցաւերից, խօսում էիք ալտ-

րուիզմից, ծրագրում էիք ձեր անձնազոհ գործունէութիւնը. գիտակ էիք համարում ձեզ կեանքի համար, պատրաստուած նրա ձախորդութիւնների դէմ գնալու, նրան ընկճելու ձեր բարոյական ուժով, ձեր անձնուիրութեամբ, դուք բոլորդ էլ սուտ էիք խօսում առանց իմանալու, դուք իլլիւզիաների մէջ էիք, դուք անկեղծ էիք բոպէապէս։ Ձեր դիմացկանութեան, ձեր անկեղծութեան, ձեր անձնազոհութեան յարատեւութիւնը կեանքը միայն կարող է ապացուցանել, հաստատել, բայց դուք իրաւունք էիք համարում ձեզ արդէն հասարակական անձնազոհ գործիչներ համարել, իսկ ինձ՝ մատերիալիստ, կարրիերիստ։ Իսկ երբ ես պնդում էի, որ ինձանից դուրս աշխարհը գոյութիւն չունի ինձ համար, որ ես աչքերս կը փակեմ աշխարհի ցաւերի առաջ, կը քաղեմ վարդերը, խոյս տալով փշերից, ես էլ անգիտակցաբար սուտ էի ասում, և մենք բոլորս էլ երեխաներ էինք։ Աշխարհը, կեանքը ո՛չ դուք էիք ճանաչում, ո՛չ ես, այժմ էլ չենք ճանաչում, և դեռ յայտնի չէ, թէ երբ կը ճանաչենք և երբ որ ճանաչենք, ի՞նչ կը շինենք։ Բայց ուզո՞ւմ ես, ես քեզ ցոյց տամ, թէ ո՞վ է ճանաչում աշխարհն, ո՞վ է առանց աղմուկի լու-

ծել ձեր բոլոր թէօրիաները, ո՞վ է մոռացութեան, խաւարի, թշուառութեան, ապերախտութեան մէջ իմ նիւթապաշտութեան հիմքերը քանդել, և առանց աղմուկի գծել մի ճանապարհ, որով հազիւ թէ մենք գնալ համարձակուենք, այն աստիճան փշոտ է նա, այն աստիճան դժուարագնաց է. սամ, ուզում ե՞ս տեսնել այդ մարդուն։

—Ես քեզ չեմ հասկանում։

—Չե՞ս հասկանում. լաւ, ես կ՚աշխատեմ առանց հանելուկների խօսել։ Քանի՞ օր է, որ դու չե՞ս եկել ինձ մօտ։

—Երեք օր է կարծեմ։

—Կարճ ժամանակ է։ Տէր Աստուած, բայց այնքան շատ ապրեցի։ Դու շատ ծաղրեցիր իմ դրանը կպցրած այդ կարտը, լսիր այժմ, թէ նա ինչ թանկագին ծառայութիւն մատուցեց ինձ։

Հարևան սենեակում ապրողը մի գիւղական ուսուցիչ է. այն մարդկանցից մէկը, որոնց մենք սովոր ենք «վարժապետ» կէս հեգնական, կէս արհամարհական բառով կընքել. վերջին օրերս դու նկատեցիր, որ նրա դասախօսելու ձայնն այլ ևս չէր լսւում, նա միայն հազում էր։ Նա հիւանդ է, պառկած, և առանց օգնութեան, առանց ծանօթների,

առանց միջոցի։ Ի՞նչ լաւ, որ նա իմ այցկարտից մի օր իմացել է, որ իր հարևանը՝ ես բժիշկ եմ։

Երկու օր առաջ նստած էի սենեակումս, երբ դուռս կամացուկ բացուեց, և շեմքի վրայ յայտնուեց այն փոքրիկ աղջիկը, որին քիչ առաջ տեսար ինձ մօտ։ Նա մտաւ և կանգ առաւ, գլուխը քաշ ձգեց ու մնաց. Տէր Աստուած, այն ինչ դէմք էր, ո՞վ, ո՞ր հոգեբանը, ո՞ր բանաստեղծը, ո՞ր նկարիչը կարող է նկարագրել մի մանկական դէմք, ուր գծագրուած են անմեղութիւն, երկիւղ, վիշտ, յուսահատութիւն և բոլորը միասին կազմում են մի այնպիսի խառնուրդ, մի այնպիսի պատկեր, որի առաջ մարդ ակամայ գլխարկը պիտի հանի, ասես աստուածութիւնն է ուղարկել իր հրեշտակը քեզ ասելու ինչ որ մոռացուած ճշմարտութիւններ։ Ի՞նչ արժեն այդ պատկերի մօտ քո բոլոր ճառերը, բոլոր պերճախօսութիւնները, բոլոր փաստերը, որոնցով դու աշխատում էիր ջրել իմ նիւթապաշտ թէօրիաները, աշխատում էիր ինձ ալտրուիստ դարձնել։ Չէ, հոգիս, դժբաղդ մանկան արցունքի մի կաթիլը աւելի համոզիչ, աւելի յուզիչ է, քան ամենահանճարեղ, ամենապերճախօս

քարոզները հիմնուած անհերքելի փաստերի վրայ։

Շուշիկը, այսպէս է նրա անունը, նայեց ինձ վախվխելով, երկու կաթիլ արցունք կար կախած սիրուն, անմեղ աչքերից։

— Հայրիկս հիւանդ է, ասաց նա և հեկեկալով ծածկեց երեսը։

Մի սուր բան անցաւ մարմնովս, ես դողացի, հասկանո՞ւմ ես, ես դողացի այդ խեղճ, այդ թոյլ, դողդոջուն արարածի առաջ։ Ինչո՞ւ դողացի, ես խոմ պինդ ներվեր ունեմ. դու այդ գիտես, ես մինչև այժմ էլ չեմ կարողանում հասկանալ, թէ այն ինչ սարսուռ էր, որ անցաւ իմ մարմնով։ Ես լուռ վեր կացայ մօտեցայ երեխային, նա վախենալով էր նայում ինձ, ես շոյեցի գլուխը, չը գիտեմ ինչ ասացի, կարծեմ բան էլ ասացի, նա սրտապնդուեց, վերև նայեց. ես համոզուած եմ, որ արտասուող հրեշտակը այդպէս կը նայէր իր արցունքի միջից, ես չը կարողացայ համբերել, բռնեցի այն սիրուն գանգրահեր գլուխը, համբուրեցի և կրծքիս սեղմեցի պինդ, պինդ. օ՜, ես դեռ երբէք, երբէք այնպէս չէի համբուրել մէկին։ Ես առաջին անգամ կեանքում համբուրեցի

աշխարհի վիշտը, մերձաւորի ցաւը սրբագան, այդ անմեղ դէմքի վրայ։

Քիչ յետոյ ես հիւանդի մօտ էի։

Նա՛ էր ուղարկել ինձ մօտ երեխային։ Հիւանդանալով անյուսութեան և անտէրութեան մէջ, նա մնում է մի առժամանակ առանց խնամքի. ի վերջոյ որոշում է դիմել անծանօթ բժշկի օգնութեանը։

Ահա երեք օր է, որ ես անց եմ կացնում նրա մօտ ամբողջ ժամեր։ Գաւառից, գիւղերից է գալիս, էլ պաշտօն չունի, էլ դպրոց չը կայ, եկել է պաշտօն գտնելու համար։

Որքան բան ասաց ինձ. ինչե՛ր նկարագրեց, որքա՜ն է ապրել այդ մարդը։ Խօսում է նա... ձեզ պէս չի խօսում, ընկեր, նա չի երևակայում, նա չի գեղեցկացնում, նա միայն ասում է մերկ, կոպիտ ճշմարտութիւնը, ցաւեր է պատմում, որոնց առաջ ոչինչ են ձեր բոլոր ճառամաքանութիւնները։ Չէ, մենք ոչինչ չը գիտենք։

Կուրծքն է հիւանդ խեղճի. ես արեցի, ինչ որ կարող էի, նկատելով որ նա սաստիկ ցաւում է երեխաներին՝ դաս տալ չը կարողանալու համար, յանձն առայ պարապել, մինչև որ ինքը կը վեր կենայ, ասացի

նրան, բայց հազիւ թէ... իմ առաջարկութիւնը նրան անչափ ուրախացրեց։

III.

Մի ողորմելի սենեակ էր, ուր ներս տարաւ ինձ ընկերս. մի անկողին, երեք ողբալի աթոռները և մի սեղան. ահա բոլոր կարասին։

Մի մաշուած դէմք հազիւ ծրագրւում էր բարձի սպիտակութեան վրայ. և վերմակի տակ մի նիհար, ոսկրացած մարմին։ Խոր ընկած աչքերը հազիւ էին նշմարւում, իսկ նիհար այտերը մի անախորժ, հիւանդոտ կարմրութիւն ունէին։ Թուխ, երկար և սև մազերը անհոգ ոլորներով բոլորել էին կընճռոտ և դուրս ցցած ճակատը։ Անխնամ ձգած միրուքը խճճուել և ծածկել էր շրթունքներն ու բերանը և ամբողջ դէմքը տանջանքի, յոգնածութեան կնիք ունէր վրան։ Շատ ապրած դէմք էր այն, տարիներն անհետ չէին անցել վրայով։ Մեզ տեսնելով նա ժպտաց մի տեսակ թախծալի մեղմութեամբ, և այդ ժպտով մի առանձին խորհրդաւորութիւն տուեց այդ թուխ դէմքին։

—Ընկերս է, նոյնպէս բժիշկ, ասաց

բժիշկ Արաքսեան ներկայացնելով ինձ։

—Շատ և շատ ուրախ եմ թէ ձեզ և թէ նրա համար, ասաց նա անկողնի տակից՝ դուրս հանելով նիհար, ոսկրոտ ձեռքը և մեկնելով մեզ։ Երկու բժիշկ, մի հիւանդ, շարունակեց նա ժպտալով նոյն թախծալի ժպտով, երկու խելքը մէկից լաւ է, այնպէս չէ՞. գուցէ կարողանաք կեանք տալ այս անկենդան մարմնին։

—Իզուր էք գանգատւում, ասաց ընկերս, այսօր դուք շատ լաւ էք երևում, դէմքերդ շատ անախորժ արտայայտութիւն ունի։

—Իրաւունք ունէք. ճշմարիտ, որ այսօր լաւ եմ զգում ինձ. միայն այս հազը... և ծանօթ, անախորժ հազը կրկին ընդհատեց նրա խօսքը. բայց այդ էլ ոչինչ, շարունակեց նա, քանի՞ տարի է, որ հազում եմ։ Ես այժմ այնքան լաւ եմ, որ կը նստեմ և մի քիչ կը խօսեմ, խօմ գիտէք, որ ուսուցիչները շատախօս կը լինեն, այդ նրանց արուեստն է, որ ի վերջոյ բնաւորութիւն է դառնում, և տարօրինակ էլ չէ, երբ մարդ խօսում է անընդհատ տասն և եօթ տարի։

—Միթէ այդքան ժամանակ դուք միշտ ուսուցիչ էք եղած։

—Այո՛, միշտ, շարունակ, մի ամբողջ կեանք էր, այն էլ անցաւ, և չը գիտեմ մի բան թողեց յետևից, թէ ոչ. ճ, կեանքը շատ է հզօր, և մենք չափազանց թոյլ, չափազանց քիչ, պէտք էր մի քանի անգամ աւելի ապրել... մի քանի անգամ աւելի տանջուել դրական հետևանքների հասնելու համար։ Է՜հ, վերջապէս, թողնենք այդ, ինձ հետաքրքրողն այժմ այդ երկու երեխաներն են, որոնց ես այդպէս չէի կամենայ թողնել աշխարհում. Ո՛վ գիտէ, թէ ինչ կարող է պատահել ինձ հետ, իսկ նրանք մայր էլ չունեն։

—Դեղն ընդունեցի՞ք, հարցրեց Արաքսեանը։

—Ո՛չ, տուող չեղաւ։ Շուշիկը փորձեց, չը կարողացաւ. Ես էլ, էհ, էլ ոյժ չի մնացել։

Արաքսեանը գլուխը օրօրեց, մօտեցաւ, վերցրեց դեղի սրուակը, կաթեցրեց գդալի մէջ, և քնքշութեամբ բարձրացնելով հիւանդի գլուխը, դեղը խմացրեց։

Հազը վերսկսուեց, հիւանդը թուլացած՝ ընկաւ բարձի վրայ, մենք մնացինք անխօս, և նայում էինք։ Ես խօսք չէի գտնում, իսկ ընկերս չը գիտեմ ինչու էր լռում։ Հի-

ւանդը կամաց կամաց աչքերը փակեց, քնեց։

Մենք զգուշութեամբ դուրս եկանք, գնացինք ընկերոջս սենեակը, նստեցինք և շարունակում էինք լռել. խօսել չէր լինում. երկսիս մտքերն էլ փոխադարձաբար իրար համար շատ էին պարզ, որպէս զի պէտք լինէր արտայայտել։

Լռութիւնն ընդհատեց Արաքսեանը.

—Կը մեռնի, ասաց նա աչքերը մի կէտի յառած։

—Միթէ։

—Այո՛, կը մեռնի, և երկու որբերը...

—Անտէր, անտիրական կը մնան։

Ընկերս նայեց ինձ մի հայեացքով, որ ես լաւ հասկանալ չը կարողացայ, բայց որը լաւ չէր ինձ համար, ես կուզէի, որ նա այդպէս չը նայէր ինձ։ Նա այսօր խիստ տարօրինակ էր. իմ տրամադրութիւնը բոլորովին այլ էր, երբ նրա մօտ եկայ, այժմ չը գիտեմ ինչու նրա առաջ ես ինքս ինձ լաւ չէի զգում, ես որ այնքան տարիներ Նրան խրատում էի երեխայի պէս. Արաքսեանն էլ չէր խօսում։ Լռութիւնն ինձ խեղդում էր. ուստի վերկացայ, գլխարկս առայ և դուրս գնացի։

Այդ ամբողջ օրը ես թափառում էի, և չը գիտեմ ինչի՞ մասին էի մտածում, բայց գիտեմ, որ բարձերի սպիտակութեան վրայ ծրագրուող այն գունատ պատկերը և ընկերոջս մռայլ դէմքն ինձ հետևում էին քայլ առ քայլ։ Գիշերն էլ լաւ չը քնեցի և միւս օրը վաղ առաւօտից կրկին հիւրանոց գնացի։

Պատշգամբի վրայ կանգնած էր Արաքսեանը, գլուխը յենած սեանը և մռայլ հայեացքը դէպի հեռուն ուղղած։ Դեռ երբէք ես նրան այդքան տխուր չէի տեսել։ Ոտնաձայնս լսելով՝ նա դարձաւ դէպի ինձ և առանց դէմքի արտայայտութիւնը փոխելու, նախորդ օրուայ իշխողի եղանակով ասաց.

—Աւելի վաղ կարող էիր գալ։

—Մեռա՞ւ...

Պատասխանի փոխարէն նա բռնեց ձեռքիցս և ներս տարաւ հիւանդի սենեակը։ Ուսուցիչը հոգեվարքի մէջ էր. երկու երեխաները նրա այս ու այն կողմում կծկուած՝ հեկեկում էին։

Արաքսեանը մօտեցաւ նրանց հանգստացնելու. հիւանդը բոլբոքուած աչքերը դէպի նա դարձրեց, ապա նայեց արտասուող

երեխաներին երկա՜ր, երկա՜ր և երկու կաթիլ արտասուք կախուեցին նրա կոպերից։ Յետոյ ծածկոյթի տակից հանեց դողդոջուն ձեռքը և մեկնեց դէպի փոքրիկները։ Նա էլ չէր խօսում և մահուան համր լեզուով նրանց մեզ էր յանձնում։ Արաքսեանը գրկեց երեխաներին, համբուրեց, հիւանդը տեսաւ այդ, հանգստացաւ կարծես, փորձեց ժպտալ ի նշան գոհունակութեան, բայց գունատ շրթունքները միայն ծամուեցին, աչքերը փակուեցին և անզօր, անկատար ժպիտը յաւիտեան սառեց նրա դէմքին։

Նա մեռաւ։

—Հայրի՜կ, հայրի՜կ, մրմնում էին որբերը և Արաքսեանը հեկեկում էր նրանց հետ, իսկ ես տեսարանի վեհութեան առաջ քարացած՝ կանգնել էի ինչ անելս չ՚իմանալով. յիշում եմ սակայն, որ կ՚ուզէի մօտենալ, գրկել և համբուրել Արաքսեանին բացականչելով.

—Օ՜, ազնիւ հոգի, ինչ դժուար է եղել ճանաչել մարդկային սիրտը։ Բայց դրա փոխարէն ես էլ դառն, դառն արտասուեցի։

Մի օր յետոյ չորս հոգի էինք հետևում ուսուցչի դագաղին՝ ես ու ընկերս երկու որբերի ձեռքից բռնած։ Թաղումից վերադար-

ձին Արաքսեանը որբերին իր սենեակում տեղաւորեց և երբ մի քանի օր յետոյ պաշտօն ստանալով ես եկայ նրան վերջին մնաս բարին ասելու, դրսից վերստին լսեցի երեխաների ձայնը «Բադ, նուշ, շուն...»

—Գնաս բարի, ասաց նա ինձ և շարունակեց դասը. Ծո՛ւշիկ, դու կարդա՛։

—Իսկ դո՞ւ, դո՞ւ ի՞նչ ես անում, ո՞ւր ես ուզում գնալ։

—Ե՞ս... ես չը գիտեմ, ես էլ պաշտօն չեմ փնտռում, գնում եմ, երևի մի կտոր հացը պակաս չի լինի, աշխարհը լայն է, ցաւերն անթիւ... Գնա՛ս բարի...

ԼԵՌՆԵՐՈՒՄ

Երկու ընկեր էինք և գնում էինք սարերով, ձորերով. մի և նոյն հոգսն էր մեր երկուսիս էլ միաժամանակ մեր յարկերի տակից դուրս շպրտել։ Այդ վնաս չունէր, գոնէ ճանապարհն ապահով լինէր։

—Ախ մեր լեռները, հեռուից նայում ես կապոյտ, ալիքաւոր բարձրութիւններ, խորհրդաւոր ու սիրուն, որ կարծես թարթում են ու գրաւում քեզ իրանց ծոցը. մօտենում ես, թաղւում ես ձորերում, կիրճերում, և գարգանդն է պատում քեզ։ Լուռ սարսափը գալարւում է շուրջդ, պատում է կուրծքդ, ու խեղդում, խեղդում։ Ասում են լեռներում մարդ հեշտ ու ազատ է շնչում։ Այստեղ կարծես օդ չը կայ։

—Օդ կայ, թէ չը կայ, այդ մի և նոյն է, պէտք է անցնենք, լաւ է լուռ ագ և

ձիուն զօր տուր շուտ անցնենք, դատողութեան ժամանակ չէ։

Ես լուռ կացայ. ընկերս խրատունք ունէր, բայց ձիս այն օրին չէր, որ զօր տալով բան դուրս գար. դեռ նրա բանը լաւ էր, մի կարճ հոնի փայտ, ծանր ու կոկ ձեռքին էր, անդադար զարկում էր իր ձիու կողերին և առաջ ընկնում։ Իմը՝ մի ողորմելի, վատ կենդանի, ասպանդակների պատճառած ցաւը տանում էր, բայց ընթացքը չէր փոխում, ես չարչարում էի նրան, նա չարչարում էր ինձ։ Եւ գնում էինք, ճար չը կար։ Մեր մի կողմում բարձրանում էր Զարսալայ սարը և միւս կողմում՝ Թաքեալթուն, երկսի ոտների տակ բլուրներ ու ձորեր, մութ կիրճեր ու ժայռեր, մացառներ ու աղբիւրներ, և մեր ճանապարհը՝ որ գալարւում էր նրանց միջից, ինչպէս փախչող օձ, մերթ կորչում, մերթ մեզ հետ միասին բացւում էր արևի առաջ։

Կէս օր էր և դեռ մենք որքան պիտի գնայինք վտանգաւոր տեղերից ազատուելու համար։

—Անիծուած Բարդողեան շղթայ, տեսնես ուրիշ աշխարհում էլ այսպիսի սարեր կա՞ն։

—Սիրուն սարեր են։

—Սիրուն են, թո՛ղ հիմայ մի խումբ գլուխ կտրողներ առաջներս դուրս գան, նոր կ՚իմանաս սիրուն են՝ թէ չէ։

—Էլի նրանք սիրուն կը մնան, սարն ի՞նչ անի, որ ես ու դու հիմայ այստեղ իբար մորթուենք։

Ես լռեցի. նա դարձեալ խրատունք ունէր, անտառն ի՞նչ անի, որ այնտեղ գազաններ են բոյն դնում։ Հասանք այնտեղ, ուր լեռնաշղթան ասես ադամորդուն անցք տալու համար հնազանդ ձիու պէս մէջքը ծռել է և թամբ ձևացրել։

—Տեսնո՞ւմ ես այն սև, մեծ ժայռը մեզանից դէպի ձախ, ասաց ընկերս.

—Տեսնում եմ։

—Անունը գիտե՞ս։

—Ոչ։

—Նա կոչւում է Կոկորդ-կտրող։

—Ինչո՞ւ։

—Որովհետև շատ ինձ ու քեզ նման ողորմելիներ գլուխները թողել են այնտեղ։

—Անիծուած ժայռ։

—Ժայռը մեղաւոր չէ, մեզ էլ կարող էին սպանել, բայց այդ ժայռը կը մնայ օրհնուած։

Ընկերս դարձեալ խրատունք ունէր, ես գլուխս քաշ ձգեցի, մի պահ լուռ կացայ, մտածմունքի մէջ ընկղմած։

—Որ այդպէս է, ինչո՞ւ այստեղից եկանք, չէ՞ որ դու ճանաչում ես այս լեռների բոլոր անկիւնները։

—Ուրիշ ճանապարհ չը կայ, բայց ապահով եղիր, ցերեկով այս տեղերում վըտանգը միշտ մեծ չէ. դէ, ցաւի տէր ենք, պիտի անցնենք. մարդ էլ պատահի մեր ինչը տանի։

—Զէնք էլ չունինք։

Նա յետ նայեց մեղմ ժպտալով.

—Զէնքով ի՞նչ կ'անէիր։

—Ի՞նչ կ'անէի, ես ի՞նչ գիտեմ, դէ վտանգաւոր սարերում անզէն լաւ չէ, գոնէ մի խէնջար։

—Տանը խէնջար ունէի՞ր։

—Չէ։

—Երբ և իցէ ունեցե՞լ ես։

—Չէ, բայց կարելի էր ճարել։

—Ճարած խէնջարով բան չի դուրս գայ. ձիուդ զօր տուր, դու էլի յետ մնացիր։

Ես սկսում էի բարկանալ. ձիս չէր գնում, չորս կողմերս սարսափելի, իսկ նա քշում էր առաջ այնպիսի խաղաղութեամբ,

որ կարծես Կոկորդ-կորող ժայռն առաջներս չը լինէր։ Ինձ զայրացնում էին մանաւանդ նրա հանդարտ, անխռով պատասխանները։ Մի՞թէ նա էլ չի վախենում ինձ պէս, էլ ի՞նչ կարիք կայ ինձ մօտ քաջ ձևանալ, մտածում էի ես՝ նայելով նրա օրօրուող թիկունքին, նրա կարճ մահակին, որով անդադար խթում էր ձիու կողերը։ Նրա ձին էլ մի բան չէր, բայց էլի իմից լաւ էր։ Մտքովս մի բան անցաւ, գնամ ասեմ, դէ որ դու այդպէս քաջ ես, արի ձիերս փոխենք, դու յետևից գնա, ես առաջից. ես յետևից վախենում եմ։

—Լսի՛ր.

—Էլի ի՞նչ կայ, նա յետ նայեց... տեսայ այդ պարզ, խաղաղ դէմքը և ամաչեցի մտածածս յայտնել։

—Կեցի՛ր ես համնեմ քեզ, գուցէ ձիս այդպէս լաւ գնա քոնի հետ կողք-կողքի։

Նա կանգ առաւ։ Ես հասայ։ Վրաս նայեց փորձող հայեացքով՝

—Դու շա՞տ ես վախենում։

—Ի՞նչ կայ չը վախենալու. այս ժայռը, այս սարերը։

—Դու հաւատո՞ւմ ես բաղդին։

—Ի հարկէ։

—Եթէ հաւատում ես, էլ ինչո՞ւ ես վախենում, ինչ գրուած է, այն էլ կը կատարուի։

—Իրաւունք ունիս, բայց վախենում եմ։

Ես լռեցի և սկսեցի մտածել նրա ասածի մասին. ճիշտ որ՝ թէ մարդ իր ճակատագրից ազատուել չի կարող, ինչո՞ւ եմ վախենում։

—Դէ դու ասա, ինչո՞ւ եմ վախենում։

Հերթը նրան էր մտածելու. նա մի քանի րոպէ լուռ կացաւ, ձեռքը ճակատը տարաւ՝ շփեց, գլխարկը ուղղեց, ապա անհանգիստ կերպով ձիուն խփեց փայտով, ոտքերով շարժեց, որ շուտ գնա. երևի հարցս նրա համար էլ ծանր էր։

—Ինչո՞ւ ես վախենում, ասաց նա դանդաղութեամբ, երևի նրա համար, որ չես իմանում արդեօ՞ք ճակատիդ գրուա՞ծն է կատարւում, թէ՞ չը գրուածը։

—Ես չեմ հասկանում, դու միշտ...

Վը՜զզ...

Մի գնդակ էր, որ Կոկորդ-կտրող սև ժայռի կողմից եկաւ ու անցաւ մեր գլխի վրայով։

Վը՜զզզ անցաւ երկրորդը։

—Հիմա հասկացա՞ր։

Ես էլ սիրտ չունէի նրան հասկանալու. սարսափած նայեցի դէպի ժայռի կողմը և տեսայ, թէ ինչպէս վեր ցցուեց նախ մի մարդու պատկեր, ապա երկրորդը. քիւրդ աւազակներ էին։

—Կանգ առէք, հրամայեցին նրանք մի զոյգ հրացանի փողեր մեզ ուղղած։

Մենք կանգ առանք. ճար չը կար։

—Ցած իջէք ձիերից, լսուեց երկրորդ հրամանը։

Ընկերս մի րոպէ մնաց մտազբաղ.

—Տեսնես քանի՞ հոգի են, ասաց ինձ կամացուկ։

—Երկու են, ես լաւ տեսնում եմ. դըրանից մեզ ի՞նչ օգուտ. մի հոգի էլ լինէր այդ հրացանով մեզ...

—Դու էլի սկսեցիր։

—Ցած իջէք, թէ չէ... լսուեց նոյն հրամանն աւելի խիստ կերպով։ Մենք ցած իջանք։

—Այժմ թողէք ձիերը և հեռացէք դէպի մի կողմ։

—Ձիդ թող և հեռացիր, ասաց ինձ ընկերս կամացուկ։

—Իսկ դո՞ւ...

—Թո՛ղ ասում եմ։

Նա ինձ երբէք այդպէս խիստ չէր հրամայել․ նրա միշտ բարի, մեղմ աչքերում ես տեսայ մի անսիրտ վճռականութիւն, մի յամառ շեշտ, թւում էր, որ եթէ էլի մի բառ ասեմ, ինձ կը խեղդի տեղն ու տեղը․ ես հնազանդուեցի։

Ընկերս իր ձիու սանձից բռնած մի քանի քայլ առաջացաւ դէպի աւազակները․

—Նայեցէք, ասաց, ես իսպառ անզէն եմ․ այս ձին կատաղի է, եթէ թողնեմ կը փախչի, ինչպէս մրրիկ և ոչ ձեզ բաժին կը լինի, ոչ էլ մեզ՝ ափսոս է․ ցած եկէք ու տարէք․ մեզ էլ թողէք մեր ճանապարհը ոտքով շարունակենք։ Խեղճ մարդիկ ենք, ինչպէս տեսնում էք, մեր ցաւի համար չօլերն ընկած,

Ես նայում էի և չէի հասկանում, թէ ինչ է միտքը, քանի որ լաւ գիտէի, որ այդ ձիու կողերը մահակով էլ ջարդեմ, դարձեալ փախչողը չէ, էլ ինչո՞ւ չի ձգում, որ մենք թողնենք ու գլուխ առնենք կորչենք շուտով։

Աւազակները մի երկու րոպէ իրար հետ խորհրդակցեցին և ապա հրացանները միշտ մեզ վրայ սպառնալի կերպով բռնած, ցած իջան ժայռից և առաջացան դէպի ընկերս,

որ անխռով կանգնած՝ սպասում էր նրանց։

Ահա նրանք բոլորովին մօտեցան, աներկիւղ ու վստահօրէն։

Ընկերս շարունակում էր կանգնել անշարժ ու անխռով։

Ահա նրանցից առաջինը ձեռքը մեկնեց ընկերոջս ձեռքից ձիու սանձը բռնելու։ Ես նայում էի սրտատրոփ․ մէկ էլ յանկարծ ընկերս ազատ ձեռքը բարձրացրեց և հոնի փայտով արագութեամբ մի ծանր հարուած իջեցրեց քիւրդի մեկնուած ձեռքի դաստակին ու փշուր-փշուր արեց․ սա ցաւից մռնչաց, կծկուեց ու թեք բռնած գետին ընկաւ․ համարեա մի և նոյն վայրկեանին փայտի երկրորդ հարուածն իջաւ միւս քրդի գագաթին, որ նոյնպէս գլորուեց գետին հրացանը ձեռքից թողնելով։

—Վազիր, ճչաց ընկերս։ Ես մօտեցայ։ Մի վայրկեան յետոյ երկու աւազակները զինաթափ ու կապոտուած, մեր ոտների առաջն էին։ Ես աչքերիս չէի հաւատում։

—Մի քիչ ջուր թափիր այս ուշաթափուած քրդի երեսին, թող ուշքի գայ։

Հրամանը կատարեցի, ինչպէս ստրուկ։ Թակարդում բռնուած գազանների պէս այս երկու քրդերն ընկած էին կանաչի վրայ և

տղուշ-տղուշ նայում էին մեզ։ Նրանց հետ պատահած անակնկալը վեր էր բոլոր երևակայութիւնից, և շշմեցրել էր այդ վայրենի գլուխները։

Ես նրանցից պակաս շփոթուած չէի, նայում էի, և չէի հասկանում, թէ ինչ գործ ունէին այդ երկու գազանները մեր ճանապարհի վրայ, այն աստիճան արագ կատարուեց այդ բոլորը։

—Ջո՜ւր, մրմնջաց ջարդուած բազկի տէրը, առանց մեզ նայելու, կարծես ուրիշից էր սպասում մի քանի կաթիլ զովացուցիչ հեղուկ։

—Ջուր տուր սրան, ասաց ընկերս։ Ես վազեցի մօտակայ աղբիւրը, գլխարկիս մէջ մի փոքր ջուր ածեցի և բերի։ Պապակած քիւրդը խմեց, բայց շարունակում էր տնքալ ցաւից։

—Թևդ շա՞տ է ցաւում, հարցրեց ընկերս։

Վիրաւոր քիւրդը նայեց նրա աչքերի մէջ, մի բան մռմռաց և գլուխը քաշ ձգեց հարցը թողնելով անպատասխան։

—Ինչո՞ւ չես պատասխանում։

—Քեզ ի՞նչ, թէ ցաւում է։

—Ինձ ինչ թէ ցաւում է... ուզում էի կապել։

Քիւրդը հեգնաբար նայեց նրան, չէր հաւատում թշնամու խօսքերի անկեղծութեանը։

—Կապիր սրա թևը, դարձաւ ինձ ընկերս։ Ես մօտեցայ, պատռեցի քրդի շորերի մի մասը, վիրակապ շինեցի և պատեցի փշրուած բազուկը։ Միւս ընկերը շարունակում էր նայել այդ բոլոր գործողութեանը կապուած գազանի վայրենի աչքերով և կարծես ոչինչ չէր հասկանում։

—Ինչո՞ւ չէք սպանում մեզ, ասաց նա յանկարծ։

Ընկերս ժպտաց.

—Դուք մեր տեղը լինէիք կը սպանէ՞իք։

—Անպատճառ.

—Ինչո՞ւ էք սպանում անմեղներին։

—Ես ի՞նչ գիտեմ։

—Մենք ձեզ չենք սպանի։

—Հապա ի՞նչ կ'անէք։

—Մի բան կ'անենք։ Վեր կաց, սիրելիս, հեծնենք ձիերը, արևն արդէն թեքուեց, իսկ մենք շատ ճանապարհ ունենք։

—Իսկ սրա՞նք.

Պատասխանի փոխարէն ընկերս արձակեց անզէն գերիներին։

—Գնացէ՛ք, ասաց նա։

Թիւրքերը վերկացան, իրար բռնած օրօրուելով գնացին նորէն դէպի Կոկորդկարող սարը, իսկ մենք վերցրինք նրանց զէնքերը, թռանք ձիերի մէջքին և քշեցինք, անցանք վտանգաւոր վայրերից։

—Ասա՛ այժմ, սիրելիս, գրուա՞ծը կատարուեց. թէ՞ չը գրուածը:

—Չը գիտեմ, պատասխանեցի, բայց ընկերս դարձաւ իմ աչքում մի հսկայ։

Դարձեալ գնում էինք, նա առաջից՝ ես յետևից, դարձեալ նրա յաղթ թիկունքն օրօրւում էր և հաստ մահակն անդադար շարժւում ձիու վրայ, բայց ես էլ չէի վախենում. Նա կարծես իր ձեռքում տանում էր իմ բաղդը, և այդ բաղդին էլ ոչ մի վտանգ չէր սպառնում։ Նա երկար ժամանակ լուռ էր, ես էլ չէի համարձակւում խօսել։

—Էլի վախենո՞ւմ ես։

Ես լուռ էի։

—Այսպէս է, սիրելիս, կեանքի մեծ ճանապարհին, կեանքի մեծ կռւի մէջ, թէ խորտակւում ենք, ասում ենք գրուածը կա-

տարուեց, թէ յաղթող ենք հանդիսանում, վտանգից ազատուելով, ասում ենք՝ ճակատներիս գրուած չէր։ Ինձ համար ճակատը լերկ ոսկր է, ուր ոչինչ գրուած չէ և չի կարող լինել։

1902.

ՕՀԱՆԻ ՎԻՇՏԸ

I

Այնքան լաւ էին միասին այն երկու ծերերը՝ Օհանն ու իր կինը։ Եւ տարէց-տարի նրանք աւելի էին նմանւում իրար բնաւորութեամբ, ձայնով, խօսելու եղանակով, շարժուածքով, գլուխ բռնելու, կորանալու, նստելու ձեւով։ Վերջիվերջոյ տարբերութիւնը մնաց միայն այն, որ մէկը ձիւնի պէս ճերմակ մազեր ու միրուք ունէր, իսկ միւսը՝ լաչակ ու կանացի շորեր։ Ձագերը վաղուց հեռէ թռցրած ծեր թռչունների պէս նրանք միշտ միասին էին, ամեն տեղ անբաժան։ Երկուսն էլ կնճռոտ՝ բայց բարի դէմքով, հեզ, մարած աչքերով, երկուսն էլ կարճահասակ ու կորացած, միշտ հողագոյն զգեստներով, ժպտադէմ. քաղցր դէպի երեխաները, խիստ, պահանջող, հրամայող

դէպի հասակաւորները։ Որդիների ու բազմաթիւ թոռների տէր էին, տունը լի էր, շէն ու կենդանի, բայց կարծես աշխարհում մենակ էին այն երկու ծերերը, բոլորովին մենակ. իրանց կեանքի վերջալուսին սղմւում էին կողք-կողքի՝ իրար ջերմացնելու, սփոփելու համար որբ, անտէր մնացած երեխաների պէս։

Քանի տարի էր, որ երկու ծերերը օրուայ նոյն ժամին դուրս էին գալիս միևնոյն դռնից, միասին ականջ դնում եկեղեցու զանգի ձայնին, միաժամանակ խաչակընքում երեսները, մրմնջում նոյն աղօթքը և նոյն դանդաղ, երերուն ընթացքով շարժւում բակից դուրս՝ դէպի Աստծու տունը։ Շատ վաղուց էր, որ ոչինչ չէր խանգարել նրանց ծեր օրերի այդ գերագոյն մխիթարութիւնը, այդ ամենօրեայ աղօթքը, որի մէջ ամփոփւում էր կարծես նրանց էութեան բոլոր մնացորդը, խուսափող կեանքերի յետին փայլը։ Թւում էր, թէ հիւանդութիւնն անգամ խնայում է նրանց միայն այն պատճառով, որ ժամից, աղօթքից յետ չը մնան։

Եկեղեցուց նրանք յետ էին գալիս միևնոյն հանդիսաւոր դանդաղութեամբ և սղմո-

ռաբար կատակելով ծերունի քահանայի հետ։ Խօսակցութեան ու կատակների անսպառ նիւթը միշտ մահն էր ու գերեզմանը։

—Երկսիդ միասին պէտք է թաղեմ, հա՛լխուորներ, ասում էր քահանան։

—Հա՛, տէրտէր ջան, միասին, միասի՛ն, շտապում էր համաձայնել պառաւը։

—Ի՞նչ ես խօսում, ա՛յ կնիկ, կատակով բողոքում էր Օհանը. մեռանք ապրելով ու մի տէրտէրի ձեռնադրութիւն չը տեսանք, կաց մի սրանից ազատուենք, մեռնելու ժամանակ սիշտ կ'ունենանք։

Քահանան ծիծաղում էր, ծերերը երեխայի պէս զուարճանում էին այս սրախօսութեամբ։

—Օհա՛ն ամի, աւելացնում էր քահանան, տեսնում եմ՝ երեսդ պինդ է, վայ թէ դու էդ պառաւին էլ թաղես։

—Չէ, տէրտէր ջան. էդ մի՛ ասա, բողոքում էր Օհանը լուրջ կերպով, թող Աստուած իմ պառաւին պահի ինձ համար. առանց նրան հալս հալ չի լինի։

Եւ այդ ճանապարհը ժամից մինչև տուն... գալարուն ու անվերջ, սղմուած ցածրիկ խրճիթների մռայլ պատերի մէջ՝ ասես շինուած էր նրա համար, որ ծեր ժա-

մաւորները աշխարհի և երկնքի իրերի մասին խորհելու ժամանակ ունենան։ Երկու ծերերը չէին ձանձրանում այդ ճանապարհից, փայտերի վրայ յենուած ու կորացած՝ նրանք կողք-կողքի քայլում էին աջ ու ձախ բարևներ բաշխելով դռների առաջ կանգնած գիւղացիներին. երեկոյեան կիսախաւարի մէջ նրանց փոքրիկ ստուերները երերւում էին մեղմիւ. վերջալոյսի յետին շողերը գունատ ու յուսահատ՝ քաշւում էին կտուրների և դէզերի վրայից ու մեռնում լեռների յետեւում։ Եւ այնքան յուզիչ, այնքան խորհրդաւոր զուգադիպութիւն կար հեռաւոր հորիզոններում մեռնող ճառագայթների և գիւղի գորշ, մթագնած փողոցներում հանդարտօրէն երերուող այս ծերերի մէջ, որոնք կամաց-կամաց լուծւում, խառնւում էին երեկոյեան մշուշի հետ։ Եւ այն մարող շողերը և այս ծերերը ասես զոյգ-զոյգ իրար բռնած՝ իրար վրայ յենուած քայլում էին դէպի գերեզման մի յուզարկաւոր հանդիսաւորութեամբ, որ լուռ, բայց խորունկ ցաւի պատկերն ունէր։

Ուրիշների հետ գերեզմանի և մահուան մասին նրանք սիրում էին խօսել միշտ կատակելով, միշտ ծիծաղելով։ Ամեն մէկի հա-

մար գերեզմանը հանգստութեան, անվրդով խաղաղութեան յաւիտենական վայրն էր, բայց դրա հետ միասին նրանց յետին ցանկութիւնն էր կամ մի օրում, կամ գոնէ մի շաբթում մեռնել, որ մէկը միւսից յետոյ աշխարհում մենակութեան, որբութեան դառնութիւնը երկար չը ճաշակի։

Ամեն երեկոյ ժամից յետոյ, երբ ընթրիքի սփռոցի շուրջը բոլորում էր ամբողջ ընտանիքը, ծեր Օհանը մի բաժակ գինի էր ձեռք առնում, և սկսում էին գերեզմանի ու մահուան մասին անվերջ բարեմաղթութիւնները ընդհանուրի լռութեան մէջ։

—Կնի՛կ, անպակաս լինիս. էս աղերքին թո՛ղ Աստուած պահի իրանց համար, բայց դու ինձ համար՝ ես քեզ համար, ա՛յ պառաւ, ասում էր ծերունին ժպտալով։

—Մա՛րդ, բարերար Աստծուց կը խնդրեմ, որ քո բարի, քո արդար ձեռքով երկու բուռ հող ցցես երեսիս ու դինջանամ, ուրիշ բան չեմ ուզում. ցամաք աչքով գերեզման մտնեմ, դու էլ գլխիս վերև կանգնած լինիս։

—Մի՛ ասա, ա՛յ կնիկ, ցամաք աչքը թո՛ղ Աստուած տայ, բայց առանց քեզ իմ բերնի համն էլ համ չի լինի։ Թո՛ղ Աստուած

երկսիս հոգին էլ մի հետ առնի, առանց կնիկ մարդն ինչի՞ է հարկաւոր։

Հարսները կամացուկ փսփսում էին, որդիները ժպտում ծերերի այս փոխադարձ գուրգուրանքների վրայ, և լաւ էր այս բոլորը։

Վերջանում էր ընթրիքը, ծերերը միառժամանակ նստում էին իրար մօտ, նայում էին վազվզող, աղմկող թոռներին և երբ առաջին հաւը թառն էր բարձրանում, նրանք կամացուկ քաշւում էին իրանց անկիւնը և տնքտնքալով, յօրանջելով ու աղօթելով անկողին մտնում միասին։

Ձմեռները, երբ խրճիթում ցուրտ էր, դուռն ու երդիքը պատած եղեամի թանձր շերտով, ծերերի անկողինը ձգւում էր թոնրին բոլորովին մօտիկ։ Այնուամենայնիւ իրանց բնում ցրտից ճթճթացող թռչունների պէս, նրանք կծկւում էին, իրար կպչում, վշվշում։

—Կնի՛կ, մէջքիս կպիր, արանք մի՛ թող, ա՛յ պառաւ, քամի խաղաց, փէտացայ, շուտ, շուտ, անմա՛շէն։

Եւ երկու փոխ, սառած մարմինները մէջք մէջքի էին տալիս, իրար սղմւում, մօտ, մօտ, իրանց հին ջերմութեան մի յե-

տին մնացորդն աշխատում էին խառնել իրար անկողնի մէջ, էլի մի ձմեռ ապրելու համար։ Առաւօտները զարթնում էին լուսաբացից շատ առաջ, և անկողնի մէջ սկսում էին մի երկար խօսակցութիւն նախ երազների՝ ապա աշխարհի իրերի մասին։

—Պառաւ, քնա՞ծ ես։

—Չէ, ի՞նչ քնեմ, տնաշէն, գիշերները տարի են, էսքան քնե՞լ կը լինի։

—Հաւը կանչե՞ց։

—Մի բերան նոր կանչեց. էս մեր աքլորին աղէրքը թող լաւ մտիկ տան, ձէնը շատ զիլ է ու խստակ, լուսաբացին մարդի հոգին թեթևանում է լսելիս։

—Հա, լաւ ձէն ունի, լաւ աքլորը տան զարդն ու բաղդն է։

—Էսօր դու ինձանից շուտ զարթնար, խե՞ր ըլնի, պառաւ։

—Երազի տէրը մեռնի, երազները թողնո՞ւմ են, որ մարդ քնի. զարմանալու բաներ տեսայ, մազերս դիզացան։ Եւ ծերերի երազներն այնքան շատ էին, միշտ այնքան բազմազան, յաճախ հրէշաւոր, այլանդակ, սարսափներով լի, չար ու բարի, լաւ ու վատ։ Արջեր, գայլեր, գողեր, դևեր, ճիւաղներ իրար խառնուած կամ զատ-զատ գալիս էին

ծերերի յոգնած, մթագնած երևակայութեան հետ խաղալու ձմերային երկար գիշերներին, խրճիթի թանձր խաւարի մէջ։ Ամեն լուսաբացին ծերերը փոխադարձաբար պատմում էին իրար այդ երազները, պատմում էին բոլոր մանրամասնութեամբ, ունկնդիրը դողում էր վատ խորհուրդներից, պատմողը վախենում էր, բայց ոչինչ բաց չէր թողնում։

—Աստուած խէրն անի, կրկնում էր վերջում ունկընդիրը մտածկոտ ու անհանգիստ։

—Հա, Աստուած բարին կատարի, աւելացնում էր պատմողը։

Տիրում էր խորին լռութիւն. ծերերն իրանց պատմութիւններից վախեցած՝ սուս կծկւում էին ու իրար սղմւում խաւարի մէջ։ Աքաղաղը վերստին կանչում էր զիլ, բարձր։

—Տղէրքը չը գնացին զոմը, ասում էր ծերունին։

—Չէ, քնած են, ձէն տուր։

—Սա՛քօ, ա՛յ Սաքօ. Գրիգոր, ելէք, որդիք, լուսացաւ ախր, անաստուածներ կապերը կը կտրատեն, մեղք են, ելէք, զոմը գնացէք։

Խրճիթի խաւարի մէջ սկսւում էր մի

խուլ շարժում ու փախուստ. հարսներն առաջինը շտապում էին գաղտագողի թողնել իրանց անկողինները, անձայն հագնուել ու ոտքի ելնել, որ մեծերը չը նկատեն. նրանց ամուսինները նոյնպէս հագնւում էին հանդարտութեամբ, բարձրանում տեղերից, խարխափելով դուռը փնտրում: Տունը զարթնում ու կենդանանում էր խաւարի մէջ. մօտեցող լուսաբացը ճրագ վառելու ցանկութիւն չէր թողնում:

Հեռուից լսւում էր նաև եկեղեցու զանգի ձայնը, որ մեղմ ելևէջներով տարածւում էր քնած գիւղի վրայ և ծերերը խաչակնքում էին երեսները, տնքում, հազում ու շարժւում:

—Վեր կաց, պառաւ, վեր, մենք էլ երթանք դէպի մեր Աստուածը, մեր աղօթքն անենք:

—Օրհնեալ է Աստուած, մրմնջում էր պառաւը, երթանք: Էս գիշեր ի՞նչ ցուրտ է, պարզկայ է արել, սափորները չե՞ն ճղուել, տես դռներն ինչպէս ճռռում են:

—Հա՛, պարզկայ է, ձիւնն էլ թարմ պէս էս ձմեռ շատ չի, ցանքերին վնաս չը պատահի:

—Աստուած ողորմի:

Եւ հանդարտութեամբ հագնւում էին ծերերը՝ շարունակ յօրանջելով ու աղօթելով, դրան յետևում երեսները մի բուռ ջրով լուանում, կրկին խաչակնքում ու կամացուկ շարժւում դէպի եկեղեցին:

Անցնում էին տարիները տարիների յետևից, նրանք աղօթում էին, քնում, զարթնում էին, դարձեալ աղօթում և ամեն օր քայլում էին դէպի գերեզման:

II

Բանը պատահեց յանկարծ...

Ծերունի Օհանը ինքն էլ չ'իմացաւ, թէ ինչպէս հիւանդացաւ իր կինը և ինչպէս մեռաւ: Միայն մի օր պառկեց և միւս օրը արդէն դագաղումն էր: «Ճրագի պէս մարեց, սուրբ կնիկ, ճրագի պէ՜ս», կրկնում էր ծերունին՝ դագաղի յետևից քայլելով:

—Թաղեցի՛ր պառաւին, հալիւոր, թաղեցի՛ր,—ասում էր քահանան յուղարկաւորութիւնից վերադառնալիս,—երեսդ պինդ է. էէ, դու էն սա՛ն, դեռ էլի շա՜տ պէտք է ապրես, ոտերդ մեկնելու չե՞ս, հոգուդ հացը վերջապէս չը պէ՞տք է ուտենք:

—Աստծու կամքն է, տէր հայր, ինչ որ

վերից կտրուած է, էն ո՛չ դու, ոչ ես փոխել կարող ենք։

— Միտքդ գիտեմ, գիտեմ, հալիւոր, տեսնես ի՞նչ ջահիլ կնկայ ես աչք դրել, որ մէկ էլ թագ-պսակ կապես. բարով մուրազիդ չը հասնես, վերջացրեց քահանան։ Ընդհանուր ծիծաղ բարձրացաւ։

Հին օրերի ընկերուհու մահը Օհանը չը լացեց. ի՞նչպէս լաց լինէր, հասած որդիների, մեծ թոռների տէր էր, նրան վայել չէր արցունք թափել իր պառաւ ամուսնու գերեզմանի վրայ։ Թաղումը կատարուեց ուրախութեամբ, նոյն իսկ կատակներով։ Հարեւանները գտնում էին, թէ պառաւը լաւ ու բաւական ապրեց, իսկ ժամանակին մեռաւ։ Քահանան համարեա ժպտադէմ էր քաղում աղօթքները, ամենքը կարծես խօսք մէկ արած իրանց վերաբերմունքով ուզում էին ասել, թէ այսպիսի մահը չեն լալիս, այլ օրհնում են տուողին, ուրախանում են, որ տեղի ունեցաւ։

—Երանի իրան, կրկնում էին կանայք չորս կողմից, աշխարհը վայելեց ու մեռաւ ցամաք աչքով, ո՞վ չի ուզի այդպիսի մահ։

Եւ այդ ընդհանուր անտարբերութեան մէջ մենակ էր ծերունին, նրա սիրտը մխում

էր, բայց ստիպուած էր ծածկել իր վիշտը, իր մենակութեան, այս յանկարծակի վրայ հասած որբութեան արցունքները։ Նա ամաչում էր մանաւանդ իր հասած որդիներից ու թոռներից. ի՞նչ օրինակ պիտի տար ինքը, եթէ երեխայի պէս հեկեկար պառաւի յետեւից։ Այնքան տարիներ ապրել էր աշխարհում, նրա օրէնքներն ու կարգերը գիտէր, նրա սովորութիւններն ու աւանդութիւնները միշտ պահպանել էր ծերերին յատուկ նախանձախնդրութեամբ, իր կեանքի վերջին չէր ուզում վատ օրինակ հանդիսանալ, իր տարիքին, դիրքին անվայել թուլութեան նշաններ ցոյց տալ։ Եւ նա ոչ միայն չը լացեց, այլեւ կատակներին պատասխանեց ժըպտով, խառնուեց մասնաւոր խօսակցութիւններին, կարծես ոչինչ պատահած չը լինէր, խօսեց արտից, դաշտից, վար ու ցանքից, թանգութիւնից ու էժանութիւնից։

Այն գիշեր նա առաջին անգամ այնքան տարիներից յետոյ մենակ անկողին մտաւ, կծկուեց վերմակի տակ սսկուեց, բայց երկար ժամանակ քնել չը կարողացաւ։ Եւ առաջին անգամ իր կեանքում նա լսում էր, թէ ինչպէս խրճթի խաւարը ծածկոյթ ունենալով՝ իր հարմները մէկը միւսի յետեւից

զգուշութեամբ, անձայն հանեցին իրանց զգեստները և անկողինների մէջ ամուսինների կողքը բռնեցին։ Նա մի քիչ էլ կըծկուեց, վերմակը գլխին քաշեց, կ'ուզէր չը լսել հանուող զգեստների խշխշոցը, երիտասարդ կեանքերի շշուկը, երկչոտ շրթունքների փսփսոցը, կրծքերի ներդաշնակ հեքը, նա ամաչում էր իր համար. բայց այդ գիշեր խաւարը ոչինչ չէր ծածկում նրանից։ Եւ կամաց-կամաց իր հոգու խորքում, նրա մի մոռացուած անկիւնում զարթնում էր մի զգացմունք, որ նախանձ չէր—ինչպէս նա կարող էր նախանձել սեփական որդիների բախտին, երջանկութեանը, երիտասարդութեանը—դա մի ուրիշ բան էր, մի անհուն վիշտ, կիզիչ ու ծածուկ, որ ուռչում լայնանում էր, ու ճնշում ծերունու կուրծքը. նրան թւում էր, թէ իր շուրջն այն գիշեր էլ ոչինչ ու ոչ ոք չը կայ, որ ինքը մնացել է մեն-մենակ աշխարհում, ու դատապարտուած է կծկուել ու դողդողալ իր սառն, անհամբոյր անկողնի մէջ։ Գերեզմանում այդ օրը հանգչող պառաւը կարծես տարել էր ամեն ինչ և ծերունուն թողել մի խեղդող ամայութիւն։

Խրճիթը բոլորովին խաղաղուեց։ Խա-

ւարի մէջ լսւում էր միայն քնողների մեղմ շնչառութիւնը և մի հատիկ կատուի անվերջ մռմռոցը, միակերպ, ձանձրալի։ Ամեն ինչ մոռացած՝ ծերունին ականջ էր դնում այդ մռռոցին։ Տարիներից յետոյ առաջին անգամ կատուն գրաւել է նրա ուշադրութիւնը, կ'ուզէր մինչև իսկ այդ փոքրիկ կենդանին ունենալ իր անկողնում, գրկել, սեղմել իր կրծքին, զգալ դէթ մի կենդանի արարածի շունչը, սրտի բաբախումը. «Բայց կատուները ծերերին չեն սիրում, մտածեց նա, նրանք սովորաբար փոքրիկ երեխաների անկողնի մէջ են պառկում գիշերները»։

Եւ այն միտքը, թէ մինչև իսկ կատուները չեն սիրում ծերերին, նրա ցաւը կրկնապատկեց և միայնութիւնը դարձրեց սարսափելի։ Նա աւելի կծկուեց, վտիտ ոտներն աւելի հաւաքեց իրար վրայ, իսկ վերմակը կ'ասես աւելի ցուրտ դարձաւ, նրա ծալքերից սառն հով էր փչում։ Լուսաբացը հեռու չէր, աքաղաղը կանչեց ըստ սովորականին զիլ, բարձր, քիչ յետոյ էլ հնչուեց եկեղեցու զանգը, և նրա ձայնը մեղմ ելևէջներով տարածուեց քնած գիւղի վրայ։ Այդ այն ժամն էր, երբ իր պառաւը ըստ սովորականին զարթնում էր ու պատմում իր երազ-

ները, երբ նրանք վեր էին կենում միասին և երերալով խաւարի մէջ գնում դէպի Աստըծու տունը։ Յիշեց այդ բոլորը ծերունին, ուռած սիրտը փղձկաց, և նա վերմակը գլխին քաշեց ու խեղդուած ձայնով հեկեկաց։ Յորդ արցունքները հոսում էին նրա ծեր աչքերից, թրջում էին բարձը և նրա այրուած հոգին հովանում, հանգստանում էր։ Եկեղեցու զանգը շարունակում էր հնչուել, միակերպ ու յամառ, կարծես անպատճառ ծերունուն իր անկողնուց դուրս քաշելու և դէպի աղօթքը գրաւելու համար, բայց Օհանը ջարդուած ու յոգնած՝ էլ ոյժ չ'ունէր վերկենալու, նա կամաց-կամաց նղղեց ու քուն մտաւ։ Եւ առաջին անգամ տարիներից յետոյ վշտացած ծերունին ժամից յետ մընաց։

III.

Անցան օրեր և շաբաթներ, ծերունի Օհանը վերսկսեց իր առաջուայ կեանքը։ Առաւօտ և երեկոյ նա մենակ եկեղեցի էր գնում և մեն-մենակ էլ վերադառնում։ Միայն այժմ նա աւելի դանդաղ էր քայլում, մի քիչ աւելի էր կռացած իր գաւազանի

վրայ և ճանապարհն էլ նրան թւում էր խիստ երկար։ Պատահում էր երբեմն, որ նա տնքտնքում էր, հազում ու յետ մնում եկեղեցուց։ Ցերեկները նստում էր խրճիթի դրան առաջ բարձրացած թմբի վրայ, նայում էր լայնարձակ բակին, ուր հսկայ կաղամախիները և փնջակատար խնձորենիներն ու տանձենիները օրօրւում էին քամու առաջ։ Ծերունին սիրում էր նայել մանաւանդ նրանց սի մի դեղնած տերևներին, որոնք փոփռալով պտոյտներ էին գործում օդի մէջ, ընկնում գետին՝ այլևս երբէք վեր չը բարձրանալու համար։ «Բոլորը, բոլորը կը թափուեն. և էլ ոչ մէկը չի բարձրանայ», մտածում էր նա տխրութեամբ, և ծեր գլուխը կախւում էր կրծքին կարծես նոյնպէս գետին ընկնելու համար։

Նա քիչ էր խօսում, շատ մտածում, և երեկոյեան ընթրիքի ժամանակ այլևս նրա ձայնը չէր լսւում. մահուան ու գերեզմանի մասին բարեմաղթութիւնները լռել էին։ Առաջուայ պէս նա պառկում էր ամենքից վաղ, փակում էր աչքերը, աշխատում էր քնել ամենից առաջ, որ չը զգայ իր մենակութիւնը, երբ իր որդիներն ու հարս-

ները կը պատրաստուեն անկողին մտնել, չը լսի նրանց կենդանի շշուկը, ազատուի այն սարսափելի, խեղդող զգացմունքից, որ ամեն գիշեր միևնոյն ժամին ուռչում էր նրա կրծքի տակ և ճնշում, ճնշո՜ւմ։ Բայց իզուր. Նրա քունը չէր տանում, աչքերը չէին փակւում, նա ամեն գիշեր պարզ ու որոշ հասկանում էր իր շուրջը՝ խաւարի մէջ կատարուող կեանքը, նա համարեա բաց աչքով տեսնում էր թէ ինչպէս ամենքը, ամենքը լաւ են, երջանիկ են, մենակ չեն, միայն ինքն է որբ ու անտէր, միայն ինքն է մոռացուած, որովհետև ծեր է, խարխլած։ Այդ զգացմունքից նա և՛ տանջւում էր, և՛ ամաչում։ Դա մի խորունկ ցաւ էր, որ չէր կարող, չէր համարձակւում պատմել ոչ ոքի, և որը մենակ տանել իր ուժից վեր էր։

Ծերունին զգում էր, որ ինքը այդ ցաւից ամեն գիշեր մեռնում է, կամաց-կամաց, մաս-մաս. կարծես մի անտեսանելի ձեռք անողորմ կերպով պոկում էր նրանից իր հոգին կտոր-կտոր՝ անտանելի ցաւեր պատճառելով, իսկ ինքը դատապարտուած էր կրել, տոկալ ու լռել մինչև գերեզման։

Ինչո՞ւ։

Այդ զարհուրելի «ինչո՞ւ»-ին նա պա-

տասխան չէր գտնում և չը գիտէր ո՞ւմից հարցնել, ո՞ւմ բաց անել իր ծեր սիրտը, իր մխացող հոգին։

Եկեղեցուց վերադառնալիս նա մի քանի անգամ պատրաստուել էր մի բան ասել, միայն երկու խօսք Հէրիքին, այն հաստ ու կլոր դէմքով այրին, որ ամեն երեկոյ անցնում էր իր կողքից։ Բայց այդ տարօրինակ կինը ասես դիտմամբ սովորական «ողորմի Աստուած»-ն ասում էր ու միշտ անցնում շտապով։ Ինչո՞ւ չի կանգնում, ինչո՞ւ չի սպասում, որ միասին գնան զրոյց անելով, մտածում էր Օհանը, չէ՞ որ ինքն այժմ մենակ է, բոլորովին մենակ։ Հէրիքը երևի այդպէս չէր մտածում, որովհետև մանրիկ, բայց արագ քայլերով մօտենում էր ծերունուն, աջ ձեռքը գնում էր իր կրծքին, գլուխը թեթև կռացնում, մեղմ ձայնով «ողորմի Աստուած» ասում ու անցնում առանց յետ նայելու։ Ճարը կտրած՝ Օհանը վճռեց ինքն առաջինը խօսել, մի բան ասել, նրան կանգնեցնել որևէ պատրուակով։

Եւ այն երեկոյ ծերունու աղօթքը ժամում լաւ չէր, նա չէր լսում տէրտէրի ասմունքը, կ'ուզէր, որ նա շուտ վերջացնի, նոյնիսկ մի քանի անգամ յետ նայեց խմա-

դալու համար, խօմ Հէրիքը դուրս չի՞ գնացել: Չէ, Հէրիքն այնտեղ էր, կանանց դասում, իր որոշեալ տեղում, սեան առաջ: Օհանը յետ նայելուց յետոյ՝ էլ չէր կարողանում աղօթել, նրա գլխում անդադար դառնում էին այն մի քանի բառերը, որ նա վճռել էր արտասանել, նոյնիսկ ակամայ կրկնում էր ինքն իրան՝ «Հէրիք բաջի, վռազո՞ւմ ես». կրկնում էր և ամաչում:

—Մեղա՛յ քեզ Աստուած, մեղայ քեզ, իսկոյն աւելացնում էր նա, բայց կրկին գաղտագողի յետ էր նայում, կրկին նոյն բառերը ինքնաբերաբար արտասանում էր մեղմիւ:

Ժամը վերջացաւ. Օհանն առաջինը դուրս եկաւ, որ Հէրիքն իրանից վաղ չ'անցնի, գնայ: Նա քայլում էր և սրտի բաբախումով ականջ դնում յետևից լսուող ոտնաձայներին. նա հաւատացած էր, թէ կը կարողանայ ճանաչել նրա ոտքի ձայնը:

—Օղորմի Աստուած:

Օհանը ցնցուեց, շփոթուեց յանցանքի մէջ բռնուածի պէս: Բայց էլի հաւաքեց իրան ու քաղցրութեամբ պատասխանեց.

—Օղորմի ծնողացդ, Հէրիք բաջի: Վերջին երկու բառերը ծերունին արտասանեց

այնպիսի քնքշութեամբ, այնքան ուշադիր չեշտով, որ կինը յետ նայեց զարմացած, բայց էլի կանգ չ'առաւ: Յուսահատուած ծերունին ոյժ տուեց ոտներին ու մի քիչ տարօրինակ, դողդոջուն ձայնով կանչեց.

—Հէրի՛ք բաջի... շուտ-շուտ ես գնում... բա՞ն ունիս...

Կինը կրկին յետ նայեց:

—Հա, ապա, Օհան ամի, բան ունեմ, շատ վռազն եմ:

Եւ կինը դարձեալ անցաւ, գնաց: Ծերունին լքուած՝ մի առժամանակ մնաց իր տեղում, գլուխը կրծքին քաշ, անոյժ ու ջարդուած, ասես մի ծանր աշխատանքից յետոյ, ապա շարժուեց դէպի առաջ աւելի մենակ, աւելի խեղճ, քան երբևիցէ: Այնուհետև մի քանի օր եկեղեցում չ'երևաց. գիշերներն անքուն, ցերեկներն էլ նստում էր իր սովորական թմբի վրայ, կամ երկար գաւազանով խազեր էր քաշում գետնին, կամ նայում էր դէպի ծառերը, որոնց տերևները մէկիկ-մէկիկ ընկնում էին գետին, «այլևս երբէք չը բարձրանալու համար»:

Սակայն ապրել չէր լինում, պէտք էր մի բան անել:

Երեկոյեան նա դարձեալ եկեղեցումն

էր, անհանգիստ, յուզուած, անհամբեր։ Ժամասացութիւնը այս անգամ նրան թւում էր անվերջ, զայրանում էր, որ քահանան դանդաղ է կարդում, կարծես դիտմամբ։ Վերջապէս ժամաւորները սկսեցին դուրս գալ. ծերունին քայլում էր դէպի տուն, և սպասում էր Հէրիքի ոտնաձայնին։

—Օղորմի՛ Աստուած։

—Օղորմի ծնողացդ, Հէրիք բա՛ջի։

Կինը անցնում էր ըստ սովորութեան. Օհանը մի վերջին ճիգ գործ դրեց ու քաջութեամբ կանչեց յետևից.

—Կա՛ց, Հէրիք բաջի, տնա՛շէն, ի՞նչ ես վռազում... քո հօրն օղորմի... կ՚ասես յետևիցդ են ընկած... կա՛ց, խօսելով էրթանք... տունը չի փախչի...

Հէրիքը կանգ առաւ առհարկի ու ճըն-շուելով։ Ծերունին ույժ տուեց ոտներին, հասաւ նրան հևալով, շնչակտուր։ Նրանք սկսեցին քայլել միասին։ Օհանը սաստիկ ուզում էր մի բան ասել, իր սիրտը բաց անել, բայց խօսք չէր գտնում. բոլորն, ինչ մտածել էր մի քանի օրուայ ընթացքում, իր ծեր մտքից խոյս տուեց, գլուխը մնաց դատարկ, շրթունքը փակ, սիրտը յուզուած։ Այդ հաստ, փափլիկ սիրուն պառաւը, որ

օրօրուելով քայլում էր նրա կողքից մերթ ընդ մերթ քսուելով իր թևին, նրան իսպառ շփոթեց։

Լուռ էին. ժամանակն անցնում էր, թանկագին ժամանակը։ Ծերունին հաւաքեց իր բոլոր քաջութիւնը և մի բան ասած լինելու ու պառաւին խօսեցնելու համար, երեխայի պէս թոթովեց.

—Հէրիք բաջի... դեռ լաւ ես... զրինդ ես... ուժդ տեղն է... ոտներդ էլ լաւ են երևում...

—Դու էլ լաւ ես երևում, Օհա՛ն ամի, ձեռ ու ոտդ պինդ են։

—Էհ՜, ի՞նչ լաւ, մէրիկ, էս մենակութիւնը...

—Ինչի՞ ես մենակ, փառք Աստծու, ի՞նչդ է պակաս, որդիներդ, թոռներդ, հարսներդ, տունդ լի, շէն...

—Է՛հ, որդիներն ու թոռներն իրանց համար, Հէրիք բաջի... իմը ուրիշ բան է... մարդու մենակութիւնը զուլում բան է... մէջք է կոտրում։ Համ էլ գիշերները երազ ես տեսնում... տեսակ-տեսակ երազներ... ու չես իմանում ում պատմես... ձմեռն էլ ցուրտ է... մարդ տեղաշորի մէջ չի տաքանում մենակ... չը մեռայ պրծնեմ... Օղոր-

մած հոգին գնաց… ինձ էլ չը տարաւ հետը… Հէրիք բաջի, դու տեղաշորիդ մէջ չե՞ս մրսում, հա՞… չէ, դու չես մրսի, լիքն ես… ինչպէ՛ս լիքն ես։

Ծերունին ձեռքով շօշափեց նրա կակուղ թևն զգուշութեամբ։

Կինը զարմացած նայեց իր տարօրինակ խօսակցին։

—Կովերը չեմ կթել, Օհա՛ն ամի, վռազն եմ, ասաց նա ու շտապով հեռացաւ։

Օհանը նայում էր նրա յետևից, ծեր աչքերի բոլոր ուժով աշխատում էր որքան կարելի է երկար տեսնել նրա պատկերը երեկոյեան մառախուղի մէջ, տեսնել նրա լայն թիկունքը, կլոր ուսերը, ամբողջ գեր մարմնի հաճելի երերումները։ Բայց Հէրիքը շուտ մաշուեց անլոյս փողոցների մէջ. ծերունին գլուխը քաշ ձգեց՝ մրմնջալով. «Գնա՜ց, գնաց անիրաւը… նա էլ չը մնաց… ո՞ւմ ինչ պէտքն է, որ Օհանը մենակ մեռնում է… բոլորը, բոլորը, անողորմնե՛ր»…

Այն գիշեր անկողնի մէջ ծերունին դարձեալ երկար ժամանակ արթուն էր, բայց այս անգամ ուրիշ մտքեր էին պաշարել նրա գլուխը։ Հէրիքի գեր մարմինը, լիքը բազուկները, կլոր դէմքը, ամբողջ այդ գրաւիչ, ջերմացնող պատկերը, որ սողում էր երեկոյեան մառախուղի մէջ, ինչպէս մի քօղով փաթաթուած, շարունակ ծերունու աչքի առաջն էր։ Օհանը մի առանձին հաճոյքով էր երևակայում, թէ որքան տաք, որքան ախորժելի կը լինի Հէրիքի անկողինը ձմեռ ժամանակ, երբ դրսում ոռնում է ձիւնախառն քամին կատաղի, ցուրտ, երբ խրճիթի պատերը, դուռն-երդիկը ծածկուում են եղեամի սարսեցուցիչ շերտով, որքան դուրեկան կը լինի այդ ժամանակ մէջք-մէջքի սղմուել նրա հետ մօտ-մօտ, լողալ նրա կենդանի ջերմութեան մէջ և գրաւիչ երազներով քնել մինչև լուսաբաց։ Մի՞թէ հնարաւոր չէ այդ, մի՞թէ անկարելի է… Հէրիքն այրի է, մենակ, ինքը նոյնպէս որբ… մի՞թէ չէին կարող իրանց կեանքի մնացորդը միասին անցկացնել… ինչո՞ւ մեռնել այսպէս մենակ, լքուած, մոռացուած. ինչո՞ւ քաշ տալ այս մենաւոր, անպէտք ծերութիւնը որից մահը երբեմն դիտմամբ ասես խուսափում է երկար ժամանակ, այն աւելի ձանձրալի, նոյնիսկ նողկալի դարձնելու համար։ Մի՞թէ այս բոլորը չի՞ մտածում, չի՞ զգում Հէրիքը… չէ՞ նա էլ այրի է… բայց Հէրիքը կանգնեց, խօսեց… Օհանը

յիշեց բոլոր այն խօսակցութիւնը. Հէրիքն ասում էր՝ թէ «դեռ լաւ ես. ուժդ տեղն է»… յիշեց նրա լիքը բազուկը, որ շօշափեց… Բոլորը լաւ կը լինի, եթէ Հէրիքը կամենայ. և ի՞նչ պիտի ասի, կնիկ ազգ է, նա աւելի կ'ուզի ընկեր ունենալ… Ապա նրա աչքին ներկայացաւ գիւղը, աւանդապահ ու անողորմ, պահանջող ու խիստ: Գիւղը… հազար բերան ունի նա, հազար խօսք, ու ամեն մի խօսքը մի թունաւոր նետ է: Ի՞նչ կ'ասի այդ գիւղը. իր հասակին, իր ծերութեանը, իր դիրքին մարդիկ ե՞րբ են ամուսնացել… որդիները, թոռները… հարսները, խախկ ու խայտառակութի՜ւն: Ախր ժամ պէտք է գնալ, տէրտէրի առաջ պէտք է կանգնել: Հէնց ինքը՝ Օհանը, ինչ կ'ասէր ինքը, եթէ նոյն բանը մի ուրիշն անէր… մի ուրիշը ոտնատակ տար սովորութիւնները, աւանդութիւնները, ամօթը, մանաւանդ ամօթը… Հա, հա՛, ինքն էլ խիստ անողորմ կը լինէր, բայց ինչպէս իմանար, թէ այդքան ցաւ բան է մենակութիւնը:

«Չի ապրւում, չի ապրւում, կրակ է, մեռնում եմ», մրմնջում էր նա:

Հաւը խօսեց, դեռ նա արթուն էր ու թաւալւում էր անկողնի մէջ բայց պէտք էր

մի բան անել, մէկին ասել, մէկին պատմել իր ցաւը, ճար, դարման խնդրել:

Խրճիթը դեռ խաղաղ էր ու խաւար:

—Սարգիս ջան, ա՛յ Սարգիս, կանչեց ծերունին քնքշութեամբ իր աւագ որդուն:

Սարգիսը լուռ էր. միա՛յն լսւում էր նրա առողջ շնչառութիւնը. նա քնած էր:

—Սարգիս ջան, ա՛յ որդի, կրկնեց ծերունին վճռողաբար, մի բան ասելու հաստատ ցանկութեամբ:

—Հ՛ը… հա՛յրիկ… դո՞ւ ես, գոմի ժամանա՞կ է…

—Չէ, որդի, գոմի ժամանակ չի… էս գիշեր էնպէս ցուրտ է… տեղաշորի մէջ չեմ տաքանում…

—Չե՞ս տաքանում… թո՛ղ, մի բան գըցեն վրադ:

«Չը հասկացա՛ւ… անողո՛րմ որդի», շըշընջաց ծերունին, և նրա աչքերը թացացան խաւարի պէս մութ վշտից: Յետոյ նա լսեց, թէ ինչպէս Սարգիսը զարթեցրեց իր կնոջը, ինչպէս վերջինը վերկացաւ խարխափելով մօտեցաւ ծալքին, զգուշութեամբ մի բան դուրս քաշեց քսալով, եկաւ դէպի կեսրարի անկողինը: Խաւարը թանձր էր, կիսամերկ, ջահիլ կինը չէր երևում, վառած

էր, բայց ծերունուն թվաց թէ ինքը տեսնում է այդ կանացի կիսամերկ պատկերը, զայրացաւ, ամաչեց ու գլուխը թաղեց վերմակի տակ։ Հարսը ծածկեց նրան ու հեռացաւ։ «Անողորմնե՜ր, անողորմնե՜ր», վերստին շշնջաց ծերունին։

Անցան էլի օրեր, էլի գիշերներ, նոյնպէս անհանգիստ, նոյնպէս ծանր։ Եւ մի գիշեր իբրև վերջին, յուսահատ փորձ, ծերունին վճռեց դիմել որդուն։

—Սա՛րգիս։

—Ի՞նչ է, հա՛յրիկ, էլի՞ մրսում ես։

Ծերունին մի փոքր լուռ մնաց, մի բան պիտի ասէր, որ չէր ասում։

—Սարգիս ջան, որդի... ախր, ես էսպէս... Նա չը կարողացաւ շարունակել, ձայնը խզուեց, և խաւարի մէջ հնչուեց նրա խուլ հառաչանքներն ու հեծկլտանքները. ծերունին լալիս էր յորդ արցունքներով։

—Հա՛յրիկ, ի՞նչ կայ, ինչի՞ ես լալիս։

—Է՛հ, ես ի՞նչ գիտեմ, որդի... լալիս եմ էլի... որ ես չը լամ, էլ ո՞վ լայ... ծերերը պէտք է լան... էն օրը ժամից գալիս, էս մեր հարևան Հէրիքին տեսայ... էնպէս մեղքս էկաւ... լաւ, շինարար, տնարար կնիկ է, ու էնպէս մենակ... խեղճ... գանգատւում էր իր անտէրութիւնից... «մենա՛կ եմ» ասում էր...

—Է՛, Հէրիքի դարդն է՞լ քեզ տուխն, դրա համա՞ր ես լալիս։

—Չէ՛, որդի... հալբաթ ամեն մարդ իր դարդն ու ցաւն ունի... ամա ասում եմ... ի՞նչ ասեմ... դէ ես էլ մենակ եմ, Հէրիքի պէս... ձմեռ է... էս տեղս էլ էնպէս ցուրտ է... ցո՜ւրտ է... Ծերունին դարձեալ շարունակել չը կարողացաւ, արցունքը խեղդեց նրա կոկորդը, նա երեսը դարձրեց դէպի բարձը ու սկուեց։ Որդին լուռ էր, նա հասկացաւ իր հօր միտքը, հասկացաւ ու մռայլուեց։ Հայրը Հէրիքին ուզում էր տուն բերել... կին դարձնել.. հարսների ու թոռների տէր, իր վաթսունն անց... գիւղը, խալխը, դուռ, դրկեց...

Էլի օրեր անցան. հայր ու որդի էլ չը խօսեցին այն հարցի մասին, ծերունին չը գիտէր, թէ ի՞նչ է մտածում իր որդին, անհանգիստ էր և հարցնել ամաչում էր։ Եւ մի երեկոյ, երբ Օհանը ժամից դուրս էր գնում, ծերունի քահանան ձեռքը նրա ուսին դրեց ու կանգնեցրեց. նրանք յետ մնացին ժամաւորներից։

—Օհա՛ն ապի, ասաց քահանան, երէկ

Սարգիսն ինձ մօտ էր… մի բան ասաց… օջաղդ քարուքանդ կը լինի… քեզ էլ սազ չի գայ, ամեն բան իր ժամանակն ունի, որդի… մարմինն իր ժամանակը, հոգին՝ իրը․ քո հոգու ժամանակն է… նայիր էս ծառերին․—Նա ցոյց տուեց եկեղեցու բակի մերկ կաղամախիները․—ձմեռ է, նրանք տերևաթափ են, դու էլ գիտես, գարուն կը գայ, բայց թափուած տերևները էլ երբէք վեր չեն բարձրանայ, նրանց տեղ նորերը կը ծլեն, նորե՛րը… աղօթիր ու միայն աղօթիր գարնան ու նոր տերևների համար… իմն ու քոնը անցաւ, էլ չի դառնայ։

Գիւղն էր խօսում, աւանդապահ, խըստապահանջ, անողորմ գիւղը, որ հազար բերան ունէր, հազար խօսք, ու ամեն մի խօսքը թունաւոր նետ։ Դա մի հողմ էր, աւերիչ ու ահագին, որ թափով սրբում, տանում էր բոլոր անհատական տենչերը, երջանկութեան երազները, որոնք դէմ էին ամօթին, սովորութիւններին։ Ծերունի Օհանը բաց աչքով տեսնում էր այն անդունդը, որ կուլ էր տալիս իրան, որից խուսափել, ազատուել չէր կարող․ նա այժմ ապրում էր ո՛չ թէ ապրելու, այլ մեռնելու, միայն մեռնելու համար։ Գիւղն էր այդպէս ուզում։

Նոյն գիշեր նա դարձեալ կանչեց որդուն թոյլ, նուաղած ձայնով․

—Սա՛րգիս, ա՛յ Սարգիս։

—Հը՛, հայրիկ, մրսո՞ւմ ես։

—Հա, որդի, մրսում եմ… շա՛տ եմ մրսում։

…

Ծերունին իրօք մրսում, դողդողում էր անկողնի մէջ։ Որդին վերկացաւ, ճրագ վառեց, խնամքով ծածկեց հօրը, նստեց կողքին։

Օհանը լաւ չէր, Օհանը մեռնում էր…

—Մեռնում եմ, որդի… ձմեռ է… գարուն կը գայ… հին տերևներն էլ չեն կանաչի… ծլէք, ծաղկէք ու կանաչէք դուք, որդիք, բոլո՛րդ։

Առաւօտեան քահանան եկաւ նրան հաորդեց, գիշերը նա զառանցում էր գարնանղու տերևների մասին․ մի երկու անգամ Հէ ըիքին յիշեց, և լուսաբացին նրա փոքրիկ, վտիտ մարմինը իր լայն անկողնի մէջ սառած էր ու անշարժ։

1903.

ՄԵԾ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ես փոքր էի, հազիւ եօթ-ութ տարեկան։ Մի հեռու տեղից հօրս հետ սայլով վերադառնում էինք տուն։

Յիշում եմ՝ երկար, ոլոր մոլոր ճանապարհ էր, որ սեզանում «Թագաւորական ճանապարհ» էին կոչում, որովհետև իշխանութեան հրամանով պատրաստուած խճուղի էր։ Մեր սայլը բարձած էր ցորենով և այնքան ծանր էր, որ երկու ուժեղ գոմէշները հազիւ էին քաշում։ Հայրս գնե՞լ էր արդեօք այդ ցորենը, թէ՞ փոխ էր վերցրել հեռաւոր բարեկամից, այդ էլ չեմ յիշում, միայն լաւ միտս է, թէ ինչպէս ես նստել էի ցորենի մեծ ջուալների վրա և մերթ նայում էի շրջակայքի դաշտերին, մերթ հօրս թիկունքին, որը կամ օրօրւում էր դանդաղութեամբ կամ ցնցւում էր՝ երբ պէտք էր լինում խարազանը շարժել այս կամ այն գոմէշին փութացնելու համար։ Հայրս հագած ունէր միայն մի տակ արխալուղ, որի կարերի վրայ մոխրագոյն խղոտ գծերով ձգւում էին քըրտինքի շերտերը, տալով այդ զգեստին մի առանձին տեսք, որ այնպէս խօսում էր աշխատանքից՝ չարքաշ, անդուլ աշխատանքից։ Ցաւերից ու հոգսերից էր խօսում նաև հօրս այրուած, սևացած պարանոցը, որի վրայ հովանի էր անում մի հաստ մորթէ գդակ։ Երևի հայրս գոհ էր իր ցորենով, որովհետև սայլի առջևում նստած՝ հանդարտ մռմռում էր մի գեղջկական երգ, մի բան, որ նա անում էր միմիայն այն ժամանակ, երբ գործն աջող էր ու սիրտն ուրախ։

Ես ինչ էի մտածում այդ ժամին, այն էլ չեմ յիշում. երևի մտածում էի այն՝ ինչ կը մտածէր մի եօթ տարեկան մանուկ, որ աշնանային մի պարզ օրով հօր հետ միասին սայլով անցնում է խաղաղ դաշտերի միջով, ուր տարափոխիկ թռչունները խըմբեր են կազմում, կասես վերջին խորհուրդն են անում իրանց հեռաւոր ճանապարհորդութեան մասին, ուր անասունները արձակ շրջում են, որովհետև էլ վնասելու ոչինչ չը կայ, իսկ հօտաղները հոգսից ազատ՝ խաղեր

ու պարեր են սարքում և ուրախ քրքիջով լցնում շրջակայքը։

Ճանապարհից ոչ հեռու մի նոր ցանած ցելում կանգնած էր մի ջրւոր բահն ուսին դրած. նա ջրում էր իր նոր ցանած արտը և նայում էր դէպի մեզ։ Սարեակները և ագռաւները անհագին երամներով հետևում էին մարգերում հոսող ջրի ընթացքին, հաւաքելով խուսափող միջատները։ Աւելի հեռու բարձրանում էր ծխի մի պտոյտ՝ բարակ և ոլոր մոլոր. հօտաղներից մէկը կրակ էր արել և երևի եփում էր որ և է արմտիք։ Ամենից լաւ յիշում եմ այդ ծխի ոլորտը, որովհետև ամեն բան մոռացած նայում էի, թէ ինչպէս նրա պտոյտները բարձրանում և հանդարտ տարածւում էին շրջակայքի վրայ որպէս թեթև շամանդաղ. աշնանային դաշտերում հեռու ամայութեան մէջ ծխի մի պտոյտը այնքան սիրուն է։ Եւ այս բոլորի վրայ աշնանային արևը ախորժելի ջերմութեան հետ սփռել էր իր ոսկեգոյն շողերը։

Եւ մեր սայլը ճռնչալով գլորւում էր, հա գլորւում և հայրս շարունակում էր ուրախ տրամադրութեամբ իր երգը։ Այդ ժամին երջանիկ էինք ամենքս՝ և՛ հայրս, և՛ ես և՛ նոյն իսկ մեր գոմէշները, որոնք առանց

խարազանի՝ իրանց կամքով հանդարտ քայլում էին որոճալով։

Յանկարծ մեր յետևից լսուեց մի կառքի զանգակի ձայն և դրա հետ միասին մի սպառնալից «խաբարդա՛»։

Հայրս ցնցուեց իր տեղում, նրա թիկունքն սկսեց ծռմռուել և նա խարազանով մերթ մէկ և մերթ միւս գոմշի մէջքին խփելով՝ աշխատում էր սայլը հեռացնել ճանապարհից դէպի մի կողմ։ Մինչ այդ՝ ես յետ նայեցի։ Բառաձի կառք էր մեզ վրայ վազողը և երկու զինուած ձիաւորներ սրարշաւ քշում էին իրանց ձիերը, մէկը կառքի առաջից և միւսը յետևից։ Ես սարսափեցի. ես լաւ գիտէի, թէ ինչ խորհուրդ ունի այն կառքը, որին ուղեկցում են զինուած ձիաւորներ, իսկ այդպիսի կառքերից ես այժմ էլ վախենում եմ, ուր մնաց մանկութեանս օրերում։ Փոշու ամպերի մէջ կորած ձիաւորներն ու կառքը մրրկի պէս մեզ վրայ էին վազում սաես խեղդելու համար. ինչպէս կուզէի, որ մեր գոմէշներն այդ ժամին թռչունների արագութեամբ խլէին և փախցնէին մեր սայլը երկնքի երեսից՝ քանի դարհուրելի կառքը չէր հասել յետևից։

Երևի մեզ սպառնացող վտանգը շատ էր

ահաւոր, որովհետև ես տեսայ, թէ ինչպէս հեռւում ջրւորը ձեռքերով մի տարօրինակ, յուսահատական շարժում արեց դէպի հայրս ճչալով քանի ույժ ունէր՝ «շո՛ւտ, տո՛ւնդ քանդուի, շո՛ւտ»։ Նրա ձայնից և ձեռքերի տարօրինակ շարժումից վախեցած՝ ագռաւներն ու սարեակները մէկէն թռան գետնից, իրար խառնուեցին ահագին կռնչիւնով և մեր գլխի վերև յուսահատ պտոյտներ էին գործում կարծես մեր դիակներին սպասելով։ Մի րոպէ թռչունների կռնչոցը, զանգակների ձայնը, կառքի որոտը, ձիերի ոտների դոփիւնը, ձիաւորների ահարկու «խաբարդան» ու հայհոյանքները իրար խառնուեցին և ես գլուխս կորցրած՝ էլ չէի հասկանում, թէ մեզ հետ ի՞նչ է կատարւում։

Հօրս նայեցի. նա անխնայ թակում էր գոմէշներին, ոլորւում էր իր տեղում, ճչում, գոռում, ատամները կրճտում, որ հաստամարմին անասունները մի փոքր շուտ շարժուեն, դուրս տանեն սայլը ճանապարհից, փոյթ չէ նոյն իսկ թէ եզրի ջրանցքի մէջ գլորեն. սակայն իզուր, դանդաղաշարժ, հաստակաշի կենդանիների փոյթը չէր. նրանք ոչ ձիաւորներից էին վախենում, ոչ կառքից և մէջքերը դէմ տուած խարազանի

հարուածներին՝ շարունակում էին ճանապարհը մի և նոյն քայլուածքով և մի և նոյն գծով։ Մէկ էլ փորձեցի յետ նայել, բայց արդէն ուշ էր. ես տեսայ կառքը մեր սայլի կողքին, տեսայ երկու ձիաւորներին, որոնք իրանց մտրակները շարժելով ու հայհոյելով մօտեցան հօրս, որ կծկուեց իր տեղում և էլ բան չը տեսայ, որովհետև բարձրաձայն ճչացի և գլուխս ծածկեցի ջուալների արանքում, որ չը տեսնեմ, թէ սարսափելի ձիաւորներն ինչպէս են սպանում հօրս։

Ես լուրջ հաւատացած էի, թէ որովհետև հայրս չը կարողացաւ իր սայլը ճանապարհի կենտրօնից մի կողմ դարձնել, որովհետև կառապանը ստիպուած եղաւ այդ խորհրդաւոր կառքը ճանապարհի եզրով քշել, ուստի ազան երևի բարկացաւ և հրամայեց, որ ձիաւորները հօրս սպանեն, յետոյ էլ, ո՞վ գիտէ, գուցէ և ինձ... մտածում էի ես։ Եւ հօրս կրած այդ պատիժը ինձ թւում էր բոլորովին բնական, միանգամայն արդար. ես համոզուած էի, որ հայրս յանցաւոր է, երբ ձիաւորներով շրջապատուած կառքը գալիս է, սայլն ու գոմէշներն ի՞նչ գործ ունեն ճանապարհին, այդ պարզ էր ինձ համար, միայն սիրտս ճմլւում էր, ցա-

ռում էի, որովհետև սպանում էին հարազատ հօրս, իմ խեղճ, իմ բարի հօրը...

Եւ այսպէս ես կռացած՝ ծածկել էի աչքերս. ոչինչ չէի տեսնում, բայց լսում սարսափելի հարուածների ձայներ ու հօրս մեղմ աղերսն ու տնքոցը։ «Սպանում են, մտածում էի ես, էլի մի րոպէ և ամեն ինչ կը վերջանայ»։ Հարուածները բաւական երկար տևեցին, ապա ամեն ինչ լռեց։ «Վերջացաւ, սպանեցին, պրծան», մտածեցի ես, առանց համարձակուելու գլուխս բարձրացնել։ Մի րոպէ ես մոռացայ նոյն իսկ, թէ ի՞նչ է կատարւում մեր շուրջը, ո՞ւր եմ ես. յետոյ ինձ թւաց, թէ ես էլ եմ սպանուած, թէ մեր սայլն անտէր—անտիրական մնացել է դաշտում հեռո՜ւ, հեռո՜ւ, որ ագռաւները ճախրում են հօր և որդու դիակների վրայ, գոմէշներն էլ մնացել են լծան տակ կանգնած. և այս բոլորը ես և՛ երևկայում էի և՛ դողում մահուան սարսափից։

Չը գիտեմ, որքան երկար մնացի այդ դժոխային կացութեան մէջ, միայն գիտեմ, որ գլուխս բարձրացրի այն ժամանակ, երբ հօրս ձայնը հասաւ ականջիս.

—Վե՛րկաց, որդի, մի՛ վախեցիր, գնացին։

Թւում էր, թէ ես երազի մէջ եմ. նայեցի,—մենք դարձեալ ճանապարհի վրայ էինք, ջրւորն իր տեղումն էր, ծուխը շարունակում էր բարձրանալ ոլոր մոլոր, թռչուններն իջել էին ցելի վրայ, մեր սայլն իր առաջուայ տեղումն էր, միայն հօրս գլուխը փաթաթուած էր արիւնոտ թաշկինակով, իսկ մէջքի քրտնքի գծերին զուգահեռական ձգւում էին ուրիշ գծեր վերից վար։ Մի փոթորիկ էր անցել մեր գլխով, և չը նայելով դրան՝ ես հօրս նայեցի մի րոպէ և ժըպտացի ուրախ սրտով, այո՛, ուրախ սրտով, որովհետև հայրս չէր սպանուած, որովհետև ձիաւորները, չը նայելով իրանց բացարձակ իրաւունքին և հօրս անուրանալի յանցանքին, նրան չէին սպանել. ուրեմն նրանք այնքան էլ չար չէին, ինչքան ես կարծում էի, մտածեցի ես, գթացել են և չեն սպանել հօրս. որ ուզէին, կը սպանէին, ով էր նրանց ձեռքը բռնողը. միայն ծեծել են, և շատ են ծեծել. էհ ինչ անենք, ո՞ւմ չեն ծեծում. մեր գիւղում ռէսը ճիպոտ ունի, որի ծայրից արիւն է կաթում, տանուտէրը խօմ Աստուած փրկի։ Այսպէս էի մտածում ես և ուրախանում հօրս համար, որ կարծես խեղդուելուց հրաշքով ազատուել էր։

Հայրս ցած իջաւ սայլից և գնաց դէպի առուակը. ես էլ հետևեցի նրան. Ջրւորը դանդաղութեամբ մօտեցաւ մեզ և բահի վրայ յենուած՝ կանգնեց առուակի միւս ափին մեր դիմաց: Հայրս ու նա իրար նայեցին լռութեամբ:

—Օրն երթայ՝ չարը հետը, ասաց ջրւորը:

—Օրը գնաց՝ չարը չը գնաց, պատասխանեց հայրս:

—Անաստուածները գլուխդ պատռել են:

—Հա՛, պատռեցին, էհ ինչ անենք, այսքանով էլ պրծայ լաւ է, չէ՞ կարող էին աւելին անել. դէ մեր գլուխն էլ, գիտես, հաստ է, կը դիմանանք:

—Տնաշէն, քանի ճչացի, որ շուտ հեռանաս ճանապարհից:

—Ախր ինչ անեմ, ախպէր, սատկած գոմէշները չը շարժուեցին, ինչքան ծեծեցի:

Կրկին լռութիւն տիրեց. հայրս մի քանի բուռը ջուր վերցրեց և ագահութեամբ խմեց. Նոր զգացի, որ ես էլ ծարաւ եմ, հօրս օրինակին հետևեցի:

—Երեսդ էլ լուա՛, բարեկամ. ասաց ջրւորը, այդպէս լաւ չէ, որ տուն գնաս, արիւնոտ է: Հօրս ձախ այտը ամբողջապէս

պատած էր արիւնով. նա ձեռքով շօշափեց, նայեց կարմրած մատներին, մի բան մրմռաց ատամների արանքից և կռացաւ ջրի վրայ, երեսն էր լուանում: Ջուրը կարմրեց և արիւնոտ կոհակները գլորւում էին դէպի արտը:

—Վա՛յ, վա՛յ, արտն արիւնով է ջրւում, ճչացի ես:

Երկուսով էլ ինձ նայեցին, յետոյ բոսորային ջրի ընթացքին, ապա իրար երեսի սևեռեցին հայեացքները և մնացին լուռ:

—Արիւն ու քրտինք, մռմռաց ջրւորը բահն ուսին դնելով:

Էլի մենք սայլի վրայ էինք, գոմէշները վերսկսեցին իրանց դանդաղ ընթացքը, անիւները գլորւում էին այս անգամ ցաւոտ ճռնչիւն բարձրացնելով, իսկ հայրս լուռ էր ու մտախոհ: Նա էլ չէր երգում:

—

—Բայց դու ինձ չասացիր, թէ ո՞վ էր այն խորհրդաւոր կառքի մէջ, հարցրի ես այս պատմութեան հեղինակին, որ իմ ուսանողական կեանքի ընկերն էր:

—Ես մինչև այժմ էլ չը գիտեմ, թէ ո՞վ էր։

—Հայրդ չը բողոքե՞ց, ուր որ հարկն էր։

Պատասխանը եղաւ մի բարձրաձայն քրքիջ։

1901.

ՄԱՐԴԱԳԻԼԸ

I

Հայրս մեռաւ. գիւղում այնպէս հեշտ են մեռնում մարդիկ։ Մի օր դաշտից վերադարձաւ, բահն ուսից դէն ձգեց, «քէֆս լաւ չի, կնիկ» ասաց մօրս ու պառկեց։ Նոյն գիշերը տաքացրեց, հազաց, հազաց մինչև լոյս։ Լուսաբացին մայրս դռնէ դուռ ընկաւ, մի երկու հարևանի ձայն տուեց, եկան, հաւաքուեցին, հարց ու փորձ արին, փափսալով խօսեցին, յետոյ փորձեցին քրտնեցնել հիւանդին, բայց չը յաջողուեց. երկու օր յետոյ հայրս մեռաւ առանց բժշկի, առանց դեղի։

Հարևաններն ասում էին՝ թէ «սաթարջասից» *) մեռաւ և մի այնպիսի ձևով էին

---

*) Գիւղերում «սաթարջամ է» կոչւում թոքերի բորբոքումը։

տում այդ, կարծես այդ հանգամանքը կարող էր մեզ մխիթարել, իբր թէ սաթարջամից կամ մի ուրիշ հիւանդութիւնից մեռնելը միևնոյն ցաւը չի պատճառում անտէր անօգնական մնացած ընտանիքին։ Բայց կարծեմ սրանով նրանք ուզում էին ասել, թէ սաթարջամը մի անբուժելի ցաւ է, և այդ ցաւն ունենալուց յետոյ պէտք է անտրտունջ մեռնել։

Մեր կորուստի բոլոր սարսափը ես այն ժամանակ միայն զգացի, երբ մայրս ինձ ու քրոջս՝ Ծովիկին, գրկեց մօտեցրեց հօրս դիակին և արցունքի միջից դառն ձայնով ասաց՝ «իմ խեղճ, իմ անտէր եթիմներ»։

Ուրեմն մենք եթիմ էինք, այդ ես ամենևին չէի մտածել. իմացայ, կծկուեցի խեղճացայ և հեկեկալով մօրս փաթաթուեցի իբր մեր միակ ապաւէնին։ Տխուր, շատ տխուր բան է զգում «եթիմ» լինելը։ Որբ էլ են ասում անհայր, անմայր երեխաներին, բայց «եթիմ» խօսքը մի սև բան ունի թագցրած իր մէջ. մայրերն էլ են դողում այդ բառից և կռիւների, վէճերի ժամանակ հակառակորդների զաւակին անգամ դժուարանում են «եթիմ» ասել,—այդ անէծքը չափազանց թունոտ, չափազանց անսիրտ է։ Ես յիշեցի

իմ հասակակիցներից երկսին, Յունանին ու Սարգսին, երկու «եթիմ» եղբայրների, որոնք իրանց հօր ու մօր մահից յետոյ ապրում էին իրանց հօրեղբօր մօտ։ Տէր աստուած, ինչ օր էր այդ խեղճերի օրը. մենք ամենքս էլ ընկերներով նրանց դահիճներն էինք. ով նրանց գլխին չէր խփի, ով նրանց չէր հրի, չէր հայհոյի, իսկ նրանք ստիպուած էին կրել այդ բոլորը, որովհետև «եթիմ» էին։

Այժմ միայն ես զգացի, թէ որքան թշուառ են նրանք։ Զգացի, սիրտս ցաւով լցուեց նրանց համար. մենք եղբայրներ էինք։

Յուլիս ամիսն էր, շո՛գ. օդը խեղդում, հոգի էր հանում։ Սուրմալուի ամառ, Սուրմալուի շո՛գ, ո՞վ չի տեսել քեզ։ Գիշեր էր. մարդիկ հևալով դուրս էին թափուել տներից, բարձրացել կտուրները, անիծում էին իրանց օրը և զով, մի փոքր զով էին հայցում պղնձուած երկնքից։ Բայց զով չը կար, քամի չը կար և դրա փոխարէն մանր, համարեա անտեսանելի մոծակների ահագին բազմութիւն բարակ անախորժ վզզոցով լցրել էր օդը և կծում, խոցոտում էր մարմինների մերկ մասերը։

Մենք էլ մեր կտրանն էինք չարչար-

ւում մոծակներից ու տօթից. ծառի տերև չէր շարժւում։ Զորս կողմում դեռ ոչ ոք չէր քնել. չը նայելով ամբողջ օրուայ տաժանելի աշխատանքին, յոգնածութեանը, այնու ամենայնիւ մարդ, կին, երեխաներ, ամենքն էլ շապկանց, կիսամերկ, սպիտակ ուրուականների պէս, թափառում էին կտուրների վրա՝ անդադար երեսներին, ճակատներին ապտակելով՝ որ մոծակներին հալածեն, երբեմն ձայն էին տալիս իրար նզովելով շոգը, կամ ճարերը կտրած հանաքներ էին անում առանց կարողանալու մի կուշտ ծիծաղել։ Տեղ-տեղ կտուրների վրայ կրակ էր արուած, որ գոնէ ծխով հալածեն անթիւ մոծակներին։ Ի զո՜ւր. ոչինչ չէր օգնում, շոգ էր շո՜գ։

Ծովիկը ծոյլ ծոյլ պառկել էր անկողնի վրայ և շոգից թառալում էր. ես նստած էի մօրս կողքին։ Մայրս լուռ մտածում էր. երևի մտածելու շատ բան ունէր. չէ՞ որ ես ու Ծովիկն այժմ որբեր էինք։ Յետոյ կամաց կամաց ես էլ թեք ընկայ և նայում էի երկնքին, ուր անհամար աստղեր պլպլում էին, մի քանիսը խառն խմբով, ուրիշները պար կազմած, մի քանիսն էլ մենակ վառւում էին պայծառ, կայլն և այնպիսիները,

որոնք աղօտ էին ու խեղճ, միայնակ ձրգուած, ինչպէս մենք էինք. արդեօք երկնքի որբե՞րն էին նրանք, մտածում էի ես։ Մեր գլխավերևից, բարձրում, մի հատիկ կռունկ էր անցնում տխուր կղղալով. ո՞ւր էր գնում այդպէս ուշ, ինչո՞ւ էր մենակ, ո՞ւմն էր փնտրում, ինչո՞ւ այնպէս խեղճ, տխուր էր կղղում։ Այս հարցերը անցան իմ գլխով և ես դարձայ մօրս։

—Մայրի՛կ, ասացի, ինչո՞ւ է կռունկն այնպէս մենակ ու տխուր, ո՞ւր է գնում այսպէս ուշ գիշերով, ո՞ւմն է կանչում։

Մայրս կարծես միայն այժմ նկատեց, որ ես արթուն եմ։

—Յա՛կոբ ջան, քնիր, ասաց նա, անպատասխան թողնելով իմ հարցերը։

Ապա ես լսեցի, թէ ինչպէս հարևան կտրի վրայ մի փոքրիկ երեխայ ճչալ սկսեց. մայրն աշխատում էր հանգստացնել, բայց երեխան անվերջ ճչում էր. ես տեսայ ինչպէս մայրս վերկացաւ, հարցրեց թէ ի՞նչ է եղել։

—Կարիճը ձեռքը կծեց, եղաւ պատասխանը։

—Անտէր մնայ կարիճը, ասաց մայրս. ձեռքը սառը մածնի մէջ դրէք։

Ես տեսայ, թէ ինչպէս այնտեղ՝ հարևան կտրի վրայ մի քանիսն այս ու այն կողմն ընկած ճրագը ձեռներին, անկողինների տակ կարիճն են փնտրում, ուրիշները երեխային են հանգստացնում։ Ապա նորից սկսեցի աստղերին նայել… Յանկարծ հեռու արևմուտքում մի աստղիկ վառուեց, լոյս արձակեց, ցոլաց, իջաւ դէպի հորիզոնը. ես հետևում էի նրան և աչքերս տարուեցին…

II

Ուշ գիշեր էր, երբ ես յանկարծ վեր թռայ անասելի աղմուկից. զարթեց նաև Ծովիկը։ Ես տեսայ, թէ ինչպէս մայրս դողդողալով կռացել էր մեր երկսի վրայ և մի ձեռքով ինձ էր գրկել, միւսով քրոջս, ասես մեզ պաշտպանում էր, որ չը խլեն, չը տանեն։ Գիւղում՝ կտուրների վրայ, բակերում, փողոցներում, գիւղից դուրս, այգիների ճանապարհներում, նոյն իսկ հեռաւոր դաշտերում աղմուկն աննկարագրելի էր։ Կանայք լաց էին լինում, երեխաները սարսափած ճչում էին, տղամարդիկ վազվզում էին այս ու այն կողմ։ Ոմանք գոռում էին՝ «տարա՛ն, տարա՛ն», ուրիշները՝

«եկանք, եկանք», իսկ մէկը շատ հեռուից կանչում էր՝ «հասի՛ր, հասէ՛ք». մերթ ընդ մերթ լսւում էր մի հատիկ հրացանի ձայն և ամբողջ գիւղը անասելի տագնապի մէջ էր, կարծես թշնամիների անակնկալ յարձակման ենթարկուած։ Քանի մեծանում էր աղմուկը, քանի սաստկանում լացն ու հառաչանքը, մայրս այնքան աւելի պինդ էր սղմում մեզ իր թևերի մէջ առանց թոյլ տալու, որ փոքրիկ շարժում գործենք, այս ու այն կողմն ընկնենք և միևնոյն ժամանակ նա երկիւղով նայում էր իր շուրջը խաւարին, կարծես վախենալով մի հրէշից, որ մօտ էր յայտնուելու՝ մեզ խլելու փախցնելու համար։

Ես ու Ծովիկը մօրս թևերի տակ կծկուած՝ արտասւում էինք առանց հասկանալու, թէ բանն ինչումն է։ Ընդհանուր աղմուկի մէջ խօսք հասկանալ չէր լինում. մի անգամ միայն ես կարողացայ պարզ, որոշ լսել մի կանացի ձայն, որ լալիս էր և յուսահատ կանչում՝ «Մուշե՛ղս, Մուշե՛ղս»։ Ձայնը մեր տնից հեռու չէր. Մուշեղը իմ ընկերն էր. նրա մայրն էր այդպէս աղեկտուր կանչում իր որդուն։

—Մա՛յրիկ, Մուշեղին ի՞նչ է պատահել, ասացի ես փսփսալով.

—Սո՛ւս, որդի, բան չի պատահել, քնի՛։

Մենք տաք արինք. բայց ես լաւ գիտեի, որ մայրս խաբում է մեզ։ Այժմ իմ բոլոր ուշքը գրաւել էր Մուշեղի մօր ձայնը. խեղճ կինը երևի վազվզում էր բակում այս ու այն կողմ, և այնպես էր ճչում, հառաչում, այնպես էր որդուն կանչում, որ մազերս դիզանում էին գլխիս ցաւից ու երկիւղից։ Ձայները քանի գնացին հեռացան, յետոյ կամաց կամաց նորից մօտեցան։ Ես լսեցի, ինչպէս չորս կողմից կանչում էին՝ «մի վախեցէք, բերի՛ն, բերի՛ն». այս անգամ մարդիկ, երևի, վազում էին դէպի գիւղը։

—Դէ վերկացէք, ցած իջնենք շուտով, ասաց մայրս։

Մենք վեր ցատկեցինք, վախով չորս կողմերս նայելով՝ սկսեցինք արագ-արագ հագնուել։ Կտուրներում էլ մարդ չէր մնացել, ամենքը ցած էին թափուել, ներս մտել տները, կամ խումբ-խումբ վազում էին դէպի Մուշեղենց տունը, ուր սրահում ճրագ էր վառւում և բազմութիւնը շրջապատել էր մէկին։ Շուտով մենք էլ ցած իջանք մօրս

հետ, այնտեղ հասանք։ Մուշեղը պառկած էր աչքերը խուփ, համարեա անզգայ. նրա դէմքը մեռելի պէս գունատ էր, իսկ կոկորդը փաթաթուած էր արիւնոտ լաթերով։ Գըլխավերևում երկու կողմից նստած էին հայրն ու մայրը, իսկ բազմութիւնը պատել էր շուրջը։

Ամենքն էլ՝ թէ մարդ, թէ կին՝ կիսամերկ էին. տղամարդիկ՝ գլխաբաց, ոտաբոբիկ, սպիտակ կտաւէ շապիկով և վարտիքով։ Մէկը ձեռքին բահ ունէր, միւսը՝ մի երկար ձող կամ հաստ մահակ, մէկը մի ժանգոտած, առանց պատեանի սուր. կային, որ ունէին ուսերին մի մախրահան, մի գերանդի, մի մանգաղ, երկաթէ շիշ. մի խօսքով ով ինչ ճարել էր, խլել և դուրս էր ընկել…

Բազմութիւնը մեծանում էր. նոր բահաւորներ, նոր մահակաւորներ հասնում էին հետզհետէ։ Ամեն մի նոր եկող հարցնում էր միւսներին պատահածի մասին, պտտում էր ամբոխը, մօտենում երեխային նայելու, ապա իմանալով եղելութիւնը՝ սկսում էր պատմել մօտի հարևանին, թէ ինքն ի՞նչ է արել ընդհանուր սարսափի ժամանակ, ինչպէս և ո՞ւր է վազել։ Հարցերի մեծամաս-

նութիւնը Մուշեղի հօրն էր ուղղվում և նա ստիպուած էր անթիւ անգամ կրկնել սարսափելի անցքի պատմութիւնը։

«Էս առաւօտ,—սև ըլնէր էս առաւօտը,—ասում էր նա ծնկերը տրորելով, հունձի գնացի, սանահէր Օհանի հետ էինք. խօմ տեսաք, թէ ինչ շոգ էր, գետնի հողի մէջ ձու կեփուէր։ Սանահէր Օհանի հետ ամէն մէկս մինչև իրիկուն, չորս աւետարան, չորս սափոր ջուր ենք խմել ու քրտինք թափել. սև օրով քաղեցինք. դէ ինչ անենք, խօմ չենք թողնի մեր ցանքը ջուր դառնայ»։

—Ջո՜ւր, գոչեց՝ Մուշեղը աչքերը կիսաբաց։

—Ջուր տամ, քոռանամ ես,—ասաց մայրը ջուրը նրա շրթունքներին մօտեցնելով։

Հայրը շարունակեց.

«Իրիկունը տուն եկանք սանահէր Օհանի հետ, երկսով էլ ջարդուած մեռելի պէս, ախորժակ էլ չը կար, հազիւ մի քանի պատառ բերաններս դրինք, սանահէրս «բարի գիշեր» ասաց, գնաց, ես էլ օրօրուելով կտուրը բարձրացայ, տեղերիս վրայ ընկայ և ընկնելս ու քնելս մէկ եղաւ. դէ ինչ գը-

լուխներդ ցաւեցնեմ, դուք ամէնքդ էլ ցանքի, ցաւի տէր էք, գիտէք, թէ հնձից դարձողը ինչ օրումն է լինում, ինչպէս է քընում։ Քնեցի ոչ բարով, ոչ խէրով. մենակ մի բան լաւ միտս է. քնելուց առաջ ինչպէս մէկն ինձ ասէր, թէ մէկ երեխի տեղին նայի. ինչո՞ւ նայեցի, ես էլ չը գիտեմ, էհ, Նա միայն գիտէ, աւելացրեց պատմողը՝ մատը դէպի երկինք մեկնելով, ա՛յ այնտեղ գրածը չի ջնջուի. նայեցի, ինձ էնպէս թըւաց, որ Մուշեղս ինձանից էս օր շատ հեռուս է, մի քիչ տեղաշորը մօտ քաշեցի ինձ. բանից չէի վախենում, հէնց էնպէս, ուզեցի, որ մօտ լինի, շունչը լսեմ, բայց ինչ լսել, ինչ բան, քունն ու մեռնելը կասեն մէկ է, աչքերս խփելն ու քնելը մէկ եղաւ։ Գիշերուայ ինչ ժամանակն էր, չեմ իմանում,—էլ խելք մնաց գլուխս, որ իմանամ,—մէկ էլ յանկարծ զարթեցի, ինչ մէկը կախուել է մազերիցս քաշում է հա՛ քաշում. վեր թռայ գժի պէս, շշկլուած, կէս քուն կէս արթուն աչքերս տրորեցի, ինչ տեսնեմ, Մուշեղս պինդ բռնել է մազերիցս, իսկ մի ուրիշ սև բան, մի աժդահայ հրէշ, երեխայի վզիցն է բռնել ու քաշ տալիս, ինձ էլ հետը։ Զարգանդը կոխեց ինձ. մինչև որ

խելքս գլուխս կը գար, մինչև որ կապ ընկած բերանս կը բացուէր, որ ճչայի, «հաւար» կանչէի, մազերս փետուեցին երեխայի ձեռքում և մէկ էլ էն տեսայ, որ նա ճըչալով պատից ցած ընկաւ գազանի հետ. էդ ժամանակ էր, որ ես քանի ձէն ունէի «հաւար» գոռացի»:

—Վա՜խ հոգիս դուրս գայ, վախ աչքերս քոռանայ, լսւում էր այս ու այն կողմից:

—Տնաշէն, էնպիսի ձէն հանեցիր, էնպիսի ձէն, որ մենք էլ դիւանանք. ես հէնց ձէնդ առայ թէ չէ. թռայ, քիւլհանը խլեցի ու վազեցի, ասաց սանահէր Օհանը, որ, մի մոխրահան ուսին, կանգնել էր երեխային բոլորովին մօտ և այնպէս էր նայում իր շուրջը ու երեխային, կարծես հէնց իր մոխրահանն էր փրկել սրան:

—Մենք խօ տնով զարթուն էինք, մէջ ընկաւ Մանօն, երեխին կարիճը կծեց, չէր դադարում. որ չէ՜ ձէնդ առայ, մազերս դիգացան, ասի «վալլահ» մարդի տունը գողերը թալանեցին տարան, վեր թռայ, «թո՛ւրս» ճչացի. հարսը զօրանայ, չը շշկլուեց, թուրը գտաւ, տուեց ինձ, խլեցի և վազեցի:—Սա էլ իր ժանգոտ թուրն էր դրել ուսին

և նոյն յաղթական եղանակով նայում իր շուրջը:

Այնուհետև այս ու այն կողմից դարձեալ պատմողներ եղան, թէ ով և ինչպէս հասաւ: Երբ վերջապէս լռութիւնը մի փոքր վերահաստատուեց, Մուշեղի հայրը շարունակեց.

—«Հաւա՛ր» կանչեցի և ինձ էլ պատից ցած գցեցի. հէնց ընկայ գազանի վրայ. մի բոպէ երեքով խառնուեցինք իրար՝ ես, գազանն ու երեխան. ես ջանք արի՝ մէկ էլ պինդ բռնեցի երեխային, բայց գլուխ չեկաւ. անիրաւ գազանն աւելի ուժով էր, խլեց իմ ձեռքից երեխային և ոտների տակից քաշ տալով՝ փախաւ: Ո՞նց էր փախչում, ո՞նց էր փախչում, քամու պէս. հայ քրիստոնեայ էք, կը հաւատաք: Լաւ, որ մեր կնիկն էլ էր զարթնել, նա էլ սկսեց մի կողմից «հաւար» կանչել: Հարևանները, ողորմի իրանց հօրը, չորս կողմից թափուեցին, վրայ հասան ետևից. գազանը վազում էր այգիների ճանապարհով, երբեմն կանգ էր առնում, ցած էր դնում իր բեռը, հանգստանում և, կրկին վերցնելով, վազում հա վազում. երեխան էլ, քոռանան աչքերս, էնպէս էր նըւում, էնպէս էր նըւում, որ չէ՜

ձէնն ականջիս էր հասնում, հոգիս տակն ու վրայ էր ընկնում, գլխիս կրակ էր մաղվում. դէ արի, որ ոտներումս ոյժ չը կար, որ հասնէի: Մէկ էլ, ո՞ր կողմից՝ չը գիտեմ, մի հրացանի ձէն հասաւ. ախ, էն ո՞ր ողորմած հէրն էր, եա՜րաբ, որ էդ հրացանը կրակեց:

—Ղարի՜բն էր, Ղարի՜բն էր, Աստուած իրան բարի տայ, ասացին մի քանի ձայներ:

—Հազար ողորմի իր հօրը, շարունակեց պատմողը. հրացանի ձէնը կասես Աստուծու ձէնը լինէր, որ երկնքից լսուեց, գազանին սատկեցրեց. նա իսկոյն թողեց երեխային ու փախաւ: Հարևաններով հասանք. էլ ի՞նչ հասնել, հա՛ մեռելը, հա՛ Մուշեղը մէկ էր. հրէս, տեսէք, թէ ինչ օրում գտանք իմ մինուճարին:

Մի առ ժամանակ ամենքը լուռ կացան, նայում էին երեխային:

—Բա էդ անտէրն ինչի՞ նման էր, ասաց ծանրակոկոթ ռէս Հայրօն, որ բոլոր ժամանակ լուռ էր:

—Ի՞նչ ասեմ, տանուտէր Հայրօ. թէ ասեմ շան նման՝ շան նման չէր, թէ ասեմ գէլի՝ գէլի նման չէր, աղուէսի նման էլ չէր, արջի նման էլ չէր. ինչ գլուխդ ցաւացնեմ, էս հասակիս էդպիսի բան ո՛չ տե-

սած եմ, ոչ լսած. հէքիաթների մէջ էլ էնպէս բան չը կայ, որ չէ կանգնում էր՝ ճակատի մազերը յետ գցում, պպղան աչքերով նայում, կասես տաք-տաք շիշեր կոխէին մարդու սիրտ. ատամներն էնպէս էր չխկչխկացնում, որ դողը բռնում էր ինձ. երբեմն էլ կասես թէ մարդու պէս ծիծաղում էր, կամ թաթը բարձրացնում էր, բռունցքը էր ցոյց տալիս, կամ ուրախութիւնից տնկտնկալէն խաղում էր: Շները, ձեր ոտին մեռնեմ, շներն ինչպէս են վախենում. մեր շունը հօ լկուեց, գլուխ առաւ փախաւ ու փախաւ. սանահէր Օհանենց շունը, աչքովս տեսայ, վնգստալով քաշուեց դէզի տակ մտաւ. մէկէլներն էլ խօ պապանձուել էին. մի հատ շան ձէն լսեցի՞ք: Չէ, էդ մի ուրիշ բան էր, ուրիշ. մի այլակերպ բան էր. երկինք գետինք իրար խառնուեց: Մի կտոր հաց էինք տուել մեր դուռը բացողին, հէնց էն կտոր հացը երեխիս առաջն ընկաւ, թէ չէ տարել էր, անմաս, անբաժին արել իմ մինուճարին, մեզ էլ բոցերի մէջ փոթոթել: Փառք քեզ Աստուած, էլի քո դիւան դարգեահին ենք ապաւինել, էլի դու ես քո անխուփ աչքով անճար-անտէրի ցաւերը տեսնում, քո ան-

չափ ողորմութեամբ մի դուռ բաց անում, փրկում, ազատում։

—Փա՜ռք քեզ Աստուած, հազա՜ր բերան փառք, մռմռացին բազմաթիւ ձայներ։ Լուսաբաց էր ու բազմութիւնը երեսը դէպի արևելք դարձրած՝ աղօթում էր· ոմանք երեսները խաչակնքում էին, լալիս էին։

—Մարդագէլ է, ասաց Օհանը իր ծուռ վիզը յենելով մոխրահանի կոթին։

—Մարդագէլ ասիր պրծա՞ր, վրայ բերեց մի ուրիշ ձայն· ապա դաշտի գէլը կը գայ, գեղից երեխայ կը տանի՞· մինչև հիմա ո՞վ էր տեսել էսպէս բան։

—Մարդագէ՜լ է, փսփսացին կանայք իրար մէջ, ծնկները տրորելով։

—Ճա՞ր... հնա՞ր...

—Աստուա՜ծ, եղաւ պատասխանը։

Լոյսը բացւում էր· բազմութիւնը մռայլ, ընկճուած ու ոչնչացած՝ ցրուեց։

Գիւղը դողում էր մի գազանից։

III.

Լոյսը բացուեց· լոյսի հետ էլ գիւղին տիրող սարսափը մի փոքր թուլացաւ, մարդկանց սրտերը մի քիչ բացուեցին։ Գիւղացիք

դարձեալ գնացին իրանց ամենօրեայ ցաւ ու հոգսի յետևից, մտածելով թէ ինչպէս ազատուեն մարդակեր գազանից։

Մայրս էլ քաղհանի գնաց՝ նախապէս պատուիրելով, որ գիւղից շատ չը հեռանամ և երեկոյեան արևը մայր մտնելուց առաջ կովերը տուն քշեմ, որ չը լինի թէ ուշանամ, մութը վրայ հասնի։ Առանց այդ պատուէրի էլ ես սիրտ չէի անիլ հեռանալ գիւղից և ուշանալ։ Երևի մենակ ես չէի վախեցողը· երեկոյեան, արևը մտնելուց շատ առաջ, բոլոր հօտաղները իրանց անասունները դէպի գիւղ քշեցին մինչև անգամ նախրապան Մկօն, որ ամբողջ ձմեռ սաքուներում մարդկանց կը ձանձրացնէր գայլերի հետ իբր թէ իր ունեցած կռիւների պատմութիւններով, իր գլուխը կը գովէր, այսօր սովորականից շատ շուտ նախիրը դէպի գիւղ քշեց,—նա էլ էր վախենում։

Գիշերը մօտենում էր, նրա հետ էլ գազանի սարսափը։

Այդ երեկոյ եկեղեցում ժամաւորները շատ էին· ժամերգութիւնը երկար տևեց տէրտէրը «Տէր, ողորմեա» արեց, ամենքը ծնկաչոք աղօթեցին։ Ժամից յետոյ էլ գզիրը կանչեց, որ տունը մի մարդ գիւղամէջ գայ։

Մարդիկ գլխակոր և մտախոհ էին գնում դէպի գիւղամէջ: Մեր տնից ես պիտի երթայի մօրս հետ: Ծովիկին հարևաններից տուն ուղարկեցինք և մենք գնացինք:

Բազմութիւնը շատ էր: Այնտեղ էր ռէս Հայրօն՝ ահագին մորթէ փափախը գլխին. նա ծխում էր պատի տակ նստած և ծուխը բարձրանում էր նրա գլխի չորս կողմից, այնպէս որ կարծես փափախն էր ծուխ արձակում: Նա վերև չէր նայում, հասնողների բարևն ընդունում էր և լուռ շարունակում էր ձեռնափայտով խաղխղել գետինը: Այստեղ էր Ծովից Օհանը, որ երէկ գիշեր մոխրահանով գնացել էր գազանին սպանելու: Այստեղ էր Մանօն, ըստ սովորութեան գըլխաբաց. հեռուից երևում էր նրա ածիլած գլուխը՝ գագաթի վրայ մազի երկար փնջով, որ նա յարդարում էր ձեռքով, և ժամանակ առ ժամանակ հազում էր ծանր, իշխանական հազով, մի բան, որ ոչ ոքի դուր չէր գալիս: Յետոյ երևում էին դարբին Թումօն, խուս Մարտօն, բրուտ Նըհօն,—ամենքն էլ իշխաններ, ամենքն էլ ծեր, կամ ձեռնափայտ, կամ տէր-ողորմեա ձեռներին: Սրանց առաջ կանգնած էին շատ ուրիշ գիւղացի-

ներ. ես ու մայրս էլ մի անկիւնում կանգ առանք. լուռ էին ամենքն էլ:

—Հարևաններ, ասաց վերջապէս ռէսը, ի՞նչ ասեմ, դուք գիտէք էլի, թէ էսօր ինչի՞ եմ կանչել ձեզ. էդ անիրաւ գազանը երէկ Սարգսի երեխան տարաւ, էս գիշեր էլ կարող է մի ուրիշինը տանել. խելք խելքի տանք, գուցէ մի ճար, մի հնար գտնենք»:

Ժողովականները գլուխները քաշ ձգեցին. խնդիրը դժուար լուծելի էր, մտածում էին:

—Թակարդներ դնենք, ասաց վերջապէս մի ձայն:

Ամենքը նայեցին. դարբին Թումօն էր:

—Լաւ, թակարդը վաղը, շարունակեց ռէսը, էս գիշեր ի՞նչ անենք:

—Էս գիշե՞ր... ասաց այս անգամ Օհանը. ռէս, էս գիշեր թող տունը մի մարդ դուրս գայ գեղը պահպանելու:

—Բա էլ ո՞վ քնի, պատասխանեց մի ձայն:

Սրախօսութիւնը աջող էր. ծիծաղի նըման մի ընդհանուր շշուկ բարձրացաւ. Օհանը վիրաւորուեց:

—Դէ դուք խելօք բան մտածեցէք, ասաց նա ու լռեց:

—Տունը մի մարդ չէ, ասաց ռէսը, թող մի քանի լաւ տղամարդ մինչև լոյս արթուն մնան։ Ո՞վ է ուզում։

Ձայն տուող չեղաւ։

—Ի՞նչ էք լռել, ա՛յ ջահիլներ, ձայն տուեց ռէսը վրդովուած, խօմ դուք էլ երեխաներ չէ՞ք, որ գէլը տանի։

— Երեխաներ չենք, տանուտէր, պատասխանեց մի երիտասարդ, բայց ի՞նչ անենք, որ հրացան չը կայ, խօմ քիւլհանով չենք սպանի գազանին։

Առարկութիւնը լուրջ էր. այդ մասին չէին մտածել. մեր գիւղում ճիշդ որ հրացան չը կար։ Լռեցին։

—Ղարիբը հրացան ունի, ասաց յանկարծ մի ձայն։

—Հա, հա, Ղարիբը հրացան ունի, ձայնակցեցին ուրիշները՝ մեծ գիւտ արածի պէս ուրախացած։ Բոլորի դէմքերը փայլեցին այդ գիւտից։

Ղարիբի հրացանը մեր գիւղում մի զարմանալի բան էր։ Ամենքը լսել էին նրա մասին, բայց ոչ ոք չէր տեսել. ոմանք ասում էին՝ երկու կրակէն է, ուրիշներն ասում էին՝ տասնուվեց կրակէն, կային հաւատացողներ, թէ Ղարիբի նշանը խակի զուր չի

անցնում։ Տարին մի երկու անգամ, ամառը դաշտերում, գիշեր ժամանակ Ղարիբը իր այդ առասպելական հրացանը կը կրակէր, կարծես գիւղացիները յիշեցնելու համար իր զէնքի գոյութիւնը։ Բայց և այնպէս գիւղացիք խաղաղ ժամանակ համարեա միշտ մոռանում էին այդ զարհուրելի զէնքի գոյութիւնը և միայն երբ գիւղում կամ դաշտերում գող էր յայտնւում, այն ժամանակ կրկին յիշում էին Ղարիբի հրացանը, իրար մէջ խօսելով, թէ որ Ղարիբն այնտեղ՝ անցքի տեղումը լինէր իր հրացանով, գողերի բանը բուրդ էր, որովհետև Ղարիբը կը զարկէր. սրա համար է, ասում էին, որ Ղարիբի տունը գող սիրտ չի անում մտնել, Ղարիբը որ բարկանայ, Աստուած ազատի։ Ահա թէ ինչու այսօր նորից Ղարիբի հրացանը յիշեցին, որոշուեց, որ պահապանների հետ Ղարիբը կը լինի իր սարսափելի հրացանով, իսկ մնացածները կը գնուէն երէկ գիշերուայ պէս։

—Հա՛րևաններ, մի բան էլ ես ասեմ, ձայն տուեց յանկարծ Մանօն. մենք ամենքս էլ, գիտէք, որ ցաւի, դարդի տէր մարդ ենք. առաւօտից իրիկուն մեր ոտ ու ձեռի սխան ենք ուտում, օձերի հետ ջուր խմում,

քարը մեզի բարձ շինում, տրուն քրտինք թափում, իրիկունն էլ տուն ենք գալիս ջարդուած, տրորուած աղցանի պէս։ Էդ քան պահապանները որ կան՝ էլի մեզնից են, մեզ պէս սև օրով ապրող, արի որ յոգնած, ջարդուած՝ ուզեն չուզեն՝ էս, էն պատի տակ ընկնեն քնեն. մենք էլ նրանցով ապահով մեր երեխաները գազանի բերանը տանք, մէկ էլ որ, խօմ լսեցի՞ք երէկ Սարգիսն ի՞նչ պատմեց. մարդն իր աչքով տեսածն էր ասում. արի որ նրա ասածի պէս էդ անտէր գազանը մի չը տեսնուած բան լինի, ո՞վ գիտէ Աստուծոյ բանը, հէնց պահապանների կողքից անցնի՝ չը տեսնեն։ Լաւ չի՞ լինի, որ մենք մեր բանը մի քիչ հիմնաւոր բռնենք, թո՛ղ մի քանի հարևաններ հաւաքուեն իրար մօտ, մի բարձր կտրի վրայ քնեն և հերթով արթուն մնան. ի՞նչ կասէք։

—Խելքը կարած բան է, ձայն տուին այս ու այն կողմից։

—Ուզում եմ մի բան էլ ես ասեմ, ասաց բռուտ Նըհօն, վայ թէ անխելք համարէք։

—Ասա՛, ասա՛։

—Հա՛րևաններ, լաւ չի՞ լինի, որ մե-

ծերը, կտուրների վրայ քնելուց առաջ, մանր երեխաներին իրարից կապեն և յետոյ պարանի ծէրը պնդացնեն իրանց ոտին ձեռին, թէ բան է, Աստուած ոչ անի, գազանը երեխային քաշի, բոլորը միասին կը զարթնեն։

Այս միտքն ընդհանուրի զարմանքը շարժեց, այն աստիճան խելացի երևաց. քիչ մնաց, որ մարդիկ չորս կողմից վրայ պըրծնէին, Նըհօին գըկէին, համբուրէին։

—Հա՛յ Աստուած քո խելքն օրհնի, Աստուած քո ծնունդն օրհնի, Նըհօ, լսւում էր այս ու այն կողմից։

Խորհուրդը վերջացաւ. բազմութիւնը ցրւում էր. պահապանները գնացին պատրաստուելու. ասում էին, որ Ղարիբն էլ իր զարմանալի հրացանն է սրբում պատրաստում, իսկ գզիրը կանչում էր փողոցներում, որ մի քանի հարևաններ հաւաքուեն մի կտրի վրայ քնելու, իսկ երեխաներին էլ իրանցից կապեն։

Ես ու մայրս շտապ-շտապ վերադարձանք, Ծովիկին գտանք, գնացինք մեր տեղաշորերն ուստա Թումօենց կտուրը տեղափոխելու, որ ամենից բարձր էր և աւելի ապահով։ Հարևանները չորս կողմից նոյն-

պէս դէպի այնտեղ էին դիմում. որը տեղաշորն էր շալակել, որը բռնել էր երկու երեխայի ձեռքից, որոնք վախից լալիս էին կամացուկ. աւելի հասակաւոր երեխաները, իմ հասակակիցները, իրար հրհրելով վազում էին, որ գնան շուտ բարձրանան, քանի «մարդագէլը» չի հասել. կանայք օրօրոցներըն էին շալակել։ Ամբողջ գիւղը այսպէս կարծես գաղթում էր։

Մութն ընկաւ. կտուրներից մի քանիսն այս գիշեր աւելի էին կենդանացած, միւսները լուռ էին և լքուած։ Գզիրը դեռ կանչում էր փողոցներում, ժողովի վճիռները յայտարարելով. երեխաները երկիւղով էին լսում նրա վերջին խօսքերը՝ «Երեխաներին կապեցէք, հա՜մ»։ Երբ մայրս պարանը ձեռքին մօտեցաւ ինձ ու Ծովիկին, մենք երկուսով էլ ճչացինք. թւում էր, թէ այդ պարանով մեզ կապում են, որ հէնց այդպէս կապած «մարդագէլին» յանձնեն։

Մայրս կապեց մի ոտքս, իսկ Ծովիկին համոզելու համար իզուր անցան մօրս յորդորները, սպառնալիքները, աղաչանքը. նա ճչալով յետ յետ էր փախչում պարանից և այնպէ՜ս էր լալիս, այնպէ՜ս էր աղաչում, որ իր ոտքը չը կապեն, իրան չը յանձնեն

մարդագէլին։ Ճար չը կար. մայրս ստիպուած եղաւ թողնել նրան ազատ՝ քանի արթուն է։

Ես դարձեալ քնել չը կարողացայ, ինչպէս քնէի. ամեն անգամ, երբ զգում էի պարանը, դողը բռնում էր ինձ, միւս կողմից էլ կտրի վրայ խմբուած կանայք սկսեցին սարսափելի բաներ պատմել «մարդագէլի» մասին։

—Հէնց ասում են «մարդագէլ, մարդագէլ», ասում էր Ծովիկ Օհանի կին Նախշունը, ախր ինչպէս թէ «մարդագէլ», մարդն էլ գէլ կըլնի՞։

—Հողը գլխիդ, հողը գլխիդ, պատասխանեց Եղսան բաջին, Մանօի պառաւ մայրը. էդ հասակիդ որ էդ էլ չես հասկացել, էլ դու ինչ կը հասկանաս աշխարհից։ Քա, Աստծու կամքը չի՞. որ ուզի մարդուն գէլ էլ կը շինի, արջ էլ, աղուէս էլ։

—Ախր էդ ինչպէս է լինում, Եղսան բաջի, ձայն տուին այս ու այն կողմից կանայք։

—Ի՞նչպէս է լինում, ասաց Եղսան բաջին իր պառաւ գլուխն օրօրելով. ինչպէս է լինում։ Աստծու հրամանով երկնքից փըռ-

ֆըռալէն «խըռխ» *) է ցած գալիս, իսկ և իսկ խըռխ, և ընկնում է մի մեղաւոր, չա-նարժան կնկայ գլխին—մեղա՜յ քեզ, Աս-տուած—դէ որ ընկաւ խըռխը, էն կնիկը գէլ է ու գէլ էլի՜։

—Էդ ինչի՞ հէնց կնկայ վրայ է ընկ-նում։

—Եւան կնիկ էր, խօ մարդ չէր. «մեղքը» ումի՞ց ծնաւ։

—Լաւ, խըռխը իջաւ, չի՞ լինի, որ էն կնիկը դէն գցի էդ անտէր խըռխը՝ չը հագ-նի, որ մարդագէլ չը դառնայ։

—Ի՞նչ ես անգէտ անգէտ խօսում. Աս-տծու հրամանն է, ո՞նց չը հագնի. որ խըռխն ընկաւ, նա ուզի չուզի գէլ է։

—Եղսան բաջի, ողորմի քո հօրը, ասա՛, յետոյ ի՞նչ է պատահում։

—Յետոյ ի՞նչ... յետոյ էն, որ հէնց մութն ընկնում է, էն կնիկը դուրս է գա-լիս տնից, ընկնում է սար ու ձոր և երե-խաներ է գտնում ուտում։ Հէնց որ լոյսը մօտենում է, իսկոյն փաղում է մի ծածուկ տեղ, խըռխը հանում է, ծալում, պահում և անմեղ տուն գալիս. գիշերն էլի գնում է։

*) Խըռխ=խորխ, օձի շապիկ, մորթի.

Աստծու հրամանով նա էնքան ժամանակ մարդագէլ կը մնայ, մինչև որ մի անգամ, երբ խըռխը հանելու կը լինի, մարդ վրայ հասնի, սիրտ անի, խըռխը խլի և կրակը գցի։

—Ուղիղ է ասում Եղսան բաջին, մէջ ընկաւ Թօփալ Մարթան. մէրս, հազա՜ր ո-ղորմի իրան, կասէր, թէ մի կեսուր մի հարս է ունենում, էդ հարսը գիշերը միշտ խափանւում է, ցերեկը հաց չի ուտում, համ էլ գեղի երեխաներին էլի էսպէս մար-դագէլը տանում է։ Էդ կեսուրը միտք է ա-նում, միտք անում, մատը կծում է և ա-սում թէ՝ կայ չը կայ մարդագէլը իմ հարսն է։ Մի գիշեր էլ էդ հարսն էլի գնացած է լինում, կեսուրը վեր է կենում, թոնիրը թէժ վառում. լուսադէմին տեսնում է, որ հարսն եկաւ թևի տակ մի սև բան. կեսուրը կամացուկ մօտենում է, հարսին ետևից հրում է, գցում է թոնիրը հարսն էնպէս է ճչում, էնպէս է ճչում, որ արար-աշխարհ թնդում է. յետոյ թոնրի մէջ խըռխը վառ-ւում է, հարսը սաղ, սալամաթ դուրս է գալիս. Աստծու հրամանով է էսպէս ըլնում. գեղն ազատւում է։

—Տեսնես ո՞վ է էս «մարդագէլը».

—Եանի մի բան ականջովս ընկել է, ամա ինչ ասեմ, Աստծու բանն է, ասաց Եղսան բաջին շատ խորհրդաւոր եղանակով։

—Ի՞նչ, ինչ, ձայն տուին մի քանի կանայք։

—Ասում են, որ «մարդագէլը» մեր գեղից, հէնց մեր հարևաններից է։

—Յիսո՛ւս Քրիստոս, Յիսո՛ւս Քրիստոս․

—Ո՞վ է, Եղսան բաջի, ողորմի քո հօրն, ասա՛, հարցրին նոյն կանայք, գլուխները մօտեցնելով Եղսան բաջուն։

Եղսան բաջին գլուխը կախեց, ձայնն աւելի ցածրացրեց և կամացուկ ասաց․

—Ասում են, որ «մարդագէլը» Ծուռ-Փարին է։

—Վա՜յ նրա ծամը կտրեմ, վայ իմ սիրտը սևնայ, ճչացին լողները միաբերան։ Ես էլ գողացի անկողնիս մէջ,—Ծուռ-Փարին մեր հարևանն էր։

—Սուս, սուս, հրամայեց Եղսան բաջին, սուց կացէք, Աստծու բաներն ո՞վ կարող է հասկանալ․ դէ ինքն ինչ անի, ինքը կուզէ՞ր գէլ դառնալ․ դէ որ խըռխը երկնքից ընկել է, ո՞ր ջուրն ընկնէր, բալքի մեզ վրայ էր ընկնում, փառք տուէք Աստ-

ծուն, սուս կացէք։ Գեղի չորս կողմը պահապաններ են դրել․ հայհո՛ւ, պահապանով բա՞ն կը դառնա՜յ․ «մարդագէլը» ասեղի պէս խափանւում է, միայն թէ մէկն ու մէկն էն անտէր խըռխը ձեռք գցի, թէ չէ հնար չը կայ։

Այնուհետև դեռ երկար խօսում էին «մարդագէլի» մասին, դեռ երկար Եղսան բաջին փսփսալով ահաւոր բաներ էր պատմում․ աչքերս կամաց կամաց փակուեցին, յետոյ մի քանի անգամ վեր թռայ, նրանք խօսում էին, յետոյ կրկին քնեցի, էլի վեր թռայ, միշտ թւում էր, թէ մէկը ոտքիցս քաշում է․ պարանն էր․ ի վերջոյ նորից քնեցի։

Որքան էի քնել, չը գիտեմ, գիշերուայ մի ժամանակը նորից զարթեցի․ այս անգամ սարսափով զգացի, որ մէկն իսկապէս քաշում է ոտիցս․ Ծովիկն էր, որ ճչալով փախչում էր տեղից, ինձ էլ հետը քաշ տալով․ մենք խառնուեցինք իրար, կանչւում էինք, էլ բան հասկանալ չէր լինում։ Գիւղում նախորդ գիշերուայ իրարանցումն ու աղմուկն էր տիրում, կտուրների վրայ նոյն լացն ու կոծը, փողոցներում նոյն հայհրոցը․ այս անգամ ամենքը վազում էին

դէպի գիւղի միւս ծայրը. այնտեղից էր լըսւում «տարա՛ւ, տարա՛ւ»:

Ագռաւը շարունակուեց մինչև լուսաբաց. օգնութեան գնացողները վերադարձան. նրանց պատմութիւնը զարհուրելի էր: Նախրչի Մկօն, իր գլուխը գովելու համար, օրօրոցը կապել էր իր մէջքից, անկողին մտել, ասելով, թէ ինքը մենակ կը մնայ իրանց կտրանը և մարդագէլը բան չի անի, թէ ինքը շատ շուտ է զարթնում, թէ մի մարդ ու մի կին իրանց մի հատիկ երեխան կարող են պահել առանց ուրիշների դռներն ընկնելու: Բայց գազանն եկել էր, երեխան հանել էր օրօրոցից՝ առանց Մկօին զարթեցնելու. կինն էլ, քաղհանից վերադարձած, մարդուց աւելի խորն էր քնել և, շատ ուշ միայն զարթնելով, օրօրոցը դատարկ էր գտել: Նրանց «հաւարի» վրայ օգնութեան գնացողները՝ հասել էին այն ժամանակ, երբ Մկօն գլուխը կորցրած կտրից ցած է իջնում, որ վազի գազանի յետևից, իսկ կինը դատարկ օրօրոցը շալակած՝ խելագարի պէս վազվզում է կտրի վրայ այս ու այն կողմը, մազերն է փետում և երկինք գետնից իր մի հատիկ երեխան է խնդրում:

Իզուր էր անցել պահապանների և մնացած գիւղացիների այս ու այն այգում փնտրելը, իզուր նրանք տակն ու վրայ էին արել նոյն իսկ հեռաւոր արտերը, դէզերը, մացառները: Շատ ուշ, լուսաբացին միայն, կարողացել էին հետքը գտնել. գազանը անյայտացել էր. նա լափել էր ամբողջ երեխան, թողնելով միայն փոքրիկ գանգը, արիւնոտ, զարհուրելի: Այդ գանգը բերել էին. թշուառ մայրը՝ տեսնելուն պէս ուշաթափուել էր:

Եւ այսպէս՝ Եղսան բաջին ճիշդ էր ասում. մարդագէլը գիւղ էր մտել, ոչ մի պահապան չէր տեսել, Ղարիբի հրացանը չէր կրակուել, շուն չէր հաջել և «մարդագէլը» տարել էր երեխան: Սարսափը չափից անցաւ:

—Չասի՞, կրկնում էր Եղսան բաջին, ծնկները տրորելով, չասի՞, որ ասեղ կը դառնայ՝ կը խափանուի. էն անտէր խոռխը պէտք է գտնել, խոռխը:—Այս անգամ բոլոր կանանց միակ հոգսը դարձաւ մի հնարով խոռխը գտնել. նրանք՝ էլ չէին հաւատում ոչ պահապանների հսկողութեանը, ոչ Ղարիբի հրացանի զօրութեանը, ոչ գիւղի շուրջը դրուած թակարդներին:

Մեր կորանը միայն Ծուռ-Փարու անունն էր լսում կանանց բերանից։

— Ծուռ-Փարու ծամը կտրեմ, նրա ազիզը թաղեմ, ժռռում էին բազմաթիւ զայրացած ձայներ, նա է, նա է…

—Գնանք, ասաց յանկարծ Եղսան բաջին, գնանք սեւուրին տեսնենք։

—Գնանք, գնանք, կրկնեցին բազմաթիւ ձայներ։

Եւ կանանց մի ստուար խումբ կտրից շտապ շտապ ցած իջնելով՝ Եղսան բաջու հետ դիմեց դէպի Ծուռ-Փարու տունը։

IV.

Ո՞վ էր Ծուռ-Փարին։

Ես դեռ մինչև այսօր առանց մի ծանր, անախորժ զգացմունքի չեմ կարողանում յիշել այդ պառաւին, որ գիւղի բոլոր երեխաների սարսափն էր։ Չորացած, կմախք դարձած մի բարձրահասակ կին էր նա. վարի ծնօտը սաստիկ առաջ էր եկած, իսկ ծեր, կնճռոտ շրթունքները դժուարութեամբ էին կարողանում ծածկել նրա ցցուած առաջնատամները։ Յօնքերի և քթի հանգոյցում նա մի խորութիւն ունէր, որ կարծես չա-

րութեան բոյն լինէր, և զայրացած ժամանակ այդ փոսի շուրջը այնպիսի խոր ծալքեր, դաժան կնճիռներ էին կազմւում, որ նրա սովորական թշուառ, տանջուած դէմքը ստանում էր մի դիւային արտայայտութիւն։

Եւ ճիշդ որ նա մի դիւային բան ունէր իր շարժումների, իր խօսակցութեան, նաև իր պարապմունքի մէջ. նա թիզ բաց անող, ջերմ կտրող, մաղ դնող, դև հալածող էր։ Չար, կռուարար կին էր ի բնէ, բայց իր կեանքի զարհուրելի դառնութիւնը—մի անվերջ հոգեմաշ աղքատութիւն, որ նրան բաժին էր ընկել, նրան դարձրել էր էլ աւելի չար, էլ աւելի մարդատեաց։ Նա ատում էր ամբողջ գիւղը, և դրա փոխարէն գիւղն ատում էր նրան տգէտ մարդկանց բիրտ, անարուեստ, բացարձակ ատելութեամբ, որ երբեմն արտայայտւում էր շատ անսիրտ ձևով։ Պառաւը ողորմութեամբ էր ապրում, և գիւղը ատելութեամբ էր շպրտում այդ պառաւին հացի մի պատառ։ Ամեն առաւօտ նրան կարելի էր տեսնել գիւղից մեկնող նախրի յետևից հանդարտ քայլելիս. նա հաւաքում էր անասունների թողած աղբը, կոյտ էր կազմում, որ յետոյ չորացնի, ձմեռուայ թոնրի վառելիք պատրաստի։ Այդ

ժամանակ նա խալառ զզուելի էր, նոյն իսկ իր խեղճութեան մէջ. ձեռքերը մինչև արմունկները և ոտները մինչև սրունքները թաթախուած գարշահոտ աղբի մէջ, յարատև գայրոյթն ու ատելութիւնը դէմքին, յօնքերի խորշը կնճիռներով եղերած, նա շտապ-շտապ հաւաքում էր աղբը կամ կանգ առնում, ով գիտէ ինչ պատճառով, հայհոյում, անիծում ամբողջ գիւղն ու աշխարհը։ Ինչի՞ցն էր ծագել գիւղի և այս թշուառի մէջ իշխող յարատև ատելութիւնը, ես այդ չը գիտէի. շատ ուշ, տարիներ յետոյ միայն ինձ հասկացրին, որ Ծուռ-Փարիի անցեալը մաքուր չի եղել, որ նրա ջահելութիւնը մի յանցաւոր բիծ է թողել ժամանակին՝ գիւղական առաքինի կեանքի վրայ և որ ամեն բանում մոռացկոտ, ներողամիտ գիւղը այդ անարգանքը մոռանալ չէր կարողանում։

Տունը, ուր ապրում էր Ծուռ-Փառին, նոյնպէս ողբալի էր։ Ես դեռ յիշում եմ այն նեղ, ոլորապտոյտ, միշտ ցեխոտ փողոցը, որ տանում էր դէպի մի մոռացուած, կորած անկիւն. դա մի փոքրիկ բազմանկիւնի հրապարակ էր, որ հարևան տները իրանց արտաքին պատերով երեք կողմից շրջապատում և մի կողմից բաց էին թողնում ճա-

նապարհի վրայ։ Այս հրապարակի մակերևոյթը աւելի ցածր էր, քան ճանապարհինը, այս պատճառով թէ ճանապարհի և թէ մանաւանդ հարևան կտուրների անձրևաջրերը թափւում էին այնտեղ, լճանում, ճահճանում, գարշահոտութիւն տարածելով չորս կողմում։ Այստեղ՝ գիւղի այս գարշահոտ անկիւնում էր Ծուռ-Փարու տունը, եթէ կարելի է տուն անուանել այդ տարօրինակ որջը։ Նրա ծռմռուած պատերը, շինուած ճահճային ցեխից, արևի առաջ բորբոսնել էին։ Լուսամուտ չը կար. մի կողմում երեւում էր միայն փոքրիկ սևացած դուռ, որից կարելի էր ներս մտնել երկու տակ ծալուելով. ոչ ոք չը գիտէր, թէ ինչ է կատարւում այդ տարօրինակ տան ներսում. միայն առաստաղի յերդիկից բարձրանում էր ծխի սև թանձր պտոյտ տարուայ բոլոր եղանակներին և այդ յարատև ծխի ու աղբի մէջ էր ապրում Ծուռ-Փարին իր ընտանիքով, ինչպէս էգ վագրը իր ձագերով։

Նրա ընտանիքն էլ բոլորովին նման չէր գիւղի մնացած ընտանիքներին։ Երբեմն նրա մօտ յայտնւում էին կանայք, աղջիկներ, որոնց համար ասում էին, թէ Ծուռ-Փարու աղջիկներն ու թոռներն են. տղամարդիկ էլ

էին երևում, որոնք իբր թէ նրա փեսաներն են։ Մի այլանդակ ու կեղտոտ ամբոխ, թափառաշրջիկ գնչուների մի կարաւան, մութ, կասկածելի մի գոյութիւն, որից ոչինչ հասկանալ չէր լինում. այս բազմութիւնը մերթ մեծանում, մերթ փոքրանում էր, երբեմն բոլորովին անյայտանում. Ծուռ-Փարին շատ անգամ ամբողջ օրեր մենակ էր լինում։ Այդ ընտանիքը հանելուկ էր մանաւանդ մեզ՝ երեխաներիս համար. ամենքս էլ, առանց խտրութեան, երբէք սիրտ չէինք անի, թէկուզ օր ցերեկով, Փարու փողոցով անցնել ու զզուանքով էինք նայում այդ որջին, ուր կարծես դևեր էին բուն դրել։

Այսպէս էր Ծուռ-Փարին, և իր ընտանիքը։ Ահա թէ ինչու, երբ լուր տարածուեց գիւղում, թէ մարդագէլը Ծուռ-Փարին է, կանանցից համարեա ո՛չ ոք չը կասկածեց և Նախրչի Մկօի տնից, կտուրներից՝ զայրացած կանացի բազմութիւնը ուղղակի դիմեց դէպի այն փողոցը, ուր Ծուռ-Փարու տունն էր։ Աւելի համարձակները, Եղսան բաջուն գլուխ ունենալով, առաջ անցան, իսկ մնացածները նրանց հետևեցին։ Նրանք քայլում էին լուռ, իսկ թէ ի՞նչ պիտի անէին, այդ երևի շատ շատերը չը գիտէին. միայն

գնում էին և գիտէին, որ մի բան պէտք է անել։

Դեռ առաւօտեան աղջամուղջը չէր վերացել գիւղի վրայից։ Ամբողջ գիշերը աշխատած մոծակները, յոգնած, կշտացած, առաւօտեան զովին քաշուել, շարուել էին աթարի կոյտերի և ծառերի տերևների վրա. Նրանց անախորժ վզզոցը չէր լսւում։ Մօտակայ պարտէզներից լսւում էր զարթնող թռչունների վաղորդեան ճռուողիւնը. Նրանց փոյթը չէր, թէ ինչքա՛ն դժբաղդ է այդ ժամին գիւղը, նրանք երգում էին ամեն օրուայ պէս։ Շուտով նրանց միացաւ և եկեղեցու բակի բարձր կաղամախի վրայ բուն դրած արագիլը իր երկար կտցի առաջին չխչըխկոցով։ Մասիսի հսկայ, մոյգ-կապոյտ զանգուածը հազիւ ծրագրւում էր արևելքի արդէն գունատուած ֆօնի վրայ։ Փողոցներում դաշտ գնացող անասուններ չը կային դեռ ևս, սայլի ճռինչ, հօտաղի երգ չէր լսւում, միայն գիւղացիները մէկ-մէկ երևում էին այս ու այնտեղ, գունատ, անքուն դէմքով, ծածկւում էին բակերում, կրկին յայտնւում աննպատակ ու շուարած,— գիւղը դեռ խելքի չէր եկել գիշերուայ սարսափելի անցքից։

Շուտով կանայք մտան կիսախաւար,

կասկածելի, նեղ փողոցը և երբ հասան Ծուռ-Փարու տան առաջ, մի գծի վրայ շարուեցին, իրար կողքի կանգ առան և նայում էին։ Այնտեղ՝ խրճթի կտրին ինչ որ կեղտոտ կոյտեր էին երևում ցնցոտիների տակ. Ծուռ-Փարին և խուրայիները քնած էին դեռ։

—Գեղն իրար է կպել, սրանց հէչ պէ՞տքն է, ասաց մէկը կամացուկ։

– Տեսնես էս առաւօտ «մարդագէլը» դարձե՞լ է, թէ ոչ։

Կտրի կեղտոտ կոյտերը կամաց-կամաց շարժուեցին. Նրանց տակից, ինչպէս աղբակոյտերի միջից դուրս ցցուեցին մի քանի ճիճան գլուխներ, մի քանի կեղտոտ, կիսամերկ մարմիններ. Նրանք ճմլուեցին, տրորեցին աչքերը, այս ու այն կողմ ոլորուեցին, և իրար յետևից աչքերն ուղղեցին դէպի փողոցը, դէպի կանանց շարքը կէս զարմացած, կէս հետաքրքրուած, չիմանալով՝ թէ բանն ինչո՞ւմն է։ Տեսարանը չափազանց տարօրինակ էր։ Ներքևից կանանց շարքը, վերևից այդ զզուելի ճիճան գլուխները նայում էին իրար թունաւոր հայեացքով։ Յանկարծ կտուրի կեղտոտ գլուխներից մէկը բարձրացաւ, ցցուեց իր չորացած, երկար

մարմնի ամբողջ հասակով. գիշերային շապկի փոխարէն ինչ որ կեղտոտ ծուէններ երկար երկար կախկախուեցին նրա դուրս ցցուած ուսերից և ոսկրոտ բազուկներից, կիսաբաց թողնելով նրա վտիտ, մոխրագոյն մարմինը։ Ձեռքի մի յանկարծական շարժումով նա յետ տարաւ ճակատից իր խուխ, այլանդակ մազերը, կնճռեց յօնքերի դիւային խոռոչը, խոր ընկած, չար աչքերը փայլատակեցին ատելութեան կրակով։ Նա մի առ ժամանակ այդպէս մնաց, ապա հանդարտ առաջացաւ մինչև կտրի եզրը, կանգ առաւ և սպառնալից նայեց ներքևի բազմութեանը, ինչպէս իր ձագերը պաշտպանող գազան։

—Է՜, սևուր, խըռխդ ո՞ւր է, ասաց բարձրաձայն Եղսան բաջին։

Ծուռ-Փարին լսեց. հասկացա՞ւ արդեօք այդ խօսքերի միտքը, թէ ոչ, այդ ոչ ոք չիմացաւ։ Միայն նա չորացած ձեռքերը բարձրացրեց վեր, մի այլանդակ շարժում գործեց, ասես թէ գլխի վրայից հալածում էր կծոտող մեղուներին, ապա իր սուր ձայնով մի այնպիսի ճիչ արձակեց, որ մենք բոլորս էլ շշկլուեցինք. մէկ էլ նա մի քանի կատաղի պտոյտներ գործեց կտրի վրայ, փնտրելով փայտէ սանդուղքը, բայց սա-

տին յուզմունքի մէջ գտնել չը կարողանալով, վազեց դէպի կորի եզրը, կախուեց պատից, որ ցած նետուի, մեզ վրայ յարձակուի։ Նոյն վայրկեանին միւս գլուխները տեղերից վեր ցատկեցին և կախուեցին պառաւի թևերից. մի րոպէ մենք տեսանք կորի եզրին իրար գալարուած, խճճուած կեղտոտ մսերի, նիհար թևերի, ոտների, ցրիւ տուած մազերի և ցնցոտիների մի այլանդակ, կենդանի կոյտ, որ ոլորւում, ծռմռւում, տընքում, ճչում էր, ապա յանկարծ նոյն կոյտը պոկ եկաւ կորից և մենք տեսանք, թէ ինչպէս օդի մէջ մի քանի պտոյտներ գործելով, ոռնալով՝ դէպի վայր, դէպի բակը գլորուեց։

Էլ չեմ յիշում, թէ այնուհետև ինչ պատահեց. մենք փախանք, քանի ոտներումս ոյժ կար։ Յետևից լսում էր, թէ ինչպէս այնտեղ, Փարու բակում, դեռ ճչում, անիծում, հայհոյում են. պարզ էր, որ այնտեղ սկսուեց սովորական ծեծը, չանգռոցը, իրար խեղդելը. մեր յետևից ոչ ոք չեկաւ և մենք կարողացանք տներում թագնուել։

Քիչ յետոյ գիւղում լուր տարածուեց, թէ Ծուռ-Փարին կորից վայր է ձգել իրան, մէջքը կոտրել և տեղն ու տեղը մեռել. այս

լուրը համարեա ոչ ոքի տխրութիւն չը պատճառեց գիւղում։ Աւելի տխուրն այն էր, որ ռէս Հայրօն նոյն գիշեր պահապանների հետ շրջելիս, ընկել էր «մարդագէլի» համար շինուած թակարդի մէջ. նրան գիւղ բերեցին շալակած և ծանր վիրաւոր։

Եւ այսպէս մարդագէլ Փարին մեռաւ, կամ, աւելի շուտ, նախապաշարուած գիւղը նրան զոհ բերեց խաւարի ու սարսափի աստուծուն։ Բայց խրոխը մնաց, չը վառուեց. նա այնուհետև իջաւ երևի ուրիշ կանանց վրայ, որովհետև էլի տասնեակ գիշերներ անցան սոսկումով և արիւնով լի, տասնեակ երեխաներ անյայտացան և պատառ-պատառ յօշոտուեցին այգիներում։

Խաւար, խեղճ ու կրակ գիւղը շուարած էր մնացել, տերևի պէս դողում էր մարդակեր գազանի առաջ և չը գիտէր՝ ինչպէս և որտեղից ձեռք գցել սոսկալի խրոխը։

Վերջ ի վերջոյ փրկիչ հանդիսացաւ ժամանակը. այն տարին ցրտերը շուտ վրայ հասան, գիւղացիները, փառք տալով Աստուծուն, շտապով ցած իջան կտուրներից, փակուեցին իրանց խրճիթներում և ամբողջ շաբաթների ահ ու դողով լի գիշերներից յետոյ առաջին անգամ հանգիստ քնեցին, աշ-

խատելով չը մտածել յաջորդ ամառուայ մասին։

—

Այն սարսափելի օրերից տարիներ են անցել։ Վաղուց փտել են Ծուռ-Փարիի տանջուած ոսկորները, էլ նրա սուր, անախորժ ձայնը չի լսւում գիւղի փողոցներում, վաղուց այլ ևս նախրի յետևում չի երևում նրա կեղտոտ պատկերը, ոլորապտոյտ ու խաւար փողոցի ծայրում էլ չի երևում նրա դիւաբնակ խրճիթը, որ անձրևների ջրերից վաղուց հողին է հաւասարուել․ աղջիկներն էլ չը կան, մայրերը կորցրած թռչնի ձագերի պէս նրանք անյայտացան, կորան, ո՞վ գիտէ ուր։ Մարդագէլի ատամներից դողացող մանկութիւնն այժմ երկրորդ սերունդ է գիւղում և սակայն սարսափելի խրոխը դեռ չի գտնուել, չի վառուել, նա դեռ ցած է իջնում երկրի վրայ, գիւղերը դեռ դողում են, երեխաները յօշոտւում և յայտնի չէ, թէ ե՞րբ այդ արիւնոտ խրոխի փոխարէն մի փոքր լոյս, մի քանի կաթիլ փրկարար շող կիջնի Եղսան բաջիների և գիւղի ծնացած խաւար գլուխների վրայ, ե՞րբ կը հասկանան այդ խղճալի գլուխները, որ իրանք աշխարհ եկած չեն ցերեկն իրանց նմանների

և գիշերը գազանների կերակուր դառնալու համար, որ այդպիսի ճակատագիր չը կայ, անգութ աստուած չը կայ, որ մի ուրիշ կեանք հնարաւոր է նաև իրանց համար։

Խե՜ղճ, խաւա՜ր, անտէ՛ր գիւղ… ի՜նչ դանդաղ է ընթանում քեզ համար ժամանակը։

1900.

—

ՑԱՒԸ

I

Այն օրը Գէվօն շատ ուրախ, շատ ախորժ տրամադրութեամբ էր գիւղ վերադառնում։

Երկու օր առաջ էր, որ նա իր բամբակը տարաւ քաղաք, լաւ գնով վաճառեց և այժմ գոհ սրտով տուն էր գնում։ Աջ թևի տակ նա պինդ սեղմել էր մի կապոց, որի մէջ էին տանեցոց համար գնած զանազան կըտորներ—կնոջը վերնազգեստ, փոքրերին շապիկ, գլխարկ և այլն։ Գէվօն մտածեց, թէ իւրաքանչիւր երեխայ որքան կուրախանայ, երբ տեսնի իր բաժինը և ինչքան լաւ կը լինի, եթէ անակնկալն աւելի հաճելի դարձնելու համար՝ Գէվօն նախ թաքցնէ նրանց ընծաները և յետոյ յանկարծ ցոյց տայ, այս միտքը նրա դէմքին նոյն իսկ ժպիտ բերեց։

Աշնան վերջի ցրտերն սկսուած էին. անցորդների բերանների գոլորշին բաւական հեռուից երևում էր. ձեռքեր ու ականջներ լաւ մրսում էին, բայց Գէվօի փոյթը չէր. նա քայլում էր հանդարտ և ասես թէ մտածում էր, կամ աւելի ճիշդ՝ հաշիւներ էր անում։ Եւ իրօք, նա ծրագիրներ էր կազմում առաջիկայ տարուայ իր անելիքի մասին և հաշւում էր բերքի քանակութիւնը։ Որքա՜ն շատ բան ունէր մտածելու, ինչ ժպտուն յոյսեր, ո՜րքան ապագայ քաղցրութիւններ էին կապուած նրա իւրաքանչիւր մտքի հետ։ Այսպէս, նա մտածում էր, թէ գարունը բացուելուն պէս իր երկու մեծ արտերում նորից բամբակ կը ցանի, փառք Աստուծոյ, դրանք արօրը պատրաստ, գոմում էլ գոմէշները կապած։ Ցորենի համար մի արտը բաւական է, այնտեղից կարող է ստանալ տարուայ բոլոր պաշարը։ Մնացածն էլ Աստուծոյ կամքն է, Նա ողորմած է։

Քանի՜ տարի Գէվօն նեղութիւն կրեց. մի ժամանակ թանգութիւնը, ապա կարկուտը նրան քար ու քանդ արին, հազիւ մի քիչ ուղղուեց՝ մի գոմէշ և երկու եզը դաշտից աւազակները փախցրին, տարան, թողնելով նրան խեղճ, վիզը ծուռ, ձեռքը ծոցը։

Այնուհետև չար օրեր վրայ հասան, որքան չարչարուեց խեղճը, մինչև կարողացաւ նորից իր անտեսութիւնը կարգի ձգել մի կողմից պարտքով, միւս կողմից երեխաների բերնից կտրելով, իսկ այժմ... Օ՜, այժ Գէվօն երջանիկ էր—գոմը լիքն է, սաքուն՝ չէն, հարևանների ժողովատեղի, ճրագը՝ վառ, օջախը՝ պայծառ, դուռը՝ բաց. Նրա տանն են ապաստան գտնում և կերակրւում օտարականները, աշուղները, մուրացիկները։

Եւ մտածելով այս բոլորը՝ Գէվօն ի բոլոր սրտէ փառք տուեց Աստծուն։

Մտքերն այնպէս ախորժելի էին, պատկերներն այնքան գրաւիչ, որ Գէվօն չը նկատեց անգամ, թէ ի՞նչպէս մօտեցաւ գիւղին։ Հեռուից երևում էին ծխի բազմաթիւ պըտոյտներ, որոնք ոլոր մոլոր բարձրանում էին կտուրների վրայ։ Սաքուների բուխարիներից էին բարձրանում ծխի այդ ոլորները, Գէվօն այդ գիտէր, այ, այն մէկն էլ անշուշտ իր բուխարու ծուխն է, որ պալան պալան ձգւում է դէպի վեր, տանելով իր հետ դէպի երկինք Գէվօի գոհութիւնը, աղօթքն ու մրմունջները։ Նրան թւում էր, թէ իր տան ծխի պտոյտն աւելի հաստ է, աւելի ուժեղ, քան բոլոր միւսներինը, չէն օջախից է բարձ-

րանում, հասկանալի է, մտածեց Գէվօն և երկար նայում էր պատկերին, նայում էր և ժպտում։ Ամէն բան գեղեցիկ էր...

Հասաւ գիւղին, և... կանգ առաւ յանկարծ, ասես թէ նրա առաջը մի ահաւոր անդունդ բացուեց։ Գիւղի շուրջը կարգով տնկուած էին սև սև դրօշակներ՝ շարան շարան՝ ինչպէս մահաբեր սև հրեշտակներ։ Ի՞նչ էր նշանակում այս, Գէվօն հասկանալ չէր կարողանում, բայց մի ներքին անհանգստութիւն, հեռաւոր, անորոշ երկիւղ աւելի և աւելի մեծանում էր նրա սրտում, քանի նայում էր այդ մռայլ դրօշակներին, որոնք մի չարագուշակ մեղմութեամբ փողփողում էին աշնանային հովի առաջ և իրանց խաւար ծալքերի մէջ, ասես, աշխատում էին ծածկել ինչ որ զարհուրելի գաղտնիքներ, որ կամակոր քամին փորձում էր խլել, փախցնել։ Գէվօն էլ կուզէր իմանալ, թէ ի՞նչ են թագցնում այդ չարագուշակ ծալքերը, բայց մի և նոյն ժամանակ վախենում էր նրանցից։ Եւ ի՞նչպէս չը վախենար. սև գիշեր, սև երկինք, սև օր, սև սիրտ, սևից ե՞րբ է «խէր» բան ծնուել և այդ սևն էր, որից դողում էր Գէվօն և նրա հետ միասին այս

ամբողջ գիւղը, կարծես, դողդողում էր սեւ
երկիւղից։

—Ինչո՞ւ համար են էս սեւ «բայղաղ-
ները». հարցրեց Գէվօն առաջին պատահած
գիւղացուն։

—Գիւղում ցաւ կայ, պատասխանեց
գիւղացին, դժգոհ այս անախորժ հարցի հա-
մար։

—Ի՞նչպէս թէ ցաւ կայ, ի՞նչ ցաւ...

—Ցաւ էլի՛, տաւարի ցաւ կայ։

—Է՛, ցաւ կայ, ցաւ կայ, Աստուծոյ
կամքն է, ասաց Գէվօն առհարկի հանդար-
տութեամբ, էլ էս բայղաղներն ինչո՞ւ են
տնկել։

—Ես ի՞նչ գիտեմ, Հէրիքի կովս ո՞վ
գիտի ինչից սատկաւ, մեր խելօք ուէսը աշ-
խարհ ձէն գցեց, տէրութիւնից էլ հրաման
եկաւ, որ գեղի չորս կողմն էսպէս բայղաղ-
ներ տնկեն։ Սեւը բերին գեղի վրայ։

—Հա՛յ ուէսի վիզը կոտրուէ՛ր՝ տակը
մնար, ճչաց Գէվօն, գեղում մի կով է սատ-
կել՝ չորս կողմերս բէխէր բայղաղներ է
տնկել տուել անաստուած, անհոգին. ցա՛ւ,
տօ էլ ի՞նչ ցաւ, էս բայղաղները հէնց տե-
ղով ցաւ են էլի՛, սեւ, բէխէր... որդիդ մեռ-
նի, ուէ՛ս, որդի՛դ...

Նա գլուխը քաշ գցեց, առաջ գնաց՝
աշխատելով չը նայել դրօշակներին, բայց մի
քանի քայլ հազիւ անցած, նա ակամայ յետ
նայեց մի քանի անգամ։ Այժմ նա կոտրուած
ու յոգնած էր քայլում, տեսածը վատ, շատ
վատ բան էր. Ամեն ինչ փոխուեց նրա աչ-
քում, գիւղն ուրախ էր, երբ նա հեռացաւ,
իսկ այժմ գտնում էր սգաւոր, սեւաւոր,
տխուր...

Նոյն օրը, երեկոյեան, Գէվօն գլխակոր
ու մռայլ նստած էր բուխարու կողքին, երբ
գիւղացիք նոյնպէս մտազբաղ՝ կամաց-կամաց
լցուեցին սաքուն։ Բուխարու հակառակ կող-
մում նստած էր մի ծերունի՝ ալեզարդ մա-
զերով ու մօրուքով։ Նա շատ էր ծեր, ասես,
հին տարիներից մնացած մի կենդանի աւան-
դութիւն լինէր այդ պատկառելի նահապետը։
Նա արդէն հազիւ էր լսում, ձեռները դող-
դողում էին, բայց սպիտակ, երկար յօնքերի
տակ թաղնուած աչքերը դեռ տեսնում էին։
Աշխարհի վայելքներից նրան մնացել էր մի-
այն իր չիբուխը, որ նա ծխում էր անընդ-
հատ և սաքուի այս տաք անկիւնը, բուխա-
րու կողքին, որտեղից նա երբեք չէր հեռա-
նում, կարծես բուսած լինէր իր տեղում։
Նա քիչ էր խօսում, բայց երբ խօսում էր,

ամենքը լսում էին. հին փորձերի, հին խորհուրդների, հին ցաւերի, մի ամբողջ ժողովրդական իմաստութեան շտեմարան էր այդ ալեզարդ գլուխը։ Ինչե՜ր չէր տեսել նա… Գիւղացիք ծանր պարագաներում նրա շրթունքների շարժումները պատգամի տեղ էին ընդունում և լարուած լսում էին հազիւ հասկանալի բառերը, որ նա արտասանում էր շշուկով։ Գերեզմանին այնքան մօտիկ այս ծեր գոյութիւնը այսօր մի առանձին ցուրտ ազդեցութիւն էր անում գիւղացիների խռոված հոգիների վրայ։ Հեռու, գոմի խաւար խորութեան մէջ, լսւում էր մերթ անասունների փնչոցը և մերթ մեղմ որոճի ձայնը։ Բուխարու մէջ ծխախառն բոցերով վառւում էին աթարի մի քանի հաստ կտորները։ Ներս մտաւ Բոչօենց Թաթոսը. նա տխուր էր, ձեռքը ծոցում. հազիւ բարև տուեց, նստեց ու լռեց։ Գէվօն ամենից շուտ նկատեց նրա տխրութիւնը։

—Հը՛, ի՞նչ կայ, ախպէր Թաթոս, քէփդ լաւ չի, հիւանդ ես, ինչ է…

—Ո՞ւր էր թէ ես հիւանդ լինէի, եզներն են «կպել», տունս կը քանդուի, ծուխս կը մարի։

Գէվօն սուս կացաւ. նա յիշեց առաւօտեան իր տեսած ծխի պտոյտը, նայեց և այս ծխին ու մտածեց, «իսկ ի՞մ ծուխը»…

—Բաղօենց գոմէշներն էլ են հիւանդ, ասաց մի գիւղացի։

—Սատկան, կարճ կերպով վրայ բերեց Թաթոսը և լռեց։

—Տունն աւերուեց խեղճերի, լսուեց այս ու այն կողմից և գիւղացիք ձեռները ծնկներին խփեցին, գլուխներն օրօրեցին։

Խուլ ծերունին տեսաւ ընդհանուր անհանգստութիւնը. նա դիմեց հարևանին։ Նրա ականջում ասացին, որ գիւղում ցաւ կայ, որ Բաղօենց գոմէշները սատկել են։

—Ցա՛ւ, ցաւի տէրը մեռնի, ցաւ շատ եմ տեսել, զուլում է, էլի. մռմռաց նա և լռեց։

Նա գլուխը քաշ գցեց, կրկին ծխեց, մինչդեռ պղղած աչքերից ծեր արցունքները գլորւում էին միրուքի վրայով։ Անկարող, անզօր, խաւար գիւղն էր արտասւում նրա հետ։

Խօսակցութիւնը շարունակուեց. խօսեցին նաև հարևան գիւղի մասին. ասողներ եղան, թէ ցաւն այն գիւղից մտաւ իրանց գիւղը և որ եթէ օր առաջ այն գիւղի շուրջն էլ փակէին դրօշակներով, ցաւն այնտեղից

դուրս չէր երթայ։ Գէվօն, կարծես, հէնց սրան էր սպասում։

—Ա՛յ խալխ, ճչաց նա, ա՛յ անխելք հարևաններ, ի՞նչ էք ուրիշների մեղքը քաղում. ինչո՞ւ չէք ասում, որ ձեր անխելքութիւնից է ցաւը գիւղ մտել։ Էն անտէր բայղաղները շարել էք չորս կողմերս, չէք մտածել, որ սևի հետ ցաւն ախպէր է, էլ դուրս չի գնայ գեղից։ Ռէսի խելքին էք ընկել, նրա որդին մեռնի։ Ո՞վ էր տեսել գեղի չորս կողմը սև բայղաղ տնկեն. թէ սևը լաւ բան է՝ ինչո՞ւ ռէսն առաջ իր կնկայ գլխին սև չի գցում։

Ռէսի դէմ զայրոյթը ընդհանուր դարձաւ, առաջարկողներ եղան գնալ հաւաքել այն «բայղաղները»։

—Ռէսը թէ ուզում է, թող իր տանը, իր գոմի կտրանը տնկի, բացականչեցին այս այն կողմից մի քանի ձայներ։

Այս ընդհանուր յուզմունքը, երևի, կրկին նկատեց խուլ ծերունին. նա նորից բարձրացրեց իր ալեզարդ գլուխը և դիմեց հարևանին։ Նրան հասկացրին, թէ բանն ինչո՞ւմն է։

—Հաւաքելը հեշտ բան չի։ Բէխէր լինի չը լինի, զակօնի բան է, տէրութեան գործ է. անօգուտ տեղն իրար մի դիպէք, սուս

կացէք, տեսնենք Աստուած ինչ է բերում գլխներիս։

Լռեցին. միայն Գէվօն էր անդադար մռմռում ինքն իրան՝ «բէխէրութիւն է, բէխէրութիւն է, գեղը չար հրեշտակի բաժին են չինել»։

Գոմի խորքից լսուեց մի հորթի բառաչ, մի բարակ, խղճալի մզզոց։ Տարօրինակ ոչինչ չը կար—մի հորթի բառաչ գոմում—բայց այսօր այդ սովորական ձայնը առանձին ցաւոտ շեշտեր ունէր և կասես մի մեծ դժբաղդութեան չարագուշակ ազդարարը լինէր։ Ամենքը մէկէն դէպի այն կողմը նայեցին, որտեղից գալիս էր ձայնը. ոչ ոք միւսին չասաց, թէ ինքն ինչ է զգում, ինչ է մտածում, բայց ոչ ոք էլ չէր կասկածում, որ ամենքի գլխում ծագած միտքը մի և նոյնն է, մի չար սև միտք, թէ հորթը կըպել է—հիւանդ է։ Ահա թէ ինչու այդ բառաչի հետ սարսուռի պէս մի բան անցաւ բոլոր մտազբաղ դէմքերի վրայով. նրանք կարծես բաց աչքով տեսան ցաւն իր զարհուրելի կերպարանքով, տեսան, գունատուեցին և լռեցին։ Այժմ ցաւն այլ ևս միայն գիւղում չէր, միայն գոմերում չէր, հապա

և ամենքի կըրծքերի տակ, ամենքի սրտերում:

Գէվօն գունատուեց, նա կը կամենար անմիջապէս ցած իջնել սաքուի բարձրութիւնից և տեսնել թէ բանն ինչո՞ւմն է. բայց սրանով նա միայն կը յայտնէր իր ներքին սարսափը ու խռովութիւնը, մինչդեռ ամենքն, ասես, մի լուռ ուխտով ծածկում էին իրարից իրանց սրտերը: Նա սպասեց, չուզեց փոքրոգի երևալ բոլոր հարևանների մէջ: Երբ մի փոքր հանդարտուեցին և խօսակցութիւնը վերսկսուեց այլ նիւթերի վրայ, Գէվօն կամացուկ վերկացաւ տեղից, ցած իջաւ եւ կորաւ գոմի խաւարի մէջ՝ ուղիղ դէպի բառաչող հորթը դիմելով: Փոքրիկ կենդանին պառկած էր իր մօրան առաջ և գլուխը թոյլ թոյլ ձգել էր գետնին, կծկուած, խղճալի: «Մի՞թէ հիւանդ է», մտածեց Գէվօն, ուշադրութեամբ կենդանուն նայելով: Մի րոպէ այդ փոքրիկ հորթը նրա աչքում դարձաւ ինքը ցաւը, որ գաղտագողի ներս էր սողացել գոմը: «Զը բռնե՜լ այդ փոքրիկ հրէշին, դուրս գցել, մորթել, հազար կտոր անել, շների, գէլերի բաժին դարձնել կամ ողջ ողջ թաղել, անյայտացնել», մտածում էր նա:

—Մեղա՜յ քեզ, Աստուած, շշնջաց նա վերջում, ինքն էլ զգալով, թէ որքան անսիրտ է իր գլխում պտտուող միտքը:

Գէվօն առաջացաւ դէպի գոմէշները— Թաւաթին ու Քեալաշը, ուժեղ, յաղթանդամ, կեանք ու եռանդով լի զոյգ կուռները: Երկուսն էլ միաժամանակ նայեցին իրանց տիրոջը կուասէր, կենդանի աչքերով, գոհութեամբ փնչացրին՝ օրօրելով պոչերը: Գէվօն ժպտալով մօտեցաւ նրանց, բռնեց և ցնցեց սուր եղջիւրները, շոյեց սիրուն գլուխները, նոյն իսկ սեղմեց իր կրծքին և հանգստացաւ: Մի՞թէ կարող էր ցաւը մօտենալ այսքան կեանքով, ոյժով լի կենդանիներին, կարող էր ծածկել այդ խենթ աչքերը, թուլացնել այդ հաստ պարանոցը, ծռել այդ հուժկու մէջքերը, ոտները. ո՛չ, այդ անկարելի էր: Եւ Գէվօն ձեռքը քսելով անասունների մէջքերին, դժուարանում էր հեռանալ իր օջախի այդ երկու սիւների մօտից. այստեղ նա իրան լաւ էր զգում, այնքան ոյժի, այնքան կեանքի, զօրութեան մօտ ցաւը նրան չէր վախեցնում: Նա մոռացաւ հորթը, մոռացաւ սև դրօշակները, Թաթոսի տխուր դէմքը, խուլ ծերունու արցունքները և միայն նայում էր ու շոյում իր գոմէշներին:

Յանկարծ հորթը կրկին բառաչեց, այս անգամ աւելի թոյլ, աւելի խղճալի ձայնով։ Գէվօն ցնցուեց, նա և՛ վախեցաւ և՛ զայրացաւ սաստիկ. թողեց գոմէշներին, վրայ վազեց հորթին և ոտքով մի ծանր հարուած տուեց նրա փորին, բայց և նոյն վայրկենին փոշմանեց. նա յետ յետ քաշուեց իր արած անգթութիւնից սարսափած, մանաւանդ՝ երբ տեսաւ, թէ ինչպէս իր հարուածից յետոյ՝ ողորմելի կենդանին էլ աւելի կծկուեց, էլ աւելի փոքրացաւ, թուլացաւ։

—Մեղա՛յ քեզ, Աստուած, կրկին մրմռաց նա և լաւ համարեց դուրս գնալ անասունների միջից։

Գիւղացիք, կարծես առհարկի, թոյլ-թոյլ խօսում էին այս ու այն նիւթից, բայց երևում էր, որ ոչ ոք չէր հետաքրքրվում ոչ իր ասածով և ոչ իր լսածով. ամենքի միտքն ու սիրտը պաշարուած էին ցաւի երկիւղով, որը, կարծես, սև թևերով սաւառնում էր արդէն նրանց գլխավերևում, մռայլ գոմի գաղջ մթնոլորտի մէջ.

Այն գիշեր Գէվօն լաւ չը քնեց. երկար ժամանակ թաւալւում էր անկողնում և մտածում հազար ու մի սև բաներ։ Յետոյ նրան թւաց, որ ուէսը, մի սև դրօշակ ձեռքին, մօ-

տենում է նրա տանը. ահա նա բարձրացաւ գոմի կտուրը, ահա նա տնկեց այնտեղ դրօշակը, որը երկարացաւ, ձգուեց դէպի վեր և իր մռայլ ծալքերով ծածկեց նրա ամբողջ տունը։ Գէվօն կատաղած վազեց, բարձրացաւ կտուրը, բռնեց այդ դրօշակը և ամբողջ ուժով քաշեց. «ուէսի կորանը պիտի տնկեմ», ճչաց նա, բայց դրօշակը շատ հաստատուն էր. սաստիկ թափից նրա ոտների տակ կտուրը ծակուեց, Գէվօն ընկաւ գոմի մէջ՝ հէնց հիւանդ հորթի վրայ։ Նա զարթնեց, վեր ցատկեց խաւար խրճիթում, շտապով ճրագը վառեց և դուրս գնալով՝ գոմը մտաւ. ուղղակի դէպի հորթը դիմեց։ Կենդանին պառկած էր իր տեղում, բայց արդէն աչքերը փակ, անշարժ, նա էլ չէր բառաչում։

Գէվօի սիրտը ճմլուեց այդ տեսարանից, նա յիշեց նախորդ օրուայ իր անգութ վարմունքը այս անմեղ արարածի հետ, մոռացաւ իր գոմէշները, մոռացաւ սպառնալից ցաւը, որ այս հորթի մահով արդէն ներս էր մտել իր գոմի շէմքից և փորում էր իր օջախի հիմքը. ուռած, լցուած սիրտը փղձկաց, նա կռացաւ, գրկեց մեռած հորթի փոքրիկ գլուխը և մնաց անշարժ դիակի մօտ։

Լուսաբացին, երբ գիւղացիք նորից հաւաքուեցին սաքուն, նրանք տեսան Գէվօին՝ հորթի դիակի առաջ կծկուած դառն արտասուելիս, ինչպէս մի հայր կարտասուէր իր մեռած զաւակի վրայ։

II

Օրեր անցան. Գէվօի գոմը կամաց կամաց դատարկւում էր։ Համարեա օր չէր անցնում, որ նրա դռնից որ և է անասունի դիակ դուրս չը տանէին։ Ցաւը գործում էր անաքանդ արագութեամբ։ Հորթին հետևեցին երկու ուրիշ երինջներ, որոնք տանտիկնոջ առանձին խնամքի առարկաներն էին։ Բայց այս հարուածն էլ դեռ այնքան ծանր չէր, յանկարծ հիւանդացաւ կովը և յաջորդ օրը նա անկենդան ընկած էր գոմում։ Թէ Գէվօն և թէ մանաւանդ կինը սաստիկ զգացուեցին, որովհետև կովի մահով խնացուձայնը տնից դադարեց և երեխաների «թժացանը» կտրուեց։ Կթան կովը խուրաքանչիւր տանտիկնոջ ընկերուհին է, օգնականուհին է, նրանով է իր երեսը պարզ հիւրերի առաջ, նրանով է գոհացնում իր երեխաներին, նրանց ցամաք հացը թաց անում։ Ահա թէ

ինչու, երբ կովի դիակը դուրս էին քաշում բակից, Գէվօի կինը չը կարողացաւ զսպել արցունքը և բարձրաձայն արտասուեց բացականչելով՝ «խե՜ղճ, խե՜ղճ երեխաներ»։

Նոյն րոպէին Գէվօի աչքովն ընկաւ մի պառաւ կին, որ մի փոքրիկ աղջկայ ձեռքից բռնած՝ նոյնպէս նայում էր կովի դիակին և արտասւում։ Երկուսով էլ վտիտ, երկուսով էլ գունատ էին, հազիւ հազ ծածկուած կեղտոտ, պատառոտուն զգեստով։ Նրանց տեներ առաջ ընկած էր մի բղուղ։ Գէվօն ճանաչում էր այդ պառաւին, դա մի խեղճ մայր էր, որի վրայ ծանրացած էր մի քանի երեխաներ կերակրելու հոգսը. նա ամեն առաւօտ գալիս էր և տանում նրանց տան թանի մնացորդը, երեխաներին սպաս պատրաստելու։ Արտասւում էր այդ թշուառ պառաւը իր գունատ աղջկայ հետ, նրանց թացանն էլ էր կտրուել, արտասւում էր և՛ Գէվօի կինը, երկու ընտանիքի սուգ էր կատարւում։ Գէվօն նայեց այդ պառաւին և իր աղջկան, ապա դարձաւ կնոջը.

—Կնիկ, սո՛ւս, մի՛ լաց, տես, խեղճ պառաւի ցաւը մերից շատ մեծ է, մեր արցունքը Աստուծուն դուր չի գայ. որ մենք էլ արտասուենք, էս խղճալի կնիկը ո՞ր ջուրն

ընկնի, ո՞ր կրակն ընկնի։ Մեր գոմում Թաւաթն ու Քեալաշը կան դեռ, ի՞նչ ունեն այս ողորմելիները։

Ապա նա շտապով ներս մտաւ տուն, դուրս բերեց այնտեղից մի աման իւղ, դրեց պառաւի առաջ ասելով.

—Ա՛ռ, խեղճ կնիկ, մինչև այսօր միայն թան ես տարել, այսօր էլ իւղը տար. թան էլ չը կայ, Աստուած տայ. տար և մի արտասուիր, քեզպէսները երբ չարտասուեն, դուցէ ցաւն աշխարհից վերանայ։

Եւ այսպէս ամեն անգամ մի դիակ դուրս ձգելուց յետոյ, Գէվօն ջարդուած սրտով վերադառնում էր սաքուն, նստում բուխարու կողքին, սկսում էր կրակը բորբոքել անդադար աթար շարելով վրան, ասես վախենում էր, թէ մի գուցէ յանկարծ օջաղը մարի և նրա հետ էլ ծուխը կտրուի իր տնից։ Սակայն աթարի կրակն անզօր էր տաքացնել օր աւուր աւելի և աւելի ցրտող սաքուն. պարապ գոմում սաքուն ինչպէս տաքանայ։ Գիւղացիք էլ հետզհետէ քիչ էին յաճախում, դէ ի՞նչ անէին խեղճերը, գոմում ցաւ կար, սաքուն էլ տաք չէր։ Միայն խուլ ծերունին էր իր մշտական տեղում նստած, իր անբաժան չիբուխը ձեռքին. կարծես թէ

նա մեխուած էր, անկարող էր հեռանալ և միայն գերեզմանը կարող էր խլել նրան բուխարու կողքից։ Երկու սուսերներ լինէին ասես այդ երկու մարդը, մէկը ծերութիւնից և միւսը վշտից ջարդուած, մէկը խուլ էր ժամանակի երեսից և միւսը չէր խօսում, համարեա համր էր ցաւերի երեսից։ Նըստում էին վառ բուխարու այս ու այն կողմում ժամերով լուռ, նայում էին իրար և ծխում, ծխում։ Նրանց վառ չիբուխներից բարձրացող ծուխը ձգւում էր դէպի բուխարին, խառնւում էր կրակի ծխին՝ տանելով իր հետ այնքան մտքեր, այնքան խոհեր, այնքան վշտեր, որքան կարող էր ունենալ մի հին գիւղ, մի ցաւապատ, սգաւոր գիւղ։ Ի՞նչ ասես չը կար այդ ծխի մէջ, դարերի նախապաշարմունքներ, անզօր տգիտութիւն հզօր ճակատագրի հանդէպ, անարատ աղօթք, մրմունջներ և մի արտասուելի անտէրութիւն ջախջախիչ չարիքի առաջ։

Գէվօն տանջւում էր մանաւանդ իր սաքուի դատարկութիւնից։ Սաքուն՝ նրա օջաղի փառքը, նրա երկար տարիների իղձերի, աշխատանքի պտուղը, նրա բաղդաւորութեան գոռոզ պատկերը ամայանում, աւերւում էր։ Հարևանները փախչում էին

այնտեղից, ինչպէս գեների որջից։ Ժամերով աչքերը դրանը յառած, նա սպասում էր, որ մէկը ներս մտնի, որ սաքուում առաջուայ պէս, այն լաւ օրերի պէս խօսք, ծիծաղ լսուի, որ ամայութիւնը այնպէս հոգի չը հանի, որ սաքուի դատարկութիւնը այնպէս զգալ չը տայ գոմի ամայութիւնը, որ ցաւը այնքան հզօր և ինքն այնքան անտէր, անօգնական չը լինի։ Բայց մարդ չը կար ու չը կար, հարևանները կարծես խօսք մէկ էին արել էլ ոտք չը կոխել այնտեղ, ասես մի մութ դաւադրութիւն կար կազմուած այդ անհիւրընկալ դարձած յարկի դէմ։ Գէվօն իր յուսահատ, լցուած սրտի դառնութիւնը դուրս էր թափում թունաւոր մռմռոցով։

—Ապերախտներ, ապերախտներ, ի՞նչ է եղել իմ տանը, որ չէք գալիս. մալըս կոտորուեց... ի՞նչ անենք, չէ՞ Թաւաթն ու Քեալաշը դեռ ողջ են, նրանց գլուխը որ կենդանի լինի, իմ օջախին ի՞նչ քար կանի։

Ապա նա ցած էր իջնում և դէպի գոմէշները գնում, կանգնում էր մի քիչ հեռու և հիացած սիրահարի հայեացքով նայում էր նրանց երկար-երկար, յետոյ մօտենում էր և փայփայում նրանց գլուխները, բռնում սուր եղջիւրները, գրկում էր հաստ պարանոցնե-

րը և ձեռքը քսում ըստ իր սովորութեան նրանց մէջքերին։ Կենդանիների հումկու տեսքը դարձեալ սրտապնդում էր, յոյս էր տալիս նրան և Գէվօն մի փոքր հանգստացած, վերադառնում էր, գրաւում իր նախկին տեղը խուլ ծերունու դէմուդէմը, բայց իսկոյն անձնատուր էր լինում մռայլ մտքերի և ծխում, ծխում. նրա սիրտն էլ աւելի էր սեղմւում, երբ մանաւանդ յիշում էր դրօշակները. քանի այդ չարագուշակ սև կտորները չար հրեշտակների պէս շարուած են գիւղի շուրջը, նա չէր կարողանում հաւատալ, թէ իր գոմէշները վտանգից դուրս են։ Երբեմն նա գաղտագողի դուրս էր գնում, նայում գիւղի շուրջը, յուսալով՝ թէ չարագուշակ դրօշակները վերցրած կը լինեն։ Նա քայլում էր զգուշութեամբ, որ ոչ ոք չիմանայ իր անհանգստութիւնը, իր դուրս գնալու բուն պատճառը։ Հէնց որ առաջին սև կտորն աչքին էր ընկնում, նա վախեցած յետ էր դառնում, և շտապով տուն հասնում։

Դողում էր մանաւանդ՝ երբ գոմէշներից մէկն ու մէկին նա գտնում էր անժամանակ պառկած, կամ երբ մէկը նրան բաւականաչափ առոյգ չէր երևում։ Տէր Աս-

տուած, մի՞թէ այն դրօշակները չը պիտի վերցնեն, քանի իմ գոմէշները ազատ են ցաւից, մի՞թէ իմ տունը չի ազատուելու երկնքի զուլումից, մտածում էր նա։ Մի անգամ նոյն իսկ իր յուսահատութեան մէջ նա գիշերով դուրս գնաց անիծած սև դրօշակները հաւաքելու հաստատ վճռով։ Բայց երբ մօտեցաւ, երբ առաջինի փայտեայ կոթին ձեռք տուեց, որ դուրս քաշի, յիշեց խուլ ծերունու խօսքերը՝ «զակօնի բան է, տէրութեան գործ է», և սարսափած յետ փախաւ մէկ մինչև գոմը վազելով։

Այսպէս յոյսի և երկիւղի մէջ էլ մի քանի օրեր անցան, ծանր օրեր։ Մի վատ օր էր, ցուրտ, թխպոտ, այն օրերից մէկը, որոնք իրանց մռայլ քօղի տակ ցաւերի գաղտնիք ունեն, որ բերում են ցոյց տալու աշխարհի անճարներին, բաղդի խորթ զաւակներին։ Այդ օրը Գէվօն չէր հեռանում գոմէշների մօտից, նրանք այնպէս չէին, ինչպէս որ պիտի լինէին։ Ճաշուայ կերը դեռ առաջներն էր, իսկ իրանք դեռ պառկած էին և կարծես դժուարանում էին ոտքի ելնել, երկուսն էլ հիւանդ էին։ Ցաւն աւելի հզօր հանդիսացաւ, քան նրանց մարմնակազմը, իզուր էր Գէվօն ծնկները տրորում, գըլ-

խին տալիս։ Ճակատագիրը իր վերջին մահացու հարուածն էր իջեցնում. այս անգամ ոչ թէ երեխաների թացանն էր կտրում, այլ հացը։

Երկու հսկայ կենդանիները մեռնում էին Գէվօի աչքի առաջ ցաւի ծանրութեան տակ ընկճուած և նրանց լայն կոկորդներից և ուռած քթածակերից հառաչանքը դուրս էր գալիս ուժգին փնչոցներով և նրանց հաստ պարանոցները ոլորւում էին, և նրանց յաղթ մարմինները ցնցւում, գալարւում էին ցաւից։ Ապրելու ցանկութիւնը շատ էր հզօր այդ ճարճատող ոսկորների և այդ ձգձգուող, ուժեղ ջղերի մէջ՝ կենդանիները կռւում էին մահուան դէմ։

Գէվօն նայում էր ոչնչացման, աւերման այս ահաւոր տեսարանին, որ աւելի ևս ազդու էր դառնում անասունների օրհասական պայքարով. Նա նայում էր իր օջախի կործանման այս վերջին գործողութեանը և մտածում էր թէ ո՞ւր պիտի փնտրել աղբիւրն այս բոլորի։ Դարմանի, փրկութեան յոյս չունէր այլ ևս, չէր աղօթում, այլ մտածում էր և կուզէր իմանալ, ճ, սատիկ կուզէր իմանալ, թէ ո՞ւր է ծագումը, պատճառը այս ամենակարող չարիքի։ Երկնքին

ինչո՞ւ է հարկաւոր, որ այս երկու բարերար ոյժերը, ապրուստ հայթհայթող գոմէշները մեռնեն, ոչնչանան տանելով իրանց հետ այնքան անմեղ գոյութիւններ: Գիւղը... գիւղում շատ այսպիսի բաներ է լինում, ցաւն ու վիշտը կայ ու կայ, ինչո՞ւ, գիւղը երկնքի տակ չէ՞... տիեզերքի, աշխարհի մի մասը չէ՞, մի՞թէ աշխարհի ցաւն ամեն տեղ հաւասար չէ բաշխած, ինչո՞ւ հապա այդքան շատ է գիւղի բաժինը... Չը լինի՞ թէ գիւղի վերև երկինք չը կայ, հապա ի՞նչ է այն կապուտակ անհունութիւնը, մի՞թէ այն չէ երկինքը: Խաւար գեղջուկը այս բոլոր հարցերի հանդէպ ոլորում էր իր մատները, սղմում իրար վրայ ատամները և կատաղած էր, ո՞ւմ դէմ...

Երբ երկու հսկայ դիակները վերջապէս ձգուեցին գոմում անշարժ, երբ այնտեղ այլ ևս կենդանի շունչ չը մնաց, այն ժամանակ Գէվօն հեռացաւ, էլ չէր արտասւում, բարձրացաւ սարուն, մօտեցաւ խուլ ծերունուն, բռնեց նրա ոսկրոտ ուսը, թափով ցնցեց ճչալով!

—Հէ՜յ, էսքան ապրել ես, ասա, ո՞ւր է երկինքը:

Ծերը չը հասկացաւ և նայում էր ապուշ ապուշ:

—Չը լսեցի՞ր, խուլ ալևոր, երևի երկինքն էլ քեզ պէս խուլ է, երկինքն էլ քեզ պէս անզօր, դէ որ էդպէս է, էս օջախն էլ զուր է պլպլում. ես էլ օջախն ի՞նչ անեմ, կրակն ի՞նչ անեմ, էլ ո՞վ կը մտնի Գէվօի տունը: Թո՛ղ այս ծուխն էլ վերև չերթայ, վերևում էլ բան չը կայ:

Եւ նա մօտի ամանից ջուրը թափեց կրակի վրայ և մարեց, մինչդեռ խուլ ծերունին նայում էր առանց բան հասկանալու: Մի ժամանակ նրանք մնացին այնպէս նայելով իրար աչքերի մէջ այդ ամայի, ցուրտ գոմի կիսախաւարում, որպէս երկու ոգիներ:

—Ինչո՞ւ, ասաց կծկուած ծերը:

—Էլ սաքու չը կայ, եղաւ պատասխանը:

—Էլ սաքու չը կայ:

—Հա, էլ սաքու չը կայ, էլ օջախը չը կայ:

—Ապա էս ցրտին ես ո՞ւր երթամ:

—Գնա այնտեղ, որտեղ երկինք կայ, իմ օջախի վրայ էլ երկինք չը կայ, ես էլ օջախ չունեմ, տե՛ս...

Եւ նա ձեռքը մեկնեց դէպի գոմի խորքը, ուր պառկած էին երկու անկենդան գոմէշները։ Ծերը երևի հասկացաւ, թէ բանը ինչո՞ւմն է, նրա աչքից կրկին երկու կաթիլ արցունքներ վար գլորուեցին, նա վերև նայեց, ինչ որ բաներ ասաց, ապա դողդողալով վերկացաւ, չիբուխը գօտին խրեց, անկիւնից գաւազանը վերցրեց և երերալով դուրս գնաց այդ անհիւրընկալ, աւերակ դարձած սաքուից։

Ո՞ւր…

Գուցէ դէպի յաւիտենականութիւն՝ հարցնելու համար թէ ո՞ւր է երկինքը։

Գէվօնկ անգնած նայում էր նրա յետևից, նայում էր, թէ ինչպէս է հեռանում այդ ջարդուած, երերուն մարմինը, որ իր դողդոջուն ոտների հետ տանում էր գուցէ անդառնալի կերպով իր օջախի գոյութեան պատմութիւնը, նրա փառքի և անկման անհասկանալի հանելուկը, մութ պատճառները

Ապա նա ինքն էլ դուրս գնաց, ցուրտ անընակ սաքուից, ծածկեց դուռը, վազեց գիւղից դուրս, շտապ-շտապ հաւաքեց սև դրօշակները, մի կոյտ կազմեց, կրակ տուեց, նստեց առաջը.

—Ինձ համար չարի, ուրիշի համար կա-

նեմ, գիւղի համար կանեմ. ինչ որ ես տեսայ, թող թշնամիս չը տեսնի, ասաց նա իր շուրջը հաւաքուած գիւղացիներին.

Դրօշակները վառուեցին, իսկ ցա՜ւը…

Ցաւը դեռ կայ։

Սև դրօշակների խարոյկի լոյսը չէր կարող ցրել թանձր խաւարը—սև տգիտութիւնը դեռ իշխում է այնտեղ։

1900.

ԼԵՌՆԱԿԱՆԸ

Ամառային պայծառ, աստղազարդ մի գիշեր էր։ Մեր ձիերը քայլում էին հանդարտ. շրջակայքը խաղաղ էր և լուռ. բնութիւնը՝ ինչպէս մի յոգնած վիթխարի, օրուայ տօթից յետոյ այժմ հանգիստ պառկած՝ կարծես հեւում էր։ Դաշտերի լայնութեան մէջ մարդու կուրծքն էլ ուռչում, լայնանում էր։ Մեր ճանապարհը երկար էր. հեռու տեղ պիտի գնայինք, շա՜տ հեռու և գուցէ էլ յետ չը գայինք։

Ընկերս ծեր էր, ես՝ երիտասարդ, հին ընկերներ էինք։ Ի՞նչպէս էր պատահել, այդ ես չեմ յիշում, բայց մենք այնպիսի ընկերներ էինք, ինչպէս երկու հասակակիցներ կարող էին լինել։ Տարօրինակ զոյգ էինք կազմում, բայց լաւ հասկանում էինք իրար, սրտակիցներ էինք։ Ես չէի ծերացել ժամանակից առաջ, նա էր, որ շարունակում էր

իր տարիքին անհամապատասխան աշխոյժ և առոյգ սիրտ ունենալ։ Ի՞նչ էր իմ մէջ գրաւել նրան, այդ ես չը գիտեմ, նա էլ չէր ասում, բայց ես սիրում էի նրա արկածալից, ալեզարդ գլուխը, որ այնքան տառապել էր, այնքան բաներ տեսել աշխարհում և ո՛վ գիտէ, դեռ ինչեր էր տեսնելու։ Այնքան բան գիտէի նրա կեանքից և նա այնուամենայնիւ շարունակում էր մնալ ինձ համար մի գրաւիչ խորհրդաւորութիւն, մի առեղծուած, ինչպէս այս սիրուն ամառային գիշերը, որ պատել էր մեզ, որ փափսում էր մեզմիւ հազար կողմից, հազար ձեւերով։ Խորհրդաւոր արկածները, ազնիւ գժութիւնները ինձ յափշտակում էին, ես պաշտում էի իմ ծեր ընկերին, նա սիրում էր ինձ։

Ու մենք գնում էինք հեռո՜ւ, հեռո՜ւ։

Հարթութեան վրայ երևաց մի կրակ, որի բոցերը մերթ բարձրանում էին խաւարի մէջ, լայն լոյս սփռում, ապա կրկին իջնում, փոքրանում և աստղերի պէս պլպլում։

—Տեսնո՞ւմ ես, ո՞վ կարող է լինել. ընկերս ցոյց տուեց կրակը։

—Շատ պարզ է, անպատճառ բոստանի պահապան է, պատասխանեցի։

—Դու ամեն հարցին վճռական պա-

տասխան ունես, ի՞նչ գիտես, գուցէ ջըրւոր է։

—Ջրւոր չէ, այլ բոստանի պահապան, չե՞ս լսում շան ձայնը, ջրւորի մօտ շունն ի՞նչ գործ ունի։

Ընկերս մի պահ ականջ դրեց և լսեց։ Մենք աւելի մօտեցանք, շան ձայնն այժմ աւելի լսելի դարձաւ։ Նա չէր հաչում, չէր ոռնում, այլ ողբում, լալիս էր, ինչպէս կարող է լաց լինել մի դժբաղդ գազան։

—Շունը կաղկանձում է, շարունակեցի ես, նա անշուշտ կապուած է. բոստանի պահապանները սովորաբար շուն են տանում հետները. կենդանին չի սիրում մենակ լինել լայնարձակ, խաւար դաշտերում, ուր վտանգ է զգում, ուստի երկիւղից աշխատում է յետ փախչել գիւղը. նրան պահելու համար տէրերը ստիպուած են լինում առաջին շաբաթը կապուած պահել։ Սա էլ այն շներից մէկն է, ահա թէ ինչու է կաղկանձում այդպէս ողբալի կերպով։

Ընկերս դարձեալ լուռ էր։ Մենք մօտեցանք. ճանապարհից ոչ հեռու մի արտի մէջ կրակի առաջ նստած էր մի մարդ, մի գիւղացի, և մի ինչ որ եփում էր. նրանից քիչ հեռու, բոցերի լոյսով երևում էր մի

շղթայակապ շուն արտասուելի վիճակում. կենդանին պտոյտ-պտոյտ էր անում իր ցցի շուրջը, գալարւում էր, չանգռում էր գետինը, թաթերով քաշքշում էր կամ ատամներով կրծոտում իր շղթան, աշխատելով գլուխը դուրս քաշել երկաթէ օղակներից, ճչում, կաղկանձում էր աղիողորմ, իսկ տէրը մերթ ընդ մերթ մօտի փայտը թափ էր տալիս նրա վրա, սպառնում էր, որ լռէ, ապա հանդարտ շարունակում էր իր ընդհատուած աշխատանքը։

Ծեր ընկերս մի րոպէ կանգ առաւ, նայեց տառապող կենդանուն, մի բան մռմռաց, որ ես չը հասկացայ, ապա ձին շարժեց կրկին.

—Գիտե՞ս ինչ, եթէ աշխարհում բանտ գոյութիւն չունենար, իմ սիրտը կը ճմլուէր ցաւից այդ կենդանու համար։

—Չեմ հասկանում, պատասխանեցի։

—Չե՞ս հասկանում, տարօրինակ է. երբ մարդը իր նմանի համար դժոխային բանտ է հնարել յանուն մի պայմանական արդարութեան, էլ ինչո՞ւ զարմանալ ու ցաւել, որ կենդանին նրա ձեռքից իր ցցի վրայ գալարւում է և կաղկանձում, թէև նա մարդուց պակաս չի տանջւում։

—Միթէ մարդու և կենդանու տանջանքները հաւասար են մի և նոյն պայմաններում:

—Տարբերութիւնը միայն այն է, սիրելիս, որ մարդը այդքան յուսահատութեան մէջ գոնէ կարող է գլուխը պատերին զարկել, փշրել և շանսատակ լինել, իսկ այդ ողորմելի կենդանին չի մտածում իր յիմար գանգը առաջի ցցի վրայ ջարդել և ազատուել:

Խօսակցութիւնը մռայլ էր: Մենք շարունակեցինք ճանապարհը. ձիերը փնչացնում էին և քայլում հանդարտ: Շուտով կրակը, մեր տեսած մարդը և իր տանջուող շունը մնացին մեր յետևում: Երկուսով էլ լուռ էինք. շան կաղկանձը շարունակում էր լսուել մեր յետևից. կենդանին չէր հանգստանում, մենք երկուսով էլ զբաղուած էինք այդ դժբախտ շան ճակատագրով:

—Հը՛, թշուառական կենդանի, լուռ, հանգի՛ստ, մի քիչ էլ համբերիր, կը սովորես, մռմռում էր ընկերս ինքն իրան, խելօքներն ասել են՝ «համբերութիւնը կեանք է»:

Բայց շունը համբերելու տրամադիր չէր, նա այժմ աւելի խիստ էր կաղկանձում, աւելի ուժեղ կերպով ողբում, ընդհատ ընդ-

հատ, յուսահատ. երևի տէրը ձանձրացած թակեց: Ընկերս յանկարծ մտրակեց իր ձին և սլացաւ. ես հետևեցի նրան առանց պատճառը հարցնելու. կասկած չը կար, որ նա փախչում էր տառապող կենդանու այդ ցաւոտ աղաղակներից. ուրեմն ճիշտ չէր նրա ասածը, թէ ինքը չի ցաւում, որ շունը տանջւում է:

Երկար սլանում էինք իրար յետևից. վերջապէս նա կանգ առաւ, էլ շան ձայնը չէր լսւում. ցած թռաւ ձիուց ասելով.

—Իջի՛ր, թո՛ղ հանգստանան:

Ես հնազանդուեցի, ձիերն իրար կապեցինք, նրանք արածել սկսեցին ճանապարհի եզրի խոտերը, իսկ մենք թիկն տուած՝ ձգուեցինք քիչ հեռու, առուի թմբի վրայ և նայում էինք աստղերին և երկար ժամանակ չէինք խօսում: Ընկերս մտազբաղ էր, այդ ես տեսնում էի, նրա լռութիւնը ճնշում էր ինձ:

—Ինչո՞ւ այնպէս արիր, ինչո՞ւ փախար կենդանու ձայնից, չէ՞ դու ասում էիր, որ դա քեզ համար մի և նոյն է, քանի որ աշխարհում բանտ կայ:

—Դու դեռ երեխայ ես:

Պատասխանը սառն էր. ես լուռ կացայ մի քիչ նեղացած։

—Լսի՛ր, ասաց նա քիչ յետոյ, զգալով՝ որ իր պատասխանը ինձ դուր չեկաւ, լսի՛ր քեզ մի բան պատմեմ, այն ժամանակ դու կիմանաս, թէ ես ինչո՞ւ փախայ այն ձայնից։ Ո՞ւր է լուսաստղը։

—Նա դեռ դուրս չի եկել։

—Չէ՞նք ուշանայ։

—Չէ՛։

Այն ժամանակից տարիներ են անցել, այսպէս սկսեց նա, իմ ալեծուփ, անհանգիստ կեանքի բազմապիսի արկածներ եկել են, անցել գլխովս. իրար յաջորդող նորանոր տպաւորութիւններ շատ անգամ ջնջել կամ մոռացութեան մութ շղարշով պատել են անցեալի շատ յուշեր, բայց մի դէպք, որի մէջ ես ո՛չ թէ գործող եմ եղել, այլ լոկ ականատես, մի սարսափելի դէպք դիմացել է այդ բոլորին և շարունակում է իր բոլոր մանրամասնութեամբ վառ մնալ իմ մտքում։ Դա մի հին յիշողութիւն է, որ աւելի թարմ մտապատկերների մէջ յամառաբար պահում է իր մի անգամ գրաւած տեղը, ինչպէս ջրերից դուրս ցցուած մի ժայռ, որ թէև երբեմն ծածկւում է իր շուրջը ծփծփացող

ալիքներով, մի վայրկեան կորչում է նրանց կաթնանման փրփուրի ամպերի տակ, բայց կրկին դուրս է ցցւում արևի առաջ, երկնքի տակ, միշտ ըմբոստ ժամանակի աւերիչ ոյժի հանդէպ։ Եւ ես յիշում եմ այդ դէպքը ամեն անգամ, երբ տեսնում եմ վանդակի մէջ կծկուած մի թռչուն, կիսախաւար սենեակում թօշնող մի ծաղիկ, ժայռերի խոռոչում լացող ոռնացող մի վտակ, վերջապէս իր ցցի առաջ շղթայակապ կաղկանձող, ցաւագնօրէն ճչացող մի շուն։

Ես բանտ ընկայ, թէ ինչո՞ւ, այդ չեմ ասի, վերջապէս դա ամենևին հետաքրքիր էլ չէ. դէ մի մարդ՝ սի բանտում, դա այնքան սովորական երևոյթ է, այնպէս հեշտ երևակայելի, ինչպէս մի թռչուն ծառի վրայ։ Պատճառը այստեղ նշանակութիւն չունի, շատ անգամ պատճառ էլ կարող է չը լինել, պատահում է, որ այդ անհրաժեշտ չի լինում և մարդ՝ հէնց այնպէս, առանց իմանալու, յայտնւում է բանտում։ Ինչո՞ւ զարմանալ, թիւրիմացութիւնները խլում են մեր կեանքի կէսը և յաճախ նրա լաւագոյն մասը։

Ես այսպէս բանտարկուած էի և այն մի տարուց աւել. էլի որքան պիտի մնայի, այդ ինձ անյայտ էր, բայց թւում էր, թէ ես

յաւիտեան դուրս գալու չեմ իմ ծակից և արդէն աշխատում էի ինչ ինչ յարմարութիւններ որոնել խաւարում թաղուած իմ ողորմելի գոյութիւնը մի փոքր հեշտացնելու համար։ Շատ բան չէր ցանկացածս — բանտում մարդու եսը և պահանջները շատ են մանրանում — օրինակ, ես երջանիկ կը զգայի ինձ, թէ կարողանայի իմ լուսամուտից բակի մի հեռաւոր անկիւնում թռչնի մի բոյն նշմարել, երբեմն տեսնել այդ բնի վրայ սաւառնող բազէի ստուերը, լսել ձագուկների ճուողիւնը· բայց այդ չը կար. գոնէ մի շուն հաչէր, մի կատու մլաւէր, թէկուզ մի թըշուառ ու քաղցած կատու, ամբողջ աշխարհից յոյսը կտրած՝ լուսամուտս չանգռելով ներս ընկնէր ինձ մօտ. այդ էլ չը կար։ Նեղլիկ լուսամուտիցս երկինք էլ չէր երևում, որ հետևէի ամպերի խաղերին և երկնքի լայնարձակութիւնը, կապուտակ անհունը երազէի։ Ես տեսնում էի միմիայն բակի հակառակ կողմի շինութեան մի շատ պստիկ կտորը և նրա վրայ մի երկաթապատ նեղ լուսամուտ, ահա բոլորը՝ ինչ տուել էր ինձ աշխարհը անծայր տիեզերքի մէջ։

Անթիւ անգամ արդէն համարել էի դիմացի լուսամուտի երկաթէ ճաղերը, բազ-

մապատկել էի նրա քառակուսիները, մտածել էի նաև այդ երկաթները ծեծող վարպետի մասին, երևակայել էի նրան բանտում իր կռած երկաթներով կաշկանդուած, դա խօմ հնարաւոր էր, այնպէս չէ՞։ Դիմացի լուսամուտից վեր՝ կտրից քաշ էր ընկել մի հին դեղնած եղէգ, որ յաճախ օրօրւում էր քամու առաջ, մեղմ խշխշալով գնում գալիս, գնում գալիս։ Ամենից շատ այդ ջարդուած եղէգն էր ինձ գրաւում, դա էր մխիթարում. ես նայում էի լուսամուտիցս ժամերով, համարում էի նրա ճօճումները, հասցնում էի մինչև հարիւր, ապա վերսկսում և այսպէս անվերջ։ Եւ մի օր այդ եղէգը մի խիստ քամու երեսից վայր ընկաւ, որքան թշուառ էի ես, Տէր Աստուած։

Ես չար մարդ չեմ, դու այդ գիտես, բայց խոստովանում եմ, սաստիկ ցանկանում էի այդ դիմացի լուսամուտից մի մարդկային պատկեր նշմարել· խօսել ի հարկէ չէի կարող, գոնէ տեսնէի ինձ նման մէկին, որ շարժուէր, կեանքի նշաններ ցոյց տար, որ և է կերպով ինձ աշխարհը յիշեցնէր։ Բայց այդ բանտասենեակը դատարկ էր և այնտեղ բանտարկեալ չը կար ու չը կար։ Մաքովս անգամ չէր անցնում, որ իմ այդ ցանկու-

թիւնը հաւասար է չարամտութեան, որ ես ուզում եմ տեսնել մի մարդ իր ազատութիւնից զրկուած, ինձ պէս թշուառ, ինձ պէս տանջուած ու ոչնչացած։ Խօսողն իմ եսն էր, իմ ողորմելի, անարգուած, տրորուած եսը, որ աշխատում էր դեռ լինել։ Մէկ էլ այդ դիմացի բանտը, որ դատարկ ցցուած էր առաջս, դա մի բանի համար շինուած էր անշուշտ. որքան մէջքեր էին կռացել, որքան քրտինք թափուել անշուշտ, մինչև որ այդ մռայլ պատերը բարձրացել էին, դէպի երկինքը ցցուել սպառնալի ձևով և ինձ շատ բնական էր թւում, որ այդ բոլորից յետոյ այնտեղ մի բնակիչ լինի։ Ամէն առաւօտ զարթնում էի, ամենից առաջ մօտենում էի լուսամուտիս, թաթերիս վրայ բարձրանում էի վեր՝ աւելի լաւ տեսնելու համար, և նայում էի հակառակ լուսամուտին, մարդ էի որոնում, մարդկային մի պատկեր։ Դա բնական ցանկութիւն էր, այնպէս չէ՞, լայնարձակ աշխարհում, ուր այնքան առատ է չարիքը և նուազ բարիքը, մի՞թէ չէր կարող մէկը հէնց նախորդ գիշեր մի ծանր յանցանք գործած լինել, կամ համարուել յանցագործ և բանտ նետուել։ Ահա ես այդ երևակայական յանցագործին էի սպասում,

բայց նա չը կար ու չը կար և ես թշուառ էի, այնքա՜ն թշուառ։

Մի առաւօտ. ըստ սովորութեան, կըրկին մօտեցայ լուսամուտիս, նայեցի և ինձ թւաց, որ հակառակ խցում մի բան կայ, մի անորոշ բան. սիրտս զարկեց արագութեամբ, նայեցի աւելի ուշադրութեամբ, երկար, լարեցի տեսողութեանս ոյժը, և քիչ մնաց, որ ուրախութիւնից ճչամ. այնտեղ, այն մռայլ խցիկի խորքում, թէև աղօտ կերպով, բայց իսկապէս նշմարեցի մի մարդկային պատկեր, այո՛, մի իսկական մարդ. նրան բերել էին գիշերը, կասկած չէր կարող լինել, ես տեսնում էի։ Ուրեմն ես էլ մենակ չէի, էլ այնքան թշուառ չէի,—ինձ նման մէկը, բոլորովին նման, այժմ բաժանում էր իմ ճակատագիրը և ես այդ տեսնում էի սեփական աչքերով։

Մարդը կծկուել էր իր բանտի խորքում, ինչպէս մի անորոշ, մոխրագոյն կոյտ, չէր շարժւում, ձայն չէր հանում, ըստ երևոյթին, իսպառ ջարդուած, ապուշ էր կտրած յանկարծական սարսափով բռնուածի պէս։ Այդ ժամին նա ինձանից շատ աւելի թշուառ էր, բայց այդ իմ փոյթը չէր. կը սովորի, մտածում էի ես, իսկ ինձ մի մարդ

էր հարկաւոր, ինձ նման մի մարդ, և այդ էր, որ ես ունէի այժմ, ես գոհ էի։ Առաջին օրը ես նայում էի երկար, երկար, կարծես իմ հին բարեկամն էր, որին վաղուց սպասում էի կարօտով։ Մարդը շարունակում էր անշարժ մնալ իր անկիւնում, ինչպէս նոր բռնուած մի գազան իր վանդակում։ Երկար տևեց այս կացութիւնը, յանկարծ անորոշ կոյտը շարժուեց, ոտքի կանգնեց բանդարկեալը, թափով առաջացաւ դէպի լուսամուտը, երկու ձեռքով կախուեց երկաթէ վանդակներից, կատաղաբար ցընցեց՝ կարծես փշրելու համար և յուսահատ գայրոյթով ատամներն իրար սղմած՝ բոլոր ուժով մռնչաց։

—Հը՛ – ո՛ւ, հո՛ւ. զօրեղ կրծքից դուրս թռած մի ցաւոտ աղաղակ էր այն, որ տարածուեց բանտի վրայ, իջաւ մինչև բակը, ուր պահապանը կանգ առաւ, վարից մի խիստ հայհոյանք լսուեց և բանտարկեալը յետ փախաւ, իր առաջուայ տեղը գրաւեց և նոյն անորոշ կոյտը ձևացրեց։

Ես կարողացայ դիտել նրան. մի բարձրահասակ, բարեկազմ, հուժկու տղամարդ էր, անշուշտ մի լեռնական, մէկն այն արարածներից, որոնք կարծես ժայռոտ լերան

մի մասն են կազմում, նրա կրծքից վիժած քարերից տաշուած, որոնք քամիների հետ եղբայր են, իրանց գլխին ուրիշ կամար չեն տեսնում, բայց եթէ երկինքը, որոնց գոյութիւնը սանձ չունի և ձեռքերը շղթայ չեն ճանաչում։ Նա երիտասարդ չէր, թէև անմշակ սև միրուք, հաստ բեխեր, թուխ դէմք և բարձրից նայող հայեացք ունէր, որ այնպէս յատուկ է լեռնականներին։ Լայն, մազոտ կուրծքը բաց էր և երևում էր, որ նա երբէք ծածկուած չի եղել, որ ցուրտն ու քամին վաղուց սովոր են ծեծել նրա սիրտը։ Այդ «հը-ո՛ւն»... որքան թոյն ու յուսահատ կատաղութիւն էր պարունակում իր մէջ այդ մի հատիկ բացականչութիւնը։ Այդպիսի բանդարկեալ ես չէի տեսել և մնացի մտախոհ։ Կուզէի, որ նա մէկ էլ շարժուի, նորէն առաջ գայ։ Բայց առանց այդ «հրուի», այդ գազանային մռնչոցի, որից մարդի միտը փշրքաղւում էր և հոգին ցաւում։ Թող գար այնպէս կանգնէր լուսամուտի առաջ, ինձ նայէր, ես էլ նրան նայէի, իրար նշաններ անէինք, ծանօթանայինք, մխիթարուէինք, բայց այդ «հրո՛ւն»...

Սպասում էի. նա էլ չէր շարժւում, լուռ կծկուել էր իր անկիւնում։ Վախեցաւ,

երևի, մտածում էի ես և շարունակում էի նայել և սպասել։ Էլի ժամեր անցան. ահա նա վերկացաւ և սկսեց շրջաններ կատարել. երևի ոտները շղթայուած էին, սկզբում նա պտտւում էր դանդաղ, ապա կամաց կամաց արագացրեց, երբեմն էլ սաստիկ շտապելուց զոյգ ոտներով ցատկում էր, յետոյ յանկարծ կանգ առաւ, կրկին մօտեցաւ լուսամուտին, բռնեց երկաթները և կատաղի կերպով ցնցեց ու ճչաց։

—Հը-ու՛, հու՛, օ՛դ, օ՛դ։

—Լռի՛ր, թէ չէ... լսուեց վարից պահապանի սպառնալիքը, բանդարկեալը յետ, փախաւ, գնաց իր անկիւնում կծկուեց։

Ո՞վ է նա, որին այնքան ծանր է գալիս բանտային կեանքը, որ բաց լուսամուտի առաջ «օ՛դ, օ՛դ» է աղերսում, մտածում էի ես և անկարող էի իմանալ։ Բանտում ոչ ոք իրաւունք չունէր ինձ հետ խօսելու, անգամ կերակուր բերող ծառան իմ ամենաանմեղ հարցերը թողնում էր անպատասխան։ Յուսալն անօգուտ էր։ Ես ստիպուած էի բաւականանալ իմ լուսամուտից լուռ նայելով դէպի հակառակ լուսամուտը, ուր այնպէս սարսափելի կերպով տառապում էր ինձ նման մէկը, մի մարդ. մի անհանգիստ, մի

ըմբոստ մարդ։ Գոնէ այդ «հը-ու՛ն» չը հընչուէր, գոնէ նա իմ ցաւի վրայ նոր ցաւ չաւելացնէր. սպասում էի, որ նա սովորի իր կացութեանը։

Անցան օրեր, շաբաթներ, ամիսներ, մարդը չէր հաշտւում իր վիճակի հետ, նա մռնչում էր, ոռնում էր իր փոքրիկ բնում. այդ խուցը դարձել էր մի եռացող, փրփրացող կաթսայ, որի մէջ կիզիչ հեղուկը ելք էր փնտրում դուրս թափուելու. սարսափելի էր։ Երեկոները, մութն ընկնելուց յետոյ, երբ պէտք էր պառկել, քնել, ես էլ նրան չէի տեսնում, բայց պարզ լսում էի նրա ձայնը. այդ ժամանակ նա «օ՛դ» չէր կանչում, «հը-ու՛» չէր բղաւում, լուսամուտի վանդակին չէր մօտենում, այլ կրկնում էր անընդհատ։

—Հօ՛-հօ՛պպ, հօ՛-հօ՛պպ, հօ՛-հօ՛պպ։

Ի՞նչ էր անում ներսում, խաւարի մէջ, այդ ես հասկանալ, տեսնել չէի կարողանում, բայց իւրաքանչիւր բացականչութեան հետ ես պարզ լսում էի նրա ծանր շղթաների շռինդը՝ «զըրը՛նգ, զըրը՛նգ, զըրը՛նգ»... սրան անմիջապէս հետևում էր բանտային պաշտօնեաներից մէկի սպառնական ձայնը, ինչ որ խիստ հրամաններ. յետոյ «հօ-հօպպ»,

ու շղթաների շռինդը դադարում էր, այժմ լսում էին հարուածների, անողորմ հարուածների ձայներ, երևի նրան թակում էին բանտի գիշերային հանգիստը խռոված լինելու համար։ Այնուհետև մի առժամանակ լռութիւն էր տիրում, բանտային քար լռութիւն, որ հրէշաւոր ճիւաղի պէս իջնում էր կրծքերի վրայ և սղմո՛ւմ, սղմո՛ւմ... ապա յանկարծ, ուշ գիշերին, նորէն լսում էր՝ «հո՛-հո՛պպ, հո՛-հո՛պպ» իր բոլոր հետևանքներով—հայհոյանք, ծեծ, աղմուկ. սարսափելի էր։

Ցերեկները նայում էի, ձեռներով նշաններ էի անում, փորձում էի նրան մի բան հասկացնել, ուզում էի ասել, խնդրել, որ հանգիստ մնայ, համբերի, իզո՛ւր, նա ոչինչ չէր հասկանում, նա մի վայրենի էր, համարեա մի խենթ, և շարունակում էր անընդհատ պտոյտներ գործել սենեակում և օրական մի քանի անգամ կախուել լուսամուտի վանդակից, ցնցել երկաթները, ասես փշրելու, խորտակելու համար։

—Հը-հո՛ւ, հո՛ւ. այդ ժամերին նա ինձ թւում էր մի շղթայուած հսկայ, որ բանտի պատերը ուզում էր շուռ տալ և այդ հսկան մի դժբաղդ էր։

—Մի՞թէ նա նոյնքան օդ չունէր, որքան ես, որքան բոլոր միւս բանտարկեալները. բանտն էլ նոյնն էր, նրա լուսամուտը նոյն իսկ մի փոքր աւելի մեծ էր։ Ո՞վ էր նա, ինչո՞ւ էր այդպէս։ Երբ առաջին օրը նրան բերին, ես ինձ երջանիկ զգացի, այժմ ամաչում էի իմ այդ զգացմունքի համար ի սրտէ կուզէի, որ նրան ազատ արձակեն, իսկոյն արձակեն, ես մնամ դարձեալ մենակ, դարձեալ անընկեր ու կենդանի թաղուած, միայն թէ չը տեսնեմ այդ տանջուած, այլանդակուած դէմքը, չը լսեմ այդ դժոխային «հը-ո՛ւն և հօ-հօպպը», այդ հարուածների ձայները, որոնք հնչում են բանդի սպանիչ խաւարի մէջ անորոշ սարսափի ոլորներով, այդ շղթաների շռինդը, որ խօսում էր մարդկային համր ցաւերից բանդի պատերի մէջ, խեղդող երկնքի տակ մեռնելու համար։ Բայց նա այնտեղ էր, նրան չէին արձակում, և ոչ ոք չէր կամենում ինձ ասել, թէ ո՞վ է նա և ինչո՞ւ է այդպէս տառապում։

Անցան դարձեալ օրեր. մի առաւօտ ծառան ներս մտնելով, առաջին անգամ ամբողջ տարուց յետոյ, ինձ ասաց՝

—Բարի լոյս։

Այդ նշանակում էր, թէ ինձ հետ կը

խօսեն, դա մի երջանկութիւն էր, և այլանդակ, դաժան աչքերով, դուրս ցցուած ատամներով, թաթարական դնդով այդ ծառան որքան գեղեցիկ երևաց ինձ այդ օրը ու այդ հաստ շրթունքները, որ առաջին անգամ արտասանեցին՝ «բարի լոյս», որքան բարի, որքան գրաւիչ էին։ Ես կ՚իմանայի այժմ ո՞վ է իմ հարևանը։

—Լսի՛ր, ո՞վ է այդ դիմացի խցում բանդարկուածը։

Ծառան նայեց ինձ խորամանկ ժպիտով։

—Վաղո՞ւց էիք ուզում իմանալ։

—Հա՛, շատ վաղուց, ասա՛, խնդրեմ, ո՞վ է նա։

—Նա մի լեռնական է Ս. սարերից։

—Ինչո՞ւ է բռնուած։

—Մէկին սպանելու փորձ է արել և ահա ութ ամիս է բանդարկուած է։

—Իսկ ինչո՞ւ է շղթայուած, այդպէս խիստ կերպով։

—Փախչելու փորձ արեց դեռ առաջին օրը բանդի ճանապարհին, յետոյ էլի մի քանի անգամ։

—Ի՞նչ է նշանակում նրա «հօ-հօպպը», որ լսում է ամեն գիշեր։

—Ո՞վ է հասկանում, այդ ժամանակ փոխանակ քնելու, նա զոյգ ոտքով ցատկում է իր տախտի վրայ, ապա վար նետւում և այսպէս անվերջ։ Ասում է, որ իրանց սարերում քարից քար այդպէս են ցատկում, ասում է՝ սարեցին չի՜ կարող այդքան նըստած մնալ, ասում է հազար ու մի սարօրինակ բաներ. դեռ այսպիսի բանդարկեալ ես տեսած չեմ։

—Շա՞տ է մնում մինչև դատաստանը։

—Ո՞վ գիտէ, բայց արի տես, որ այդ սարերի վայրենին համբերել չի կարողանում։ Ամեն անգամ, որ ներս եմ մտնում, ինձ աղաչում, պաղատում է, ծունկ չոքած արտասւում է, որ իրան արձակեմ։ Բոլորովին անասուն է էէ՜, չի հասկանում, օրէնքները չը գիտէ, որ ես նրան արձակելու իրաւունք չունեմ, դատաստան կայ ախր, բանդի բանը համա՞ք է... Երբ մենակ է մնում, սկսում է ցատկոտել. այսօր յանդիմանում էի, հեկեկալով ասաց, թէ ոտմն է փսս տալիս, որ ցատկում է իր թախտի վրայ, ինչ են ուզում իրանից, ինչո՞ւ են չարչարում։ Այս ամբողջ գիշեր խօմ լսեցի՞ք, անվերջ «հօհօպպ» ասաց, քանի՞ անգամ ծեծուեց։ Երե-

ւում է էլ համբերել չի կարողանում, վախենում են, թէ մի բան չանի։

—Փախչի՞։

—Ո՛չ, ինչպէս կարող է փախչել, շղթայուած է. ասում եմ՝ իր գլխին վատ բան չանի. յիմար է, էհ, կարող է անել առանց մտածելու, որ գուցէ արդարանայ շուտով և կրկին իր վայրենի սարերը գնայ, «հօ-հօպպ» անելու, ինչքան կամենայ. իստակ խենթ է։

Ես ժպտացի ծառայի միամտութեան վրայ և որոշեցի ինչպէս և լինի իմ դժբաղդ հարևանին խօսք հասկացնել, մխիթարել իր այդ ծանր օրերում։ Բայց այդ օրն ամբողջ նա լուսամուտին չը մօտեցաւ, կծկուած մնաց միևնոյն անկիւնում լուռ, անշարժ։ Ես երկար նայեցի, նշաններ արեցի, իզուր։ Վրայ հասաւ գիշերը, մի վատ, չարագուշակ գիշեր. երկինքը չէր տեսնւում, բայց պարզ էր, որ նա ամպոտ է ու խաւար. օդը, աւելի ծանրացաւ և բանդի նեղ լուսամուտը խուփի պէս փակեց. հարևանս լուռ էր, առաջին անգամ այնքան օրերից յետոյ։ Հեռուից լսւում էր ամպերի որոտը, փոթորիկ էր պատրաստւում, և ամեն մի խուլ թնդիւնի հետ մեր բանդն էլ կարծես տնքում էր։ Քնել չէր լինում։ Երբ ամպերի որոտը լսւում

էր, ես լսում էի պահապանի ոտների ձայնը, նա գնում էր, գալիս, համաչափ, միակերպ քայլուածքով. այդ ձայնը նոյնքան անախորժ, նոյնքան սպառնալի էր, որքան ամպերի խուլ, հեռաւոր գոռոցը։ Ուշ գիշեր էր, բայց փոթորիկը դեռ չը կար և օդը ճնշում էր, ճնշում խեղդելու չափ։ Հարևանս շարունակում էր լուռ լինել, միթէ նա քնեց այդ սպանիչ ժամին, մտածում էի ես։ Ամպերը մէկ էլ հեռու տեղ խուլ որոտացին, ապա տիրեց մի հոգեհան լռութիւն։ Եւ յանկարծ լսուեց մի այնպիսի ճիչ, այնպիսի ոռնոց։

—Օ՜դ, ծ՜դ, ծօֆ սարեր, բայց այդ ձայնը շուտով խլացաւ, կայծակը ճայթեց, ամպերի որոտը դարձաւ անընդհատ, բարձրացաւ կատաղի քամի, բանդը դողաց և հազար կողմից, հազար ծակից քամու հետ մռնչաց, յորդ անձրևը թափուեց, թափուեց ինչպէս հեղեղ։ Սարսափելի գիշեր էր։

Լուսաբացին մօտեցայ պատուհանին իմ դժբաղդ հարևանին տեսնելու, նա էլ իր պատուհանի առաջն էր. վանդակի երկաթը ատամների մէջ պի՛նդ սղմած, շրթունքները պատած արիւնոտ փրփուրով, աչքերը զարհուրելի կերպով դէպի վեր, դէպի երկինքը չռած, դէմքը ուռած, կապտած ու ծամա-

ուած, պարանոցը անօրինակ կերպով երկարացրած,—զարհուրելի էր նայել. փոթորկոտ գիշերից օգտուելով՝ նա կախուել էր լուսամուտի վանդակից։ Երեսս դարձրի, ջարդուած ընկայ բանտի խոնաւ յատակին և դառն դառն արտասուեցի։

Նա լռեց։

Ձիերը շարունակում էին արածել, փնչացնելով իրանց լայն քթածակերով. առաւօտեան հովը փչում էր, արդէն արևելքում հօրիզոնը շարագունուել էր, աստղերը գունատուել էին։ Ես լուռ էի։

—Վեր կաց, ասաց ընկերս, աշխարհում խաւարի մէջ այնքան բաներ կան, երկինքն իր աստղերով միշտ կոյր է, լոյսը՝ լոյսը լաւ է, հեծնենք մեր ձիերը և քշենք, շատ բան ունենք։

Ձիերը գնում էին և մենք դարձեալ լուռ էինք։

Ընկերս ծեր էր, ես երիտասարդ և մենք հեռու, հեռու տեղ էինք գնում այն գիշերը։

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7 XI 922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

երես

1. Սրտը 3
2. Մնհաւատը 55
3. Կոյրերը 131
4. Վիշապաձոր (անդութին) . . 168
5. Կեանքի դասը 185
6. Լեռներում 213
7. Օհանի վիշտը 226
8. Մեծ ճանապարհին 256
9. Մարդագէլը 267
10. Ցաւը 310
11. Լեռնականը . . . . 336 – 358

ՀՀ Ազգային գրադարան
NL0321473

18.379

891.99
Ա-42